



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am



ՄՈՎԱՆԻ ԽՈՐԵՆԱՅԻ

Ե ՂԱՐ

ՀԱՅՈՑ

ՊԱՏՄԻՈՅՈՒՆ

1700 ԱՄԱՏԱՆ
ԵՎՎՈՒՄԵՆ
ՎԱՐՎԱՐՔԱՆԱԿԱՆ
ՔՈՒՐԱՆՈՒԹՅԱՆ

ՄՈՎԱՆԵՆ ԽՈՐԵՆԱՅՐ

Ե ՂՐ.



ՀԱՅՈՑ ԴԱՏԱՌԻԾՈՒՄ

ՀԱՅՈՑ ԴԱՏԱՌԻԾՈՒՄ

20

20 - (10) 1997

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ — 1997

զր
ըն-
լ ո
ստ-
ար-
յա-
ան:
յան
յա-
տ-
ըբ:
եր-
ն է
մբ,
յբր
ազ
ին,
յբ-
տ-
ամ
յա-
ան
/ե-



**ՄԱՏԵՆԱՍԱՐԸ ԿՎԻՐՎՈՒՄ Է
ԼԱՅԱՍԱՆՆՈՒՄ ԲՐԻՍՏՈՆԵՌՈՒԹՅԱՆ
ԸՆԿՈՒՆՄԱՆ
1700 ԱՄՅԱԿԻՆ**

**Հրատարակվում է պետական
հովանավորությամբ
Խմբագիր ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

**Մատենադարի պատմաստու մեղագրպետ՝
ԱՔՏ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Մովսես Խորենացի

Մ 016 Հայոց պատմություն| Բարձր., հերթ. և ծանոթ. Մտ. Մալխասյանցի.— Եր.: Հայաստան, 1997.— 552 էջ:

Հայոց պատմադար, համաշխարհային պատմագրության մեծածան ներկայացուցիչ Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» քննարկում է Հայաստանի պատմությանը հեղույն ժամանակներից մինչև Նեղոսիկի աղբյուր՝ Կ գրքը: Այն պարունակում է նաև հարուստ երաժիշտ հայ Տին մշակույթի, հասկացելով հնագույն մոզոմբրոսիկայի քանահայտության, ինչպես և հարևան երկրների և մզոմբրոսիկայի պատմության ու մշակույթի վերաբերյալ: «Հայոց պատմությունը» աչքի է ընկնում բազմաթիվ զեղարվեստական արժանիքներով կատարված իրադրություններով, գրքի ներստիվներով և իրադրություններով զուտ ու արտասույցի կերպարաններով, լեզվի ներստիվներով և իրադրություններով:

Հրատարակությունը նախատեսվում է ընթերցող շրջանների համար:

0509020015

Մ ————— 46—97

701 (01)—97

ԳՐԿ 68. 8(24)

ISBN 5-540-01102-9

7011 — ԳՐԱԳՈՒՆՆԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

© «Հայաստան» հրատարակչություն, 1997

ՆԵՐԱՏՈՒԹՅՈՒՆ

«Ամեն ինչն ապա ինչ է որ զին Կո գրքոց են ազգ»
(Խոր. Ա. Կ.):
«Մի՛րն մտանա մեծ կայն ինն կամ պարտինն էոց հայրենաց... Խալայն սկսաց, թեպետ և շահի. միայն թե շնորհակալ ո՛վ մեքոս գտանցի արխատարեց» (Անգ. Ա. Գ.):

Մովսես Խորենացի: Նրա կենսագրությունը: Հայաստանի պատմությունը: Այլաստությունները: Հայոց պատմություն: Չորրորդ գրքի հարց: Պատմության աղբյուրները: Մատենադարի աղբյուրը: Հայ մոզոմբրոսիկայի առաջնիկները: Պատմության հատկությունները: Ոճը, լեզուն: Պատմության նշանակությունը: Քննություններ Խորենացու Պատմության մասին: Պատմության գրության ժամանակը: Պատմության արժանահավաստությունը: Պատմության աղբյուրների ուսումնասիրությունը: Պատմության մեղագրություններ, հրատարակություններ, քաղցածություններ: Երկա քաղցածության հանգամանքները:

Մովսես Խորենացին եղական գրական դեմք է մեր հին մատենագիրների մեջ: Նա տասնհորս զար շարունակ անհավաղ հետաքրքրություն է արժեքի հայ մոզոմբրոսիկայի և քանասիրության մեջ իր Հայոց պատմությանը, որ ծառայել է իրեն ուսման առարկա և իրեն ուսումնասիրության նյութ: Ավելի քան տասը զար այս գրվածքը եղել է հայ ազգի միակ գառագիրքը իր հին լեզվային հեռ ծանոթանալու համար. եղել է աղբյուր և օրինակ հետագա պատմիչների համար, որոնք նրանից քաղվածքներ են անում, ընդօրինակում են, հետևում են նրա ստեղծած պատմագրության տիպին: Ամենաբարձր զովասանքով հիշում են նրա անունը՝ տիեզերահաշակ քերթազ, պատմահայր, քերթազահայր (իրեն հասույկ նրան սեփական տիրույթ): Նրան հուշել են հայ Հերոզոտոս, որ և, ինչպես Գրատմիտան ասում է, հայերը, և՛՛՛ իր փոր-ինչ սնափառություն ունեն, իրավունք ունեն այսպես կոչելու նրան. նա արևելյան ազգերի պատմական գրականության մեջ իր հնույթյամբ առաջիններից մեկն է Ս. Գրքից հետո¹:

Սակայն տասնհիններորդ գրքից այս կողմ հեղաշեռե փոխվեց զի-

¹ Խորենացու արժանահավաստությունը. Լր. 3 և 6:

բարերժունքը զեպի՝ այս Պատմությունը և նրա Հեղինակը՝ եվրոպական բանասիրական քննադատության պատճառով: Ազգրում զեռ թույլ կերպով, բայց հեղձհան ավելի համարձակ և գտա՜հ սկզբին քննադատել նրա պատմության պարյուրները, նրա ստուգությունը կամ արժանահավատությունը: Չշտպինցին Հեղինակի անձնավորությունը, այդինքն՝ թե նա Հիբրավի հիմնգործող դարի Հեղինակ է, Սահակի և Մեսրոպի աշակերտը, ինչպես ինքն է գրում իր մասին. արդյոք նրա Պատմությունը հիմնգործող դարի գործ է. թե ավելի ուշ ժամանակի: Այս քննադատությունն իր գազաբանական հասավ անցյալ դարի ինտելեկտուալ թվագիտողներին և մեր դարի սկզբներին, երբ բանասերներն աշխատում էին մեկը մյուսին գերազանցել իրենց մերկացուցիչ: և բացասական վերաբերմունքով զեպի Հեղինակն ու նրա գործը. կարծես մրցանակ էր նշանակվում ամենանանկատա քննադատության համար, և քննադատները ձգտում էին մեկը մյուսի մեղքից խլել այդ մրցանակը: Պատմության գրողության ժամանակն ինչքցին մինչև իններորդ դարը, նրան համարեցին կեզո՜ Մովսես Խորենացու անունով, մինչև անգամ նրան սկսեցին Պատմության ստորի Մովսեսի կորեկացու» (Pseudo-Moses) անունով: Մեծ թվով քննարձակ ու համառոտ քննադատություններ զրվեցին առանձին գրքերով կամ պարբերական ժամույլի մեջ, մասամբ ի պաշտպանություն, մասամբ ընդդեմ կորեկացու. ստեղծվեցին հատուկ անուններ՝ մովսեսապաշտաների և մովսեսառայանների: Ամեն մի բանասեր, որ զրազվել է այդքան գրականությանը, շատ կամ թիչ զրազվել է և կորեկացիով, նրա Պատմությանը: Հիշեցր միայն պիտավորներին: Եվրոպացի բանասերներից կորեկացու և նրա Պատմության մասին զրել են՝ Բաուդգարտներ, Քիլցեր, Գաուսմիտ, Դյուրերտ, Լա Կրոլ, Լանգուա, Կարթեր, Կիպերտ, Կեիերտ, Մալկեր, Մառ, Մակկարա, Նե, Նիկար, Պետերման, Պիշար, Սեն-Մարտեն, Տեոտեր, Յորքեան, Յորքեա Լայ Հեղինակներից՝ Արիզյան, Արոնց, Արշուն, Ակնյան, Գարսագալյան, Գալթրան, Գերդյան (Ջուրյուրյան), Գարսալյան, Զարգանդաշյան, Հմմե, Խալաթյան Բ., Խալաթյան Գ., Կարեկյան, Մ. Տեր-Մովսեսյան, Միսրյան (Գ. Տեր-Մկրտչյան), Խորաթ, Չամչյան, Պատկանյան, Պարոնյան, Սարգսյան Բ., Տաշյան, տաղերիս զրոզը և ուրիշներ՝:

Վերջերս, շնորհիվ նոր հայտնությունների, այս գրո՞ր կանց առավ և կորեկացին ու նրա Պատմությունը դարձյալ իրենց արժանավոր զիրքը զրավեցին մեր հին պատմագրության մեջ:

¹ Տե՛ս Մ. կորեկացու Պատմության (Երևանագիրք Լայոց, Թիֆլիս, 1913, էջ 26-4)։

Թե ինչն էր պատճառը այս բացառիկ հեռաբրբրություն կորեկացիով հին և նոր ժամանակ՝ մեջ հարցին կշանար համառոտակի պատասխանես այս ենթադրության մեջ, ավելի մանրամասն տեղեկությունների համար հանձնարարելով զիմի մասնատրուական զրավեցներին:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ ԿԵՆՍԱՆՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, կորեկացու մասին կենսագրական տեղեկություններն թիչ ունեն. նրանցից մեծ մասը հարուցում է ինքը՝ Հեղինակը Պատմության մեջ պատահական կերպով: Մյուսնց զրա ավելացնելու է ժամանակով նրան մտտի ու նրան ծանոթ Չաղար Փարսեցու կարճատևության բայց շատ կարևոր վկայությունը: Ուշ ժամանակի Հեղինակների հարցարած տեղեկություններն անարժեք են իրեն անասույց. Խալեթիակ հակասող հարցարած տեղեկություններին: Հիշյալ կցողորն ուղյակները կապակցելով՝ կարելի է մտաավորապես մի ամփոփ զրազարար կազմել ՊատմաՆոր կյանքի և գրքունենության մասին:

Կորեկացի բառը, որով կոչվում է Պատմահարը, ջույն է ապիս, որ նա ծնված պետք է լինի կորեն կամ կորեան անունով մի տեղում: Այս անունով բազար կամ պալա Նայտին չէր մինչև վերջին ժամանակներս: Կա երբեմն կոչվում է նաև Տարոնացի. Տարոն զավտում եղել է կորիի կամ կորոն անունով մի պալա բայց էթն Մովսեսով այստեղ ծնված լինե՞ր՝ պետք է կոչվեր կորեկացի կամ կորոնացի (ինչպես մի ժամանակ Վենետիկի Միլիթարյաններից ոմանք գրում էին): Ավելի հավանական է կարծի, թե նա ծնված է Մյունխերում Հարսնոց զավտի կորեան անունով փոքր պալում, որը հիշում է Մեկի. Օրբիլյանը (Պատմություն, Քիֆիս, էր. 517), տասներկերորդ դարի վերջում, Օրբիլյանի հիշած կորեան ձեր հիմնգործող գարն վերջում, Օրբիլյանի միջերկրյան և միջերկրեան, Մամիկոնյան և Մամիկոնեան և այլն): Այս ենթադրության ուժ են ապիս մի քանի կազմակերպի փաստեր, ինչպես կորեկացու լավ ծանոթ լինելը Մյունխերին, Երասխի հոսանքին, Երասխի ափերին մտա. Լեզած շեններին, Մյունխյան եահապետ Միտակին մեծ զրվատանքով հեղելը, հակակրությունը դեպի Մամիկոնյանները, որտեղ Մյունխյան հակաակորեկներն էին Ե դարի երկրորդ կեսում և այլն: (Տե՛ս այս մտտին ավելի ընդարձակ մեր շեղորենացու ստեղծվածի շուրջը, հավելված Գ):

Նրա ծննդյան տարին Խալեթյան որոշ հայտնի չէ: Հիմնվելով Մամվի Անեցու ժամանակագրության զրա՝ բանասերներն, սկսած Սեն Մարտենից մինչև Հմմեթ և Մեղեփասեն, ենթադրել են, թե նա ծնված պետք է լինի 370 թվականին և մեռած 490-ին, 120 տարեկան հասակում: Շատ

անճամբանական է այս 120 տարվա հասակը և մանավանդ անընդունելի է 370 թվին ծնվելը, սա հակասում է Պատմահոր ցուցման։ Նա գրում է, որ Նիփոսի ժողովից հետո, ուրման 432—437 թվականների ընթացքում, Սահակ ու Մեսրոպը նրան ուրիշ բնկերների հետ ուղարկեցին Ալեքսանդրիա՝ բարձրագույն ուսում ստանալու։ Բայց 370-ին ծնվածը, այն ժամանակ կլինեք 62—66 տարեկան ձերուհի Ալյապիս տարիքում, աշխարհում մտուցով, չեն գնում բարձրագույն ուսում ստանալու, այլ ախլի կրիտասարգ հասակում։

Գին օգնելով այս առասպելը, որի աղբյուրը թվում է թե Թովմա Առժրուուն մի խոսքն է՝ մենք նրա ծննդյան հավանական տարին կհանենք հենց հորենացու հիշյալ վկայությունից։ Անյապիս հնուավոր ու թվվար ճանապարհորդություն կատարելու, օտարություն մեջ ինքն իրեն կառավարել գիտենալու համար պետք էր բավական չափահաս ու փորձառու լինել, միանգամայն սուր հիշողություն, մտքի թարմություն և ուսանելու րոտն փափագ ունենալ, Ալյապիս հասակ մենք համարում ենք մարդը 22—23 տարեկան հասակը. ուստի էրր հորենացին, արտասահման ուղարկվելիս, այսինքն՝ 432—434 թվականներին 22—23 տարեկան լինելով պետք է ծնված լինեք 410 թվականի շուրջը, մի-երկու տարով անպակ համո։ Այս թվականը լավ համարվում է նրա մյուս վկայությանը, թե Պատմությունը գրելիս, 480-ական թվականներին, կհչել է «այս ծնր և հիանդոտ և անպարսպ ի ԹարգմանուՍենաց»։

Ալյապեն, հորենացու ծնունդը զննելով 410 թվականի մոտ՝ այնուհետև երրակցելում ենք, որ նա մանուկիցն տարիներում սղորհական կրթությունն ստացել է հենց Մյունիքում, ս. Մեսրոպի արևելք հիմնած զարդոցում, ինչպես վկայում է Կորյունը։ Այստեղ ուսանելով ավարդված արարական գիտությունը, որ էր զրավարժ բնիկացանություն և երգեցողություն, և ցույց տալով աչքի բնկնող ընդունակություն՝ նա 15—16 տարեկան հասակում, այսինքն՝ մոտ 427 թվականին, ուղարկվում է Վաղարշապատ, Հայոց այն ժամանակվա կենտրոնական վարժարանը, որտեղ ուսուցանում էր ինքը ս. Մեսրոպը։ Այստեղ էլ նա ուսանում է 5—8 տարի, բացի հայերենից սովորելով նաև հունարեն և ասորերեն (սառայց այս լեզուների մասնաբաժնան՝ նա չէր կարող ճանապարհորդել Ասորիքով և ապրել Ալեքսանդրիայում)։ Պահլավների և (Սասանյանների ժամանակի պարսկերենը), լեթև ոչ զրավոր՝ բայց զորձնականապես նույնպես գիտեր,

¹ «Քրոյ անք կենանք տեկույ նոկուլ ամն հարիւր և բան լի և պարտւո ձերությամբ և այլն»։ Սրա մասին քիչ հետո մանրամասն կրեսենք։

Սա երևում է մի շարք պահլավների բառերի ուղիղ մեկնությունից, որ պատահում ենք նաև Պատմության մեջ։

Եփեսոսի ժողովից (431) հետո, էրր Սահակ ու Մեսրոպը Ս. զիրեն ուղղում էին բոս հունարեն բնագրի (կամ հունարենից երկրորդ անգամ էին Թարգմանում)՝ կարիք զգացին քաշ հունարենների, բերթղական արվեստին հմուտ գիտնականների, ուստի որոշեցին իրենց ամենաընդունակ աշակերտներից մի քանիսին ուղարկել Ալեքսանդրիա, գիտությունների այն ժամանակվա կենտրոնը, որտեղ իրար հանգիպում և իրար հետ զոգվում էին Արևելքն ու Արևմուտքը։ Այս ինտոյանների զասին էր պահանջում և նրանց մեջ առաջինն էր պատահին Մովսեսը, մոտ 22 տարեկան հասակում, որ հիացմունքով ու վառ հույսերով լի նկարագրում է իր ճանապարհորդությունը, իր ուսուցիչներին նմանեցնելով արեգակի, իսկ իրենց՝ այդ արեգակից լույս տաացող աստղերի։ Այս ճանապարհորդությունը երթարդում ենք 432-ից հետո, ոչ ուշ, քան 435 թվականը։

Ինչ էր նա սովորում Ալեքսանդրիայում՝ սուույց շարժումը, նա իր ուսուցիչին կոչում է նոր Պատմություն, սուանց անձեր սալու. ուստին հավանական է, որ նա իմաստասեր՝ գիտնական լինելը, քան ասովածարան։ Նկատի ունենալով նրա զուլու գլխավոր նպատակը՝ պետք է հասկենցենք, որ նրա ուսման հիմնական առարկաներն էին հունարեն լեզուն և բերթղական արվեստը, այսինքն՝ լեզվի և խոսքի թեորթան, քերականություն, ճարտասանություն։ Երկրորդաբար նա սովորում էր Ս. գրքի մեկնությունները, պատմություն, հունաց զիցաբանություն։ Ալեքսանդրիայի աշխարհահռչակ մատենադարանը միջոց էր տալիս ուսումնասիր հայ կրիտասարգների կարգալու հուչք բանաստեղծների, փիլիսոփաների, պատմագիրների և այլ գիտնականների զրավձքները, որոնցից հետո հորենացին համախապի օգտվում է իր Պատմությունը գրելիս։

Հայտնի չէ, թե որքան ժամանակ հայ ուսանողները մնացին Ալեքսանդրիայում և ահասարակ պանիստություն մեջ, հանենայն զեղես ոչ պակաս, քան 5—6 տարի։ Նրանք վերագարձան 439 թվականից հետո, էրր Հայաստանի երկու լուսավորիչներն ու նրանց ուսուցիչներն արդեն վախճանված էին։ Նրանց համար անհանկույտ էր այս ցավովի իրողությունը։ Ինչպե՛ս սրատույն կերպով արտահայտում է հորենացին իր վիշտը. «Միջև նրանք սպասում էին մեր զարձին, և փասավորվել իմ ամենախմատ արվեստով ու պատրաստությամբ, և մենք էլ Բյուզանդիայից շտապ-շտապ զալով հուչա ունեինք հարանիքում պարել... և առազուստի երթաք սակ՝ այժմ այդ ուրախության փոխարեն զերիզմանի վրա ողբեր ասելով հառաչում ենք ողորմադին, մանավանդ որ ըժամանակից

տեղնե՛ն նրանց անշքերի փակվելը և լույն նրանց վերջին խոսքն ու սրճանությունը (Ողբ):

Քայց զուցն այս երկու մահերից ավելի դառն էր այն սառն, զրեկն քննամական ընդունելությունը, որին նրանք հանդիպեցին իրենց կարոտած հայրենիքում: Գիտություն պաշարով ծանրաբեռնված, հայրենիքին ծառայելու աննշով ուղեորված՝ նրանք գալիս են և հանդիպում են արժամարտերի և հայամանքների: Նրանց սապարեզ չէին տալիս զործելու, ծառայում էին նրանց գիտությունը, հայամանք էին տեղից տեղ, գաղտնաբարտում էին զրկանքներով իր կյանքի, ազդեցություն: Այս մասին միանման վկայում են ինքը՝ Խորենացին և Չ. Փարսեղին, մեկը մյուսին լրացնելով: Խորենացին ասում է. «Արզ՝ երբ Աստուծո սրբերի հետ այսպես վարվեցին (խոսքը Տրդատ Բագրատի թունավորելու մասին է), էլ ի՞նչ կարող ենք մենք տակն ձեզանից մեր կրած վշտերի համար, քանի որ վշտերն ու աղքատությունը մեզ սեփական են...»¹ Ե՛վ մեր կեցած ժամանակ մեզ հանդիստ, սրեան կամ ասն պատարաստեց: Թողնում եմ տակ, որ զուր չամենահարցերի շար ու տղան լիզուններ, սնուրի փառանքությունն ու կատաղի լեզվագարությունը, այլ մեր ուսումնաստաց բարքով նշույթ մատակարարանցիք նրանց անմտությունն և բորբոքեցիք ավելի քան Բարբելու նի հնարք...»² Ե՛վ հասկացող մարդկանցից նրանց լի սրբա, և եթե չեք նեղանում՝ կասեմ և նրանց, որոնք նրանց հորդորան են այսպես լինելու (Բ. դր): Ողբի մեջ ասում է. «Ե՛վ՞ զայսուհետև պետք է հարգի մեր տառու՜մը, ո՞վ պետք է ուրախանա իր սրբու առաջադիմության վրա, ո՞վ պետք է պայանանցեի առողջ վարդապետության հակառակ դուրս կեղծերին...»³ որոնք մեզ ծագրում և արժամարտում են իրեն անհաստատ և ոչ մի պիտանացու արժեքա չունեցող մարդկանց: Ղազար Փարսեղցին գրում է իր թղթում փիլիսոփա Մովսեսի մասին, որ ընդհանրապես համարում է Մովսեսն Խորենացին, «Մրանելի Մովսես փիլիսոփոսը, որ քանի կենդանի էր՝ «Բեշաաի նման կյանք ուներ, չէ՞ որ հայոց այդ արեղայական խումբը նրան տեղից տեղ հայտնեց, ի՞նչ որ այն լուսավորչին և նրա սգիտանալով գրքերն իրենց անգիտությունը կուշում էին փաթաղ ինես՝, և ուրիշ շատ բաներով էլ նրան վշտացնելուց հետո՝ ուրիշներից ամաշուլով խարակական կախկապությունը նրան ավելի իրեն մահադեղ և սրբի ձայնը խեղդեցին»:

¹ Ե. Մուս այս երկու բաները, որ սնմական հասցում սնեն՝ բացարժեղ է ազգատուժան, ազգավրժանեան նշանակությունը (նեփօքարտուտ, ստրաբուսնի) (Началомиа история Армении Апостол, էջ 30):

ԱՆՆԱԿԱՆՔԵՆԵՐԻ ՊԱՏՃԱՆՔԵՐԸ, Ի՞նչ է այս հայամանքների պատճառը: Ընկեր և սրա հետևողությամբ Աստվածներն այս բանը վերացրում են արեւո հայո հոգեորակներին և ստիպում են, որ միակզաման անընդունելի է և հակասում է իրականությանը: Պետք է ուրիշ՝ կենդանական և սոցիալական պայմանների մեջ փնտրել այս պատճառները, քանի որ նրանք, ինչպես իսկույն կունենենք՝ սկզբունքային, իդեալային բնույթ ունեն ընթ այս հայամանքները անհաստատ բնույթ ունենային, լուկ Խորենացու զեմ ուղղված՝ կարելի կլիներ դրանք բացատրել Խորենացու համարձակախոս լեզվով, որ իրեն համարում էր «ամենիմաստ արվեստի տեր», կատարելագույն պատրաստություն ունեցող անն, իսկ մյուսներին ասանց բաշվիւտ միշտ տղետ էր անվանում, որով հարկավ շատերին կզրզոներ իր զեմ. կամ կարելի կլիներ այդ հայամանքները վերագրել Խորենացու առերեսությամբ ղեկավար Մամիկոնյանները, անդիսի ժամանակ, երբ կրոնական պատերազմի նախադրյալին կամ նրանից հետո Մամիկոնյանները՝ հանձնին Ղարաբեյ Մամիկոնյանի և թիչ հետո Վահանի, ազգային հերոսների անուն ու հարգանք էին վախճում հայո հոգեորակաբանության մեջ և որանց սակայն Խորենացին այս կամ այն բանում մեղագրում էր կամ պարսաբանում: Քայց, ինչպես ասացիք, երևույթը մասապայական բնույթ ուներ. հայամանքները հետևանք էին գաղտնագրային պայմարի:

Պայքարը մղվում էր հայ հոգեորակաբանության երկու խավերի միջև, որոնցից մեկը առդական օրինակապիսի հետևող էր, մյուսը՝ հունակապիսի Ասորիները վաղուց ի վեր տիրապետող ազդեցության էին ձեռք բերել Հայաստանում. շմոռանակ, որ քրիստոնեությունն սկսվելուց ի վեր ասորի հոգեորականներով լցվեց Հայաստանը. ժամերգությունը կատարվում էր ասորիներն լեզվով. հայ պատասխանները Ասորիք էին գրում ասորերեն սովորյալու, որպեսզի հայրենիք վերադառնուլով կարողանան առերևին լեզվով պաշամանքը կատարել հայոց կենդանիներում: Պարսեց կառավարությունն էլ, հունակապ թագաբանություններից կապակեցրով խոչընդոտ էր լինում հունարենի տարածման և խրախուսում էր առդական ասորիներն լեզվով, Կրկնի գյուտի համար ս. Մեսրոպը Ասորիք գիմեց և ոչ Հունաստան. Ս. զիրքը առաջին անգամ ասորիներից թարգմանվեց.

¹ Այս անթարքության մեջ ոչ մի անհավանական բան չկու: Եթե այսու, երբ ասանք կրեանական պատերազմի պատճառները գիտենք միայն երկու Մամիկոնյան պատմիչներից և ստեղծենայինք շուրջ բանագրությունը հենց նրանց գրածների վրա՝ ժողովելով, ինչ գաղտնաբարտում վասանին և ինչ փառանքում վարդապետի, ո՞րքան նոր ու առբեր բաներ մենք կեմտեսայինք և իրավությունը ասորիք կերպարանք կատարու, եթե այդ պատմությունը զուրկ մի սյունեցի կամ գուն մի սեղեզմանալ ժայց լինեի:

նույնիսկ հուսարն զրգամքները հայերն էին թարգմանվում ասորերն թարգմանություններից: Ս. Սահակի զահճեկցության միջոցին հասնելու հետև հայոց կաթողիկոս ևստեցին ասորի հոգևորականները: Ասորիներն ուժեղ էին իրենց մասսայով և զրգամ բարձր գիրքերով և ունեին շատ հետևողներ հայ հոգևորականության միջոց: Այս խումբը պահպանողական էր և համեմատաբար ավելի սոցիալ:

Հունական օրինեստացիան ավելի ուշ առաջ եկավ, հաճանորն այն ժամանակից, երբ ս. Մեսրոպ Քյուլանցիսն զնայ իրավունք ձեռք բերելու, որ Հայաստանի հունական բաժնում էլ հայերն զրազոտություն մտածվի, Այս թույլտվությունն ստացվեց, բայց ուրիշ փոխադարձ զիջումով, այն է, որ Ս. զիրքը երբ թարգմանվի կամ զանև ուղղվի ըստ հունարեն բնագրի և որ հայ ուսանողությունն այսուհետև Քյուլանցիսն զնա ուսում ստանալու, փոխանակ Ասորիք զնալու: Եվ տեսնում ենք, որ երիտասարդությունը փափագելով դիմում էր Քյուլանցիսին, նույնիսկ ստանց իրենց ուսուցիչների թույլտվություն: Այս երիտասարդների թվին էին պատկանում նաև Խորենացի իր ընկերներով, որոնք ուղարկվեցին Ալեքսանդրիա բարձրագույն ուսում ստանալու և թերթագրական արվեստը սովորելու: Սրանք ընդհանուր հասկանելին էր ավելի լայն աշխարհայացք և ավելի բարձր կրթություն:

Այս երիտասարդները, որ հնուհնական զայիս էին Հայաստան՝ զնմ առ զնմ հանդիպում էին պահպանողական և անուսում, բայց ուժեղ հոգևորականության, Խրատ զնմ էին զայիս երկու խումբ՝ տարբեր կրթություններով, տարբեր աշխարհայացքով: Փայքարն անխուսափելի էր: (Հիշենք՝ որպիսի ընդունելություն զրգամ մեզանցին հարյուր տարի առաջ եղավ: Արքայանը էջմիածնի հոգևորականության կողմից):

Որ այս պայթյալը զասակարգային էր ու իրենական և ոչ անհաստական կամ անձնական՝ պարզ երևում է Ղ. Փարպեցու կարևոր վկայությունից: Իր թղթի վերջում, իր կրած հայաժամանակները նկարագրելուց հետո՝ նա ասում է. «Բայց ընդունենք, որ ես այս շարժարանները կրեցի իրավացի կերպով իմ գործերի համար. իսկ այն մյուս առաքելանման մարդիկ ինչո՞ւ այսպիսի և ավելի խիստ վշտեր կրեցին այս աշխարհում և խոստացույն վշտերի մեջ վախճանվեցին»: Սկսում է բերել օրինակներ, առաջին տեղում հիշելով «Երանին Մովսես փիլիսոփոսին» (անս վերք, էջ 8): Այնուհետև ձեռագրում մի թերթ պահասում է (կամ կորելի է պատահաբար, կամ, որ ավելի հավանական է, դիմումը պահել հանել են՝ ազգային խայտառակության քսումնելի արարքներն անհետացնելու համար): Հնարող թղթի վրա շարունակություն մեջ զրգամ է մի անհայտ

անձի մասին (անուր եզել է պոկված թղթի մեջ): «Երան նշանակեց աշխարհ անհանգիստ աշխատանքների վրա զիշեր ու ցրելի, Հայոց աշխարհի լուսավորության համար. Ոսկորները գերեզմանեց հանել էին տալիս ու զեղբ թափում, Հրեշտակավանձն Տերին նույն անհանգիստ հուսմանքներով վախճանացրին, և զնա այժմ էլ անհպ թիսխանդությունը կոչում են մեռածի հետ: Անարատ և անկեղծ հարգված հույսը, անբեռնողիկ զնա մեր սահմանը հասած, մինչ զայիս էր՝ լսեցին և ինչպես իշխումս զնմ զինվեցին ասկով: Ահա մյուս թարգմանն էլ, ո՞ր է զայիս»: Եվ այն օրնայլը հեռվից լսելով մահաբեր աղեղների ճայթյուներ՝ ազոթեց բարձրային և յուր ինչպիսիք պատվ, և նրա ցանկալի նըշխարները ամփոփելու արժանացան ուրիշներ և ոչ մեկը, Եվ այժն: Որքանքն բնորոշ է՝ «Ահա՛, մյուս թարգմանն էլ զայիս է՞ խոսքը: Դեռ հայրենիքի սահմանը ոտը չկոխած, զնա ոչ մի գործ չարած՝ նա իր զնմ է զիջում հուզմունքների խումբը լսել այն պատճառով, որ թարգմանիչ է, Քյուլանցիսյան բարձրագույն ուսում է ստացել: Որքանն պայքարը մղողում էր մի օրոշ զասակարգի գնմ, անկանխ նրանց անհաստական հանգամանքներից: Եվ երբ հայաժամերի ենթարկվածները թարգմանիչներն էին, այսինքն հունական կրթություն և օրինեստացիա տեսցողները, ազգ գիտենք նաև, թե ովքեր էին հայաժողովրդ, նույն Փարպեցին նրանց շարունակ անվանում էլ արեկանց հայոց, ասորական արեկա բուռից (ասոր. ԵՂԱՍ կրոնավոր), մինչդեռ մյուս հոգևորականներին կոչում է պարզապես տավոր (փարաշավոր): Գարձայս տեսնում ենք, որ Մովսես փիլիսոփոսին ծաղրելու համար նրա գրքերը կոչում էին փաթաղ իկես՝ ու զարձայս ասորական բաներով, ուրեմն ասորի էին կամ ասորացիս:

Պայքարն իրը սկսվեց և ազդեալի հետևանքներ ունեցավ հայ կուլտուրայի համար:

Մենք առայժմ երկու կողմերն առիթ կարող ենք ցույց տալ այդ պայքարի՝ լիզվի շուրջը և կրոնի շուրջը, որոնց երկուսի մեջ էլ ասորական խումբը հանդիսանում է պահպանողական, իսկ հունասերների խումբը՝ առողջոյնական:

Լեզվի հարցում նորիկ հունասեր խումբը հանդես բերեց մի բարենորոգչական ձգտում՝ հայերենի մեջ մտնել զանև մի մասը այն բազմատեսակ առավելություններից, որ ունեւ հունարենը, որով նրանք սիրահարված էին. նախդիրներով կազմված հարաբարձոր բառեր, համաձայ-

1 Արքայ-հունական հակամարտությունը Հայաստանում և Ֆրյուլ ասորական բուռերի բնորոշ գործունեությունը առաջին տեղում մտնանելից Մարտ. Ուպ. ՈՍՏ. ԱՐՄ. ԱՌՈՒՄԱ:

նական ազատություններ, հոգիք, սեռեր և այլն, որոնցից զուրկ էր հայերենը՝:

Քաղնեով ուրիշ գրվածքները՝ կարող ենք հաստատ անել, որ Փրիչոն ճառերը, Գրոնիստոսի յերակահույթյունը, Եվեթրիոսի ժամանակագրությունը, Փրոտոյից գերբը արգեն Քարգմանված էին հայերեն այս Քարգմանիչների ձեռքով: Եւն ժամանակ՝ երբ դեռ կենդանի էին հոսեղեղեղներին լիզվի պարագլուխները՝ Ազատանգեղոսի իմբարտոր, Փապարտոսի անհայտ հեղինակը, զուցեև Յղիհիկ ու Երջուրե: Եւրոպիայի էին այս հեղինակավոր մատենագիրները հաշտ աչքով նայել զերհոհելույն Քարգմանությունների և երանց Քարգմանիչների վրա, որոնք ահագին հեղագիրություն էին մտցնում դասական հայերեն լիզվի բառամթերքի և քերականության մեջ, նթե մեզ մոտ ժամանակեքոս և հենց մեր օրերում լիզվի բառամթերքի, քերականության և ուղղագրության մեջ նորամուծություններն այնքան քննադատությունների և բողոքների առիթ են տալիս, հիշենք Առ. Նուգարյանի և երա իմերի պաշտարը լիզվի ազնուգրպանների հետ, ի՞նչ կրինք, այն ժամանակ, երբ պահպանողականությունը, նախնայաց հետևելու սովորությունը օրենք էր: Մի հիշատակագիր, որի գրամբ մեջ է բերում Գ. Զարգանաչյանը (Մատենադարան Հայկական Քարգմանութեանց նախնայաց, էջ 397), ասանց հեղինակի անուկ ասուով, ասում է. «Ամեն ինչ անտես անելով, մեղքներ, ազգականներ, ստացվածքներ՝ փութացին ուսման վայրերը, իմաստության և գիտության տունը, երկար աշխատանքով ձեռք բերին գիտություն, գարձան ստեղծեցին՝ և բայ փրիստփաներ... Այնուհետև մեծ խնդրությամբ գործան իրենց աշխարհը՝ իմաստություն տարածելու... Բայց ոչ միայն բնորոնելովություն չգտան, այլև ենթարկվելին հեղինակների հակառակորդների կողմից. հի՛նչ էր դուրս տալիս (բաղբաջեք), ասում էին երանց. մեր պարունած արվեստակալ լեզուն (սկսեցինք) մեզ բոլորովին անուկներ են թվում, սուտ և սեռաչել է մեր իմաստությունը, անսոցուտ մեր աշխատանքը»: Եվ նրանք ախրում, խոր խոչովում էին արտմոխյամբ:

Երկրորդ առիթը, որ ազելի սուր էր և ազելի աղետալի հետևանքներով կրոնական պայքարն էր, տարածաշրջանային Քաղկեդոնի ժողովի զավանդարտության նկատմամբ: Այս ժողովը իր ընդունած բանաձևով

1 Ազգի այսպիսի բարենորոգչական փորձեր, ոչ միայն բուսականության, այլև բնականական ձևերի մեջ՝ խորթ են մեղադրում, բավական է ինչև ճանկահայտում, Ուսուցիչներն, Միտա Չերազեն, մեք մեջ՝ և Ստեփաննի, Ազգայնեն և ուրիշներին: Իսկ բանասերգծությունը ունի շատ ներկայություններ:

2 Քաղկեդոնի ժողով է ազգիքը, որ մեք համարում ենք ազգազուրկության փոխանակ ստեղծող:

Փրիստոսի մի թե կրկու բնութայն մասին՝ ամբողջ քրիստոնեյա աշխարհը բաժանեց երկու հակամարտող անհաշտ խմբերի՝ երկարակների (կրկու, բնութայն զավանդողների՝ ըստ Քաղկեդոնի ժողովի բանաձևի), որոնց ամբողջներն էին Բյուզանդիոսի և Հասթի, և միաբանակների (մի բնութայն զավանդողների)՝ հոգր ամբողջներով: Այնքանազորայում, Անտիոքում, Անտիբեյում: Հայաստանը, որ մյուս քրիստոնեյա աշխարհից կզգիցած էր: Եւ շփում աներ թե՛ Բյուզանդիոսի և թե՛ Անտիբեյում: Հարկավ չէր կարող անմաս մնալ այս հարցում, որով գրաբար էր ամբողջ քրիստոնեյա աշխարհը: Անտիբեյի ուսուցիչը Հայաստանում անարարալույս միաբանակ էր, այսինքն՝ մեքմում էր Քաղկեդոնի զավանդարտությունը: Տիմոթեոս Կուրի, հակաքաղկեդոնի ուսուցիչ պայքարող է Հակահաստությունը: Արգեն Քարգմանված էր հայերեն Ե զարի ուխտանական թվականներին: Իսկ Հունաստանում ուսում նոր սերունդը, Քարգմանուկան խումբը, բնականապես երկարակ էր, այսինքն ընդունում էր Քաղկեդոնի զավանդարտությունը: Այս կերպով հայ հոգրարականության մեջ ժողովի երկդասակություն: Եւ կողմն էր, անարական միաբանակ են խումբը, որ ուսուցիչ էր ըստ մասնաշրջի և գրաված բարձր գիթերով: մյուս կողմն էր հունական երկարակ սակավաթիվ խումբը, որ ուսուցիչ էր գիտական պատրաստությունը և հենարանով՝ տիեզերական ժողովի բանաձևով: Եկեղեցին պաշտոնապես դեռ չէր ըր մնում (անաղի երկդիմի որոշումը Քաղկեդոնի զավանդարտության դեմ Հայաց եկեղեցական ժողովը կայացրեց միայն 508 թվին, ժողովից 57 տարի հետո): Ես զգվաբանում էր միաբանակների սովոր խմբի դեմ դնալ և իրենում ժամանակի զգուշանում էր՝ հակահաստ որոշում կայացնելով միևն իր կողմը տիեզերական ժողովի և ընդհանուր քրիստոնեական եկեղեցու հետ և շարժել բյուզանդական կայսրերի բարկությունը: Բայց ավագ եկեղեցականներն անպաշտուն կերպով թե էին այսինքն միաբանակներին երանց պայքարի մեջ:

Որ հիրավի Հայաստանում Ե զարի երկրորդ կեսում կրոնական բուռն պայքար էր մղվում և երկու կողմերը մեկը մյուսին համարում էր մուլոված, շարսիտա, հերձվածազ՝ պարզ երևում է Խորենացու ողբից: Հենց սկզբում ես ողբում է, որ հուղարկատույնը վզգովվեց, ազնու-

1 Մյուս ազգայնց կարծիք է Համարի Խորենացու ողբից: Համարացու ժողովանցից էլ չի ողբում, և մեք չէր նկատում՝ կուսում և երանց, որ ասանց հարցում են այսպես լինելը: 2 Քաղկեդոնի էլ չոր թվում գրում է, թե համարներին մեքարկված ժամանակ դեմքը բանասերային պիտոգրիքի ինդրով չոր գործը թեկ, արարարանց կամ պիտոգրի, իսկ ես պատասխանում: «Ձեմ կարող էմ համարելովում ընդ անկել, մք գուցե ինչ էլ չեզ հեա թազեն»:

Քյան շնորհիվ չարափասությունը հիմնադրվեց: Քիչ հետո նա ասում է. «Մ'ի պետք է պայտաններն առաջ վարդապետության դեմ դուրս եկողների բերանը»: Մի երրորդ տեղ նա ասում է. «Եթեմ կոհիպեր ներսից և սարսափներ դրսից, սարսափներ հեթանոսների (=կրակապաշտ պարսիկների) կողմից և կոհիպեր հեթանոսների կողմից: Այս վերջին հեթանոսը բարձր միանցածայն որոշում է հորինեացու գիրքը այս պայքարի մեջ: Հերթվածող կողմում է նա; ով ճեղքվում անշատովում է եկեղեցու միտությունից, այս անունը կարող էր որովի միմիայն նրանց, որոնք քրիստոնեական ժողովի որոշումը մերժելով, անջատվել էին քրիստոնեական եկեղեցու միտությունից, այսինքն միաբնակներին: Արեմն բառ հորինեացու, հերթվածողները, շարափասունքը միաբնակներն էին, իսկ ուղղափառները, առողջ վարդապետություն ունեցողները Քաղկեդոնի զավաճարանությունն քնդունողներն էին, այսինքն երկաբնակները: Արարից հետո՝ վում է, որ հորինեացին երկաբնակ էր, քաղկեդոնական: Այս մասին մի ծանրակշիռ վկայություն ունեն է վրաց զրահակությունից, վրաց Արսենիս կաթողիկոսը (Թ զարում) խոսելով Մովսեսի մասին՝ նրան կոչում է ուղղափառ վարդապետ, այսինքն քաղկեդոնական, ինչպես ինքն էր¹:

Քաղկեդոնիկների մեջ գիտությունը և ազդեցությունը աչքի էր քնկնում հորինեացին, գուցեև նրանց պարագլուխն էր, ուստիև զլսաժողովուսն նրա զեմ էին ուղղված կապիմանները: Երկար տարիների քննարկում նրան ոչ միայն անտես էին անում, ծայրում, արժանաբարձում էին «և այլ շատ բաներով թշնամանում», այլև նրան զատապարտում էին ազրատության և զրկանքների, բայց նա անկնքն էր մեռում, Շուգրմանում էր նրանց ազրատությունը, մարառում էր նրանց հերթվածողությունը զեմ: Վերջը մի ճար գտան նրան յոնցնելու, ինչպես ասում է Փարսեցիք՝ ուրիշներից ամաչելով նրան եպիսկոպոսություն ավիլն իբրև մահազուր, որպեսզի այս միջոցով նրա բարձր ճաշից կտրեն, աչք փակելով նրա կրոնական համոզմունքի վրա:

Անց հասնել է հետո մի զրավոր ավանդություն, որ շատ համապատասխանում է Փարսեցու այս տեղեկության և հորինեացու Պատմությունից թուղ հետևության: Ըստ այս ավանդության՝ հորինեացին Քարսիվիլում է եղել անհայտության մեջ Վաղարշապատի շրջակայքում, մի զուրում՝ արդեն ծերացած հասակում: Նրան որոնելիս են յինում, որոնում է և նրա աշակերտակից Գյուտ կաթողիկոսը: Սա մի անգամ զայիս իջնում է այդ զուրը, նրան դիմավորում են, պատվով ընդունում: Ճաշի ժամանակ, սեղանի վրա ամեն եկեր մի բան էր ասում կաթողիկոսի պատվին. «որսնան և մի օտարական ծերունու, որ ներկա էր այնտեղ, և ասալարկեցին, որ մի բան էլ նա ասի: Նա սկզբից հրաժարվեց, բայց երբ Քրիստանկեցիք՝ զիջելով՝ հանկատարասից մի շատ զեղեցիկ ճառ ասաց քրիստական անով, երեք տնից քաղկեցած, շարականի նման: Բոլորը ապշած մնացին: Այն ժամանակ այդ օտարական ծերունու աշակերտը զիջելով կաթողիկոսին հայտնեց, թե սա այն Մովսեսն է, որին զու փնտրում էիր: Կաթողիկոսը նայում է ծերունու կերպարանքին, հիշում է նրա դիմածինը, ճանաչում է յուր վաղուց կորած աշակերտակից ընկրին, վեր է կենում, համարզվում է նրա հետ և յուր հետ տանելով, Քաղկեդոնից և Արշարունյաց եպիսկոպոս է ձևանալով: Եղևիկի մահից հետո: Հետո նրանից խոչորում են զրել: Հայոց պատմությունը, որ նա կատարում է հրաշայի հորինվածող:

Այս ավանդության կարևոր կետերն են, առաջին՝ Գյուտ կաթողիկոսը, որ ավթոր զրավեց 461—471 թվականներին, ուսումն ասել է հուլյանական Հունաստանում, ուրեմն իուլյանական քաղկեդոնիկ էր, կամ զոնե հակառակոր չէր նրանց. երկրորդ կետն է Մովսեսի ձևանալովը Քաղկեդոնի և Արշարունյաց եպիսկոպոս, բանի որ այս բանը վկայվում է և մի տարին ազրություն, մի կանոնագրքում. «Վ սրբուն Գրիգորը Քաղկեդոնից և Արշարունից մի եպիսկոպոսի վիճակ կարգեալ էին մինչև ցվախանս Քրիստոսհոսոն երանելուց Մովսեսի եպիսկոպոսն, ասալ զատուցեալս՝ Երրորդ կետն այն է, որ այս Մովսեսը Ղազար Փարսեցու հիշած փրիխսփոսն է, Մովսես հորինեացին:

Վերոհիշյալների ամփոփելով՝ կարող ենք հորինեացու կյանքի շարունակությունը արտասահմանից վերադառնալուց հետո այսպես ձևակերպել մտապարտապես: Հունարան լեզվի և մանավանց քաղկեդոնիկ լինելու պատճառով նա արժամարանների ու հայածանքի ենթարկվեց, ազրատություն ու զրկանքներ կրեց մտու երեսուն տարի, և յոթնասուտեական թվականների սկզբում, երբ արդեն վաթսու տարեկան ծերունի

¹ Ա. Լ. Մելիքոսթրիցի Վրաց պատմության, Ա. էջ 38, որ քաղկեդոնականությունը Հունաստանում և անձնականը երկրներում տարածված էր հայերի մեջ զեմ Ս ցորից պատճառով է ն. Մտոր փաստերով Արքայու անտեղ իր հետախց հետազոտության մեջ Արտուղի Ի միջ պաշտ նա այն միտքն է հայտնում, թե հայ չեզոք մեջ մտածված հանապարտությունը հայ քաղկեդոնիկների գործն էր (հայերը նմարգրում է և սկսուցեղիկուս Անտոնյանը «Հունարան պատմություն»): Միևնույնամյ համասայն մեք, քաղկեդոնականությունը լինե կապում քաղկեդոնականության հետ իբրև հետևանք, այլ երկրում է, միմյանցից անկուս, համարում մեք հետևանք Քաղկեդոնիկների հանապարտության, հասկանալ օրինապարտախ:

² Ղ. Ավրան, Այրարատ, էջ 56:

էր՝ նպիտակապես ձեռնադրեց, որով ոչ միայն վերականգնում էր նրա պատիվը, դազարում էին հարձակումները, այլև եղապատմոր պայմաններին ստեղծումով ձերտուն համար՝ իր սիրած գրական աշխատանքներին նվիրելու: Իր իրոք՝ նա ձերթեման հասակում հարգված և շատ հեղինակավոր անձնավորություն էր՝ երևում է նրա Պատմության շատ տեղերից: Այս ժամանակներն էր ահա, որ Մանչի Բազրատոսի իշխանը, նրա գիտության համբավը լսած լինելով, թեև անձամբ ոչ ծանոթ, դիմում է նրան՝ խնդրելով գրել Հայոց պատմությունը: Տառապանակ հայ Բազավորների և նախարարական տաճերի ձգտման պատճառով: Այս գործը, որի մասին պիտի խոսենք, նա ավարտեց Ե զարի ութսուհակուս թվականներին, մտա 483—485-ին, երբ իր խառնով ուայր ձեր էր և հիվանդուս և անպարապ է թարգմանութեանց: Երա մաւր տեղի ունեցավ հազիւտրին նույն զարի իննսուսուսուս թվականների սկզբին (անանք դնում են 493-ին), համեմայն զեպա Ղ. Փարպեցու թուղթը գրելուց ոչ շատ առաջ:

Մի շարք տարածված և շատ սխալ կարծիք կա բանասիրության մեջ, իբր թե նրա մա՛հից հետո նրա ոսկորները գերեզմանից հանել են, չուրրն են թափել: Այս առասպելը կրկնում են ոչ միայն հին գրականության անձանոթ հեղինակները, այլ նույնիսկ բանասիրները, երբեքուց: Թարգմանիները, ինչպես էմիլը և Ստեփաննե: Երանք այս կարծիքը հիմնում են Ղ. Փարպեցու վերը բերված խոսքի վրա, թե «զուգուսուսի գերեզմանին հանել և ի զեա արկանել»: Սակայն երանք մոռանում են, որ Փարպեցու թղթում՝ Մովսեսի հիշատակությունից հետո ձեռագրից մի թուղթ է բնկած, որի մեջ թվարկվում էին հայամանրի ենթարկված որսիչ մարդիկ, որոնցից վերջինիս է վերաբերում տեղեկությունը՝ ոսկորները գերեզմանից հանելու մասին, երբեքուց, նպիտակապես ձեռնադրվելուց հետո, որ նշան էր հայ հոգևորականության հաշտության նրա հետ՝ իր գիտական համբավի հետ վախճում էր նաև բնդհանուր հարգանք: Հենց միայն այս հանգամանքը, որ Բազրատոսյան իշխանը երան էր դիմել Պատմությունը գրելու խնդրով՝ շատ պետք է բարձրացնել նրա պատիվը: Այսպիսի պայմաններում նույնիսկ անհասկանալի կլինենք մա՛հից հետո նրա ոսկորները հանելը և զեպս անելը: Ընդհակառակը, տեսնում ենք, որ հոգևորականությունն աշխատում էր մոռանցնել տալ նրա քաղկեդոնիկ լինելու հիշատակը, և յոթերորդ դարի բանական թվականներին (Հունի Մայրաքաղաքում մասնակցության) նրա անունով մի թուղթ կեղծեցին միաբանակների ոգով, որով ձգտում էին միանգամայն ոչնչացնել նրա երկարակալ լինելու իրողությունը, որ զույց

ավանգարտը զեա հիշվում էր տեղ-տեղ, և միևնույն ժամանակ այս կեղծված թղթով, Մովսես երբեքուց հեղինակությունը, կոպել մյուս երկարեակների զեմ: Ուստի բացերիցս պետք է հրաժարվել այս սխալ ենթադրությունից, թե ոսկորները գերեզմանից հանելու տեղեկությունը երբեքուց և վերաբերում:

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ: Մեր հին մատենագրության մեջ երբեքուցին միակ անձն է, որի արհեստը, ազդորական պարագանները և զել է գրելը, մատենագրելը: Բազրատոսի իշխանից առաջարկություն ստանալով Հայոց պատմությունը գրելու՝ որսխուսության ընդունում է և ստամ, թե զս սիրելի է իր ճաշակին և մանավանդ սովորությանը, Ուրիշ տեղ առամ է. «Այր ձեր եմ և հիվանդուս և անպարապ ի թարգմանութեանց»: Սակայն նրա գրածին ամբողջապես մեր ձեռքը չեն հասել: Անհետ կորել են նրա այս գրվածքները, որոնց մեջ նա, իր հայտանոթի մոտ 30 տարիներում, մարտն էլ միաբանակների զեմ: Հայ հոգևորականության խիստ պարանոթությունը ոչնչացրել է նրա այս գրվածքները, թե՛ ուրիշ բնկերցողները չզայթակղեցնելու և թե՛ նրա անունը երկարեակության արտախց մարտին: համար, Մի բացանալով վկայություն ունենք Փարպեցուց, թե Մովսեսը վախճանվելու ժամանակ կրով թողել է մի ահալոր նշովը՝ հի վերս դիտարաց քահանայութեանց, որպես զոտը՝ ինքնին (= Վասն Ամսիկունեսն) գիտէք տեղեկացեալ: Երբեմն մի հայտին գրվածք, ասկայն այդ որված նշովը բոլորովին անհետացած է և միայն Փարպեցու թղթից գիտենք, որ նա երբեմն գոյություն է ունեցել: Եւսյն բախտին արժանացած կլինեն նաև նրա քաղկեդոնական ոգով գրածները: նույնիսկ նրա Պատմությունն անցել է հայ հոգևորականության խիստ քննության բովով և ուղղորդվել է:

Երա անունով մեր ձեռքը հասել են հետևյալ ինքնուրույն աշխատությունները.

1. Ենբրդյան Լեփսիսիանց (երիտասարդ հասակում գրված)
2. Պատմություն Լեփսիսիանց
3. Ճառ Վարդավաթի
4. Թուղթ առ Մանչի Արժունի
5. Պատմություն Հայոց

Բայց արանք, բացի Պատմությունից, կասկածելի են՝ իբրև անհարգատ գրվածքներ՝ երբեքուցին վերագրված: նրա թարգմանական աշխատությունն է Պիտրոց գիրքը, Բանասիրությունը մեծ համականությունը երան է վերագրում Թարգմանությունը կեղծ նույնիսկին: Պատմությունը վարուց Աղեքսանդրի և Գրիգոր նախնայանցու (Աստվածարևի) ճառերի մի մասի:

Նոր ձևադիրներում նրան է վերագրվում Յանթ Այնստայնի բայց վերջ ի վերջ պարզվեց, թե դա Անտոն Երբակացու գրվածն է յոթերորդ դարի երկրորդ կեսում:

Կան և ուրիշ մանր գրվածքներ քերականական բովանդակությամբ, որոնք ձևադիրներում վերագրվում են Խորենացուն, բայց զրանք չեն սպազրված և բառագրված:

Կա վերջապես նրա անունով կեղծված մի գրություն միաբնակների սրվդ, որի մասին վերջ հիշեցինք (տպագրված է Գիրք թղթացի մեջ, էջ 22—28):

Այս կերպով՝ Խորենացու անունով տպված մատենագրությունից անկասկած նրան են պատկանում Պիտոյից գրքի թարգմանությունը և ինքնագիր Հայոց պատմությունը:

Պիտոյից գիրքը ճարտասանական ձևերով է. բաղկանում է տասը գլխից՝ Պետք (որից և ամբողջ գրքը վերնագիրը՝ Պիտոյից), Երաստ, Եղ-ժամն, Հասարակ տեղիք, Ներքուշյան, Պարսավ, Բազդաստություն, Բա-բաստություն, Արտասանություն, Դրոսխյուն Ծորաբանչյուր գլխի սկզբում համառոտ ավանդում է թեոթիան՝ ինչ կանոններով պետք է գրել, և ապա գործնականը՝ 6—7 շարագրություն յուրաքանչյուրի համար: Վերջում իբրև հավելված գրված են երեք նոր օրինակ բարառություն, որոնք պատկանում են մի ուրիշ Մովսես Բերթոզի, որ վերջը դնում է նաև մի փորատարանության հորդորական՝ իր Թեոդորոս աշակերտի համար: Այս կերպով Թեոդորոս Խորենացու աշակերտը չէ, ինչպես ընդունում է Գ. Զարգասեանյանը¹, այլ այս հավելվածի հեղինակ Մովսես Բերթոզի, որ որովհետև շատ ստոր է Խորենացու:

Պիտոյից գիրքը թարգմանություն է հունարենից և հավանորեն Խորենացու անգղաենիկ աշխատություններից է, գուցե հենց Ալեքսանդրիայում ուսանողության ժամանակ գրված. որովհետև հունարան լեզուն նրա մեջ շատ ավելի է նկատվում, քան Պատմության մեջ, որը Պատմահայրը գրել է Ալեքսանդրիայից վերադառնալուց մտա ըստասուն տարի հետո, երբ երկար կյանքը հայ միջավայրում, հայերեն գրքերի ընթերցումը, հայերի հետ շփումը շատ մեղմացրել և շափափօրել էին նրան երբեմնի ժայռահեղ հունարանությունը:

ԱՅՅՅՅ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, Գրանք նրա գլուխգործոցին՝ Հայոց պատմությանը, որ խնկապես անմահացրել է նրա անունը և մնացել է անմահ հիշատակարան հայ մատենագրության:

Այս գիրքը նա գրել է Սահակ Բազդաստունու խնդրանք, որ, ինչպես

¹ Պատմություն Հայերեն ին գրություն, 1886, էջ 250:

բանասիրությունը ենթադրում է, այն Բազդաստունի իշխանն է, որին Վահան Մամիկոնյանը և նրա համարյա ընկերները ապստամբության սկզբում հայտարարեցին Հայաստանի մարզպան և որ մի ճակատամարտի մեջ սպանվեց մոտ 482 թվին: Դրվածքի ընթացքում հեղինակը հաճախ դիմում է իր մեկնեանին, նրա խնդրանքների վերաբերմամբ այս կամ այն պատասխանը տալով. որից կարելի է եզրակացնել, թե Պատմահայրը իր գրածները մաս-մաս ուղարկում էր նրան, ստանց սպասելու իր գործի ավարտին:

Պատմությունը բաժանվում է երեք մասի կամ հատվածի¹, որոնք կոչվում են 1) Հայոց մեծերի ծննդաբանությունը, 2) Հայոց միջին պատմություն և 3) Մեր հայրենիքի պատմության ավարտը:

Առաջին գիրքը կամ մասը պարունակում է 32 դրոսի, որոնցից առաջին յոթը գլուխները նախապատրաստական նյութեր են՝ Սահակ Բազդաստունու թղթի պատասխանը և նրա խնդիրը կատարելու խոստանո (ա). Երկրորդն աքրյուրների նախապատմությունն է (բ). Մեր նախնիքի թագավորների և իշխանների անխմաստասիր բարքը (գ). Ազգամի և մյուս նահապետների մասին արտաքին պատմիչների տարբեր պատմածները (դ). Նոյի երեք որդիների ազգաբանությունը մինչև Աբրահամ, Իհնուս և Արամ (ե). Աբրաքին պատմիչների Ս. գրքին նման և նրանից տարբեր պատմածները և Ուլմպիզորոս փիլիսոփայի անգիր գրույցները (զ). Աբրաքին հեղինակների Բել կոչածը, Ս. գրքի ներքուլթն է (է). Ուլմերոզը և ինքնորոգ զուգեներում պատմում է իր գրավոր աղբյուրի՝ Մար Աբասի և ինքնորոգ, որ Վաղարշակի թղթով գնում է Արշակ Մեծի մոտ և նրանից թուլլավություն է ստանում քննել նիկոկի գրադարանը. այստեղ նա զբուսում է մի գիրք հունարեն լեզվով, որի վրա մակագրված է եզել, թե այս մատչանը Աղեքսանդրի (Մեծի) հրամանով թարգմանված է քաղցկանից հունարենի և պարունակում է բուն հեղինակի նախնիքների պատմությունը: Այս մատչանից Մար Աբասը ընդուն է Հայոց պատմության վերաբերյալ մասը հունարեն և ասորերեն գրով և բերում է Վաղարշակին: Սա մեծ ուրախությամբ ընդունում է Մար Աբասի բերած պատմությունը, հրամայում է զգուշությամբ պահել աքրուհիում, իսկ մի մասը հրամայում է արձանի վրա գրեցնել: Սերջևի (պարզ չէ, արևանի վրա գրեցածից, թե բուն գրքի) հեղինակը պատմական անցքերին փակեթանալով խոստանում է բավարարել իր մեկնեանի հարցասիրությունը և մեր բնիկ

¹ Հասած կամ հատված կազմված է հունարենի հետևողությամբ, նեմո հասունի կտրել բառից τόμος (տոս—TOM)— հատված, կտոր: Ազելի սովորական նն է հասոր:

Եւխարարներէ Հյուզպարոթյունը հասցնել մինչև քաղզնացոց Ասորականս պալ թագաժորը:

Տասներորդ զիւով սկսվում է բուն Հայոց պատմութիւնը, Հայկի պատերազմը Բիլի հետ (ժ, ժա), Հայկի հաջորդները (ժբ), Արամի գործերը (ժգ, ժդ), Շամիրամի պատերազմը Արաշի հետ և կառարած շինութիւնները (ժե—ժը), Երբայեցոց, Քաղզնացոց և Հայոց մեծերի ծննդաբանութիւնը մինչև Գաճիթ, Ասորքնապալ և Սելալորդի (ժթ), Արայան Արա (ի), Հայոց առաջին թագաժոր Պարուլը և նրա հաջորդները (իա, իբ), Արծրուշայց, Գնծոյաց և Անգնդանս ծագումը և Աղմնայոց բոլշըր (իգ), Տիգրան Երվանդյան (իդ—լ), Տիգրանի հաջորդները (լա), Եգիպական պատերազմը և Զարամայը (լբ): Տիգրանի հաջորդներից վերջինն է Լգնի Վա՛ն, որ պատամբելով սպանվում է Աղթնանդը Մակեդոնացոց, (323 ՆՔ), որից հետո, մինչև Վաղարշակի թագաժորելը (132 ՆՔ) հեղինակը ոչինչ չի պատմում Հայոց մասին, ասելով թէ ստույգ բան չունի պատմելու, որովհետև ազմուկ և շփոթութիւն էր տիրում, և շատերը մքրած էին մեր աշխարհին տիրանալու համար, մինչև որ Պարթևների Արշակ Մեծն թագաժորը հեշտութիւնով մուտք գործեց Հայասան և թագաժորեցրեց իր Էդրոքը՝ Վաղարշակին:

Առաջին գրքից հետո առանձին գրված են երկու գլուխ «Պարսից աստապելներից», որոնցից առաջինում բերված են պարսից աստապելները Բարաքասի Անդանակի և Լրուզնի մասին, իսկ երկրորդով՝ այդ աստապելների բացատրութիւնը, ճշմարտյալ պատմութիւնը: Հեղինակը հայտնում է թէ ինքն առեղծ պատմ է, նուշնիս զգում է մէկ անձին և անհարմար աստապելներից, բայց գրում է՝ առի՞վում անգնասի թախանձանքից, միայն արծան չի համարել նրանց դեռակել իր Պատմութեան սրել մասում, այլ գրել է զատ, ասանձին:

Երկրորդ գիրքը բազկացած է 92 զխից, սկսվում է Պարթևների ասպատարութիւնից Մնկելացոց զեմ (ա, բ) և Վաղարշակին Հայոց վրա թագաժորեցնելուց (132 ՆՔ) (գ), և վերջանում Տրդատի մահով (318 ՆՔ), որինն պարտնակում է Հայոց 450 ասրովա պատմութիւն: Այս մասում պատմական կարևոր շրջանների մասին պատմելիս՝ հեղինակը հիշում է այն ասրլուրները, որոնցից օգտվել է:

Երրորդ գիրքը պարունակում է 68 գլուխ «հեղինակին ժամանակով մտա կամ ինչ առաջ պատահած անցքերը», սկսած Տրդատի հաջորդ Խուրըժ Փորթից (319) մինչև Արշակունւաց թագաժորութիւն քարտուր (428), այսինքն 110 ասրովա պատմութիւն (ա—զզ), արծնհեռ Սասնակ կաթողիկոսի Պարսկաստանից հնա զառնայը Եմուկի հետ (կե.) Եմուկի անարժան գործերը (կզ), ս. Սասնակի և Մարտոյի զախանձելը (կե) և իբրև

վերջարան՝ «Որք՝ Արշակունւաց թագաժորութիւն վերացման և ս. Գրիգորի ստճմից բանաւայապետութիւն զարգանակ մասին» (կբ):

ՉՈՐԲՈՒՄ ԳԻՔԻ ՀԱՐՅԸ: Ժ գրքի հեղինակ Թովմա Արծրունին հիշում է հորինացու Պատմութիւն մի Չորրորդ գիրք եւ: Եւխական հիշելով Սասնակ կաթողիկոսին և Հայտնելով, որ նա ապրեց 120 ասրի, արծնհեռ հիշում է Սասնակ թագարտունի օպարապետի մահը, որից մի բանի տուչ հետո շարունակում է. «Սասնակ այս այն Սասնակ է, որոյ հրամանաւ գրեաց մեծ վարդապետն Մովսէս տիեզերահաշակակայ թերթուն՝ զորք Պատմութեան Հայոց մեծաց հրաշալակ յարկնաւով, սկսելով յնկարայ մինչ ի կայսր Ջենան, ուսչ ժամանակ կենաց տեւաւ ձգելով ամա ճԻ ի և պարտար ձերթեմար: որպէս գրեալ աստեղեցաւ մեկ այս ի չորրորդ գրուագի խոտարանեալ պատմութեան Մովսէսի ետրեւացուց: վերագործութեան ի վերայ երկնցուց զրուպետի հաստաւ մին: զոր և երանելիս Կորնն, ուսումնակից Մովսէսի և աշակերտ արբըր Մետրուպոլ յնրումն ստուգարանեալ պատմութեան զայստիկ մեկ հաստարմացուցանել»: (ս. Պետերը, 1887, էջ 75—56): (—):

Գ գրքի գլուխթիւնը պետք է բացիբաց մեթել, քանի որ ուրիշ ոչ մի հեղինակ այն չի հիշում, ոչ մի հեղինակ նրանից ոչ մի բազկածք չի անում, այլ բոլոր ասաշին երեք գրքից օգտվելուց հետո զիւում են որիշ հեղինակների և նրանցից բազկածքներ անում, քանի որ ոչ մի ձեռագիր, ոչ իսկ գրքերի ցանկերը, չուն պարտնակում որևէ հետք այդ գրքի գլուխթիւն, իսկ Գ գիրքը իր անունով «Ասարտարտունութիւն մերց հայրենաց» և վերջարանի Ողբով ապացուցանում են, որ Գ գրքով էլ վերջանում է Հայոց պատմութիւնը: Արժախ որ Ք. Արծրունու մի անգամ հիշած Գ գիրքը պետք է համարել կամ թուրիմացութիւն կամ ազգագրութիւն: (—):

ՊԵՏՄՈՒՄՅԱՆ ԱՐՅՈՒՄՆԵՐԸ: Խորհնացին ձեռնարկելով նոր՝ իր նմանը Հայաստանում շունեղոջ գործի, այսինքն հորինելու Հայոց սխումեական պատմութիւնը նախնական ժամանակներից մինչև իր օրերը՝ բնականաբար կարել պետք է ունենար աղբյուրների Ենք քանիցս անգամ զանգուսում է, թէ ձեռքի ասի չունի այս կամ այն կարևոր գիրք կաւ ժամանակագրական ձեռնարկը, որանցից անտար Կերտով հյուսիս պատմական անցքերն ու ժամանակները: Եվ այս զանգուար շատ հասկանալի է մի հեղինակի կողմը, որ զգում է, թէ որքան մեծ ու պատասխանատու է իր սկսած գործը և որքան ինքը զուրկ է անհրաժեշտ միջոցներից, հեռու է լուսավորութեան կենտրոններից, ապրում է մի երկրում, որտեղ գիրքն ընդհանրապես հազվապէս մի բան էր: Ուստի նա, զրական այս անապատում, մանանախ նման ընդունում է որևէ զրվածք:

որ գտնե մի նախադասութեամբ՝ մի ակնարկով կարող էր իրեն օգտակար լինել:

Նա գործ է ածել բազմաթիվ աղբյուրներ, որոնցից մի մասը հանգանե հիշում է, մյուսները չի հիշում: Բայց այս բոլորն էլ, բացի Մարտարայան աղբյուրից և ժողովրդական երգերից, Հայոց պատմության համար երկրորդական նշանակութուն ունեն և պահանջին չեն բավարարում:

Նրա հիշած աղբյուրներն են՝ Ս. դիրքը, Մար Աբուս Կատինայի պատմությունը, Հայտաման Պետոյից, հայ ժողովրդական առասպելները կամ երգերը, Հուլիոս Ափրիկանոս (Գ դարի), Եվսերիոս Կեսարացու Եկեղեցական պատմությունը (Գ դար), Հովսեփոս Փյարիոս (Ա դար), Լարուրես (Ղերուհա) Եղեացի (մոտ Գ դարում), Խոռոհրուս (Գ դար), Փերմելիանոս Եպիփանոս (Գ դար), Ալեքսանդրոս (Ե դարի երկրորդ կեսում), Հրոպոլիտոս (Գ դար), Մանսեթոս (Գ դար ԵԲ), Ուլյուս Ելբոմ (Ա—Բ դար), Արիստես Փեղզացի (Ա դար), Բարգաման (Գ դար), Բարսեմա (Գ դար), Արտիթես (Գ դար): Պոլիկատես, Եվալարոս, Ալեամազրոս և Փղեզանիոս շարս հույն հետաք հեղինակներ. նաև Համերոս, Հերոդոտոս, Պլատոն, որոնցից ցիտասներ է բերում կամ անդհնություն ստանում: Հիշում է նաև Բերսոս Բազղեացուն, Ալեքսանդր Բազմավային, Արյոզնեսոսին, Կեփագիանին, որոնց նա ծանոթ է Եվսերիոսի ժամանակագրության միջոցով և ոչ թե անմիջապես:

Նրա չհիշած, բայց օգտագործած աղբյուրներ են՝ հայ հեղինակներից՝ Կորյուն, վկայարանություն և. Քաղոս առաքել, Փովառոս, իսկ օտարալեզու՝ հույներն Քարգանակած հեղինակները՝ Կղնիս Ալեքսանդրոսի, Դիոդորոս Մեկիլիսացի, Փիլոս Ներսիսի, Կրիզոր Նյուսացի, Կրիզոր Նազիանզացի կամ Աստվածարև, Եվսերիոսի ժամանակագրությունը, Սուս Կալիսթենեսի պատմություն վարուց Ալեքսանդրի, Սոկրատի Եկեղեցական պատմության և Մեղրեստրոսի Վարքի հայերեն Քարգանակությունը, Եղովպոս Կեսարությունը:

Թե ինչու՞ և որտեղից աղբյուրներից մի մասը հիշում է, մյուս մասը ոչ՞ զի՞մ էր հիշում և սպասող պատասխան տալ: Խոսք չի կարող լինել այն մասին, թե նա կամենում է թարցնել իր գործածած աղբյուրները: Կորյունին, Եվսերիոսի ժամանակագրությունը, Փիլոսին, Դիոդորոսի հիշելը միայն պատիվ կարող էր բերել Պատմությանը և նրան ավելի արժանազավա դարձնել, շի՛շուր միայն կարող էր վնասել: Թվում է, թե Խոսեանցի ընդհանրապես չի հիշում այն աղբյուրները, որոնք շատ հայտնի և բարձրաշուն հասկանալի են, ինչպես մեկը այժմ իբրև աղբյուր ցույց չկեր սալիս հանրագիտական բառարանները, կամ ժամանակա-

գրական աղբյուրները: Գարձյալ չի հիշում այն աղբյուրները, որոնք չեն վերաբերում պատմության որոշ շրջանի, այլ որոնցից նա մասնավոր անցի մասին որևէ տեղեկություն է բազում կամ բնօրին անհու առասպելածրեր: Գարձյալ չի հիշում այն զրգածները, որոնք ինքն է Քարգանակը, որմեն և մասամբ իր աշխատությունն է համարում: Բայց առանձին պարմանի մեջ է այտուց Փաժասոսի Պատմությունը, սրից օգտվել է Խորենացին, բայց թարցնում է այս աղբյուրը՝ նրա խոշոր պակասությունների պատճառով:

Վերահիշյալ ավելի քան քառասուն աղբյուրներից ամենակարևորներն և բանասերներին ավելի դարողեցողները եղել են Մար Աբասի Պատմությունը և հայ ժողովրդական առասպելները: Մյուս աղբյուրները մեծ մասամբ հայտնի են և ուսումնասիրված. մի քանիսն էլ բոլորովին անծանոթ են, որոնց մասին որմեն ոչինչ չի կարելի ասել:

ՄԱՐԱԲԱՍՏԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, Խորենացին ինքը պատմում է այս աղբյուրի ծագումը (Ա. ր. Բ): Եթե ստույգ լինեք ինչ որ Խորենացին պատմում է այս Պատմության ծագման մասին, այնինքն, որ Մարաբաստան աղբյուրը հանված է Ալեքսանդր Մեծի հրամանով թաղերհանհ հունարենի Քարգանակած մի պատմությունից՝ ապա նա կիրեն ամենահին և ամենապատվական պատմական հիշատակարանը աշխարհի վրա (չհաղված բնեռագիր և հիերոգլիֆ արձանագրությունները). և սկզբներում այսպես էլ նախում էին այս աղբյուրի վրա: Բայց եկրպուական բանասիրական քննադատությունը հնազհետե երևան հանեց այս աղբյուրի կեցածիքը. նրանց հետեցին և այս բանասերները: Բնեռագրությունը գտավ, որ Ալեքսանդրի ժամանակ նիկիզ բազաբը շխար, փլատակները կույս էր. և թե նույնիսկ բազաբը գոյություն ունենար՝ նրա մեջ մատյաններ էլին կարող գտնվել, այլ աղբյուրիների վրա զրոշված սեպագրություններ, որոնք հուպարներով գրովիցին անցյալ դարում նիկիզի փրատակների պեղումների ժամանակ. բայց ամենազխավորն այն է, որ նիկիզի մատյանում կամ սեպագրությունների մեջ չէր կարող պարունակվել անչպիսի պատմություն, որի մեջ Բարբելոսի և Նիկիզի աստվածները (Բել, Տամիրամ) պարտավ կամ ամոթյալ զերի մեջ զուրս բերված լինեին, իսկ հայերը (Հայկ, Արա)՝ իբրև զյուցագուձներ և առաքելության տիրապետներ: Պեղումներից զուրս եկած սեպագրությունների մեջ պատմբված են քարեկացիների և առաքեստեցիների փառավոր հաղթությունները միայն՝ քաղաքների ավերելը, երկիրների խողալուրը, օտար թագավորներ սպանել կամ զերելը. բայց ոչ մի անգամ իրենց պարտությունը:

Մարաբաստան աղբյուրի կեցածիքը բացվելուց հետո հարց ծագեց,

Քն ո՞վ է կատարել այդ կեղծիքը և ի՞նչ իրական հիմք ունի այդ պատմությունը: Շատերը կարծիք հայտնեցին, թե Մար Աբաա անունով անձ առձանաարև չի եղել, նրան հետքն էլ ինքը հորենացին, ուրեմն Մար Աբաա և հորենացի նույն անձն է: Քայց վերջը այս ժայռահող կարծիքը մերժվեց, և այժմ ընդունված է, թե եղել է Մար Աբաա անունով մի մանուկ (հայ կամ ասորի՝ հայանի չէ), որ զոր է առել հայոց նախնական ժամանակին վերաբերյալ ավանդությունները և երանց վավերականությունը՝ ընծայելու նպատակով հետքն է նրա ծագումը՝ նիհովնի գրասենյակ: Իսկ հորենացին հավատացել է նրա պատմածին: Իսկ այս ավանդությունների հիմքը Մ. Գարագաշյանը համարեց՝ հայն մասնակազմների ասորիստանցիների և պարսիկների մասին արած պատմությունները, որ մեծ մասամբ անվավեր են նվերիստի ժամանակագրությունից և հարմարեցրած են հայերին ("):

Սակայն Մարաբայան աղբյուրը, մեր կարծիքով, ուրիշ հիմք ունի, որով նախկին հմայքը կորցնելուց հետո ուրիշ նոր հմայք է առանում, իբրև հայ ժողովրդի հիշողությունների նախահայվական աշխիճ՝ ուրարտական ժամանակների Հայաստանի պատմությանը: Երբ արարական տիրապետության ժամանակի հիշողությունները հազար տարի ապրել են մոլորագրի մեջ Սասունցի Գավթի վեպով, ինչո՞ւ նույն ժողովուրդը չէր կարող նույնպես հազար տարվա հիշողություններ պահպանել իր երկրի հեռավոր պատմության մասին. եթե նկատի առնենք, որ այդ աղբյուրի մեջ գրածը անմեղից Քիչ Բարկլոնի աստված է եղել, Շամիրամի՝ Ասորեստանի աստվածուհի, Հայկի՝ Հայոց հին աստված, որի անունով կոչված է Օրինի համասնադրությունը, իսկ Աբաա մի անմահ զոր (համապատասխան Իշտար—Շամիրամի սիրահար Աղունիսին), Պլուտոնի հիշած հայ էրբ, ապա գլուխով կհամոզվենք, որ այս անունների տակ մարմնացել են մի կողմից Բարկլոնն և Ասորեստանը (Քիչ, Շամիրամ), և մյուս կողմից Հայաստանը (Հայկ, Աբա), և Քիչ ու Շամիրամը արշավանքները Հայաստանի վրա՝ ապա հիշողություններ են Բարկլոնի և Ասորեստանի մղած դարավոր պատերազմներին ուրարտական թագավորների զեմ: Հիշողությունները նույնիսկ պահպանել են այս պատմական տեղերին հաջորդականությունը:

Բարկլոնի անբեղատ, որտից դար շարունակվող արշավանքները, ինչպես վկայում են սեպագիր արձանագրությունները, ապացույց են այդ արշավանքների անհաջողության, որ հայ ժողովրդի հիշողությունների մեջ արտահայտվել է Քիչի սպանվելով աղեղնավոր Հայկից: Իսկ Ասորեստանի արշավանքները, որոնք հաջողությամբ պսակվեցին Ուրարտուի նվաճումով, արտահայտված են Աբաայի սպանվելով Շամիրամի

զորքերից: Հետաքրքրական է, որ հիշողությունները պահպանել են Շամիրամ աստվածուհու թնորդ գծերը՝ աղագականություն և վավառատություն:

Այսպես ուրեմն, Մարաբայան աղբյուրի մեջ պահված են այս վաղեմի պատերազմների հիշողությունները, մինչդեռ հորենացին, որ այդ պատերազմները նկարագրված է ըստ Մար Աբաաի, հակացողություն անգամ չունի նրանց իսկական նշանակության մասին և վանի շինությունը, ուրարտական թագավորների բեռնագիր արձանագրությունները վերացրում է Շամիրամին:

Պետք է նկատի ունենալ, սակայն, որ հորենացու Պատմության առաջին գիրքը մաքուրապես Մարաբայան աղբյուրից չէ, այլ մի մասը միայն՝ մյուս մասերն անվավեր են ուրիշ աղբյուրներից, Բերոսյան Սիրիլայից, «ի բանից արանց յմաստնոց և յառասով թառախոսաց» (Ա. ՏԻ), որոնց ստուգության մասին այնքան էլ վստահ չէ, և հատկապես Տիգրան Երվանդյանի պատմությունն առել է մեզ անձանթ՝ «Հիստորիան Պիտոնիցա կոչված քերթվածից, որից պատահարաբար 3—4 տող պահպանված է հայ հին քերականների մեջ»:

«Եւ արց ներգործեալ ի մյուս երկնք առ խորհուրդս փողարին մեծապոյ Տիգրանայ զեղանին Տիգրանուհի, իւր ներգործեալ զկուշարարն, նաև ողջամիտ աշխարհածուի», որ վերացրվում է Գավթի Անհաղթին:

Պրովան ժամանակի մասին զեռ ևս կրողը տասնութերորդ դարի ստապին կեսում կրթիք հայտնեց, քի այս Պատմությունը պետք է գրված լինի իններորդ կամ տասներորդ դարում, Բաղրատույնաց հզորության ժամանակ Հայաստանում: Ի միջի այլոց նա աղայուց է բերում Բարեբաի կամ Բարեբրդի հիշատակությունը, որ ըստ Պրովանի շինված է Հուստինիանոսի ձեռքով վեցերորդ դարում: Սակայն ևս կրողի կարծիքն արձագանք չգտավ: Անցյալ դարի ուսումնական քվադակներին Գուտմիսր Բրիանանկան հանրայնաբանում զեռեզված հողվածում վճռական կերպով պնդում է, թե Պատմությունը պետք է գրված լինի յոթերորդ դարի ստապին կեսում, 634—642 թվականների միջև, և նրա հեղինակը ոչ թե Մովսես Խորենացին է, հինգերորդ դարի հուշակավոր Բարգմանիչը, այլ նրա զինակի սակ Քարզված մի անհայտ անձ: Գուտմիսրն իր այս կարծիքը հիմնում էր մի քանի փաստերի վրա, որոնցից Պատմության մեջ հիշատակվում են Առաջին, երկրորդ, երրորդ և Չորրորդ Հայր, այնինչ հայտնի է, որ այդ բաժանմաներից սահմանված են Հուստինիանոս կայսրի ձեռքով 536 թվին, Գարձալի հիշատակվում է Պատմության մեջ, թե Շաղոմ Բ Հունաստան աղշավելիս հասել է մինչև Բյուզանդիա (Գ. Ժզ), այնինչ հայտնի է, որ Սասանյանները մինչև այդպեղ հասել են ստապին անգամ 608 թվին: Նույնպես Գուտմիսր Խորենացուն էր վերագրում հին Աշխարհացույցը, որ հիմնված պետք է լինի յոթերորդ դարում: Բայց բուռն պաշտոն Խորենացին Պատմության ուղ ժամանակի գործ լինելու մասին սկսվեց 1892 թվին Ֆրանսիացի հայագետ Կարիերի կողմով, որ մի շարք ուսումնասիրությունների մեջ շատանց ցույց տալ, թե Հայոց պատմության հեղինակն օգտվել է Սոկրատի եկեղեցական պատմության և նրանց կցված Սեղիստրոսի վարքի հայերեն ընդարձակ և համառոտ թարգմանություններից, որոնք կառարվել են յոթերորդ դարի վերջում, ս. Բարսեղի վանքից (Սոկրատի միջոցով): Մալալայից (Ջ գարի վերջը), Զատիական ժամանակագրությունից (է գարի սկզբներում), Պրովանիսոս կեսաբացուց (Ջ գարի երկրորդ կեսում): Կարիերի ուսումնասիրությունները լույս տեսան Վիեննայի «Հանդես ամսօրյալում» 1893—1894 թվականներում, որնք տարի հետո, 1897-ին Մեքսիկոյ վ. Տեր-Մոսիսյանը վաղարշակաւում հրատարակեց Սոկրատի եկեղեցական պատմության ու նրանց կից Սեղիստրոսի վարքի կրկին հայերեն թարգմանությունները (Մեծ Սոկրատ և Փոքր Սոկրատ): Հրատարակելն ընդարձակ առաջաբանում աշխատում էր ապացուցել, թե Խորենացին չի ճանաչել Սոկրատին և ոչ էլ որևէ կերպ օգտվել է նրա

հուշարեն ընդգրկեց կամ հայերեն թարգմանությունից, բայց օգտվել է Սեղիստրոսից, «Թեև ոչ մեր ձեռքը հասած հայերեն թարգմանությունից» (էջ 16Թ): «Երբ կրճատվում էր Մեծ Սոկրատը, համառոտորդ խորհրդավոր նրա (այսինքն Խորենացին) մեծ հեղինակության ստաշ, նույնիսկ իր ընդգրկը ըստ այնմ է փոխում, շարունակ օգտվելով Խորենացուց» (էջ 22): Բայց գրքի լույս տեսնելուց հետո երկու քանասեր միմյանցից անկախ՝ Միքառնը («Արարատ», 1897-թ., էջ 422) և Պատմությանը «Հանգիս ամսօրյա», 1899 թ.), ցույց տվին Խորենացու ուսումնական մեջ մի ընդարձակ հատված, որ բառացի անված է Սեղիստրոսի վարքի հայերեն թարգմանությունից: «...»

Այս գլուխն այնպիսի մեծ իրարանցում ստաշ բերեց բանասիրության մեջ, որ շատ առատանվով մտքեր հարկեցին Կարիերի կարծիքին, նույնիսկ Սոկրատի հրատարակիչ Մեքսիկոյ վարդապետը «Արարատի» մեջ (1898 թ., էջ 165—173) մի հողված տպեց, որով հրատարվում էր իր գրքի առաջաբանում հայտնած կարծիքը: «...»

Սակայն Կարիերի և նրա համախոնների կարծիքը ըմնաց ստանց բնագառության և հերքման, Թողնելով շատերը, հիշենք միայն նորայր Բյուզանդացուն և Կոնիսթրին: Առաջինը մի շարք հողվածներում («Հայերեն հին գրականության խնդիրներ», «Մշակ», 1898 թ., №№ 192, 193, 195, 203, 216, 217, 1899 թ., №№ 16, 17) ի միջի այլոց անհավանակի կերպով ապացուցեց, որ ոչ թե Խորենացին է օգտվել համառոտ Սեղիստրոսից, այլ համառոտըն է օգտվել Խորենացուց (ինչպես պաշտպանում էր և Մեքսիկոյ վարդապետը). իսկ Մեծ Սեղիստրոսի մասին կարծիք հայտնեց, թե ավելի հին թարգմանություն է (նրա հողվածների շարքն ընդհատվեց և այս վերջին կարծիքը մնաց չապացուցված):

Ավելի հետաքրքրական է անգլիացի հայագետ Կոնիսթրի կողմից նրանով, որ սկզբում հարած լինելով Կարիերի կարծիքին, վերջը, երկուս ուսումնասիրություններից հետո նա Թողեց այդ կարծիքը և գարձալու Խորենացու Պատմությունը Հանաչեց Ծ գարի գործ: Նա 1901 թվին գրք մանակն մի ամապարտ ապագրեց մի հողված (որի հայերեն թարգմանությունը լույս տեսավ «Հանդես ամսօրյալում», 1902 թ. հունվարի և մարտի համարներում), որի մեջ հմտացրեց քննության ենթարկեց Խորենացու այն հատվածները, որոնք համարվում էին փոխառություններ Մեծ և Փոքր Սոկրատից, Սեղիստրոսի վարքից, Մալալայից և առհասարակ այն աղբյուրներից, որոնց վրա մատնանելի էին Կարիերի և նրա հետևողների և եկել հետևյալ ձգրակացություններին. Փոքր Սոկրատից և Փոքր Սեղիստրոսից Խորենացին չի օգտվել, ընդհակառակը, քսանց համառոտըն է օգտվել Խորենացուց (նույն կարծիքը հայտնել էր և

ն. Բյուզանդացին և սրանից առաջ Մեհրոզը վարդապետը): Մեծ Սուրբատից և Մեծ Սեզրեստրոսից հորենացին արգարև օգտվել է, բայց սրանք չեն Թարգմանված է դարձում, Փիլոն Տիրակացու ձեռքով, ինչպես սխալմամբ ընդունված էր, այլ շատ վաղ, զեռ հինգերորդ դարում, գուցե հենց Մ. հորենացու ձեռքով: Թարգմանության լեզուն հինգնում է ը գարի ավագ Թարգմանիչների լեզուն: (Նույն միտքը հայանել էր և ն, Բյուզանդացին, բայց հոգվածների շարունակությունը ընդհատվել էր): Մուլալան չի ծառայել հորենացու իբրև ազրյուր, սրանք երկուսն էլ, իբրայի անկախ, օգտվել են հնագույն հունարեն ազրյուրից, որ զեռ յորրորդ դարում գոյություն ուներ:

Այս հեբրեոմենք բավական փարատցիցին կասկածը Պատմության ուշ ժամանակի դործ լինելու մասին: Այս կարծիքը պաշտպանողները նույնիսկ հայտնեցին, թե Կարիների բերած հիմքերն արդեն կորցրին իրենց նշանակությունը: (...)

Մենք կարծում ենք, թե Պատմության գրության ժամանակի հարցը պետք է սպառված համարվի այն բազմաթիվ հին և նոր ապացույցներից հետո, որ մենք բերել ենք հորենացու առեղծվածի շուրջը մեր աշխարհության առաջին հավելվածում, Բավական է միայն նկատի առնել, որ Մեհրեսի պատմության մեջ և նրա ազրյուր Մար Արտա Մծուրեացու մոտ այս Պատմությունից երեք բազմաթիվ է բերված և մի բազմաթիվ Փիտոլից գրից, որ հորենացու Թարգմանություն է ձևափոխված: Իսկ որ նրա Պատմությունն սկզբնական ձևով մեր ձեռքը չի հասել, այլ նրա խմբագրությունը է կամ Ը դարից, այս էլ մենք ցույց ենք տվել նույն աշխատության երկրորդ հավելվածում: (...)

ԽՈՐԷԱՍՏՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ

հորենացու Պատմության արժանահավատության մասին արգեն Լա Կրոզը բացասական կարծիք էր հայտնել զեռ մԸ դարում, երբ այս Պատմության առաջին լիակատար լատիներեն Թարգմանությունն էր օտագործվում Վիստոն եղբայրների ձեռքով: Հետո եղան մի քանի մասնակի բրեյնություններ այս մտքով, բայց ամենից հիմնավոր քննադատությունն այս մասին լույս տեսավ 1876 թվին պերմանացի հմուտ գիտնական Գուշմիտի ձեռքով, Հալեբեն շրտենալով, նա հորենացու Պատմությունը թեևեց ըստ լատիական (Վիստոնների) և Ֆրանսիական (զր Ֆյորիվա-

ի) Թարգմանությունների: Գնայելով սրան, նրա հմտալից և անաշտ քննությունը լավագույններից մեկը, և թե ոչ ամենալավը պետք է համարել ուրիշ բազմաթիվ քննադատությունների մեջ:

Գուշմիտը մի առ մի քննության է եկարկում հորենացու հինգ ազրյուրները, ցույց է տալիս ո՞րն է նրանից կասկածելի, ո՞րը իրական, ինչպե՞ս է օգտվում հորենացին այս ազրյուրներից, ինչպե՞ս հաճախ օգտվողում է նրանք: Մույց է տալիս հորենացու Պատմության թույլ կողմերը. նա չի քաշվում հորենացուն երբևէ ուղղակի ստատիս կողնուց, բայց խստագանամ է նրա արժանավոր արժեքներ և նրա նշանակությունը հայաց ազնվականության (նախարարական տոհմերի) պատմության համար և ընդհանրապես հայ ազգի մոտ ինքնաճանաչությունը պարթևացնելու մեջ: հորենացու գիտնականի շեղումներն իր բնագործից նա հաճախ բացատրում է նրա գիտնական գոյությունը թեև ժամանադարական սովորություններով: նա մեծ արժեք է տալիս պարթև թագավորների ցանկին հորենացու մոտ, հորենացուն ընդհանրապես լավասեղակ է համարում Պարսկաստանի վերաբերյալ հարցերում, իսկ Հասմին և Բյուզանդիային վերաբերյալ հարցերում՝ անտեղյակ: նա բարձր է գնահատում ժողովրդական երգերն ու առասպելները, որ պահպանել է հորենացին: Իր եզրակացությունը Գուշմիտն ամփոփում է հետևյալ կերպով. հորենացու Պատմությունը, նրա ստահող ցիտատների և շնայելով սրան, նրա բովանդակության հարստ և պիտանիության տեսակետից, կարելի է համեմատել Ռավեննայի Աշխարհագրության կամ Մանուսի Բրիտանական պատմության հետ: Որ նա իրեն առաջադրված զործն հաջողությամբ զուգի է բերել՝ երևում է այն ըլլված արդյունքից, որ իբրև միակ արխիվը ավանդությունների և առասպելների, որոնք սիրելի էին հայ ազգին, և իբրև ոսկե գրքույկ հայ ազնվականության... Գուշմիտը նրա պիտանիությանը իբրև պատմական ազրյուր, պետք է առնել, որ նա ընդարձակ շահով օգտագործել է հայ ժողովրդական առասպելները և հայ ազնվականության տոհմական ավանդությունները: Գուշմիտը նրա խուկապես պատմական ազրյուրների՝ նա ընդհանրապես օգտվել է պարսկական և այլ արևելյան ազրյուրներից: Հունական պատմություններից նա առել է հազիվ թե ավելի քան, քան մենք այժմ ունենք... Ով որ կամենում է հորենացուց օգտվել պատմական հետազոտությունների համար, պետք է կցկցված առասպելները վերածի անընդհատ պատմության և այն ժամանակ կտանա իրական տեղեկություններ ավանդությունների մասին, թեպետ արտաքուստ ոչ այնքան շեղ, բայց խիստապ պիտանի և օգտագործելի ազրյուր: Մենք համենայն զեպս հավատացած ենք, որ... հորենացու հաճախակի հավատարացումները, թե ինքը ոչինչ իրենից չէ

1 Von Gutschmid, Ueber die Glaubwürdigkeit der Armentischen Geschichte des Moses von Khoren, Leipzig, 1876.

հարկը՝ բուն պատմական նյութի վերաբերմամբ հշմարտության վրա են հենվում:

Ավելի խիստ, բայց նվազ համալից է Գարգաշյանի քննադատությունը հորենացու արձանահամաթխանի նրանք և պատկանում ամենաընդարձակ քննությունը հորենացու ամբողջ Պատմությանը նա իր քննական պատմության մեջ մի կողմ է գրել հորենացու Պատմությունն իբրև պատմական աղբյուր, այլ օգտվել է օտարազգի աղբյուրներից, իսկ Տրդատի մահից հետո մինչև Արշակունյաց թագավորության բաժանումը՝ Փավստոսը: Բայց և այնպես նա շարունակ գիտում է հորենացուն և սրա հաղորդած տեղեկություններով լրացնում է օտարազգի պատմիչների կամ Փավստոսի պահպանները, այս վերջինին կաշկռվ աբխազյան թիվ՝ Տրդատի մահից հետո Արշակունյաց բաժանումը ժամանակագրությունը: որոշելիս, թեպետ Փավստոսը ժամանակագրության չուժի, իսկ հորենացուը գտնում է այս մատուց հիշու և օգտվում է նրանից:

Շատ ավելի նպաստավոր են հորենացու նկատմամբ Ն. Մատի և Ն. Աղոնցի վերաբերումները, շնչելով որ երկուսն էլ հորենացու Պատմության ժամանակը մ գրքից ենթեր են իջնում: Ն. Մատը հորենացու մասին հաստիկ ուսումնասիրություն չի գրել, բայց նա իր բազմաթիվ հոգվածների մեջ հարյուրավոր անգամներ հիշում է հորենացուն, հիմերվում է նրա հաղորդած տեղեկությունների վրա և առհասարակ հարգանքով է խոսում նրա մասին: նա համալում է հորենացու Պատմությունն իբրև հիմնական աղբյուր Հայոց պատմության և հայկական պատմագրությունների: Ուրիշ տեղ նա ասում է, թե հորենացու Պատմությունը վրա են հասկացել և ավելի քան անհրաժեշտիկերով գտաագարանել: Նույնպիսի հարգանքով է վերաբերվում հորենացուն և Ն. Աղոնցը իր աշխատությունների մեջ, մանավանդ «Արմենիա в эпоху Юстиниана» հոտուլից հետադոտության մեջ: նա գտնում է, որ հորենացին բոլոր հայ մատենագիրներից ավելի լիակատար տեղեկություններ է պարունակում հայոց նոխարությունների մասին:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՐԳՄԵՆՏՆԵՐԻ ՈՍՈՒՄՆԱԿԱՅԻՐՈՒԹՅՈՒՆ

հորենացու Պատմության աղբյուրների քննությանը առաջին անգամ գրազվեց Վ. Լանդուան 1861 թվին և նրանից հետո Գրուշևիկո՝ վերջ հիշված ուսումնասիրության մեջ 1876 թվին: երկուսն էլ քննում էին այն

1. Тексты и разыскания по Кавказской филологии, 1925 г., т. I, ст. 109.

2. Այսին տեղում, էջ 112:

աղբյուրները, որոնք հիշված են հորենացու կողմից իր Պատմության մեջ: նրանցից խիստ տարբերվում է քննության մեթոդը Գր. Խալաթյանցի, որ կրկու ընդարձակ աշխատությունների մեջ քննություն են թարկեց հորենացու ամբողջ Պատմությունը աղբյուրների տեսակետից և իր քննությունների հիման վրա կազմ բարդորվին նոր եզրակացությունների: Պետք է նախապես ասել, որ Խալաթյանցը, Կարենի հոգվածներին աղբյուրության տակ, հաստատ համարվում եր կողմն է թե հորենացու Պատմությունը է—Ք գարերի որոք է, և այս սխալ տեսակետով է առաջերդրվել իր ամբողջ աշխատության մեջ, որ իհարկե, պետք է հասցնեք սխալ ներկայացությունների:

Առաջին աշխատությունը, «Армянский эпос в Истории Армении Монсея Хоренского» վերնագրով, լույս տեսավ 1896 թվին: Այս գործում նա քննության է առնում հորենացու Պատմության մեջ վերաբերյալ կամ վերաբերյալ համարված մասերը: <...> նրա եզրակացություններն է:

Ինչ որ հորենացին համարի մեջ է բերում իբրև ժողովրդական վեպ՝ բնչանըթագան գրական ժառանգում ունեն. գրանք մեծ մասամբ ավելի կամ պակաս ճարտարությամբ վերամշակումներ են Ս. Գրքի մոտիվների և պատկանում են հորենացուն:

Այս կերպով Խալաթյանցը առաջինը և միակն կզամ, որ հերքեց ժողովրդական վեպի դրությունը հորենացու Պատմության մեջ, այն վեպի, որ բոլոր քննադատներն ընդունել են և համարել են ամենաարժեքավոր մասը նրա Պատմությանը: Բայց պետք է ասել, որ այս մասում Խալաթյանցը ինքն իրեն հերքում է, իր գրքում նա գտնադան տեղեկություն ստիպված ընդունում է, թե այս կամ այն վեպը կամ ստապվել հարկել է», «Հավանական է», որ ժողովրդական լինելը նրբ այնպիսի հատկությունը նրա գրքի գտական տեղերից ամբողջում ենք, տեսնում ենք, որ նա ժողովրդական է համարում հետևյալ հատվածները. «Երկինը երկին», «Հեծուտ արի արքայի Արտաշէս», «Մինչ զու գնացել», «Եթե զու յոթ հեծեցիս», «Հատուած գեացելու», «Մանկան երբեհայ», «Տենեյա Սաբնեղի աղիկե», այսինքն գրիթե անգերից ամբողջում ենք, տեսնում ենք, որ նա ժողովրդական է համարում հետևյալ հատվածները. «Երկինը երկին», «Հեծուտ արի արքայի Արտաշէս», «Մինչ զու գնացել», «Եթե զու յոթ հեծեցիս», «Հատուած գեացելու», «Մանկան երբեհայ», «Տենեյա Սաբնեղի աղիկե», այսինքն գրիթե անգերից ամբողջում ենք, որոնք հորենացին բառացի բերում է իբրև ժողովրդական վեպ: Ուրեմն, իսկպես, Խալաթյանցը հերքել է իբրև վեպ այն հատվածները, որոնք կամ հորենացու մեկնություններն են կամ բանասերների կողմից վեպ համարվածները: <...>

Խալաթյանցի այս գրքի մասին մի մանրամասն ու հոտուլից քննություն արեց Մ. Արեղյանը («Հայ ժողովրդական ստապակները», Վաղարշապատ, 1901 թ.), որի մեջ հերքեց Խալաթյանցի հիմնական միտքը, թե

հորենացու մեղերած իբր ժողովրդական վեպը մեծ մասամբ հորենացու քրական մշակութուններն են Ս. Գրքի զանազան մտոթվուների և ընդհանրապես, ապացուցեց այդ վեպերի իսկական ժողովրդական լինելը, նույնիսկ ցույց տվեց նրանցից մի քանիսի ծագումը՝ իբրև Հին, միջազգային առասպելների հայկական վարիատներ (ինպես Վահագնի Կրքը, Արտավազդի բեկվեթ քաղցրերից), կամ իբրև ժողովրդական հավատալիքներ սօժերի, վիշտպելների, նրանց թագավորների, նրանց կոթիկների մասին:

Իսկ հայաթխանցի այս գործի գիտական բնույթը որոշելու համար մեջ ենք բերում ն. Մտտի հետևյալ գնահատությունները. «...»
«Պ. հայաթխանցը մերժում է Գողթան երգիչների զոյաթխուներ այն հիման վրա, որ բացի հորենացուց ոչ որ նրանց մասին չի խոսում, և գարձավ ին տարրինակ է համարում, թե ինչու այս երգերը պատկանում պետք է լինեն միայն Գողթանի՞. Պ. հայաթխանցի կարծիքով հորենացին պետք է հաղթողներ միայն այն, ինչ որ ասում էին նրան մամանակակից կամ աճելի նոր պատմագիրները, և այն մամանակ Պ. հայաթխանցը կասեր, թե հորենացին նրանցից է արտագրել և աղբրել է նրանցից հետո»¹: Մի ուրիշ տեղ ն. Մանս ասում է. «Մի՞թե պարզ չէ, որ հեղինակը փոխանակ հաղթանակի, մեծ փորձանք է պատրաստում իր հիմնական մտքի համար և վարկարկում է նրան, երբ իբրև ապացույցի ներմուծ է մեր ցույց տվածի նման անվաստահին փաստարկումներին: Արդյոք այս բանը գործին ավելի չի՞ վնասում, քան օգուտ բերում: Բայց այստեղ մի ուրիշ վտանգ էլ կա: Կուսակցություն այնպիսի փաստերի, որոնք վատ են հիմնավորված և հաճախ ամենին չեն հիմնավորված՝ պատռում է ստեղծել սխալ հակադրություններ հոր միջուկը հայոց անցյալի մասին, և այս միջուկը խառնաշփոխ և արմատ զրկելով, կարող է կորստարեր լինել հայագիտության զարգացման համար, քան ավանդական սխալ հայացքը հորենացու պատմական երկասիրության և անձի մասին»²:

հայաթխանցի երկրորդ աշխատությունը՝ «Армянские Аршакиды в Истории Армении Моисея Хоренского» վերնագրով, լույս տեսավ 1903 թվին: Հեղինակն այստեղ նույն մեթոդով քննության է առնում հորենացու Պատմության մնացած՝ ոչ վիպական գլուխները: Այստեղ էլ Գրքի առաջին մասում բերում է հորենացու բնագիրը, աշխատում է ցույց տալ հորենացու հազարամյակ անգլիկոսությունների «հայտնի» և զգալու-

նի՝ աղբյուրները, իրական կամ երևակայական, իսկ Գրքի երկրորդ մասում զուգահեռաբար գնում է հորենացու հայերեն բնագիրը և բազմաժյուրներ այն հեղինակներից, որոնք, հայաթխանցի կարծիքով, իբրև աղբյուր են ծառայել հորենացուն՝ աճյալ տեղեկության համար: Պատահում են զեպերը, որ հորենացու պատմածը համապատասխանում է հայաթխանցի ցույց տված աղբյուրի տեղեկության: Ներակայությունը պարզ է. հորենացին արտագրել է այսինչ (հայտնի կամ զուգանի) աղբյուրից: Բայց շատ անգամ պատահում է, որ հորենացին և նրա ենթադրված աղբյուրը իրար չեն համապատասխանում: Այսպիսի դեպքերի համար հայաթխանցն ունի շարքանշան բացատրություններ. հորենացին այլայլել, անձանակելի դարձնելու շփոկ կերպարանափոխել է իր աղբյուրը, որպեսզի չնկատվի, թե նա օգտվել է այդ աղբյուրից: Այսպես վարվում է հորենացին մամանակից, երբ օգտվում է Կորյունից, Աղաթանգեղոսից, Փափասոսից, Ղազար Փարպեցուց, որպեսզի ցույց տա, թե ինքի նրանցից անկասկած է հեղինակը գաղթի հեղինակ է, Մանսկի և Մեսրոպի աշակերտ, Փարպեցու հիշած հուշակվոր փիլիսոփա Մովսեսը:

Անպես որ, ըստ հայաթխանցի, հորենացին իր կողմից ոչ մի նոր բան չի ապին, այլ ինչ որ պատմել է, առել է ուրիշներից, իր կողմից աղբյուրների այլայլելով, մտացածրան և զեպափորյալ հավյումներով: «Այս կերպով,— ասում է հայաթխանցն իր եզրակացության մեջ,— բուրյուղին մասպալվում է հավասար զեպի հորենացին, իբրև արմանահավասար պատմիչ և հարկն ստիպում է հրամարդի (Հայոց պատմության) մամանակեղակվոր աղբյուրներից մեկից էլ, Մանսկի քան հազար ասորի տիրապետում էր հայոց պատմական գրականության մեջ... Բայց սա չի նշանակում, թե հորենացու գրվածքն այժմ արտք է կորցնել որևէ նշանակություն: Ոչ քանզի նրա դրվածքը, իբրև մատենագրական հիշատակարան, պահպանում է շատ կարևոր, կարևոր է ասել, առաջնակարգ նշանակություն (ևր. 377): Այնուհետև հայաթխանցը շուտյալ գովեստներով երկինք է բարձրացնում հորենացուն նրա լեզվի, ոճի, մասնագրական ճաշակի, նույնիսկ նրա ստեղծած դադափարի համար, ստեղծելու Հայոց նահանգնական մամանակի պատմությունը ազգային ոգով հայաթխանցի գիրքը կարգադրող վրա այս գովեստները թողնում են զարանակական ճանտ տպավորություն: «...»

Հարկ ենք համարում հայաթխանցի այս երկրորդ աշխատության մասին մեջ բերել ն. Աղոնցի կարծիքները¹:

¹ Բնույթն «Армянский эпос», էջ 22.
² Բնույթն «Армянский эпос», էջ 22.

¹ Зан. Вост. Отд. Русск. Археолог. Общ. 1904, стр. 145—1960, г. Халатцян, Армянские Аршакиды в Истории Армении Моисея Хоренского.

«Պրոֆ. Խալաթյանցն այս զեղեցիկ նպատակն իրագործելու ձեռնարկել է կանխակալ որոշ տրամադրութիւմբ նա հրապարակելով Խորենացու բացասական քննադատութեան եզրակացութիւններէց, նրանց հասցրել է ԺալթաՆեղութեան, և այնպիսի կատաղումներ ու վճիռներ է կապացրել, որ գիտական տեսակետից շատ պակասաբար են: Նրա եզրակացութիւններն աչիք են շնկնում հետազոտանութիւմբ, բայց ցավակցարար այս հետեղականութիւնք զուրկ է գիտական հաստատուն հիմքերից: Խորենացին համախափ զործ էր ունենում իրար հակասող ցուցմունքներէ հետ և ստիպված էր լինում նրանց հաշտեցնել: Այսպիսի աշխատանքի ժամանակ անտուգանիքն են պիտաներ, և նա հիշում է հաճախ քնկնում է սխալների մէջ: Այսպիսի զեպերում Խորենացու մեջ ենթադրել որոշ միտումնավորութիւն և փաստերի գիտակցական ազատում, օտ անվազն անարգարացի է:»

Իբրև եզրակացութիւն ճ. Ազարցի գրում է.

«Համենայն զեպս Խորենացու վիճակը զեռ մնում է անզոգված, որ պահանջում է ավելի հիմնավոր լուծում: Իբրև երեքկայացուցիչ Խորենացու բացասական քննադատութեան՝ Խալաթյանցն իր աշխատանքը կատարեց այս ուղղութիւմբ նրա հետազոտութիւնն իր արդուներեքով հանդիսանում է ամենախիտ արտահայտութիւնը՝ հայ պատմագրին թշնամարար վերաբերվող քննադատութիւնների մէջ: Պր. Խալաթյանցի աշխատութեան լուծիւնը կայանում է իր եզրակացութիւնների հենց այս ԺալթաՆեղութեան և խառնութեան մէջ: Նրա հետազոտութեամբ վերջանում է բացասական շրջանը Խորենացու ուսումնասիրութեան պատմութեան մէջ և հանդիսանում է իբրև մի անհրաժեշտ աստիճան՝ անցնելու համար ավելի զրական և իրականութեանը համապատասխան տեսակետի: Այն ամենը, ինչ որ կարելի էր ասել ընդդէմ Հայոց պատմութեան, տի. Խալաթյանցն ասաց արդեն: Խորենացու քննադատութեան առաջին և մերձագործազուն խնդիրը պետք է լինի՝ չափազորել զառանցարների եռանդը և ավելի ճիշտ որոշել Հայոց պատմութեան տեղն ու ժամանակը հայ զրական հիշատակարանների դարբում: Զ—Ը դարերում:»

Զի կարելի արդարև չցավել, որ Խալաթյանցի այս երկու ընդարձակ զրգամբները, որոնց միտ անազնն աշխատանք է զործարգում և որոնց մեջ շատ երրութիւններ կան, զարակված են հեղինակի կանխակալ, անհիմն հոռետեսութեամբ պեպի Խորենացու բարոյական կերպարանքը և նրա Պատմութեան զրգվելու ժամանակը, որի պատճառով նրա եզրակացութիւններն անբնական և անզոգված կատկածելի են զառնում: Վերջացնելու համար Խորենացու մասին զրգած քննութիւնների տե.

ստութիւնը, հիշելու ենք վերջին երկու մեզ հայանի ուսումնասիրութիւնները:

Առաջինն է ճ. Ակիբյանի «Ղեկնոց երկը և Մովսէս Խորենացի» աշխատութիւնը, որ լույս տեսավ Վիննայում 1930 թվին. և երկրորդը՝ ակադեմիկոս Մանեղյանի «Խորենացու անզոգվածի լուծումը» ուսումնասիրութիւնը, որ լույս տեսավ Երևանում 1934 թվին: ճ. Ակիբյանն աշխատում է ապացուցել, թէ Խորենացու Պատմութիւնը զրգված է իններորդ դարի սկզբներին Ղեկնոց երկի ձևերով, և թէ Մովսէս Խորենացի անունով մարդ գոյութիւն չի ունեցել Ակադեմիկոս Մանեղյանն աշխատում է ապացուցել, թէ Խորենացու Պատմութիւնը զրգված է իններորդ դարի վաթսուհակն թվականների սկզբին: Այս երկու քննութիւնների մասին մենք հայտնի ենք մեր կարծիքը մտտ օրերս լույս տեսած մեր «Խորենացու անզոգվածի շուրջը» աշխատութեան մէջ, որի մեջ աշխատել ենք հերքել հիշյալ երկու քննութիւնների եզրակացութիւնները: այստեղ ավելորդ ենք համարում ետևը կրկնել:

ՆՈՐԵՆԱՅՈՒ ՊԼԱՄՈՒԹՅԱՆ ՉԵՌԱԳԻՒՄՆԵՐԸ, ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՄՆԵՐԸ, ԹԱՐԳԱՆՈՒԹՅՈՒՄՆԵՐԸ

Մեր ձեռքը հասել են Խորենացու Պատմութեան մեծ քանակութեամբ ձեռագրներ, որոնց թիվը հասնում է մինչև 48-ի: Մակայն սրանք բոլորը շատ նոր են, տասնելութերորդ դարից: Վնենտիկի Միխիլայանների ունեն մի ձեռագիր տասնչորսերորդ դարի սկզբից, և Երևանի ձեռագիրների մատենադարանում կա մի կարկատած ձեռագիր, որի հին մասը զրգված է ԺԳ—ԺԸ դարերում, իսկ ետրոգված մասը 1567 թվից է: Մա է մեզ մտանկանահին ձեռագիրը: Մի պատասխիվ էլ գտնվել է Պետ. ձեռագրատար, ըստ երևութի՞ն ժԱ դարի մի օրինակից մնացած: Արդեպ որ այս ձեռագիրները չեն պարունակում Պատմութեան սկզբնական բնագիրը, այլ արտագրութիւններ են հետագա խմբագրութեան կամ խմբագրութիւններից մէկի: Նրանց մեջ բազմաթիվ օրինակներ կան, որ մի քան, մի ֆրազ, մի քանի ձեռագիրների մի տեսակ ունեն, մյուսներն ուրիշ տեսակ: Բայց սրանք ավելի ոճաբանական կամ մեկնողական տարբերութիւններ են և ոչ թէ տարբեր խմբագրութիւնների հետևանք, իսկ որ Խորենացու Պատմութիւնը մեզ չի հասել սկզբնական ձևով, այլ ետրազուն խմբագրութեամբ է—Ը դարերի, այս ընդունված ճշմարտութիւն է: ճ. Մառք

1 Թուր 1914 թվից հետո արտասահմանում լույս են տեսել և ուրիշ քննութիւններ. մեզ նրանք հայտնի չեն:

կենթադրում է նույնիսկ մի բանի առկամ կատարված խմբագրություն: Այս պատճառով դատադրությունները և եզրակացությունները, որոնք հիմնված են մեր այժմ ունեցած՝ խմբագրված բնագիրների վրա, որոշ շահով տարակուսական են և թույլ շին ապիս ածխալ վճիռ կայացնելի նորենացու Պատմության իտական բովանդակության և նրա հայտարարների մասին:

Խորենացու Պատմությունն ունեցել է ասաներկու հրատարակություն, որոնցից ինը միայն հայերեն լեզվով, իսկ երեքը լատիներեն կամ ֆրանսերեն թարգմանությունների հետ:

Հայերեն անդրաձեռն տպագրությունը լույս տեսավ Ամստերդամում 1695 թվին, Քաճմաս Վանանդացու ձեռքով, հետևյալ վերնագրով. «Ազգարանավիտե տոճմին Յարեթեան յորինեցեալ ի Մովսէսէ կորենացոյ, յեւամեծ վարդապետէ և յղեկեարստ քերթողաճօրէ, ի ինքորո պայազատապետին Մահակաչ Բաղրատունոյ: Հարապա: և բուն պատմութին նախնացն առաջնոց, Բագաւորաց, իշխանաց, նախարարաց և հայրապետաց Արամեան ազգին, սկսեալ ի Հայկ Բաշէ մինչև ցկերտաշիր Թազարոն մերո: Տպագրությունը կատարված է մի ձեռագրի վրայից, ուստի ըստ ազգագրությունների է պարունակում:

Երկրորդ տպագրությունը, լատինական թարգմանության հետ միասին և հարուստ մատենագրական ծանոթություններով, հրատարակեցին Վիլհելմ և Գեորգ Վիստոն եղբայրները, բնագրի ուղղման համար գործ անելով ուրիշ երկու սրինակներ: Ես: Տպված է Լոնդոնում, 1736 թվին:

Երրորդ տպագրությունը կատարվեց Վենետիկում 1752 թվին: Արտատպություն է առաջին տպագրության:

Չորրորդ տպագրությունը՝ Վենետիկում 1827 թվին:

Հինգերորդ տպագրությունը ֆրանսերեն թարգմանության հետ միասին (և և Բ գրքերը միայն), կատարեց զը Ծյորրիվալը: Տպված է Վենետիկում 1841 թվին*:

Վեցերորդ տպագրությունը, Խորենացու մյուս աշխատությունների հետ միասին, վեց ձեռագիրների բազմաթուրքում, կատարվեց 1843 ին Վենետիկում:

Յոթերորդ տպագրությունը, ֆրանսերեն թարգմանության հետ միասին և բազմաթիվ ծանոթություններով, կատարեց, զը Ծյորրիվալը Փարիզում 1845 թվին:

* Գը Ծյորրիվալի ֆրանսերեն թարգմանությունը առաջին անգամ տպագրվել է Փարիզում, 1836 թ. (Նույն խմբ.՝ Մատենագրական ասորի արժույթ սեղանությունների համար պարտական ենք Գ. Լովանեթյանին):

Ութերորդ տպագրությունը կատարվեց Վենետիկում 1865 թվին: Մատատպություն է վեցերորդ տպագրության:

Իններորդ տպագրությունը՝ Վենետիկում 1881 ին:

Տասներորդ տպագրությունը՝ Քիթիլիում 1881 ին*:

Տասնևմեկերորդ տպագրությունը «Պատմագիրք Հայոց» հրատարակության և ընդամենը, բազմաթիվ ձեռագիրների մանրամասն բազմաթուրքում և բերարակ առաջարկով Խորենացու Պատմության ձեռագիրների և նրանց դատադրության մասին, խմբագրությանը Մ. Աբրեղյանի և Ս. Հարությունյանի: Տպված է Քիթիլիում 1913 թվին: Այս հրատարակությունը մեք կոչում ենք քննական հրատարակություն:

Տասնևերկուերորդ տպագրությունը՝ Քիթիլիում, նախորդի արտատպության, առանց ծանոթությունների և առաջարկի**:

Խորենացու Պատմությունը թարգմանված է դանազան լեզուներով: Թագի վերը հիշված՝ Վիստոնների լատիներեն և զը Ծյորրիվալի ֆրանսերեն թարգմանություններից էզլի են դարձելայ:

Լատիներեն թարգմանությունը Բրենների, տպագրված Մոսկովյում, 1723 թվին, Մակայն այս թարգմանությունը ոչ մի Մատենագրանում չկա և նրան ոչ ոք չի տեսել:

Իտալերեն՝ Վենետիկի Միխիլայանների, որ լեզվի կողմից ուղղագրված է Տամազուչի ձեռքով: Ունի հարուստ ծանոթություններ: Տպված է Վենետիկում 1841 ին: Նույնի երկրորդ տպագրությունը նույն տեղում 1850 ին:

Իտալերեն՝ Կապչետտոյի, Վենետիկ, 1841 ին:

Ֆրանսերեն՝ Լանզուայի, պատմական, քննադատական և բանասիրական ծանոթություններով, Փարիզում, 1869 ին: Մտնում է Լանզուայի հայ պատմագիրների ժողովածուի և հատորի մեջ (Collection des historiens Arméniens):

Ռուսերեն՝ Լոզմեֆ Լոզմանեիսյան սարկավազի, Պետերբուրգ, 1809 ին:

Ռուսերեն՝ Մ. էմիլի, բազմաթիվ ծանոթություններով և հավելվածներով, Մոսկվա, 1858 թ.: Նույնի երկրորդ տպագրությունը, սրբագրված և ուղղված, Մոսկվա, 1893 թ. (Թարգմանի մասից հետո):

Հունգարերեն՝ Քրիստ. Սոնկուսիանի, Կերլա (") 1892 թ.:

* Սա. Մախառանջի նշած 10-րդ և 11-րդ տպագրությունների միջև էլ ևս մեկը՝ Քիթիլի, 1910:

** Հնարադամ լույս են տեսել «Հայոց պատմության քննարկ հետևյալ տպագրությունները:

Վենետիկ, 1955, վերատպություն Քիթիլի 1881 թ. տպագրություն:

Գերմաներեն՝ մատակի թարգմանություն Հասերի, Ռեկեբուրգով, 1862 թ.:

Աշխարհաբար թարգմանություն՝ Խորեն-Վ. Ստեփանեի, առաջարկով, բազմաթիվ ծանոթություններով և հավելվածներով, Ս. Պետերբուրգ, 1889 թ.՝ Նույնի կերպով տպագրություն, սրբաբովանդակ ուղղված, Ս. Պետերբուրգ, 1897 թ.՝:

Այս թարգմանությունների մեջ նշումայան կողմից չափադրված են համարվում Միխայիլայանների խաչերեն, էմիլիե առաքելեն և Ստեփանեի աշխարհաբար թարգմանությունները:

ՆԵՐՈՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԳԱՄԱՐԵՆԵՐԸ

Պետ. Տրատարակչությունն ինձ հանձնարարեց նորեկացու Պատմության նոր թարգմանության կատարել՝ առաջարկով և ծանոթություններով հանրամատչելի բովանդակությամբ, ժողովրդի բնօրհայտության համար, մտտ առաջ մատուցով սահմանափակելով ներածության և ծանոթությունների ծավալը:

Թարգմանության իրեն բնօրհայտ բնականապես ընձակուն Տրատարակչությունը՝ բազմաթիվ ձեռագրական վարիանսներով, բայց ևս ամեն տեղ չիմ հետևել բնագրին, հաճախ բնորոշ էմ այս կամ այն ձևադրել կամ ձևադրական խեղճ բնօրհայտով՝ որ ինձ ավելի ուղիղ է թվացել: Ինչպես այս Տրատարակչության Առաջարկի մեջ հիշվում է՝ սրբագրի կազմությանը օգնել է շատ անգամ Ստ. Մալխասյանցի, որ... ամեն ժամույլի համար բազմաթիվ ցուցումներ և դիտարկություններ է տպարկել էջիածին Մ. Արեղյանին... ինչպես և առաջարկելով այս կամ այն բնօրհայտը ծանոթությունների մեջ դեռևս փոխանակ՝ բնագրի

Երևան, 1951, Վրաստանյան Թիֆլիսի, 1913 թ. ընկական Տրատարակչության (ստանդարտիզացիաների)՝ Հանդիպարությունը Ստ. Մալխասյանցի 1940 թ. աշխարհաբար թարգմանությունը:

Գիշար (ԱՄՆ), 1951, Թիֆլիսի 1913 թ. ընկական Տրատարակչության լատադարանին: 1940 թ. և դրանից հետո տպարկել են «Հայոց պատմության հետախույ աշխարհաբար Տրատարակչությունները:

Ստ. Մալխասյանցի՝ սույն Տրատարակչության մեջ ներկայացվող թարգմանությունը՝ Երևան, 1940:

- Նույնը՝ Կախին, 1953:
- Նույնը՝ Երևան, 1951:
- Նույնը՝ Երևան, 1965:
- Նույնը՝ Երևան, 1951, Թիֆլիսի 1913 թ. ընկական Տրատարակչության (ստանդարտիզացիաների)՝ Հանդիպարությունը:

մեջ անեկ կամ բնօրհայտով: Մ. Արեղյանը հաճախ օգտվել է այս առաջարկություններից... Երբեմն, էմի Ստ. Մալխասյանցի առաջարկությամբ համակարծր չի եղել Մ. Արեղյանը, ինչ առաջարկությունը կարծես է համարվել բնօրհայտ այս կամ այն կերպ հասկանալու նկատմամբ՝ Ստ. Մալխասյանցի առաջարկությունը, ինչպես սկզբից պայմանավորված է եղել Տրատարակչական հանձնախմբի հետ՝ զետեղված է ծանոթությունների մեջ չոր անվան սկզբնառառներով» (էջ 5):

Քե՛ այն համոզմունքում, որոնք ծանոթությունների մեջ նշանակված են Ստ. Մ. սկզբնառառներով և թե ուրիշ տեղերում, էմի նորարարյն ուսումնասիրությունների շնորհիվ բնագրի այս կամ այն ընթերցվածքը հարկ եղավ ուղղել բառ ձևադրական վարիանսների՝ ես շեղվել եմ բնագրի բնօրհայտներին և բնորոշ եմ վարիանսները:

Թարգմանության միջոցին ես ձեռք տակ ունեի Վրասանների, էմիլիե կերպ և Ստեփանեի առաջին թարգմանությունները, որոնք, ամապական էմիլիե և Ստեփանեի, հաճախ դիմում էի տեղեկանալու համար, թե ինչպե՛ս են նրանք հասկացել բնագրի որևէ դժգոյս կամ մտթ տեղը: Այս համեմատությունների ժամանակ ես բազմաթիվ նոր փաստեր ունեցա, որ էմիլիե կերպ թարգմանություններն էլ շատ հետո են՝ նշու լինելուց: հաճախ պատահում էր կտրուկ սխալներ, վատ հասկացված և պզճապված տեղեր՝ Մրանցից մի քանիստ, որ առանձին աչքի են ընկնում՝ նշանակելի եմ ծանոթությունների մեջ: Բնագրին շատ ավելի մտտ աշխարհաբար թարգմանություն լեզուն սահուն է, որ առաջ է դրվում մասամբ բնագրի ոճին խիստ հետևելու ձևադրումով և մասամբ թարգմանելի սովորությունը, որ է՝ անշուշտ աշխարհաբարի ձևեր գրածով, խուսափելով որքան հնար է զրարարի ձևերից, ինչպես օրինակ. «Երբ բնօրհայտում ենք Բաղդասիցների, Առոթեստանցիների, Եգիպտացիների և Հուգիների իմաստուն ձևերն ու զրույցները»: Իմ թարգմանությունը սրանցից անկախ է. հազիվ մի-կերպ տեղ օգտված լինեմ այս թարգմանություններից և այս բանը հիշել եմ ծանոթությունների մեջ՝

1 էմիլիե թարգմանությունների պակասությունները կատել են Նան Կ. Մառը, Կ. Արեղյան և ինքը խոյությանցը, չափելով որ այս թարգմանություններից է բերում իր ընկերի համոզանները:

2 Բայց պետք է նկատել, որ հաճախ, էմի էմիլիե թարգմանությունը սխալ է իմ թարգմանությունն ու Ստեփանեիին իրար համարյա են: Սա կարող է տեղիք առնու մասու ձևու, թե ես ընկալել օգտվել եմ Ստեփանեի թարգմանությունից: Ուստի ստիպված եմ տակ, որ սպառնու չե, ես ինքը կարգադրել եմ Ստեփանեի թարգմանության ձևադրելը, որ շատ նեղակ էր էմիլիե թարգմանության, և ժայռեմուք համեմատելով ուղղել եմ նրա

հորենացու Պատմության Քարգամաուսյանը կրկնակի տեսակետից դժգոհություններ է հարուցում՝ Ընտանիքի և գեղեցկության կողմից, նրա մեջ կան շատ մուր տեղեր, որ Քարգամաուսյանը զանազան կերպ են հասկանում. կան սեղմ դարձվածքներ, ակնարկություններ, հատուկ նշանակությամբ գործածված բառեր: Ետո ուշադրություն է հարկավոր նրանց ձիջա Տասկանալու համար: Ես աշխատել եմ, որքան ուժս պատեղ է հաղթել այս դժգոհություններին, շատ սակ ուղղված են նախկին սխալ Քարգամաուսյանները. մի տեղ վերականգնված է բնագիրը, որի պակասությունը տեղիք էր ավել սխալ և անտեղի Քարգամաուսյանների (տե՛ս ծանոթ. 156): Բայց և անպիստ առաջադրում են մի քանի մուր տեղեր և զույգ սխալ Քարգամաուսյաններ, որոնց ուղղումը մնում և ավելի ձևանահանների կամ, մանավանդ, լավագույն ձևագրողների: Կարող եմ այսպես ասել, որ այս Քարգամաուսյանը, իմաստի ճշտության կողմից ավելի մաս է բնագրին քան մինչև այժմ եղածները: (Այսպես երատում եմ՝ հենվելով Մանգանեի ծանոթությունների մեջ բերված՝ բնագրի գանազան զժգար հասովածների այլ և այլ Քարգամաուսյանների վրա):

Գալով Քարգամանական լեզվի կոնիթյան և գեղեցկության՝ պետք է ասեմ, որ մեր այժմյան գրական լեզուն չի կարող մրցել դարարի հեշտ, նկատի առնելով վերջինիս բարձրաստիպ գյուրությունները մյուս արտասայտելու համար, բառերի դասավորության մեծ ազատությունը, նախգրիները, հարուստ բառամթերքը, չի կարող մանավանդ մրցել նորենացու ճախ, ներդաշնակ, զիջարժեստական լեզվի հետ: Այս կողմից՝ բնագրի գեղեցկության հավասարվելու մասին խոսք անգամ չի կարող լինել: Ես աշխատել եմ, որքան հնար է՝ հավասարում մնայ բնագրի արտասայտությանը, ոճին, նույնիսկ բառերին, բայց այն պայմանով, որ սրանք չնվասեն աշխարհարար լեզվի կոնիթյան և շատ շարդացնեն արտասայտության ձևը, թե որքան հաջողվել է իմ Քարգամաուսյանն այս կողմից՝ ինքս չեմ կարող դատարար լինել: այստեղ վճիռ ավորը ընթերցողն է:

Ծանոթությունները, որ արվում են գրքի վերջում, նպատակ ունեն բնդհանրապես՝ օժանդակ լինել ընթերցողին բնագիրը լավ հասկանալու, բացատրել մուր տեղերը, ակնարկությունները, տալ օտարազգի Քարգամաուսյան մեջ կրկնված էմբի սխալները՝ որքան այն ժամանակ (1888-ին) Անահա էր Այդան, որ Մանգանե է ինձանից օգտվել և ոչ թե նա նրանից: Իմ այս աշխատության մասին հիշում է Մանգանեի Առաջաբանի վերջում, որքան թույլ էր տալիս իր արժանապատվությունը և մի անգամ (առանց անուր ասելու)՝ 4-րդ ծանոթության մեջ:

վորների կամ մատենագիրների մասին համառոտ տեղեկություններ, օտար քաղաքների մասին ծանոթություններ և այլն: Ես չեմ ավել ծանոթություններ Հայաստանի քաղաքների կամ այլ վայրերի մասին, չեմ համանունը հորենացու պատմար որևէ անցքի մասին՝ որիչ հայ կամ օտարազգի հեղինակի պատմածի հետ նույն անցքի մասին. խոսափել եմ հորենացու անձի կամ Պատմության գրության ժամանակի մասին հարուցված հարցերը շոշափելուց և այլն: Եթե քննարկակ ծավալով ծանոթություններ լինեի գրելու՝ բնագրից երկու-երեք անգամ ավելի մեծ կլինեք, իսկ իմ տեղը սահմանափակ էր:

Ծանոթությունների մեջ ես ես շատ քիչ անգամ եմ օգտվել էմբի կամ Մանգանեի ծանոթություններից (որոնք իրենց կողմից օգտվել են օտարազգի Քարգամաուսյանների ծանոթություններից, մասնավորապես Մանգանեի): Ամեն անգամ, երբ թեկուզ չնշին լավով օգտվել եմ նրանցից որևէ մեկից՝ անշուշտ հիշել եմ աղբյուրս: Եվ բնդհանրապես ասելով՝ իմ ծանոթություններից ամենամեծ մասը նոր Նյուրթերի մասին է, որոնք բարձրովին չեն շոշափված որիչ Քարգամանիչների կողմից: և...»:

10 հոկտ. 1940
Քրեյխ:

ՍՏ. ՄԱՆԿԱՆՍԵՆ

* Նեղիա հրատարակության մեջ Ստ. Մալխաչյանի՝ Մովսես հորենացու «Հայոց պատմությունը գրական աշխարհարար Քարգամաուսյանը արվում է անփոփոխ՝ քառ 1940 թ. անդրեթիվ. հեղինակի վերահսկողության ներքո լույս ընծայված, բնագրի՝ ներածությունն ու ծանոթությունները հերթադրվում են որոշ կրճատումներով, որոնք վերաբերում են մատենագրական և այլ ծանոթանալություններին, ինչպես նաև, ծանոթությունների գեղարված, հեղացած տեղեկություններին: Ներածության մեջ կատարված հաստատումները ազդարարված են (...) նշանով: Ներածության՝ «Հայոց պատմությունից արված Քարգամանակի մեղերումները, որոնք հանդիս արբերվում են բուն Քարգամաուսյան համապատասխան հավաններից, թողված են անփոփոխ, որպես Ստ. Մալխաչյանի կողմից որևականազգամ Քարգամանակու արբերակներ (ծան. խոք.):

- Ա. Սահակի թղթին պատասխան և խոստում՝ կրա խեղճած կատարելու:
- Բ. Քե ինչո՞ւ մեկը հեռանալից կանխակց ցույց տալ մեր գործերը, միևնույն թաղ-փոստակների և ստորապատկանների մասնակներից ազնի հարմար են գալիս որտեղ:
- Գ. Մեր առաջին թաղապարների և իշխանների անհետաձայն քարքի մասին:
- Դ. Այն մասին, որ մյուս պատմագիրները չմտաբանեցին (Ս. Գրքին) Ազարի և մյուս կամպանների վերաբերմամբ:
- Ե. Այն մասին, որ նույն որդիների մեղադրանքները հավասար է գալիս մինչև Արթուր, Նիկոս և Արամ, և թե նրանք ո՞ւր թիկ են և ո՞ւր թիկ որդին:
- Զ. Այն մասին, թե մյուս հեռուները որոշ բաներում Մզկուս (մարգարիկին) համանուն են և որոշ բաներում տարբեր, և որմովիպոստ փոխանմանի հին անգիր գրույթ-կերի մասին:
- Է. Համաստա թաղապարություն, թե որտեղին հեղինակներին թեկ կաշտեք ըստ Ս. Գրքի իդակուս ներքոթթե՛ք է:
- Ը. Քե ո՞վ և ո՞րտեղից գտավ այս պատմությունները:
- Ր. Հայոց Վաղարշակ թաղապարի թուղթը պարտից թաղապար Արշակ Մեծին:
- Փ. Հայերի սպասարություն, մասին:
- ՓԱ. Պատերազմի և թեկի մասնական մասին:
- ՓԲ. Հայկից սերված ջեղերի և զավակների մասին, և թե նրանցից յուրաքանչյուրի կ'ըջ գործի:
- ՓԳ. Արևելյանների հետ պատերազմի և հաղթության ո՞ւր նշարք Մադուսի մասնական մասին:
- ՓԴ. Ասորեստանցիների հետ կռվի և հաղթության և Պաշտյոն Քառաչարի մասին. կան նկարագրի և առաջին և մյուս Հայերի մասին:
- ՓԵ. Արաշի և կրա մասնական մասին համիրամից՝ պատերազմի մեջ:
- ՓԶ. Քե ինչպես համիրամը Արաշի մասին հետո շինեավ է քաղաքը և զեմի ամբար-տակը և իր տակը:
- ՓԷ. Համիրամի մասին, թե ինչ պատահավ կտորից իր որդիներին, Զրազառա մտից փոխավ Հայաստան և հեռավ իր նիվոստ որդու հետքով:
- ՓԸ. Այն մասին, թե հաստատակու կախ տեղի և ոտեղեկ համիրամի պատերազմը Հնդկաստանում և հետո կրա մասը Հայաստանում:
- ՓԹ. Ոչ ոք պատահեց համիրամի մասինց հետո:
- Բ. Արաշան Արաշի մասին և թե որտեղ որդի էր Մուսանիկ Անուշավանը:
- ԲԱ. Սկզբուցուց ծնած Պարսույրը առաջին անգամ թաղապարում է Հայաստանում, սոցնական է լինում Մարաշի Վարդանիտի՝ Մարգարապուլից թաղապարությունը վերջինը:
- ԲԲ. Մեր թաղապարների կարգն ու որտեղ թվարկումը հարի որդի:
- ԲԳ. Անկերթիմի որդիների մասին, և թե Արծրունիները, Գեուհիները և Ազնևյաց բռնիկ կաշտը նրանցից են սերված. նույն զիտում կան՝ թե Անգեղ տուրք Պարսպանից է ԲԴ. Տիգրանի մասին, թե կ'ըջպիտեն էր ամեն բանով:

- ԲԵ. Անգուհեի նրկուցի և կապանականների շառին, կյուրտի և Տիգրանի սիրո և մարտանության պատճառով:
- ԲԶ. Քե ինչպես Անգուհե, կապանների մեջ լինելով՝ իրեն պատահեցից զիզվածը անսեռավ է սրակնից նրազով:
- ԲԷ. Արշարուկիցների խոսքերը, հետո և իր մասնած միջոցը և անմիջական գոր-ժազությունը:
- ԲԸ. Անգուհեի թուղթը, Տիգրանի համանախնայությունը և Տիգրանուհուն Մարտատան ուզարկելը:
- ԲԹ. Քե ինչպես նեղաթուրուցը Հայերի գարնամ և պատերազմն սկսեցի և Անգուհեի մահն այդ կողմի:
- Գ. Այն մասին, թե իր Տիգրանուհու թուրքն ուզարկից Տիգրանուհեթո, այլև Անգուհեի առաջին կնոջ՝ Անուշի և զերիների ընկալություն մասին:
- Ա. Քե ո՞րքան են որտ սերունդները և ի՞նչ ջնգոր զառուցեցին սրակնից:
- ԱԲ. Քե Սոչական պատերազմը Տեստամոսի մասնական կողմ և մեր Զարմայրը սպ-կամթիվ կվթապացի գորքի հետ այնտեղ էր և այնտեղ հեռավ:

Ավարտից Առաջին գրքի ցանկը.
Հայոց մեծերի մեղադրանքությունը:

- Պարտից անուղակներին, Բյուրասայի Անգուհեի մասին:
- Բոցապարություն՝ ինչ որ հավասար բան կա Բյուրասայի մասին:

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅՈՑ ՄԵՆԵՐԻ ԾՆՆԳԱԲԱՆՈՒՅՈՒՆԸ

Ա

ԱՌԱՋԻՆ ԹՎԻՆ ԳՍՏՍՈՒՆ ԵՎ ԽՈՍՏՈՒՄ
ՆՐԱ ԽՆԳՐԵԸ ԳՍՏԱՐԵՒՈՒ

Մտգնես ետրեանցին մեր ազգի պատմության այս սկզբում ողու-
նում է Սահակ Բագրատունուն:

Քո մէջ եզում աստվածային շնորհքների անուղառ զործունեությունը
և հոգու անզգայար շարժումները՝ քո մտածողության վրա՝ ես հռուս-
ւնցի այս գեղեցիկ ինզդրի միջոցով, մտրմեկից առաջ հոգուդ հետ ծա-
նոթանալով, սա իմ ճաշակին ևս ախորժելի է, և մանավանդ իմ սովոր-
ություններին: Ուստի ոչ միայն պետք է քեզ գովել, այլև քեզ համար
աղբիկ, որ միշտ այսպես մնաս:

Որովհետեւ եթէ մենք բանականության պատճառով, ինչպես ասում է
է, Աստուծո պատկեր ենք, և մյուս կողմից՝ բանականության արդուները
խոհականությունն է, և քո մէջ անհամունելի արանց ցանկությունը՝ ուրե-
ման գեղեցիկ մասնությունը մտաւ զուտ և բորբոք պահելով քո խոհականու-
թյան կայծը՝ զարգարում ես բանականությունը, որով մնում ես պատկեր
ի ներս: Կարելի է ասել, որ սրա միջոցով որպիսացնում ես սրան սկզբնա-
տուրան գեղեցիկ և շափավոր մտլորությամբ հետամուտ լինելով այս խրե-
դիրներին:

Սրա հետ միասին հետևյալն էլ եմ նկատում, որ եթէ մեզանից առաջ
և մեր ժամանակ ապրող՝ Հայոց աշխարհի ցեղապետներն ու իշխանները
ոչ իրենց ձևարի տակ ընկած և հավանորեն եզում իմաստուններին հրա-
մալեցին այսպիսի պատմական հիշատակարաններ գրել, ոչ էլ մտածե-
ցին զրահի որևէ տեղից ներս բերել իմաստության նպաստներ, և այժմ
գլ ինք ենք տեսնում այսպիսի մտրդ, ուրեմն պարզ է, որ զու պետք է
ճանաչվես բոլոր քեզանից առաջ եղածներից վեհագույն և բարձրագույն
գովեստներին արժանավոր և պատմական այսպիսի արձանագրության
մեջ գրվելու արժանի:

Սրա հետ միասին հետևյալն էլ եմ նկատում, որ եթէ մեզանից առաջ
և մեր ժամանակ ապրող՝ Հայոց աշխարհի ցեղապետներն ու իշխանները
ոչ իրենց ձևարի տակ ընկած և հավանորեն եզում իմաստուններին հրա-
մալեցին այսպիսի պատմական հիշատակարաններ գրել, ոչ էլ մտածե-
ցին զրահի որևէ տեղից ներս բերել իմաստության նպաստներ, և այժմ
գլ ինք ենք տեսնում այսպիսի մտրդ, ուրեմն պարզ է, որ զու պետք է
ճանաչվես բոլոր քեզանից առաջ եղածներից վեհագույն և բարձրագույն
գովեստներին արժանավոր և պատմական այսպիսի արձանագրության
մեջ գրվելու արժանի:

Բ

Թ ԻՆՉՈՒ ՄԵՆԷ ՀՈՒՆԱՐԵՆԻՑ ԿԱՐԵՅԱՆԷ ՏՈՒՅ ՏԱՄ ՄԵՐ ԳՈՐԾԵԸ,
ՄԻՆՉԻՆԷ ՀԱՂԳԱՍԻՆԻՆԻ ԵՎ ԿԱՌԵՍՏԱՆԻՆԻՆԻ ՄԱՏՅԱՆՆԵՐԻՑ
ՈՎԵՒ ԼՅՈՒՄՐ ԵՆ ԳՍՏԱ ՍՐԱՆԷ

Եվ այս բանի վրա թող ոչ որ շարմանա, որ թեպետ շատ ազգեր
մասեանայիններ են՝ ունեցելի՝ ինչպես՝ ամերիկե՝ հայանի՝ էլ, մասնավոր
պարսիկներն ու քաղզեացիները, որոնց մտա ավելի շատ են զովմում
մեր ազգին վերաբերյալ բազմաթիվ գործերի հիշատակարաններ՝ մեր
սակաչն միայն Հունաց պատմագիրները հիշեցինք և աշխարհից խոստու-
ցանք առաջ բերել մեր ազգությաննուսկան շարքը: Որովհետեւ ոչ միայն
Հունաց թագավորները հոգ տարան հուշներին ավանդելու ինչպես (իրենց)
աշխարհակալության, այնպես և՛ դիտություն վերաբերյալ աշխատու-
թյունները, իրենց ներքին գործերը կարգի բերելուց հետո, ինչպես օրի-
նակ, Պաղոմենոսը, որ Ողբարշապար է կոչվում,՝ հարկավոր համարեց
բոլոր ազգերի մասլաններն ու վեցերի հունարեն թարգմանելու, —
հայոց ոչ որ թող այստեղ և՛ դիտություն համարելով շարմանա,
ինչպես մի բանի անվարձ ու ազատ մարդիկ, որ (Պաղոմենոս) եղիպտոս-
ոսներին թագավոր է եղել, հուս մենք նրան Հունաց թագավոր դրեցինք:
Որովհետեւ նա հուշներին էլ իր ձևարի տակ նվաճելով՝ կողմից Աղի-
ստանդրիայի և Հունաց թագավոր, ինչպես երբեք շնորհեց և ոչ մենք Պրա-
զմեհաններից կամ Ողբարշապարի արխաններին: Ես այնքան հունա-
բարձրաբար ունեք, որ իր աշխատությունը հուշն չեզով մոլորվեց: Ուրիշ
շատ պատճառներ էլ կան մեր նրան Հունաց թագավոր կոչելուն, բայց
մեր խոսքը համարտուելու համար բավական ենք համարում ասած
նրա մասին: — այն բազմաթիվ անվանի և՛ դիտությունը պարագրած մար-
դիկ Հունաց աշխարհից հոգ տարան հուշն չեզով թարգմանելու ոչ միայն
ուրիշ ազգերի թագավորների դիվանների և ժեհյանների գրքերը, ինչպես

զանում ենք նրան, որ բազմացի Բերտուսին՝, բոլոր գիտութիւններին քաջամտու մարդուն, Տորգորնց այս բանն անելու, այլև մեծամեծ և զարմանալու արժանի արժեսները, որոնք այս և արևտեղ զովարու- թյամբ զտեղեղով փոխադրեցին Տույն լեզվի (ինչպես Ա. Բ-ի մտտ, և Ք. Փ-ի մտտ, և Կ. Ե-ի մտտ, և Ե. Ք-ի մտտ)։ Եվ այս (արժեսները) մոզովցեցին մարդիկ, որոնց անունները մենք հաճաստի գիտենք, և Եվի- բնցին Հեկլենացոց աշխարհին, փաստգործիզ վրան։ Եվ զովելի են ինչ- պես ուսումնասիրողները՝ իրենց ջանքի և գիտութիւնը ուրիշ ազգերից մենք բերելու համար, նուչկան և ավելի նրանք, որոնք գիտութեան այս- պիսի դրուտերն բնորոշեցին և պարտվեցին։ Այս պատճառով ես շնմ տա- տանով՝ ամբողջ Հունաստանը գիտութեան մայր կամ զայակ կոչել։

Եվ այսքանք բավական է բացատրելու համար Հունաց պատմագրե- րներն գիծելու մեր կարիքը։

4

ՄԵՐ ԱՆՈՒՅԻՆ ՔԱՅԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԻՇՄԱԼՆԵՐԻ ԱՆՄԱՍԱՅԱՆԵՐ
ԱՐԱՐԵՒ ՄԱՍԻՆ

Կամենում եմ նաև առանց մեղադրական հիշատակի շնորհել մեր հին նախնիքների անխմտաստեք բարբը, այլ հենց այստեղ, մեր գոր- մասութեան սկզբում, նրանց կշտաբանքի խոսքերը գրել։ Որովհետև, եթէ հիբալի զովութեան արժանի են թագաժողիքից նրանք, որոնք իրենց ժամանակները զբով և պատմութեամբ հաստատեցին և յուրաքանչ- յուրե իր իմաստութեան գործերն ու բարեթիւնն արձանագրեցին վեպե- րի՝ և պատմութիւններին մեշ, նրանց նման մեր կողմից զգովասանական խոսքերի արժանացան նաև զիվանիքի մատենագիրները, որոնք այս Ժանք աշխատանքով, պարսպեցին 8^ա . — սրա շնորհիվ մենք էլ նրանց շարադրած զբավքները կարցալիս աշխարհական կարգերի գիտութեան երբ մեզ բերում և բազարական կարգեր են սովորում, երբ ուսումնա- սիրում ենք այսպիսի գիտական ճանքը և պատմական զբավքներ, ինչ- պես ունեն բազմացիները և ասորեստանցիները, և զիպտացիները և հել- լենացիները. սրա հետ միասին զուլե նաև փափագեմք այն մարդկանց իմաստութեան, որոնք այսպիսի աշխատանք հանձն առան, — ապա ուրեմ՝ մեղ ամենիս հայտնի է մեր թագաժողիքի և մյուս նախնիքների ան- փութութիւնը զեպի գիտութեան և բնական հոգու անկատարութիւնը, Որովհետև թեպետ մենք փորք ատու ենք և շատ սահմանափակ թվով և շատ անզամ օտար թագաժողութեան տակ նվաճված, բայց և այնպես մեր աշխարհումն էլ բարութեան շատ գործեր կան գործված, զրելու և հի-

շտաակելու արժանի, որ նրանցից ոչ որ հոգ շտարով զիր աննելու։ Արդ՝ այն մարդկանց, որոնք լմաւ մեցին Նույնիկ իրենց մի բարիք անել և իրենց անվան հիշատակը թողնել աշխարհում, ո՞րքան կհարմարի մեր մեղադրանքը և նրանցից ավելի մեծ բաներ և իրենցից առաջ կզամենքը պահանջելու։

Բայց զուցե մեկն ասե. այն ժամանակ զիր ու գրականութեան շի- նելու պատճառով (կեպով այդ), կամ զանազան պատերազմների շնորհիվ, որ անբիշատ մենք մյուսին հնորոգում էին։ Բայց իրավացի չէ լինի աչպես կարծիքը, որովհետև պատերազմների միջև եղել են և (խաղաղ) ժամանակամոլիցոցներ, և կային պարսեց ու հունաց զբեր, որոնցով զբը- ված այժմ գտնվում են մեղ մտու անթիվ բանակութեամբ գրութեաններ, վերաբերյալ պնդելի և զավանտելի և յուրաքանչյուր տների սեփական- նութեան, և քեղհանոր վեճերի և զաշխիքների, մասնավանց սեպուհական ազգավանութեան ծագման՝։ Բայց ինձ թվում է, որ ինչպես այժմ, այն- պես էլ հին հայերը չեն ունեցել սեր զեպի գիտութեան և իմաստալից կեցաբանները։ Ուստի ավելորդ է մեղ այլևս խոսել անբան, թուամիտ և վայրենի մարդկանց մասին։

Բայց ես շատ եմ զարմանում թո մտքի մննչականութեան վրա, որ մեր (նախարարական) ցեղերի հերթից սկսած մինչև այժմյանները մե- նակը զտեղեցիքի աչպիսի մեծ խեղդի մոտարկելու և մեղ առաջարկե- ցիք հետազոտութեան կատարել՝ երկար և շահավոր գործով ճշտութեամբ հորինել մեր ազգի պատմութեանը, թագաժողիքի և նախարարական ցեղերի և տոհմերի մասին, թե ո՞վ ումից էլ մտաղի, ի՞նչ է զործի նրան- ցից յուրաքանչյուրը, և ո՞րն այս բաժանված ցեղերից բնիկ մեր ազգից է և որոնք կեզորներ են և հայացել՝ բնիկ են զարծել, ամեն մեկի գոր- ծերն ու ժամանակները զրով գործել, անկարգ աշտարակի շինութեանց սկսած մինչև ներկա ժամանակը¹⁰, նկատելով այս քեղ համար զեղեցիկ փառք և բավականութեան առանց նեղութեան։

Այս ամիթով այսքան միայն կասեն։ Կա՞՞ արդյոք իմ մեռի տակ մատարու, ինչպես ասված է Հորի¹¹ գրքում, կամ թո հայրենական պատ- մական զովանքներ, որանց միեղգով երբայնցի պատմագիրներն նման, վերեցի մինչև բեզ իրենցն (Տելուզագրութեանը) անխալ կերպով, կամ թե ըզպակից և ուրիշները սկսելով զեպի վեր ասեն, զեպի սկիզբը։ Բայց և արևելա կական, թեպետ և զովարութեամբ, միայն թե մարդիկ շնոր- հակալ լինեն մեր կրած նեղութեանների համար։ Եվ կական արեղցից, որտեղից սկսում են կեղեցական (մասնագիրներն) ըստ քրիստոնեա- կան կրօնի, ավելորդ համարելով և երկրորդը արտասրին հեղինակներն արտազանք սկզբնական պատմութեան մասին, բայց հետագայից կհի-

չենք որոշ ժամանակներ և հայտնի անձեր, որոնք նրանք զուգարհպուտ են Քուրբ գրքի պատմության, մինչև որ բնականաբար կհասնենք հեթանոսական դրույցներին. բայց արանից էլ կանոնք, ինչ որ հավասար կհամարենք:

Գ

**ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՄՅՈՒՆ ՊԵՏԱԳԻՐՆԵՐԸ ՉՄԻՔԱՆՆՆՈՒՄ (Ս. ԳՐԵՆԻ)
ԱՅՆԱԻ ԵՎ ՄՅՈՒՆ ԱՆՎՊԵՏՆԵՐԻ ՎԵՐԱԵՐԱՐՄԱՔ**

Քուրբ մարդկության արմատի, կամ եթե մեկը կամենա ասել՝ ժայռի մասին պետք է մեզ մի բանի խոսք ասել, թե ինչո՞ւ մյուս պատմագիր-ները, ինչպես Բերոսոսը, Բազմակեցը, և Աբյուզեհնոսը¹⁵, Ս. Տոգուն հա-կառակ մտածողությամբ շմարանցիներն (Ս. գրքին), ինչպես նաև Եռչի-ինքն նավակառույցի և մյուս նահապետների վերաբերմամբ, ոչ միայն (տարբեր) անուններ և ժամանակներ նշանակելով. այլև մարդկային ազգի սկիզբ դնելով ոչ այն՝ որ մեզ համար ստույգ և արժանահավատ է:

Որովհետև Աբյուզեհնոսը, մյուսների նման, այսպես է ասում նրա մասին. «Ամենախնամ Աստվածը նրան նշանակեց ժողովրդին հովիվ և առաջնորդ: Որից հետո ասում է. «Աղափրոսը Քաղափորից տան շարս»¹⁶, որ լինում է երեսունվեց հազար տարի: Եռչիպես և Նոյի համար զործ են անում ուրիշ անուն և վերաբրում են նրան իրիստ երկար ժամանակ, թեպես և ջրերի աստիկ (հորգության) և երկրի ապակառուցության վերա-բերմամբ խոսում են համաձայն Ս. գրքի պատմածին. Կուչիպես և Ես-Տապևանների թիվը, Քսիստոթրոսով՝¹⁷ միասին, տան են հաշվում: Նրանց այս հաշիվը հնուանում է ոչ միայն մեր, մասնավոր թե Ս. Գրքի արե-րագինային տարիներից, որոնք գոյանում են շրթամասնակցան մի շրթ-շան կատարելով, այլև եթե լուսին ծնունդներով հաշվենք տարիները կեղզուացիների նման: Եռչիպես եթե տարի հաշվելու լինենք այսպես կոչված աստվածների (չբրանները)¹⁸, այնուամենայնիվ նրանք չեն հա-մաձայնի առաջարկված անհուն թվերին և հշմարիտ ժամանակին չեն հավասարի, երբեմն նվազ գույով և երբեմն խոշոր թիվ գումարելով: Պետք է այսպես իսկպես նրանց կարծիքներն ըստ մեր կարողության բացատ-րել: Թե նրանցից յուրաքանչյուրն ի՞նչ մտածողությամբ այսպես արե-ցին: Բայց մեր առաջիկա գործի երկարության պատճառով այդ բանը կթողնենք ուրիշ տեղի և ժամանակի և մեր խոսքը կընդհատենք այդ մասին, ու կսկսենք պատմել (նահապետների մասին) ինչպես որ հա-վատացած ենք:

Այսմ նախատեղծ. սա երկու հարյուր երեսուն տարեկան ժամա-նակ ծնում է Սեթին: Սեթ երկու հարյուր հինգ տարեկան՝ ծնում է Նեոփ-ոսին: Մրան են պատկանում արժանագրություններից երկուսը, երկու գա-րից դիպվածների զեմ, ինչպես ասում է Հափեսպոսը¹⁹, թեպես անհայտ և նրանց տեղը: Ենովք ասացինն եղավ, որ հուսաց Աստծուն կոչելու:

Եվ ինչո՞ւ է այս այսպես, և ի՞նչ պատճառներից սա առաջինը հու-սու՞ր Աստծուն կոչելու, և ի՞նչպես պետք է հասկանալ կոչել բառը: Որով-հետև Այսմ իսկապես աստվածատեղծ է, նա էր, որ Աստծու բերանից պատվիր ստացավ, ինչպես ասվում է, և հանցանք գործելով ու թար կե-նալով՝ «ո՞ր ևս» հարցը նրանից է լսում և ոչ ուրիշ մեկից, Եռչիպես և հանցանքի պատիժը նրա բերանից է լսում: (Աղամից) հետո Աբիքը Աստծուն մերժավոր ու ծանոթ լինելով՝ նրան զո՞ւ է մատուցանում, որ ընդունել է լինում: Արդ՝ երբ արանք Աստծուց ընդունվում ու նրան հա-նաչում էին, ինչո՞ւ արա (Ենովքի) մասին է ասվում, թե առաջինը կոչեց Աստծուն և այն՝ հուսով: Արդ՝ այս մասին ուրիշ բացատրությունների համար կուզարկենք մեր հրավիրած տեղը, իսկ ինչ որ ավանտ պատ-րաստ է, կասենք:

Որովհետև մարդկանց առաջինը պատվիրանազանց գտնվելով, իր գործած շարքի պատճառով արտաքսվել, գրախտից և Աստծու (սեռու-թյունից), ինչպես ասվում է, Հետո Այսմի որդիներից (Աբիքը), ամենից մերժանելի Աստծուն, սպանվում է իր հարստաց կերպից: Այնուհետև տեղի շունենայով ոչ աստվածային խոսք և ոչ որևէ հայտնություն՝ մարդ-կային ազգն բեկնում է տարախուսանքի և անհասության մեջ, այլև իրա-կան ինքնահաճո գործերի մեջ: Որով մեջ սա հուսալից լինելով՝ ուղղա-մտությամբ կոչում է Աստծուն: Իսկ կոչելու երկու պես անույն է հա-սկանալ. կա՞մ անվանել, ինչպես մի ժողացված բան, կամ օգնության կանչել: Արդ՝ անվանել հասկանալը, ինչպես ժողացվածին, հարմար չէ գտին, որովհետև այնքան շատ տարիների շին անցել, որ Աստված անու-նը նրանց մոռացնելի՛ տար կամ հենց նրան, որի նյա անունով կոչվում էր, և զեռ Եռչիպես Աստծուն սանկծվամբ մահճան և թաղման չէր հասել: Որքեմն սա (Ենովքը) Աստծուն օգնության է կանչում:

Սա հարյուր իննսուն տարեկան՝ ծնում է Կայանին: Կայան հար-յուր յոթանասուն տարեկան՝ ծնում է Մաղազպետին: Մաղազպետը հար-յուր վաթսուհինգ տարեկան՝ ծնում է Հարեգին. Հարեգը հարյուր վաթսուներեկու տարեկան՝ ծնում է Ենովքին: Ենովքը հարյուր վաթ-սուհինգ տարեկան՝ ծնում է Մաթուսաղային: Մաթուսաղային ծնե-լուց հետո նա երկու հարյուր տարի արժանավոր և հանդուպական վարք

ունենալով, ինչպես գիտե՛ս նա, որ հաճեցավ, ամբարշտաների միջից տեղափոխվեց ինչպես ասված է, որի պատճառը հետո կբացատրենք: Մամուսազան հարչուր վախճանահին տարեկան՝ ծնում է Ղամեքին: Ղամեք հարչուր ուխտունեով տարեկան ծնում է որդի և անունը դնում է նախ:

ՆՈՅԻ ՄԱՍԻՆ

Եվ ինչո՞ւ արդյոք միայն սրան որդի անունով կոչեց, իսկ բոլոր մյուսներին մասին պարզաբար ասաց թե՛ ծնան, որի մասին հայրն ինչ որ հավատակ բան է մարգարեանում. «Սա մեզ կհանգստացնեն, ասում է նա, մեր գործերից, մեր ձեռքերի արամուսնությունից և Աստուծո անիմած կերթից», որ իբրը հղավ ոչ թե հանգիստ, այլ շնչում ամեն բանի, որ կերկիր վրա կար, Ինձ թվում է, թե «հանգստացվելը» նշանակում է զազարեցնել, իսկ զազարեցնելը (ոչնչացնելը) ամբարշտությունը և բոլոր շարիքները, երկրորդ դարի զազարագործ մարդկանց սատակումով, Ռոզհետե գեղեցիկ ասաց, «մեր գործերից», այսինքն տեօրիեություններից, և «ձեռքերի արամուսնությունից», որոնցով պղծություն ենք կատարում, Բայց բատ այս մարգարեության հրապարի հանգչում են, Բայց ոչ բոլորը, այլ առաքինությանը կատարյալ հոգիները, երբ շարիքներն ինչպես հեղձով մարդում են, ինչպես նոյն ժամանակ շար գործերի անձնատուր մարդիկ: Իսկ որդի անունով մեծարեց Ս. գիրքը (Նոյին), իբրև հայտնի ու նշանակվող մարդու և հայրենական առաքինությունների արժանավոր ժառանգի:

Ե

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՆՈՅԻ ՈՐԳԻՆԵՐԻ ՄՆԵՂԻՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՍՏՐ Է ԳԱՐԻ ՄԻՆՉԵՎ ԱՐԲԱՆՄ, ՆՆՈՍ ԵՎ ԱՐԱՄ, ԵՎ ԹԵ ՆՆՈՍԱՆ ԱՆ ԲԵՆԷ, Է, ԵՎ ԱՆ ԲԵՆԻ ՈՐԳԻՆ:

Եվ այս հայտնի է ամենքին, թե զժվարագլուտ և տաժանեի է ժամանակագրություն կազմելը սկզբից մինչև մեր ժամանակները, մանավանդ որոշվել նախարարական ցեղերի սերումը նոյի երեք որդիներից: Մականանց որ Ս. գիրքը յուրայիններին դասելով իբրև իր սեփական ազգ՝ մյուսներինը լրեց, իբրև արհամարհելի և իր կզմից նշանակվելու անարժան (ազգերի): Արանցից սկսելով մենք կհասնենք, որբան կարո-

զություն ունենք, ինչպես որ հավաստին գտանք հին պատմությունների մեջ, որոնք բատ մեզ կատարելապես հշմարեա են: Իսկ զու, ո՞վ ուշիմ բնթերցող, նայի՞ր այստեղ երեք ցեղերի շարքի հավասարությունը մինչև Աբրահամ, Նինոս և Արամ և զարմացիր:

Սեմը հարչուր տարեկան հասակում, զբնեղեղից երկու տարի հետո, բատ Ս. գրքի, ծնում է Աբրաբարաթին:

Սեմ

Սեմ հարչուր տարեկան՝ ծնում է Աբրաբարաթին:
Աբրաբարաթ հարչուր երեսունհինգ տարեկան՝ ծնում է Կայնանին:
Կայնան հարչուր և քսան տարեկան՝ ծնում է Սաղային:
Սաղա հարչուր և երեսուն տարեկան՝ ծնում է Ծրերին:
Ծրեր հարչուր երեսունչորս տարեկան՝ ծնում է Փաղեկին:
Փաղեկ հարչուր երեսունեկերեք տարեկան՝ ծնում է Ռազավին:
Ռազավ հարչուր երեսուն տարեկան՝ ծնում է Սերուրին:
Սերուր հարչուր երեսուն տարեկան՝ ծնում է Նարավին:
Նարավը յոթանասուններե տարեկան՝ ծնում է Թարային:
Թարա յոթանասուն տարեկան՝ ծնում է Աբրահամին:

Քամ

Քամ ծնում է Քուշին:
Քուշ ծնում է Մեստրայինին:
Մեստրայիմ ծնում է Ներբովին:
Ներբով ծնում է Բարին:
Բար ծնում է Աներիսին:
Աներիս ծնում է Աբելին:
Աբել ծնում է Բալային:
Բալազ ծնում է մյուս Աբելին:
Աբել ծնում է Նինոսին:
Նինոս ծնում է Նինուսին:

Հարիբ

Հարիբ ծնում է Գամբինին:
Գամբը ծնում է Քիրասին:
Քիրաս ծնում է Քարզովին:

Քարգամ ծնում է Հայկին:

Հայկ ծնում է Արամանյանին:

Արամանյան ծնում է Արամայանին:

Արամայան ծնում է Ամասոյանին:

Ամասոյան ծնում է Գեղամին:

Գեղամ ծնում է Հարամային:

Հարամ ծնում է Արամին:

Արամ ծնում է Արա Գեղեցիկին:

Արգ՝ Կայանին իբրև Նոյից շորորոզ և Սեմից երրորդ՝ դրամ են բոլոր ժամանակագիրները: Նույնպես և Քիրայանի Նոյից շորորոզ և Հարեից երրորդ, Քեպուտ ըստ մեր (Տայկերեն) Քարգամանության ոչ մի տեղ չի գտնվում ուղղակի ճյուղադրության մեջ¹⁷: Իսկ Մեսոպոտամիան իբրև Նոյից շորորոզ և Քամից երրորդ նշանակված չենք դտնում ո՛չ մեր վարդապետության մեջ և ոչ որևէ ժամանակագրի կողմից: Բայց այսպես նշանակված գտանք մի շատ ուշիմ և րնթերցատեր ասորու կողմից, և մեզ Հալամական թվաց նրա ասանք: Որովհետև այդ Մեսոպոտամիան չէր ընկնում է, որի տակ հասկացվում է Եգիպտոսը: Եվ որովհետև ժամանակագիրներից շատերը դրամ են, թե ճերբովթե, այսինքն Քեյը, եվթողացի և կղև՝ մեր համոզվեցինք, որ իսկայես այսպես և կղև, Եգիպտոսի (և Եթովպիայի) սահմանակցության պատճառով:

Արամից հետո այս էլ ասենք, որ Քեպուտ Քամի սերունդների տարիներ մինչև Նինոս, և ոչ իսկ ստուգապես Նինոսից, ոչ մի տեղ թվարկված չեն, կամ թե մեզ չեն հասել, իսկ Հարեի սերունդներից բոլորովին չկան, բայց և այնպես վեր թերգով ազգաբանությունը համատար է, բանի որ երեք ցեղերն էլ սասնեմեկական սերունդ են կազմում մինչև Արամահամ, մինչև Նինոս և մինչև Արամ. որովհետև Արամ, սասնեմեկաբոլորը՝ Նինոսից հետո է, երեսասարգ հասակում վախճանած, Եվ սա հշմարիտ է, ոչ որ վաստածի, որովհետև այս բաները մեզ պատմում է շատ բաներում վստահելի Աբուլիզենուրը, որ ասում է այստես. Ենինոս (որդի) Աբրեզի, (որդի) Քայազի, (որդի) Աբրեզի, (որդի) Անեբի, (որդի) Քարի, (որդի) Քեյի: Նույնպես մերը, Հայկից մինչև Արա Գեղեցիկը, որին վավառտ Շամիրամն սպանեց՝ թվարկում է այսպես. «Արա Գեղեցիկը (որդի) Արամի, (որդի) Հարամայի, (որդի) Գեղամի, (որդի) Ամասոյանի, (որդի) Արամանյանի, (որդի) Արամանյանի, (որդի) Հայկի, որ դարս կեպով Քեյին հակառակորդ և միանդամաչն նրա կյանքին վերջ դնողը: Այս բանն ասում է Աբուլիզենուր իր ասանքի ասանքին մտեր ազգաբանության մեջ, որ վերջերս ոմանք դեն գցեցին:

Արանց վկայում է և Կեկազոն¹⁸, որ ասում է (իր գրքի) գլուխներից մեկում. «ԱՆր աշխատությունները սկզբում սկսեցինք մասնամաս գրել բոլոր ազգաբանությունների արժանական գիտաններից (անկեղով), բայց թագավորներից հրաման ստացանք՝ ներքից բաց թողնել աննշան և վատասիրտ մարդկանց հիշատակությունը, այց՝ հինչև միայն Քար, խմաստուն և աշխարհակալ նախնիքներից և մեր ժամանակի իրուր շվաստելը. և այն:

Այլ մեզ բոլորովին օտարոտի և հշմարտության հակառակ է թվում այն, որ ասում են, իբրև թե Նինոսը Քեյի որդին է կամ նույն ինքը Քեյը, որովհետև ոչ ազգաբանությունը, ոչ էլ տարիների գումարումը այս բանը չեն հաստատում. գուցե մեկը (այս կրկնուր) նշանավոր և անվանի լինելու պատճառով պատշաճ համարած լինի հեռավորին իբրև մոտավոր նշանակել:

Այս բաներն իսկպես մենք գտանք հույանքն զրականության մեջ: Քեպուտ և իրենք Նույնից բազմատերևից փոխադրեցին իրենց լեզվին, և թեպես բազմաթիվները կամ ինքնաբերաբար՝ համար կամքով այս կատարեցին կամ թագավորներից հրամանից՝ արկազգված՝ ինչպես մի ոմն Առիս և որքշ շատեր, բայց մենք հույներին ենք համարում, նրանից ասած լինելով:

2

ԱՅՈՒ ՄԱՍԻՆ, ՔԵ ՄՅՈՒՆ ՀՆԱԽՈՒՆԵՐԸ ԲՈՐԸ ԲԱՆԵՐՈՒՄ ՄՈՎԱՍԸ (ՄԱՐԳԱՐԵՆԻ) ՀԱՄԱՄԱՅՆ ԵՆ ԵՎ ԲՈՐԸ ԲԱՆԵՐՈՒՄ ՏԱՐԵՐ, ԵՎ ՈՒՄԳՈՂՈՂՈՒՍ ՓՈԽՈՒՓՈՒՑ ԸՆԿ ԱՆԿՈՒ ԶՐՈՎՅՆԵՐԻ ՄԱՍԸ

Բազմաթիվ զրգամբերից ընտրելով հավաստին, որքան կարողացանք՝ նշանակեցինք Նոյի երեք որդիների սերունդները մինչև Արամահամ, մինչև Նինոս և մինչև Արամ, որին, կարծում եմ, իսկպոյն մարդկանցից ոչ որ չի հակառակի, եթև միայն մարդ չցանկա, հշմարտության ոմր խանգարելով, հշմարիտ պատմությունների աստապելների վերածելու այս դեպքում թող ամեն մի միայց ուրախանա՝ ինչպես կամենա:

Բայց եթև դու շնորհակալ լինես մեր նեղությունների և շանքերի համար, ո՛վ ուսումնասիր և մեզ այս հարցում աշխատենցող, համառտ խոսերով կ'հիշատակեմ, թե հին միլիոններին ինչպես գրեցին մեր վերջ նշանակած անների մասին, թեպես ներկայումս չեմ կարող սանել, արդյոք թագավորների մատենագրասաններում այնպես գտնվելով, թե ամեն մեկն ըստ իր ճաշակի կամենցավ փոփոխել անունները, որոյց-

ներք և ժամանակները, կամ թե մի ուրիշ որևէ պատճառից: Բայց ինչպես սկզբի մասին երբեմն նշմարիտ են ասում և երբեմն ստում են, օրինակ՝ նախաստեղծին չհրելով առաջին մարդ, այլ թագավոր, նրան օտարադոհ և նշանակությունից զուրկ անուն տալով և երեսունեկից հազար տարվա կյանք վերադրելով (ասում են): Իսկ եահապետների թվով և չորհեղիզ հիշատակությամբ զուգընթացում են Մովսես (մարգարեին), այնպես էլ չորհեղիզից հետո երեք անվանի մարդիկ նշանակելով աշտարակահիտությունից առաջ և Քսիտաբրոսի Հայաստան նազավությունից հետո՝ նշմարիտ են խոսում: Իսկ անունների փոփոխումով և ուրիշ շատ բաներով ստում են:

Բայց ես այժմ ուրախանում եմ՝ իմ առաջիկա խոսքերին սկիզբ դնելով ինձ սիրելի և շատերից ավելի նշմարտախոս Քերոսյան Սիրիլյանից¹⁹: Ես ասում է. «Նախքան աշտարակի և մարգկային խոսակցության բազմակիզու դառնալը, և Քսիտաբրոսի զեպի Հայաստան նազավությունից հետո, երկրի իշխաններ էին դառնում Զրվանք, Տրոսանք և Հապետոթենե²⁰, որ ինձ թվում են Սմեթ, Քամբ և Հարեթը:

«Երբ նրանք, ասում է նա, բոլոր տիեզերքը բաժանում էին իրենց իշխանությունների տակ, Զրվանք բռնաալով տիրում է մյուս երկուսի վրա: Հետո արդեն Զրազաշա մողը, բակտրիացիների, այսինքն մեղացիների թագավորը, այս Զրվանին կոչեց սկիզբ և աստվածների հայր և էլի ուրիշ շատ բաներ նրա մասին առասպելաբանեց, որոնք կրկնվեց անտեղի ենք համարում:

«Արդ իբրև Զրվանք բռնացավ, ասում է (Սիրիլյան)՝ Տրոսանք և Հապետոթենե նրան զինադրություն ցույց տվին, նրա հետ պատերազմի բռնվելով, որովհետև նա մտադրություն ուներ՝ իր որդիներին բոլորի վրա թագավորեցնել: Այս խոսանակության մասնաճյուղ, ասում է, Տրոսանք հափշտակեց Զրվանի ժառանգության օտճանակներից մի մասը: Այս մասնակ մեջ մտավ նրանց քույրը, Ասողիկը, և Համաղեց, որ խռովությունը զարգացնեցին: (Տրոսանք և Հապետոթենե) համաձայնում են, որ Զրվանք թագավորն, բայց ովտաով և երդումով զաշխիթ են հաստատում, որ Զրվանից ծնվելիք բոլոր արունքերին սպանեն, որպեսզի սերունդն սերունդ չթագավորն, այս նպատակով հզոր մարդկանց վերահսկող նշանակեցին նրա կանանց ծնունդների վրա: Եվ երբ երկուսին սպանեցին, երդումը և ուխտը հաստատ պահելու համար, ապա Ասողիկ քույրը Զրվանի կանանց հետ միասին համաձուլում են Տրոսաններից մի քանիսին՝ մյուս տղաներին կենդանի պահել և ուղարկել արևմուտք, այն լեռը, որին ասում էին Դյուցրեկեց, իսկ այժմ կոչվում է Ուրմադա²¹:

«Արդ՝ այս բաները ուրիշ մեկը թեկուզ նշմարտություն համարե, թեկուզ առասպել՝ բայց ես հավատացած եմ, որ շատ բան նշմարիտ է: Որովհետև Կիպրոսի՝ Կոստանդիա (թագավոր) Լալիակոզոս Եպիփանե²² Հերթվածների զեմ գրած գրքում, երբ ձևեմարկում է ապացուցանել Աստուռ նշմարտությունն ու արդարադատությունը՝ այսպես է ասում իսրայելացիների ձևորով յոթն աղբիքի ուշեացման մասին. Աստված արդարադատությամբ ոչնչացրեց այդ աղբիքը իսրայելացիների առաջ, որովհետև նրանց կաթվածների հազը բնկնում է Սմեթ որդիների բաժնի մեջ, իսկ Քամբը հորձանվելով բռնությամբ հափշտակեց այդ երկիրը: Իսկ Աստված երբմամբ տրված ուխտի իրավունքը պաշտպանելով վրեժ է առնում Քամի ցեղի և ժառանգությունը վերադարձնում է Սմեթ որդիներին: Բայց Տրոսանների և Ռոփայիանների Ս. գիրքն էլ հիշում է:

Բայց մենք պետք է թեկուզ շատ կարճատև երկրորդից ոճանց անգիր ՚նեց զրույցները, որ վաղ մասնակ պատմվում էին Շունաց իմաստունների մեջ: Այս՝ զրույցները մեզ հասան Գորգի և Բանան կոչվող անձերի ձեռքով, ինչպես և երբորգի՝ ոմն Գավթի²³ միջոցով: Արասիցից մեկը, փիլատոփայություն ուսած, այսպես էր ասում. «Մ'դ ձերեք, երբ ես Հուսեանստում էի և ուսանում էի գիտություններ՝ մի օր զեպը եղավ, որ իմաստուն և բազմաճմուռ անձերի մեջ խոսակցություն բացվեց աշխարհազորության և ազգերի բաժանման մասին: Ոմանք գրքերը բացատրում էին այլաբանորեն, ոմանք ուրիշ կերպ: Իսկ Ուրմադաբողոս անունով մեկը²⁴, որ նրանց մեջ անկենսճառոտ էր՝ այսպես ասաց. «Ձեզ պատմեմ անգիր զրույցները, որ ավանդաբար հասկա են մինչև մեզ, որ գեղչուկներից շատերն էլ մինչև այժմ պատմում են: Եղել է մի մասույն Քսիտաբրոսի և նրա որդիների մասին, որ այժմ ու մի տեղ չի երևում, որի մեջ, ասում են, պատմվելու է եղել այսպես: Երբ Քսիտաբրոսը նավից զեպի Հայաստան և ցամաքի հանդիպեց՝ նրա որդիներից մեկը, Սմեձ անունով, զիսց զեպի հյուսիսային արևմուտք՝ երկիրը գիտելու: Մեզգիպեց մի փոքր դաշտի մի երկայնանիստ լեռան մոտ, որի (դաշտի) ձեռքով գետ էր հոսում զեպի Աստրեպոսի կողմերը: Այստեղ զեպի մոտ եմ կանգ է առնում ու մտում է կրկու լուսնական ամիս, լեռն իմ անունով կոչում է Սիմ և ետրից վերադառնում է արևելահարավ որտեղից որ եկել էր: Իսկ նրա կրտսերազույն որդիներից մեկը, Տարբան անունով, երեսուն որդիներով և ասանհինգ ազգիկներով ու օրանց ամուսիններով, հորից բաժանվելով բնակություն է հաստատում ետյն գետի ափին, որի անունով (Սմեթ) զավառը կոչում է Տարպին (Տարբն), իսկ այն տեղը, որի անունով (Տարբանք) բնակվեց, կոչում է Յրոնք, որովհետև այնտեղ առաջին

անգամ որդիները բաժանվեցին նրանից: Գարնայ պատժում էին, թե նա կարճ օրեր ապրել է բակտրիացիների սահմանների մոտ, և այսպես էլ մնացել է նրա որդիներից մեկը: Որովհետև արևելքի կղզիներում Մեմին Ջովան են կոչում, իսկ գաղաթը կոչում են Հարաժանց մինչև այսօր: Բայց ավելի հանտի Արամյան ազգի ձկնորսները փանդիների նվազակցությունը ցուցրեցին և պարտի կերպրում²⁵ հիշատակում են այս բաները:

Եվ այս գրություններ սուտ են թե իրոք եղած՝ մեզ համար կարևոր չէ, միայն որպեսզի դու ամեն բան գիտես, այս գրքում գեներալում եմ ինչ որ լավից գիտեմ և ինչ որ գրեցից, որպեսզի իմանաս իմ մտքի անկեղծությունը գեղի քնդ:

է

**ՀԱՄԼՈՒՈՑ ԲԱՍՏԱՐՈՒԹՅՈՒՆ. ԹԵ ԱՐՏԱԵՄՆ ԼԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԲԱԼ ԿՈՇԱԿԸ
ԸՍՏ Ս. ԳՐԵԻ ԽՊԿՆԵՍ ՆԵՐՈՎՈՒԹՆ Է**

Բելի մասին, որին ժամանակակից էր մեր նախնին՝ Հուլիս, շատերը շատ բաներ են պատժում այլընտացու, բայց ես ասում եմ, թե Կոստոս²⁶ կոչվածը և Բելը՝ Ներքովթն է, ինչպես եզրկառուցիները Մովսեսի նման թվում են՝ Հեփեստոս, Արեզակ, Կոստոս, որ են Փամ, Քուշ, Ներքովթ, բայց թողնելով Մեսոթամիան, որովհետև նրանք ասում են, թե իրենց առաջին մարդն եղել է Հեփեստոսը²⁷, որ գտել է կրակը: (Թե ինչու՞ է սա կոչվում կրակը գտնող, կամ որ Պրոթեմեոսը²⁸ գողացել է կրակն ստավաններից և շնորհել մարդկանց՝ այս այլաբանությունը բացատրելը մեր նյութին չի վերաբերում), նաև եզրկառուցիների թագավորական զեղերի կարգը և տարիների գումարումը, Հովիթների թագավորական հարստությունից մինչև Հեփեստոս հալածար է գալիս հրբալիցոց, Հովսեփի ժամանակակիցներից մինչև Մեմ, Փամ և Հարթթ:

Այսբանը բավական համարենք այս հարցերի մասին: Որովհետև, եթե աշտարակաշինությունից սկսած մինչև ներկա ժամանակները պատժած բոլոր բաները ջանանք մեզ բերել մեր պատմության մեջ ի դեպությունը թե՛, այսպես կհասնենք քո ցանկացած պատմական գրույցներին, մանավանդ որ մեր առաջիկա գործն երկար է, իսկ մահահանգուների ժամանակը կարճ է և անհայտ: Ուստի կսկսեմ թե՛ ցույց տալ մեր (պատմությունը), թե որտեղից և ինչպե՞ս (սկզբից):

Ը

ԹԵ ՈՂ ԵՎ ՈՐՏԵՂԻՆՑ ԳՏԱՍ ԱՅՍ ԳԱՍՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատժում են, թե Արշակ Մեծը²⁹, Պարսից և Պարթևաց թագավորը, որ ինքն էլ ցեղով պարթև էր, ապստամբից մակեդոնացիների դեմ, թագավորից բուրդ Արևելքի և Ասորեստանի վրա, սպանեց Նինիվում Անտիոս թագավորին և բուրդ տեղեկերը հնազանդեցրեց իր ձեռքի տակ: Սա իր եղբորը՝ Վազարշակին թագավորեցնում է մեր Հայոց աշխարհի վրա, այսպես նպատակահամար համարելով, որպեսզի իր թագավորությունն անխախտ մնա: Նրան թագավորության բազար է նշանակում Մծրիներ և նրան սահմաններ է որոշում՝ Ասորիքի արևմտյան կողմից մի մասը, Պարսիստերը, Ասիան, ամբողջ Միջերկրայրը³⁰ և Թեսալիան³¹, Պոնտոս ծովից մինչև այնտեղ, որ Կովկասը վերջանում է Արևմտյան ծովի մոտ³², նաև Ասորպատականը, «և էլի» որքան քո միտքն ու քաղաքացիները կհասնեն, որովհետև, ասում է, քաղերի սահմանը նրանց գեղերն է, որքան կկտրե, աշխարհ էլ կտրե:

Սա իր իշխանությունը ինովին կարող բերելով և իր թագավորությունը հաստատելով՝ կամենցավ իմանալ, թե սվրեհ՝ արդյոք և ինչպե՞սի՞ մարդիկ տիրելիս են եղել Հայոց աշխարհի վրա իրենից առաջ, արդյոք ինքը քաղերի՞ տեղն է գրավում, թե ապիպարների: Նա գտավ մի ուշիմ սասորի, Մար Արսա Կատինա անունով, քաղերական և հուսանելի գրություն մեջ վարժ, և նրան ուղարկեց իր եղբորը՝ Արշակ Մեծի մոտ արժանավայել ընծաներով, (խնդրելով) բանալ նրա առաջ արքունական դիվանը, եվ նրան թույլ է գրում այս բովանդակությունը:

Թ

**ՀԱՅՈՑ ՎԱՂԱՐՔԱԿ ԹԱԿԱՎՈՐԻ ԹՈՒՂԸՐ ԳՐԱՐՆԸ ԹԱԿԱՎՈՐ ԱՐՔԱ
ՄԵՍԻՆՑՑ**

«Արշակ թագավոր ցամաքի և ծովի, որի անձն ու կերպարներն իսկապես մեր ստավաններին են նման, բախտն ու հաջողություններն՝ բուրդ թագավորներից գերազանց և մտքի լայնությունը՝ ինչպես երկրիքնը երկրի վրա, Վազարշակ, քո կրտսեր եղբորն ու եղբակակիցը, որ թեզանից նշանակվեց Հայոց թագավոր: Ողջ եղիք մշտական հաղթությունը:

Որովհետև թեզանից պատվեր ստացա քաղաքայն և ամեն տեսակ իմաստություն հեղ տանել՝ երբեք զանց չարի քո խրատն անփութու-

Յլամբ, այլ ամեն բանի խնամք և հոգ տարա՝ որքան միտքս կտրում էր և հնարավոր էր: Եվ այժմ թո խնամակալությունս թողա՞վորս, թողա՞վորս, միտքս զրի խնամա, թե ինձանից առաջ ոգիք՝ եր անրել Հայոց աշխարհիս և որտեղից՝ ես այն նախարարությունները, որ այստեղ կան: Որովհետև այստեղ ոչ հայտնի կարգեր են եղել և ոչ մեհնահան պաշտամունքներ, և աշխարհիս գիտավորներից ոչ առաջինն է հայտնի և ոչ վերջինը, և ոչ սորիչ մի օրինավոր բան կա, այլ ամեն ինչ խառնեղանակ է և վայրենի:

Ուտի ազալում եմ թո տերությունը, որ հրամայես արքունական դիվանը բանալ թո հզոր տերության նեղակայացող այդ մարդու առաջ, որպեսզի թո եղորս և որդուն ցանկայի (պատմությունը) գտնելով՝ փութով բերն: Հավատացած եմ, որ մեր բավականությունը, որ կունենանք (թո) կամքը կատարելով, թեզ ես ուրախություն կլինի: Ողջ եղիր, աստվածների մեջ բնակությունս կրենի՞ր:

Արչալ Մեծն ընդունելով Մար Արաս կատինայից գրությունը, մեծ հոտարությամբ հրամայում է առաջադիչ նրան արքունական դիվանը, որ ներկվումն էր, միանգամայն ուրախանալով, որ այսպիսի մտադրություն ունի իր եղբայրը, որին հանձնարարել էր իր թագավորության կնքը: (Մար Արասը) աչրի անցկացնելով բոլոր մատչանները՝ գտնում է մի մատչան հունարեն գրված, որ ունի, որ ասում է, այսպիսի վերնագիր.

Մատչանի սկիզբը

Այս մատչանն Աղեքսանդրի³⁶ հրամանով քաղցկարեն լեզվից թարգմանված է հունարենի և պարունակում է բուն հնդերի և նախնիների պատմությունները:

Որի սկզբում, ասում է, նշանակված են եղել Չրվանը, Տիտանը և Հայկառուժեն, և այս երեք նախարարական մարդկանց սերունդներից բոլոր նշանավոր մարդիկ յուրաքանչյուրն իր տեղում զսասավորված երկար տարիների ընթացքում:

Մար Արաս կատինան այս մատչանից հանելով միայն մեր ազգի հավաստի պատմությունը հույն և ասորի գրեթով՝ բերում է Մծրին, Անգարալի թագավորին³⁷: Եվ բարեկամ ու քաջ արկղնավոր, արի Վաղարշակը, կորոսախոսն ու հանձարիքը, բնգունելով այն՝ համարելով առաջինն իր գանձերի մեջ՝ հրամայում է մեզ զգուշությամբ պահել արքունիքում և մի մասը նրանից հրամայում է արձանի վրա դրոշմել: Որից մենք հավաստի տեղեկանալով գրույցների կարգին՝ կիրկենք այժմ, թո հար-

ցապիտությունը (զոհանգնելով), հասցնելով մեր բնիկ նախարարությունները մինչև քաղցկացոց Սարգանապալը և զեռ ավելի մոտ:

Պատմությունն այսպես էր սկզբով:

Սևտվածներից առաջինները աճել էին և երևելի և աշխարհի մեծամեծ բարիքների պատճառ, աշխարհի և բողմատարություն սկիզբ: Սրանցից առաջ կկան հսկաների սերունդը, անհեթեթ, հաղթանգամ, վիթխարի մարդիկ, որոնք ամբարտավանությունս հղանալով մնան պաշարակաշինությունս ամբարշտ խորհուրդը, որը և մեռնարկեցին իրագործելու: Աստվածների ցաստից ինչոր ահազին և աստվածային հոգով փչելով կործանում է աշարարիկը և մարդկանց յուրաքանչյուրին տալիս է (մյուսներին) անհասկանալի լեզուներ, որով նրանց մեջ ազմուկ և շփոթություն է բնկնում: Սրանցից մեկն էր և Հայկառուսության Հայկը, անվանի և քաջ նախարարը, հաստ աղեղով և հզոր նեռածիր:

Բայց մենք կդադարեցնենք զուրացարանության այս կարգը, որովհետև մեր եղառանկն է ոչ թե պատմությունն ամբողջությամբ գրել, այլ աշխատել ցույց տալ մեր առաջին և բուն հին նախնիքներին: Արգ՝ նույն մատչանից սկսելով կասեն. Հայկառուսթե, Մերոզ, Սիրոսթ, Թալլալ, որ են Հարթթ, Գամեր, Թիրաս, Թորգոմ: Որից հետո նույն մատենագիրը շարունակելով ասում է կարգով Հայկ, Արամանյակ և այլն, որանց մասին արգեն հինչի ենք:

Ժ

ՀԱՅԿԻ ԱԳՍԱՄԱՐՈՒՅԱԼ ՄԱՍԻՆ

Այս Հայկը, ասում է, վայելակալով էր, թիկնավեա, խիստ զանգուր մազերով, վառաղուն աչքերով, հաստ բաղաղկներով: Սա քաջ և երևելի հանդերայազմ հսկաների մեջ, ղեմարդդ այն բոլորներ, որոնք ձեռք էին բարձրացնում բոլոր հսկաների և զուրացունների վրա տիրապետելու: Սա խորխուսակով ձեռք բարձրացրեց Բելի բանավորության զեմ այն ժամանակ, երբ մարդկային ազգը սփռվում տարածվում էր բոլոր երկրի լայնությունս վրա, բազմամբոր հսկաների, անչափ կատաղիների և ուժավորների մեջ: Որովհետև այս ժամանակ ամեն մի մարդ, խելազարված, սուրն բնկերի կողն էր կոխում, ձգում էին մեկը մյուսի վրա տիրելու, և Բելին պատահամբ հաջողից բանալու և բոլոր երկիրը զրավել: Որին Հայկը զկամենալով հեռազնել, Բարեկրտում Արամանյակ որդին ծնելուց հետո, շվեց զնաց Արարագի³⁸ երկիրը, որ գտնվում է հյուսիսային կողմերում, իր որդիներով, զուտարեթով և որդիների որդիներով, որ զորա-

վոր մարդիկ էին, թվով մոտ երեք հարյուր հոգի: և որիչ ընդգծիներե՞րով²⁵, երան հարած եկվորներով և բոլոր տունտանեղով²⁶: Գնում բնակվում է մի լեռան սարսուտում, դաշտավայր տեղում, որտեղ ապրում էին սակավա-
թիվ մարդիկ առաջուց ցրվածներից: Հայից երանց իրեն հնազանդեցե-
լով՝ աշխտեղ կազմածում շինում է բնակության տուն²⁷ և տալիս է ժա-
տանգություն կազմածին, Արամանյակի որդուն: Աս արգարացնում է առ-
ված անգիր հին գրույցները:

Իսկ ինքը, առում է (Մար Արասը), իր մնացած մարդկանցով և տունտանեղով շարժվում է զեպի հյուսիսային արևմուտք և գալիս բնա-
կում է մի բարձրավանդակ դաշտում և այս լեռնադաշտի անունը կոչում է Հարթ, այտինը թե այտեղ թեակողները հայրեր ևս Քարգամի տան տերունցին Երնում է և մի գյուղ, որն իր անունով կոչում է Հայկաշեն, Այտեղ էլ պատմության մեջ հիշվում է, թե այս դաշտի հարավային կողմում, մի երկայնահիստ լեռան մոտ, ապրելիս են եղել առաջուց սակավթիվ մարդիկ, որոնք կամովին հնազանդվել են դուռազգիին: Այս էլ արգարացնում է առված անգիր գրույցները:

ՓԱ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԲԵՆԻ ՄԱԼՈՒԱՆ ՄԱՌՈՒ:

Խոսքը շարունակելով (Մար Արաս) առում է, թե իբր Տիտանյան Քիչը²⁸ իր թագավորությունն ամենից վրա հաստատեց, ապա իր որդի-
ներից մեկին հավատարիմ մարդկանց հետ ուղարկում է հյուսիսի կող-
մը Հայի մոտ, որ նա հնազանդության դա և խաղաղությանը ապրի: Եթե ցուրտ սառնամանիքների մեջ թնկվեցիր, առում է, սակայն տա-
քացրու և մեղմացրու: քս հպարտ բնավորության ցուրտ սառնությունը և ինձ հնազանդելով խաղաղ ապրի՝ որտեղ որ կհասնես իմ երկրում
բնակության տեղ ընտրելու: Հայից Քիչը պատգամավորներից հետ է գարձնում խառուժյամբ պատասխանելով: Ուղարկված (պատգամավորը)
վերադառնում է Բարելուն:

Այն ժամանակ Տիտանյան Քիչը զորք է ժողովում երս զեմ և հե-
տևի զորքի մեծ բազմությամբ գալիս հասնում է հյուսիս, Արարտղի երկրքը, Կարմուսա տան մոտ: Կարմուսը փախուսում է տալիս Հայիի մոտ, իրենից առաջ արագազանց (մարդիկ) ուղարկելով: Եթե ցուրտ է եղիր, առում է, ո՞վ մեզից դուրսգալուներին մեզ, որ Քիչը զիմում գալիս է քս վրա հավերժական բաշերով և երկնային հասակով՝ արքայ հականերով: Եվ ես լսելով, որ նա մտախել է իմ տանը՝ փախա և ահա տարնապած գալիս եմ թեզ մոտ: Ուրեմն շտապիր մտածել, ինչ որ անելու ես:

Իսկ Քիչը հանդուգն և անճանի ամբոխի գործիքամբ, ինչպես մի հեղեղ, որ գահավալրեց ներքև է վիժում, շատարում էր հասնել Հայիի բնակության սահմանները, գտա՛ւ: ինքնով գործադոր մարդկանց արտե-
րի և անճանի վրա: Այս ժամանակ ուշիմ և խոհեմ հակառ, խիստ գան-
գուր մարդերով, վաճառում ուշերով, շատարով հավարում է իր որդիներին և թոռներին, բայց և աղեղնավոր մարդկանց, թվով շատ եմվող, և որիչ մարդկանց, որ ձեռքի տակ տներ, գնում հասնում է մի ձովակի ափ²⁹, որի շրերն աջ են և մանր ձկներ են պարունակում: Եվ իր զորքերը կան-
խալով՝ առում է երանց. Ե՛րբ մենք զուրս կանք Քիչի ամբոխի զեմ, աշ-
խարհը այն տեղին պահել, որտեղ կանցնած կլինի Քիչը քաղերի խուն բազմություն մեջ, որպեսզի կամ մեռնենք և մեր աղխր Քիչի ծա-
սայություն տակ ընկնի, կամ մեր մասունքի հաջողությունը նրա վրա ցույց տանք, երս ամբոխը ցրվի և մենք հաղթություն տանենք:

Եվ ամբողջ առպարեղներ³⁰ զեպի առաջ անցնելով՝ հասնում են բարձ-
րագույն լեռների միջև մի դաշտան անդ: Եվ շրերի հոսանքի աջ կող-
մում՝ բարձրավանդակի վրա ամուր դիրք գրավելով, գրոխները վեր բարձրացնելով տեսնում են Քիչի բազմաթիվ ամբոխի անկարգ հրասա-
կը, որ հանդուգն հարձակումով ջիտուղան վազվզում էին երկրի երեսի վրա, իսկ ինքը, Քիչը, մեծ ամբոխով հանգարտ կանցած էր ջրի ձախ կողմում մի ըլրակի վրա՝ իրև զիտանաչում: Հայից ձանաչեց սպառա-
զիկաված ջեկատի խումբը, որտեղ Քիչը մի քանի ընտիր և սպառազինված մարդկանցով ամբոխի առաջն էր անցել, և երկար տարածություն կար նրա և ամբոխի մեջ: Նա կրում էր երկաթե զինանոց, երաններ կրող վերբերով: Թիկուհի և շանչի վրա պղծեմ ախտակներ, որտեղների և Քիչերի վրա պահպանակներ, մեքեր կառուց էր դառն, որից ձախ կողմից կախված էր երկայնրի սուրը. աջ ձեռքում զանել էր հակալական երկաղի, իսկ ձախում՝ վահանը, երս աջ և ձախ կողմում ընտիր (գորակաաններ): Հայից տեսնելով այնից սպառազինված Տիտանյանին և նրա աջ և ձախ կողմի ընտիր մարդկանց՝ կանգնեցնում է Արամանյակին երկու եղբայր-
ներով առ կողմը՝ Կարմուսին իր ուրիշ երկու որդիներով ձախ կողմը, որովհետև աղեղ և սուր (գործածելու մեջ) կարգի մարդիկ էին, ինքը կանգնեց աղեղի և մյուս բազմությունը կանգնեցրեց իր հետևում, դա-
նավորեց մտաւժորապես եռանկյունի ձևով և հանգարտ առաջ շարժվեց:

Երբ երկու կողմի հականերն իրար մոտ հասան, երկրի վրա ահա-
գին զորոյուն բարձրացրին իրենց զրոհներով և իրար վրա ահա սար-
սուց էին զգում իրենց հարձակումների ձևերով: Այնտեղ երկու կողմից աչ սակավ հազարանգամ մարդիկ սրի թերանի հանդիպելով թավալվում

ընկեամ էին զեախն, և կոխն (անորոշ էր մեռւմ), երկու կողմերն էլ տեպարտելի մեալով: Այս անպարտելի տարակուսական զիպվածը տեսնելով՝ Տիտանյան արքան զարհուրեց, և Տեա բազմելով սկսեց բարձրանալ այն բլուրք, որտեղից իջել էր, որովհետև մտածում էր ամբոխի մեջ ամբանալ, մինչև բոլոր զորքը հասնի, որպէսզի երկրորտ անգամ ճակատամարտ սարբի: Ազնկեմովոր Հայկը այս բանը հասկանալով՝ իրեն առաջ է նետում, մոտ է հասնում արքային, պինջը բաշտւմ է լայն-նայրձն՝ աղկը, երկրթիչան նետը դիպցնում է նրա կրծքի տախտակին, և այսքը շեշտակի թափ անցնելով նրա թիկունքի միջով, զեախն է խորվում, այս կերպով՝ ճոխացած Տիտանյանը կործանւում, ընկեամ է զեախն և շուրջը փռւում է: Իսկ ամբոխն այս բաբոթլան ահազին զորքը անսնեղով փակւում է, ամեն մեկը իր երեսը գործարած կողմը, Այլըստեր բազական լինի այս մասին:

Բայց ճակատամարտի տեղը շենցնում՝ զարձնում է զաստակներս և անտեր զնում է Հայք, հաջրական պատերազմի պատճառով: Երանից զավանն էլ մինչև այժմ կոչվում է Հայոց ձոր: Իսկ այն բլուրք, որտեղ Ռենը ընկավ բաշ զորականների հետ՝ Հայկը կոչեց Գերկմանք, որին այժմ ասում են Գերկմանակ: Բայց Բիլի զիպիք, ասում է (Մար Արաս), զեղբորով գմտանալով՝ Հայկը հրամայում է ասնել Հարք և թաղել մի բարձրավանդակ տեղում ի տես իր կանանց և որդիների: Իսկ մեր աշխարհը մեր նախնի Հայկի անունով կոչվում է Հայք:

ԺԲ

ՀԱՅԿԻՆ ՍԵՐՎԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ԶԱՎԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԵՎ ԹԵ ՆՐԱՆՏԻՑ ՅՈՒՐԱՊԱՆՆԵՐՈՒ ԻՆՉ ԳՈՐԾԵՑ

(Մար Արասի) մատչանում քրանից հետո ուրիշ շատ բաներ են պատմվում, բայց մեք կշարունակենք այն, որ պիտանի է մեր հազարման համար:

Մրանից հետո, ասում է նա, Հայկը գտնում է իր բնակութան տեղը, իր կազմու թողին, շատ բան է պարզեում պատերազմի ավարտից և անվանի մարդիկ իր ընդոծիներէրց: Նրան հրամայում է իր առաջին տանը բնակութիւն հաստատել, իսկ ինքը զնում զաղաբարում է Հարք կազմած զաշտում: Սա տարիներ ապրելով՝ Արամանյակին ծնով Բարկրտում, ինչպես վերն ասացինք, զրանից հետո զարձայլ ոչ քիչ տարիներ ապրելով՝ մեռնում է, ամբողջ ազգը հանձնելով իր Արամանյակ որդուն:

Սա իր կարգաբերելից Երկուսին, Խոտին և Մանավազին, իրենց բոլոր

աղխով թոյնում է Հարք կազմած տեղում, ինչպես նաև Մանավազի որդուն Բազին: Սրանցից Մանավազը ժառանգում է Հարքը, իսկ նրա որդին՝ Բաղը, ժառանգում է աղի ծովի արևմտյան հյուսիսային ափը և զավանն ու ծովը կոչում է իր անունով: Ասում են, որ սրանցից են առաջ եկել Մանավազյան և Բզնեւայց լաւագետութունները, նաև Որդունի կազմածը, որոնք վերջերս, ասք Տրգատից հետո, մեկը մյուսին ոչնչացրին պատերազմով: Իսկ Խոտը բազմանում է հյուսիսային կողմերում, շենք է հիմնում, և, ասում են, որ նրանից սկսած մինչև այժմ շարունակում է Խոտրտունների ցեղի մեծ նախարարութիւնը, բաշ և անվանի մարդիկ, որոնք այժմ էլ մեր ժամանակ երևելի են:

Իսկ Արամանյակը բոլոր բազմութիւնն աննելով շվում է զեպի հյուսիսային արևելք և գնում իջնում է մի խոր դաշտավայր, բարձրագագաթ լեռներով շրջապատված, որի միջով մի կարկաշատահ գետ էր անցնում արևմտյան կողմից, և գիշերը կարծես թերված էր զեպի արևելք և երկարութիւնը ձգվում էր արեգակի կողմը, իսկ լեռների ստորոտներում բխում էին բազմաթիվ ակնանկիտ աղբյուրներ, որոնք միանալով, զեախ կազմելով, հեղաբար հոսում են նրանց սահմանների մոտ, լեռների ստորոտներով և զաշտի ափերով, որպես թի պատանիներ շրջեն կրիտասարգուհիների մոտերը: Իսկ հարավային արեղակնանծ լեռը, սպիտակափառ զագաթով, ուղիղ բուսն էր երկրից՝ պինդ գոտերով մարզու երեքորչա ճանապարհի շրջապատով, ինչպես ասաց մերոնցից մեկը, և հեղազնետ որվում էր զեպի վեր, իսկպպես մի ձերունի լեռ՝ երկտասարգագած լեռների մէջ: Արամանյակն այս խոր դաշտում բնակելով՝ նույն կողմում, լեռն իր անվան հարմարեցնելով կոչում է Արագած, իսկ կալվածը՝ ոտն Արագածո (Արագածի ստորոտ):

Բայց քրանելի մի բան է ասում պատմագիրը, թե շատ տեղերում ցերտյան բնակվում էին սակավաթիվ մարդիկ մեր երկրում նախքան մեր ընկի նախնի Հայկի գալուստը:

Արամանյակը տարիներ ապրելուց հետո ծնավ Արամայտին, որից հետո էլի բազական տարիներ ապրելով մեռավ: Նրա որդին Արամայաք իր բնակութիւն համար տուն է շինում զտախ ափին մի բլուրի վրա և իր անունով կոչում է Արամվիր, իսկ զնոր կոչում է Օրտայ՝ իր թուան Օրաստի անունով: Իսկ իր որդուն, բազմագագակ և շատակեր Շարային՝ ամբողջ աղիով ուղարկում է մի մերձակա արագավանդ ու բերրի դաշտ, հյուսիսային լեռան՝ Արագածի թիկունքում, որտեղ շատ ջրեր են հոսում, նրա անունով, ասում են, զավարտ կաշկեց Շիրակի Ուտու, թվում է, թե արգաբանում է զուղաղների մեջ զործածվող առաքը, պիտ, ասում են,

Շարանի որդորն ունևս, բայց մենք Շիրակի ամբարները չունենք: Այս Արամայիւր տարիներ ապրելով ծնավ Ամասիային, որից հետո էլի տարիներ ապրելով մեռավ:

Ամասիան Արամիբրում բնակվելով տարիներ անցնելուց հետո մտում է Գեղամին և Գեղամից հետո արի Փառոսին և Յուլակին: Սրանց մեկույց հետո զնան անցնում է, մտնելում է հարավային լեռան: Այստեղ, լեռան ստորոտում, խորշերում, խորշ ծախերով շինում է երկու տուն, մեկը զնուի արևելք, լեռան ստորոտից բնուղ աղբյուրների պեղումների մոտ, իսկ մյուսը՝ այդ տեղից զնուի արևմուտք, նրանից հետո՝ հետևակ մարդու կես օրվա ճանապարհով երկար օրում⁶⁰, Այս տները նա ավելց ժառանգություն իր երկու որդիներին, արի Փառոսին և կայստա Յուլակին, որոնք արևտեղ բնակվելով՝ իրենց անունով կոչեցին այդ տեղերը, Փառոսից՝ Փառաստուն և Յուլակից՝ Յուլակերտ: Իսկ լեռը Ամասիան իր անունով կոչեց Մասիս⁶¹ և հետո նորից Արամայիր դառնալով կարճ տարիներ ապրեց և մեռավ:

Իսկ Գեղամբ տարիներ անցնելուց հետո Արամայիբրում ծնավ Հարամային. նա Հարամային թողեց Արամայիբրում բնակվելու իր որդիների հետ, իսկ ինքը զնաց արևելյան հյուսիսում եղած մյուս լեռան հետևի կողմը, մի ծովակնի ափ: Նա շենացնում է ծովակի ափը, թողնում է այնտեղ բնակիչներ և իր անունով լեռը կոչում է Գեղ, իսկ շենեքը Գեղաբրունի, ինչպես կոչվում է նաև ծովը: Այստեղ նա ծնավ իր Սիսակ որդուն, որ մի սեղու թեկնավան, վայելչակազմ, կորովաստու, զնդեցիկ աղեղեակոր էր: Նրան է տալիս իր ստացվածքի մեծ մասը և բազմաթիվ մարդիկ իրեն ծառայող⁶² և նրա ժառանգության սաճան է կորում ծովից զնուի արևելք մինչև մի դաշտ, որտեղ նրասիսի, սեպուցած լեռները ճեղքելով, երկար ու եղ ձորերով անցնելով, ահաբիս շառայունով թափվում է դաշտը: Սրանից այստեղ բնակվելով, իր բնակության սաճանները լցնում է շինություններով և աշխարհք իր անունով կոչում է Սյունիք: Բայց պարսիկների ավելի ճիշտ կոչում են Սիսական, Վերջերը Վաղարշակ, Հայոց առաջին թագավորը պարթև ջեղից, գրանելով սրա սերունդներից անվանի մարդիկ՝ այս աշխարհին անը և նշանակում, որ Սիսական ջեղն է. Վաղարշակ այս անուն է պատմությունից իմանալով. թե ինչպե՞ս այս եղավ, իր սեղանով կպատմենք:

Իսկ ինքը Գեղամբ նորից գտնում է հիշյալ գաշաք, և նույն լեռան ստորոտում, մի անուր ձորակում շինում է մի դաստակերտ և անունը դնում է Գեղամբ, որ հետո նրա թոռան՝ Գառնիկի անունով, կոչվեց Գառնի Վերջերը, Վաղարշակի թոռան՝ Արտաշեսի ժամանակ, սրա սերունդներից մի պատանի է եղել Վարսած անունով, եղբորուներ, այնպանների և

Վարսզների որսերում հաջողակ, ուժեղ և ճիշտ նետամիգ: Սրան (Արտաշեսը) նշանակում է արքունական որսերի վրա և շենք է պարզում Հրազդան կոչված զնուի ափերին: Սրանից, ասում են, առաջ է եկել Վարսունյանց տունը: Այս Գեղամբ, ինչպես ասացինք, տարիներ ապրելով ծնավ Հարամային, որից հետո էլի ապրելով մեռավ և իր որդուն՝ Հարամային հրամայեց Արամայիբրում բնակվել:

Այս է Հայկը, հայ ազգի նախնին, որ Թորգոմի որդին էր, սա՛ թիբասի, սա՛ Գամբերի, սա՛ Հարեթի, և այս նե նրա ջեղերն ու սերունդները և նրանց բնակության աշխարհը, Այնուհետև, ասում է (Մար Արաքը), նրանք սկսեցին բազմանալ և երկիրը լցնել:

Հարաման տարիներ ապրելով ծնավ Արամին:

Արամի մասին պատմում են, թե շատ բաշ գործեր է կատարել հազարակն պատերազմներում և ընդարձակ է Հայաստանի սաճանները բուրդ կողմերից, որի անունով էլ բուրդ ազգերը կոչում են մեր աշխարհք, ինչպես հույներից՝ Արմեն, իսկ պարսիկներն ու ասորիները՝ Արմենիկ: Բայց սրա ընդարձակ պատմությունն ու քաղաքային գործերը, թե ի՞նչպես և ո՞ր ժամանակ կատարվեցին՝ եթե կամենաս՝ այս գրքից դուրս կգտեղեկը, կամ բաց կթողեղենք, իսկ եթե ոչ՝ կգտեղեկը հենց այստեղ⁶³:

ԺԳ

ԱՐԵՎԵՆԻՆԵՐԻ ՀԵՏ ԳԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ՀԱԳԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՅՈՒՆԱՐ ՄԱԿԵՍԻ ՄԱՆՎԱՆ ՄԱՍԻՆ

Եվ որովհետև մեզ համելի թվաց քո հրամանով մեր հանձն առած նեղությունն ավելի մեծ բավականություն համարել, քան ուրիշներից (սահարակով) սերտություններն ու կիրախումը, ուստի համաձայնեցինք կարճատև մեզ բերել գրույցները Հայկայն Արամի վարսած պատերազմների մասին: Սա աշխատասեր և հայրենասեր մարդ լինելով, ինչպես ցույց է տալիս նույն պատմագիրը, լավ էր համարում հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ի՞նչպես օտարացեղ ազգեր ոտնակոխ են անում իր հայրենիքի սաճանները և օտարները տիրում են իր արյունակից հարազատների վրա:

Այս Արամբ նիսոսի Առաքեստանին և Նիկեմիս տիրելուց ինչ տարիներ առաջ, շրջակա ազգերից եկվելով՝ ժողովում է բնասանի բաշ և աղեղեակոր, շատ ուժեղ երիտասարդներ, հաջողակ ձեռքերով, արտոս և պատերազմելու հմտուս նա պատահում է Հայոց սաճաններին մաս

մեղացեց ճիշտասարգներին, որոնց առաջնորդում էր մի ում Նյուբար Մարտի⁵⁰, մի հպարտ և պատերազմասեր մարդ, ինչպես ցույց է տալիս նույն պատմագիրը: Որ մի անգամ բուշուհների նման ասպատակելով (ձիբրի) ամբակներով ոսնակոխ արավ Հայաստանի սահմանները և երկու առաքի իրեն ծառայեցրեց: Արամը հանկարծակիորեն նրա վրա հարձակվելով արևը ծաղկուց առաջ՝ կոտորեց նրա բազմաթիվ ամբարներ և իրեն՝ Նյուբարին էլ, որ Մաշնա էր կոչվում, ձերբակալ անելով բերեց Արամվոր և այնտեղ պարսպի աշտարակի ծայրին հրամայեց պատին վարակել, կրկնակ ցից միելով ճակատի մեջ, ի ցույց զինելով անցորդներին և բոլոր եկվորներին, իսկ նրա աշխարհը, մինչև Զարասպ կոչված լեռը, իրեն ծառայեցնելով հարկատու դարձրեց մինչև Նինոսի թագազավորին Ասորեստանի և Նինովիի վրա:

Իսկ Նինոսը Նինովեում թագավորելով՝ մտրուճը պահած ուներ իր նահանգի՝ Բելի վրեժի հեշտասակը, զրույցներից լսած լինելով, և ճիշար տարիներ մտածում էր վրեժխնդիր լինել, գլխելով ու սպասելով նպաստավոր ժամանակի, որպեսզի բաշ Հալկի սերունդներից սերմանված ամեն մի ճեռ ոչնչացնե: Բայց կասկածելով, թե այսպիսի ձևերակութվելուն կարող է նրա թագավորության կրտսյան պատճառ դառնալ, իր շար խորհուրդը թարցնում է. (Արամին) հրամայում է առանց կասկածի իր իշխանությունը վարել, իրավունք է ապխա մարդարտե վարակալ կրել և իր երկրորդը կոչվել: Բայց բավական լինի այդպես սպաժք, որովհետև մեր առաջիկա գործը թույլ չի տալիս երկար կանց անել մեր պատմության սկզբում:

ԺԿ

ԱՍՈՐԵՍԱՆՆՈՒՆԵՐԻ ՀԵՏ ԿՈՒՎ ԵՎ ՀԱՂՊՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՅԱԿՈՍ ԲԱՆՂԱՅԻ ՄՐԱՆԻ, ՆԱԽԻ ԿԵՍԱՐՈՒՅԻ ԵՎ ԱՍՈՒՅԻ ԵՎ ՄԹՈՍ ՀԱՅՔԵՐԻ ՄՐԱՆԻ

Կարևորտ խոսքերով հեշտասակներ ինչ որ նույն ժամանակում պատմվում է նրա բաշության գործերի մասին Արևմուտքում, և առաքեստացիների հետ կոժվը, զնպարի պատճառ ու նշանակությունը միայն հայտնելով, իսկ գործի բնկարծակալությունը համառոտ խոսքերով բացատրելով:

Նույն այս Արամը, արևելյիների հետ նակատամարտը վերջացնելուց հետո, նույն գործովամբ շարժվում է Ասորեստանի կողմերը. այնտեղ ևս գտնում է մի ուրիշ ապականել: Իր երկրի, Բաբլամ անունով, հսկաների ղեկից, շորս բոլոր պատասպեն հետևակներով և հինց հազար հետ,

լայնելով. նա խիստ հարկերով սատակ նեղելով անաստա էր դարձրել բոլոր շրջակայքը: Արամը պատերազմով նրան ընդհարվելով՝ հալածում է նրան Կորդոքի միջով մինչև Ասորեստանի դաշտը, շատերին կոտորելով: Բաբլամն էլ նրա զինակիրների առաջը պատահելով սպանում է: Այս Բաբլամին ասորիները երկար ժամանակ ստովածացրած պաշտում էին նրա բազմաթիվ արիական գործերի պատճառով: Իսկ Ասորեստանի դաշտերի մեծ մասը Արամը հարկատու ծառայության մեջ պահեց երկար ժամանակ:

Իսկ ինչ բաշության գործ որ սա կատարեց արևմտյան կողմը Տիտանյանների հետ, մենք զեռ պետք է պատմենք: Սա զեռի արևմուտք շարժվելով, առաջինի վրա շորս բոլոր հետևակ և երկու հազար հեծյալ (աղկապցնելով), հասնում է կապագողկացոց կողմերը, մի տեղ, որ այժմ Կեսարիան է կոչվում: Որովհետև նա արևելյան և հարավային (ազգերը) նվաճելով և հանձնելով այս երկու ցեղերին, արևելքը Սիսակյաններին և Ասորեստանի կողմերը Կազմուսի անս հաջորդներին՝ այլևս ոչ մի տեղից շփոթության կասկած չունեք՝ ուստի երկար ժամանակ մեաց արևմուտքում: Այստեղ նրան պատերազմով հանդիպում է Տիտանյան Պայազան Բաազյան, որ բռնացիկ զրավել էր սաստաժուկունք երկու մեծ ժողկրի միջև, այսինքն Պոնտոսի⁵¹ և Ովկիանոսի: (Արամը) նրան ընդհարվելով վաճում է փախցնում է մի կղզի ասիական ժովում. այնտեղ աշխարհի (պահպանության) համար թողնելով Մշակ անունով մեկին իր ցեղից և մի բյուր զորք՝ ինքը վերադառնում է Հայաստան:

Բայց այդ աշխարհի բնակիչներին հրաման է տալիս սովորել և խոսել հայերեն, այս պատճառով հույները մինչև այսօր այդ երկրամասը կոչում են Պոտոսի Արմենիան⁵², որ թարգմանվում է Առաջին Հայք: Իսկ այս դասակարգը, որ Արամից կողմնապետ նշանակված Մշակը շինեց իր անունով և փոքր պարսպով պատեց՝ այդ աշխարհի հին մարդիկ կոչում էին Մամաք, կարծես չկարողանալով ճեշա արտասանել. հետո նա ուրիշ-ուրիշ պղկի ընդարձակ շինվելով կոչվեց Կեսարիա: Միևնույն կարգով այս տեղերից մինչև բուն երկրի ամենամեծ շատ արևելյան տեղեր բնակիչներով լցրեց, որոնք կոչվեցին Երկրորդ և Երրորդ Հայք, նաև Զորքորդ (Հայք)⁵³, Այս է բուն և ճշմարտ պատճառը՝ մեր արևմտյան կողմը՝ Առաջին և Երկրորդ, այլև Երրորդ և Զորքորդ Հայք անվանելու: Իսկ ինչ որ այլուպես է պատմվում հունական կողմերում՝ մեզ ընդունելի չէ, ուրիշներն ինչպես կամենան:

Սա այսպես հզոր և անվանի դառնալով՝ նրա անունով մինչև այսօր մեր աշխարհն անվանում են մեր շրջակա ազգերը, ինչպես ամենքին

հայտնի է: Սա արդի շատ բարձրիան գործեր էլ ունի կատարած, բայց ինչպան որ առաջինը՝ բազմական ենք համարում:

Բայց թե ինչու այս բաները թագավորների բուն մասուններում կամ մեհնական պատմություններում չհիշատակվեցին, թող այս մասին ոչ որ շատ ակադեմիկ, կասկածի չհասնա՞նք որ այս ժամանակը նրանոսի թագավորությունից առաջ է, նրբ ոչ որ այնպիսի բաների հոգ չէր տանում, երկրորդ՝ որ նրանք հարկավոր է՝ կարներ շինել համարում տար ազգերի, հետագայ աշխարհների հիմ լուրերն ու նախնական դրոշմները իրենց թագավորների կամ մեհնական մատյաններում գրել, մահավանդ որ պարծանք և պատիվ չէր աստոր ազգերի բարձրությունը և արհական գործերը հիշատակել: Բայց թեպետ և (սրանք) բուն մատյաններում չկան, սակայն, ինչպես Մայր Աթոս կաթողիան պատմում է, փոքր և աննշան մարզկանց ձևերով զուտանական (երգիչից) ժողովում են արքունի դիմանում: Մի արիջ պատմաւն էլ թերում է նույն մարզը, թե ինչպես խնայա, նինոսը հպարտ և աննշան մարզ լինելով և կամենալով միայն իրեն ցույց տալ իրեն սկիզբ աշխարհակալության, անհն առասկա բարձրության և կատարելության՝ հրամայում է այրել բազմաթիվ մատյաններ և նախնայց մասին դրույններ (որ վերաբերում էին) գանազան սեղերի և առանձին մարզկանց բազմության գործերին, իր ժամանակ եղածներինը դադարեցնելով (գրել) և որև միայն այն՝ ինչ որ իրեն է վերաբերում: Բայց այս կրկնելն ավելորդ էլ էր:

Այս Արամը տարիներ ապրելով ծնավ Արային, որից հետո էլ շատ տարիներ ապրելով մեռավ:

Գրականագետ ընդհանրապես կարծում էր, որ այս ժամանակը ընդհանրապես չէր հիշատակվում:

ՓԵ

ԱՐԱՅԻ ԵՎ ՆՐԱ ԳՐԱԿԱՆ ԳՐԱՆԵՐԻ ԳՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԳՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արան նինոսի վախճանվելուց թե՛ տարիներ առաջ ինքամակալ դարձավ իր հայրենիքին, նինոսից նույնպիսի չեղորէ՛ն արժանանալով՝ ինչպես և իր հայր Արամը: Բայց այն վաղաշուտ և անուսակ Շամիրամը շատ տարիներից ի վեր նրա զինկոմիտան մասին լսած լինելով, ցանկանում էր նրան տեսնել, բայց հայտնի կերպով չէր համարձակվում որևէ բան անել: Իսկ նինոսի վախճանվելուց կամ Կրեոսի փախելուց հետո, ինչպես համոզված էմ, Շամիրամ իր այնոր համարձակ պատվելով՝ Արա Գեղեցիկի մաս պատգամավորներ է ուղարկում լեռնաներով և նվերներով, և շատ աղաչանքներով և պարսկների խնամքով խնդրում է դառ նիսով իր մաս, և կամ իրեն կին աննել և բոլորի վրա թագավորել, կամ նրա

ցանկությունն կամքը կատարել և մեծամեծ նվերներով խաղաղությամբ իր տեղը դառնալ:

Նրբ պատգամավորները շատ անգամ երթնկոմիտան կատարեցին և Արան համոզանից՝ ապա Շամիրամը ստատիկ շարանալով, պատգամավորությունը դադարեցուց հետո, անուն է իր զորքի բազմությունը և շտապում է գնալ հասնել Հայաց երկրի՝ Արայի վրա, բայց որքան զենքի կարկի էր գտաչակի, շտապում էր ոչ այնքան նրան սպանել կամ հարածել, որքան նվաճել կամ իր ձեռքը գցել, որպեսզի իր ցանկության կամքը կատարել. որովհետև մուլեզին ցանկությունից՝ նա ստփանելով սիրահարվել էր (Արայի) մասին եզամ պատմություններին՝ որդես թե նրան տեսնակու լիներ, Փոսթով գալիս հասնում է Արայի դաշտը, որ նրա անունով կոչվեց Այրարատ: Ճակատ պատրաստելիս նա իր զորակառնիքին պատվեր է տալիս, եթե զենքը բերի, քանալ կենդանի պահել Արային: Կուրի ժամանակ Արայի զորքը շարզվում է, Արան էլ ընկնում է պատերազմի մեջ Շամիրամի կործանակից: Հաջթությունից հետո տրկինց դիակապուտներ է ուղարկում ճակատամարտի տեղը՝ դիակներով մեջ փնարելու իր ցանկալի տաքիսածուրի: Արային գտնում են մեռած քաղաքատեղիների մեջ: Հրամայում է նրան տանել զենի ապարանքի վերնատունը:

Նրբ հայաց զորքը պատրաստվում էր ետից պատերազմելու Շամիրամ սկիզնց հետ, Արայի մահվան վրեժն անելու համար (Շամիրամն) ասում է. «Ըն իմ աստվածներին հրամայեցի նրա վերբեր լինել և նա կկենդանանա»: Միևնույն ժամանակ նա հույս ուներ կատարողական գյութությունը Արային կենդանացնել, ստփական ցանկությունից ցնորված: Բայց երբ դիակն սկսեց նեխել, հրամայեց գցել նրան մի մեծ վիշտի մեջ ու ծածկել, իսկ իր սիրեկաններից մեկին զարդարելով ու ծածկել պահելով՝ նրա մասին այսպիսի լուր է տարածում. «Աստվածներն Արային լիզելով ու կենդանացնելով՝ մեր փափաքն ու ցանկությունը կատարեցին, ուստի այսուհետև նրանք ավելի ես արժանի են մեղանց պաշտելու և փառավորվելու, իրեն մեղ ուրախացնողներ և մեր կամքը կատարողներ: Նաև մի նոր արձան է կանգնեցնում աստվածների անունով և մեծամեծ զոհերով պատվում է նրան, ցույց տալով, իբր թե աստվածների այս զորությունը կենդանացրեց Արային: Այսպիսի լուրեր տարածելով Հայաց աշխարհում և բոլորին համոզելով՝ հուզմանքը խաղաղեցնում է:

Արայի մասին այսպանը բովական է կարճատես հիշատակել: Նա տարիներ ապրելով ծնավ Կարգուրի:

ՔԵ ԻՆՉՊԵՍ ՇԱՐԻՐԱԲԸ ԱՐՈՒՅ ԻՄԱԼԻՏ ԼՅՏԻՑ ԸՆԴՈՒՄ Է ԶԱՂԱԸԸ ԵՎ ԳՆԻՏ ԱՐՔԱՐՏԱԿ ԵՎ ԻՐ ՏՈՒՆԸ

Այսպիսի հաջող գործերից հետո Շամիրամը սակավ օրեր մնում է այն դաշտում, որ Արաբի անունով կոչվեց Ալքարառա. բարձրանում է երկրի հարավարևելյան ընկած լեռների զապազ, որովհետև ամառային եղանակ էր, կամենալով հոգիանալու և ծաղկավուն գաշտերում գրտանել: Եվ տեսնելով երկրի գեղեցկությունը, օգի մարտիկները, բխող մաքուր աղբյուրները, կարկաչա՛նու ու բարեգիւսեց գետերը՝ նա ստում է. «Պետք է այսպիսի բարեխառն կլիմայում, մաքուր ջրերով երկրում մեզ համար քաղաք և բնակության արքունիք շինել, որպեսզի ապրվա շրջանի մի շրջորդ մասը, այսինքն ամառային եղանակը, ամենատեսակ վայելչություններ անցկացնենք Հայաստանում, իսկ մյուս երեք մասը, օգի զո՞վ ժամանակը, կլանք վայելենք ինքնիմաստ:

Շատ տեղերով անցնելով գայիս հասնում է Ազի ծովակի մոտ արևելյան կողմից. տեսնում է ծովի ափին մի երկայնաձև բլուր, որ երկայնությամբ ձգվում էր դեպի արևմուտք, հյուսիսային կողմում մի փոքր քերտությամբ, իսկ միջօրեական (հարավային) ուղղահայաց զնայի երկինք բարձրացած, գառիվայր ապարտած: Մթանց զնայի հարավ Շեռուս տարածվում էր մի գաշտաձև երկայնաձև հովիտ, որ լիսն արևելյան կողմից իջնում էր ծովի ափը, բնագրամակ և գեղեցիկ ձորի ձևով. նրա միջով հոսում էին քաղցրահամ ջրեր լեռներից իջնելով, ծմակներից և հովիտներից ծորելով, որոնք լիսների ստորտանիքի մոտ միավորվելով՝ ծավալվում, զեղեցիկ գետեր էին կազմում: Հովտաձև ձորակի մեջ ոչ սակավ շինեք կային, ջրերի աջ և ձախ կողմերում գտեղծված: Այս հասնելի բլուրից զնայի արևելք կար մի փոքրագույն լեռ²⁴:

Այս տեղի վրա աչք զնելով՝ այրասիրտ և վազմաշու Շամիրամը հրամայում է անմիջապես Ասորեստանից և իր իշխանության մյուս անդերից փափագած տեղը բերել շուր բլուր և երկու հազար անարվեստ զործավորներ և իր քնտրյալներից մեջ հազար արվեստավոր զործավորներ²⁵, որոնք կատարելապես հմուտ էին փայտի, քարի, պղնձի և երկաթի զործի արհեստում: Հրամանն ստածին պես կատարվում էր. բերվեցին անարվեստ բանվորների և բազմաթվա Տանհարեզ վարպետների բազմությունները: Եվ հրամայում է՝ նախ գետի ամբարտակը շինել ապաստան ուղող բարերով, կրի և աճաղի շաղախով, շատ լայն և բարձր, որ մինչև այժմ, ինչպես ասում են, հաստատ մնում է: Գետի այս ամբարտակի անդրվածքներում այգանգի մարզիկ, ինչպես լսում են, փայտում ամ-

բանում են ասպատակությունների և զաղթականությունների ժամանակ, որպես թե ամբանակալ լինեին ապաստան լեռների զազաթներին: Եվ էթև մեկը կամենա փորձել՝ նա չի կարողանա ամբարտակի շինվածքից պուկել թեկուզ մի փոքր քար՝ պարստախից համար, որչափ էլ աշխատի: Եվ երբ մարզ նայի քարերի շուրջը եղած կրի ձեփին, նրան այնպես է թվում, թե հարյուր է ամած այնտեղ: Այսպես երկար ասպարեզներով ամբարտակն անցկացնելով՝ հասցնում է քաղաքի համար որոշված տեղը:

Այստեղ հրամայում է բազմությունը շատ զաւակր բաժանել և ամեն մի դասի վրա զեկավար նշանակել վարպետներից քնտրներին, և այսպես խիստ լարված աշխատանքի մեջ պահելով՝ ընչ տարիներից հետո գլուխ է բերում հրաշալի շինվածքը, ամուր պարսեպսներով ու պղնձեց շինած գոնեղով: Փաղաքի մեջ շինում է նաև բազմաթիվ բնակար ապարանքներ, կրեա՛հարկ և եռահարկ, զարգարված տեսակ-տեսակ զյուրեղգույն բարերով, և ամեն մեկում պատուհաններ բառ հարմարության Քաղաքի կողմերն էլ որոշում է գեղեցկագույն և բնագրամակ փողոցներով: Շինում է նաև շքեղ և զարմանելու արժանի բաղնիքներ, համապատասխան քաղաքի դիրքին և պիտույքներին: Գետի մի մասը (ստունների) բաժանելով՝ անց է կացնում քաղաքի միջով ամեն տեսակ պիտույքների և րուրաստանների ու ծաղկանոցների ոռոգման համար. իսկ մյուս մասը (անց է կացնում) ծովակից ոչ և ձախ ափերով՝ քաղաքի և բլուր շրջակայքի ոռոգման համար: Փաղաքի բլուր արևելյան, հյուսիսային և հարավային կողմերը զարդարում է զատուպներով, վարսապեղ սաղարթախիտ ծառերով՝ զանազանակերպ պտուղներով ու տերևներով, և այնտեղ տեսնում է բազմաթիվ ամբարտակներ և գինեբեր աշիններ: Պարսպած քաղաքն ամեն կերպ հոյակապ ու ճշակավոր է զարձնում և մեղը բնակեցնում է մարդկանց անթիվ բազմություն:

Իսկ քաղաքի (վերին) ծայրը և այնտեղի հրաշալի շինվածքները մարդկանց շատերին անհասկանալի են մնում և պատմելու հնարավորություն չկա: Այդտեղ զազաթի շուրջը պարսպ թաշելով՝ ներքը շինում է զժժար մտնելու և զժժար գուրը գալու ինչ-որ ծածուկ և աճուկի արքայախոս շինվածքներ: Գրանց շինության որպիսությունը մենք ոչ որքի նշույթությամբ չենք լսել, ուստի հարմար չենք գտնում մեր պատմության մեջ հյուսել: այս բան կասենք, թե, ինչպես լսել ենք, որանք բլուր թագավորական զործերի մեջ առաջին և վեհագույն են համարվում:

Իսկ քաղաքային դեպի արեզակը զարձած կողմը, որտեղ այժմ է ոչ մի գիծ կորող է մարզ գծել երկաթով, այսպիսի կարծր քարի մեջ զանազան սենյակներ, ննջարաններ, զանձարաններ և երկար վի՛հեր՝ հայտնի չէ ինչ բանի համար հրաշակերտաց: Իսկ բարսամայնի բլուր

երկու հարթիւով, ինչպէս գրեով հարթում են մեղրամամբ⁶⁵), վրան շատ գրեք գրի տվեց, որոնց տեսքը միայն բոլորի կարմայնում է⁶⁷, եւ ոչ միայն այստեղ, այլև Հայոց աշխարհում շատ տեղերում արձաններ կանգնեցրեց և եռյակ դրերով իր մասին ինչ-որ հիշատակ հրամայեց գրել, և շատ տեղերում եռյակ գրով սամաններ էր հաստատում:

Ան սասցիներ ինչ գործեր որ Շամիրամը կատարել է Հայաստանում:

ԺԷ

ՇԱՄԻՐԱՄԻ ՄԱՍԻՆ, ՔՍ ԻՆՉ ՊԱՏՄԱՆՈՎ ԿՈՏԱՐԻՆ ԻՐ ՈՐԿԱՆՆԵՐԻՆ, ԳՐԱԿԱՆՑ ՄՈՂԻՑ ՓԱՆՈՎ ԱՆՅԱՍԱՆ ԵՎ ՄԵՈՎ ԻՐ ԿՆԻՎԱՍ ՈՐԿՈՒ ՉԻՐՔՈՎ

Սա շարունակ ամառային եղանակին, երբ գալիս էր հյուսիսային կողմերը, Հայաստանում շինեմ իր ամառանոցի քաղաքը՝ կողմնաշէտ և Ասորեստանի և Եփեսոսի վերակացու էր թողնում Զրադաշտ մոզին, մարաց նահապետին: Եվ այսպէս երկար ժամանակ վարվելով՝ նրան համատար է իր իշխանութունը վարել:

Եվ հաճախ իր որդիները հանգիմանվելով իր սաստիկ վազառու և տեստակ վարքի պատճառով՝ նրանց բոլորին կոտորում է. ազատվում է միայն ամենափոքրը, Եփեսոսը: Նա իր բոլոր իշխանութունն ու գանձերը բարեկամներին ու սիրելիներին պարգևելով՝ որդիները մասին ամենեկին հող չի տալու: Որովհետև նրա ամուսինն էլ, Եփեսոսը, ոչ թե, ինչպէս ստվում է, մեռավ ու թաղվեց նրա ձեռքով Եփեսոսում, արքունիքում, այլ դիտակելով նրա ախտանքի և շարտեր վարքը՝ թողեց թաղավորութուն և փախավ գնաց կրեան: Իսկ երբ որդիները շափահանա և ինչպէս գարձան, նրան այս բոլորը հիշեցրին, կարծելով թե նրան հետ կկացեն ղեմական տոփաներից, և նա իր որդիներին կտա իշխանութունն ու գանձերը: Մրա վրա ավելի կարախելով (Շամիրամը) կոտորում է բոլորին, կնեզանի է մեռնում միայն Եփեսոսը, ինչպէս վերն սասցիներ:

Իսկ երբ Զրադաշտը տիկնոջ դեմ մի սխալանք գործեց և մեշտեղը հակառակութուն բնկավ, Շամիրամը նրա զեմ պատերազմ է սկսում, որովհետև մարացին մտազրկել իր ամենքի վրա բռնանալու, Երբ պատերազմը սաստկացավ, Շամիրամը փախուտու տվեց Զրադաշտից և ղեմեց Հայաստան, Այս ժամանակ Եփեսոսը վրեժխնդրութիան համար ժամանակ գանդելով՝ մորն սպանում է և ինքը թաղավորում է Ասորեստանի և Եփեսոսի վրա:

Ան Շամիրամի մահվան մասին էլ սասցիներ, թե ինչից և երբ պատահեց:

ԺԸ

ԱՆՏ ՄԱՍԻՆ, ՔԵ ԱՆՅԱՍԱՆՊԵՆ ԿԱՌ ՏԵՂԻ ԵՒ ՈՐԿԱՆՆԵՎ ՇԱՄԻՐԱՄԻ ՊԱՏՄԱՆՈՎ ԶՆԻՎԱՆՑ ԶՆԻՎԱՆՑԱՆՈՒՄ ԵՎ ԱՆՏՈՎ ԿԱՌ ՄԱՆԸ ԱՆՅԱՍԱՆՈՒՄ

Սա նկատի ունեմ կեփազիտի պատման էլ, որպէսզի շատերին տեղիք լսում մեզ ծագրելու, որովհետև նա ուրիշ շատ բաների թվում խոսում է նախ Շամիրամի ծնունդի մասին, հետո դեռն է Շամիրամի պատերազմը Զրադաշտի հետ և նրան հաղթելը և արդեն վերջը դեռն է Հեզկիաստանի պատերազմը: Բայց մեզ ավելի հավանական է թվում Մար Արաւ կատիւնայի կատարած քննութունը քաղցնական մտաշունչների, բան այս, որովհետև տեղին է պատմում և պատերազմի պատճառն էլ հայտնում է: Բացի սրանից՝ մեր աշխարհի առասպելներն էլ արգարացնում են բազմաշարուտ ասորուն, թե այստեղ էլ պատահել Շամիրամի մահը, նրա հետիոտն փախելը, ծարափելը, ջրի պատկանելը, շուր խեղելը, այն՝ սուրբավորների մեղքնաշին հուռութիւնը ծովը նետելը և նրա սասմ խոսքը՝ Ուլունք Շամիրամի ի ծովը: Բայց և թե առասպել սխալութում և՛ Շամիրամը Եփեսոսից առաջ քար գործավ⁶⁸:

Արգ՝ այսքանը բավական է. մենք դառնանք հաջորդ սնցքերին:

ԺԹ

ԻՆՉ ՈՐ ՊԱՏՄԱՆՑ ՇԱՄԻՐԱՄԻ ՄԱՆՈՎ ԱՆՏՈՎ

Ամեն ինչ հարմարեցնելով ևս այս գրութում կնշանակեմ մեր ուղղի ավագանուն մարդկանց ու նախնիներին և ինչ որ նրանց յուրաքանչյուրի մասին գրույցներ և գործողութուններ կան, շմտցնելով որս մեզ ոչ մի ինքնահար կամ անպատշաճ բան, այլ ինչ որ (հավաքեցիներ) գրքերից և սրանց հետևողութիւնը՝ իմաստուն և այս հարցերում լավատեղյակ անձները, որոնցից հավատարմութամբ քանացիներ հնագրութունները հավաքել: Եվ մենք ստում ենք, որ մենք այս պատմութիւն մեջ արգարախոս ենք եղել մեր դիտավորութամբ և ուղղամտութամբ. իսկ ինչ (աղբյուրներից) որ հավաքել ենք՝ այդ Աստծուն է հայտնի. նրանք գովելի՝ են թե պախարակելի, այդ մեզ չի վերաբերում, մենք՝ հետո ենք դառնցից: Բայց պատմանների համաձայնութունը, և պատանիների հյուղադրութիւն մեջ թվերի հավասարութունը ցույց են տալիս մեր աշխատասիրութիւն հշմարտութունը: Արգ՝ այս այսպէս կարգավորելով, կամ՛ բուրբոխի հավասար կամ փոքր-ինչ ճշմարիտ, շեղվելով, կրկնեմ թեզ այսուհետև եղանակներ պատմել Պիտոյից Հյուսիսան պատմութուններից:

Արդ՝ Շամիրամի մահից հետո՝ որ տեղի ունեցավ Արային սպանելուց հետո իր Չամեսուս որդու ձեռքով, որ ինքը նիկեփան է, պատմութիւն կարգը հաստատ այսպիս պէտք է գիտենանք: Նիկեփան սպանելով իր հեշտասեր ժորը, թագապետ է ինքը և խաղաղ կյանք է վարում: Արա ժամանակ լրանում են Աբրահամի կյանքի տարիները:

(ԱՅՐ ԱԶԿԻ ԾՅՈՒԱԿՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՆԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՈՍԵՆՑՈՑ ԵՎ ՔԱՂՎԱՆՑՈՑ ԾՅՈՒԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԱՄՆԵՎ ԱՄՐԱՆԱԿԱՅԱՌՈՒՄ, ՈՐ ԿՈՉՎՈՒՄ ԷՐ ԹՈՂՈՍ ԿՈՆՍՏԱՆՍՆՈՒՄ)

50 Երբայեց	Քաղեացց	Հայց
Բահահ	Արես	Արայան Արա*
Հակոր	Առայես, որ է Ամշուոս	Անուշափան
Ղեկ	Քեբրքես, որ և Բազես	Պարես
Պահամ	Առամարթուոս	Աբրակ
Ամբամ	Բելորոս	Ղափակ
Մովան	Բաես	Փառանակ
Հեսա**	Աղտազոս	Սուր***
Գոթանիել	Մաթիթոս	Հափանակ
Ավովզ	Մասրազես	Վաշտակ
Բարակ	Մփերոս	Հայկակ****
Գեղես	Մամիզոս	Ամպակ
Աբրահիմ	Սպարթես	Առնակ
Թովզա	Ասկատազես	Շափարշ
Հայեր	Ամինան	Նարայր

* Սա մեր Արայի որդին է, որին Շամիրամը Արա կոչեց և մեր աշխարհի վերակազմելու գործը նրան հաճատող, երանից սերվեցին:

** Արանից առաջ (տիրում ին) ոչ թե ըստ ցեղի, այլ ըստ տաղաղման, որովհետև բոլորն էլ Աբրահամից լինեցին: Երբ ըստ բանաստեղծներին կատարեց, որտեղ զինք Բաբելոն հաղթեց սեցան Արաս, և այս հայտնի է սփրիկներին: Այնպես՝ առանձինների վրա զրոշված արժանագրութայեց, որ մինչև այժմ կա (հետագա բովանդակութայն): Ե՛նեք բանաստեղծները կարարարներ զոչ Հատից փախելով Ակար այտեղ բնակվելուս Արաեցի է և մեր պատմական Քեհիզարե՛ն Հայտատեսում, եղ մենք ստուգելով Հարատա իմացանք, որ Գեթանիների ջեհն անտարախոս արանցից է սերված, և այս ցեղի շարքը ծուլ է տարն, որ բանաստեղծ են:

*** Սա ժամանակն էր այդտեղ Հեսա Վափան:

**** Սա մասին ստամ են, թե այդպիսի Քեհիզարե ժամանակ և մի անձին խաղաղութան շարքեղով նրա մեջ մեռել է:

Երբայեց	Քաղեացց	Հայց
Եփթայի	Բելորոս	Վասամ
Նեերովն	Բաղդատոն	Կարճ ¹
Նորովն	Վամպադես	Գոռակ
Ղարզոն	Սուսադես	Հրատո
Մամփոսն	Ղամբաթո	Ընձար
Հնիզ	Պանիթոս	Գակ
Մամուհի	Սասամոս	Հորո
Մավուզ	Միթնես	
Գավթի և հաչորգները	Տեսամոս	Ղարմայր*
	Տեսես	Պերճ
	Թրինես	Աբրան
	Գեղեղազոս	Բազուկ
	Ուլպազմոս	Հոյ
	Ղափաթեհին	Հոսակ
	Պեթիթազես	Կայպակ
	Ուփատիթո	Սկայթրդի
	Փաստիթի	
	Ակոպազնիթ	
	Սարգանապարտ	

Բ

ԱՐԱՅԱՆ ԱՐԱՅՆ ՄԱՍԻՆ, ԵՎ ԹԵ ՍՐԱ ՈՐԳՆԻ ԷՐ ՍՈՍՈՒՎԵՐ ԱՆՈՒՇԱՎԱՆԸ

Իսկ Շամիրամը զեն իր կենդանության ժամանակ Արայի որդուն, որ ծնած էր նրա սիրելի կնոջից՝ Նվարդից և տասներկու տարեկան երեխա էր մեռաց Արայի մահվան ժամանակ, զիպի Արա Գեղեղազից աւանտ գործով պատճառով՝ նրա անուով կոչում է Արա և նշանակում է մեր աշխարհի վերակազմ, մտերմարար նրան վստահացած լինելով. և ստամ են, թե նա պատերազմում Շամիրամի հետ մեռավ:

Բայց (Սար Արասը) պատմությունը շարունակում է այսպես. Արայան Արան պատերազմի մեջ մեռնում է Շամիրամի հետ, թողնելով արուզափակ՝ գործով հորը, խաբազ հանձնարից Անուշափան Սոսանվորին, որով՝

* Սա Տեսամոսից օգնական ուղարկեց Պրիմասին կազմական գործի հետ և մեռավ հեղեղաց քաղաքից:

հետև նա (կրոնական) պաշտամունքի համաձայն նվիրված էր կրոնական կազմի ստեղծմանը Արմավիր քաղաքում, որտեղ տեղիներին հանգրաւան աստիճանի շարժվելուց, նախելով քամու ուժին և ուղղութիւնը մեր Հայրենիք աշխարհում սովոր էին գուշակութուններ անել երկար ժամանակ:

Այս Անուշավանը բավական ժամանակ արժամարձանը կրելով Յուժեանոցի, առաջադրւում է արքունի դռանը. հետո բարեկամներին օգնութիւն գտնելով ձեռք է բերում մեր աշխարհի մի մասը՝ խնամելու համար իբրև հարկատու, վերջը նաև ամբողջ աշխարհը:

Բայց շահագնաց շատ կլինեք, եթէ մենք այս գլխում վեր հնչված մարդկանց բոլոր գործերն ու պատմութիւնները գրենք՝ ինչպես արժան է:

III

ՍՊԱՆՈՐՈՒՄԻՆ ԵՎ ՊԱՐՏՈՒՄԻՆ ԱՆՍՏԻՆ ԱՆՎԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ՕԿՆԱՅԱՆ Է ԸՆՏՈՒՄ ՄԱՐԿԱՆՎԱՐՈՒՄ ԱՍՐԱՆԱԳԱՄԻՆ ԹԱԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԿՐԾՆԵԼՈՒՄ

Բայց թողնելով գիպերից ոչ կարեւորները, ասենք ինչ որ հարկավոր է, վերջինն այն մարդկանցից, որ եղել են ասորեստանցիների թագաւորութիւն ժամանակ, Շամիրամից կամ Եկեռոցի հետ, մեր Պարսիայն եղավ Սարգանսագալի ժամանակ: Սա ոչ փոքր օգնութիւն է ցույց տվել մարացի Վարդանիսին՝ թագաւորութիւնը Սարգանսագալից վերցնելու:

Ահա այժմ են զգարճանում են՝ ոչ փոքր ուրախութիւն զգալով, որ հասնում եմ այն տեղը, երբ մեր բնիկ նախնիի սերունդները թագաւորութիւն ասորեանի են հասնում: Ուստի վայել է մեզ այստեղ մեծ գործ կատարել և շատ պատանակել հուսեր գրել, որոնց հիմունքը մենք ինքներն արժանացանք կարգաւոր իմաստուն, իմաստունների մէջ իմաստնազուն և բազմարդուն հեղինակի շորս հազներդութիւնների մէջ:

Որովհետև Վարդանիսը, ծննդավոր մեղացիք, այս ամբողջուն աշխարհի մայրի աննշան կողմերից, կենցաղավարութիւն մեջ շատ խորամանկ, կրթիւնների մեջ խիզախ, գիտնալով Քանու Կոնկորդուսի տարադի բնավորութիւնը և հեշտասեր ու թուլամտութի ծուլութիւնը՝ իր սիրելի վարժանքով ու աստատաննութիւնով ավելացնում է իրեն բարեկամներ այն բազ ու պիտանի մարդկանցից, որոնց ձեռքով այն ժամանակ մեծ աստատութիւնով հայտնապես կառավարվում էր Ասորեստանի աշխարհակալ պետութիւնը, իր կողմ է զբաղում նաև մեր քոչ նախա-

բար Պարսիային, խոտանալով նրան թագաւորութիւն պատիվ և ձև: Գուժարում է նաև արի մարդկանց մեծ բազմութիւն, որոնք հաշոյ էին իրական, աղել և սուր զորքածնու մեջ: Այս կերպով Սարգանսագալից թագաւորութիւնը զբաղելով՝ տիրում է Ասորեստանին և Երկրներին: Բայց Ասորեստանի վրա վերակաշուններ թողնելով՝ թագաւորութիւնը փոխադրում է Մարաստան:

Բայց եթէ այս բանը ուրիշների մոտ տարբեր է պատմում, մի գարճանար: Որովհետև ինչպես որ մեր (պատմութիւն) առաջին գլուխներում մեղադրեցինք մեր հին նախնիների անխնայաստեղ բարբոս ու ճաշակը, նույնը պատահում է և այստեղ: Որովհետև ինչ գործեր որ կատարվել են նարդրոգոնասորի հոր կողմից, զրի են առնված նրանց հիշատակագրների ձևերով, իսկ մերոնք, որովհետև այսպիսի բան ըստանցին, (նրանց գործերը) նշանակվեցին վերջերս⁶²: Բայց եթէ հարցնես, թե որտեղից մենք այսպես գիտենք մեր նախնիների անունները, այլև շատերի գործերը՝ կպատասխանեմ. բաղդեացիների, ասորեստանցիների և պարսից ինչ ղեկաններից, որովհետև մեր (նախնիներից) նրանց գործակալները և նրանցից մեր աշխարհի վրա նշանակված վերակաշուններն ու մեծ կողմնակալները լինելով նրանց անուններն ու գործերը մտածվել են արքունի գրքերի մէջ:

IV

ՄԵՐ ԹԱԳԱՎՈՐՆԵՐ ԿԱԳԸ ԵՎ ՆԵՐՆՆ ԹԱԳԱՎՈՐՆԵՐ ՀՈՐԻՑ ՈՐԿԻ

Այժմ են կանցնենք թագաւորութիւն մեր մարդկանց, մանաւանդ թէ թագաւորներին, մինչև պարթևների տիրութիւն (հաստատվելը): Որովհետև մեր թագաւորների մէջ ինչ այս մարդիկ են պիւլիլ, իբրև բնիկներ, արլունակիցներ և խոյակակ հարապատաններ⁶³, եւ շատ կփոփոխուին, որ այն ժամանակ Փրիկլին կեղծ և ինչ գրած լինեք, որ նրանց ժամանակ են աշխարհ կեղծ լինել, նրանց տիրութիւնը զգարճանայի և այժմյան գտանցներէց խոտափում լինելի: Բայց շատ վաղ մեղանից այդ գրութիւնը փոխալով, զուցե նաև վիճակը: Բայց ես այժմ օտարների թագաւորութիւն ժամանակ պարելով՝ նրանց (թագաւորների) հետ միասին պեղել է նշանակեմ մեր թագաւորների կարգը, որովհետև մեր աշխարհի բնիկ պատմագրներն այն մարդիկ են, որոնց անունները ներքոյ կգորշմենք:

Եվ որ այդ ժամանակները մեր ազգը թագաւորութիւն ունեւ՝ սրան վկայում է Երեմիա մարգարեն իր մարգարեութիւն մէջ՝ Բարեկանի դեմ

պատերազմի հրավիրելով. «Հրաման սուր, ստամ է նա, Արքայառայան թագավորութանը և Արքանազյան զեզին»⁵⁴. Մա ազատույց է, որ այդ ժամանակ մենք ունեցել ենք թագավորություն:

Բայց մենք (մեր թագավորների) ցուցակը կկազմենք, մտաբերենք զանազան Մարաց թագավորներին:

Մարաց առաջինը
Իսկ մեր առաջինը, մարացի Վարակեցի թագավորը

Վարակես
Մարակես
Պարսույր, Սկալորդու որդին.
Հրաշյա⁵⁵

Մարաց
Հայոց

Մուսարթու
Մուսահա
Գեովհիս
Փավորտիս
Կվարարես
Ամրահակ
Փառնավագ
Պանույն
Գուռնակ
Փավոս
Մյուս Հայկակ
Նրվանդ Սակավակյաց
Տիգրան

Որովհետև ես հավանակաւ եմ գտնում, որ սրանց անունով կոչված են վերջին Նրվանդն ու Տիգրանն ըստ հույների, ժամանակը շատ հեռու չլինելով՝ մեկը հիշած կլինի այս անունները:

⁵⁴ Մա Հրաշյա է կոչվում առավելագույն պաշտոն կրող և բոցավառ աշխարհում առաջինը: Համար հասնում են, թե որս ժամանակ է ապրել Նարեկոզդեստը, որ հրեաների գերեզմանում առում են, որ սա Նարեկոզդեստի խնդրեց զերված կրթությունների զերտմանը մեկին՝ Շամբաթ անունով և քրեց մեր կերպում յնուկեքեք մեծ պատվով: Պատմագիրն առում է, թե սրանից սերվեց Բագրատունիների ցեղը, և այս ստույգ է: Բայց թե ինչպիսի շահեր գործ դրին մեր թագավորները՝ նրանց առիթվաւ, որ կուռքեր պաշտեն և թե նրանցից թանխարստի և ովեր առավածապատմութամբ վերջացրին իրենց կյանքը՝ հետ կարգով կպատմենք: Որովհետև մի քանի անգամանակի մարդիկ առում են, ըստ իրենց նեթագրության, բայց ոչ հշմարտութամբ, իբր թե Բագրատունիների թագադիր քեզ մագում է Հայկից: Ուստի ես առում եմ, աչպիսի հիմար խոսքերի մի՛ հավատար, որովհետև ոչ մի հեղա կամ ազատույց չիս այդ խոսքերում, որ ցույց տա նրանց հեշմարտութամբ: Որովհետև Հայկի և հեռանների մասին է նախագում են վարելիքն և անկախ հիմարով: Բայց սրաթիք, որ Սեբաստիանը, որ Բագրատունիները համար առիթ են պատմաբաններին, իսկպուս Շամբաթն է նրանց հին՝ կրթական լեզվով:

ՍԵՆՏԵՆՏԻՄԵՆՆԻ ՈՐԿՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎ ԹԵ ԱՐԹՐՈՒԿՆԵՆԵՐԸ, ԳՆՈՒԿՆԵՐԸ ԵՎ ԱՂՋՆԱՏ ԲԿԵՇՈՒ ԿՈՉԱԿՍԸՆ ԿՐԿԱՆՏԻՏ ԵՆ ՍԵՐՎԱՏՈՒ ԿՈՒՅՆ ԳՂՈՒՈՒՄ ԿԱՎԷ՛ ԹԵ ԱՆԳԵՂ ՏՈՒՆԸ ՊԱՍԵՐԱՄԻՏ Է

Բայց նախքան ձևանարկենք Մեծ Տիգրանի մասին եղած պատմություններին, որ մեր ընդի թագավորներից իններորդն էր, հուժկու, անվանի և հաղթող այլ աշխարհակալների շարքում, պատմենք ինչ-որ անհրաժեշտ է մեր պատմության կարգը պահպանելու համար: Մենք կարծես մոռացության տվինք Սենեքերիմի մասին (հոսսի): Որովհետև նարեկոզդեստի թագավորությանից ութսուն, թե՛ ավելի կամ պակաս տարի առաջ՝ այս Սենեքերիմը Ասորեստանի թագավոր է եղել, նա, որ նրուսպիմը պաշարեց հրեաների Նուրիստա առաջնորդի ժամանակը: Նրա որդիները, Աղրամեղքը և Մանասար, նրան սպանելով, փախան եկան մեզ մոտ:

Մրանցից մեկին, այն է Սանասարին, մեր քաջ նախնի Սկալորդին բնակեցնում է նույն Ասորեստանի սահմանների մոտ, մեր աշխարհի սրբաժայռի հարավում: Նրա սերունդն անկող ու բազմանալով լցրեց Մեծ կոչված լիտը: Իսկ նրանցից ակնավոր և զինավոր մարդիկ վերջեր գործնում հաճախաբարություն ցույց տալով մեր թագավորներին՝ սրբանացան այդ կողմերի թոգելությունն⁵⁵ սասանալու: Իսկ Արգանտուզանը⁵⁶ բնակվեց նույն կողմի արևելյան հարավում: Պատմագիրն առում է, թե սրանից սերվեցին Արթուրիներն ու Գեուսիները: Այս էր պատճառը, որ մենք հիշեցինք Սենեքերիմին:

Բայց Անգեղ տան մասին նույն պատմագիրն առում է, թե սերված է մի ոմն Պարամից, Հայկի թոռից:

ՏԻԳՐԱՆԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՆ ԷՐ ԱՐԹՐՈՒ ԲԱՆՈՒ

Անցենք այսուհետև զրեւո Տիգրանի և նրա զործերի մասին, որովհետև սա մեր թագավորներից ամենահզորն և ամենախոնձան էր և նրանցից բոլորից քաջ: Նա Կյուրոսին աշակից եղավ Մարաց իշխանությունը առաջալիցու, հույներին էլ ոչ թե՛ ժամանակ նվաճելով իրեն հաղանդեցրեց, և մեր բնակության սահմաններն ընդարձակելով հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը. բոլոր իր ժամանակա-

կիցներին նախանձնի եղով, իսկ Հետո եկողներն ցանկալի թե՛ ինքը
և թե իր ժամանակը:

Եվ ո՞ր իսկական մարզը, որ համարում է արիական բարքի և խո-
հականության, չի զվարճանա սրա հիշատակությամբ և չի ձգտի նրա
նման մարզ լինել: Ես տղամարդկանց դուռն կանգնեց և ցույց տալով
բացաթղուն՝ մեր ազգը բարձրացրեց, և մեզ, որ (օտարներին) լծի տակ
կենք, զարթոնք շատերին լուծ գնողներ և հարկապահանջներ, միթերներ
սպիտակ արձաթի, և պատմական քարերի, և զգեստների, և զառաքան քոյ-
ներին, և գրովածքները՝ տղամարդկանց և կանանց համար՝ առհասա-
րակ բազմացրեց, որոնցով աղնղներ զնկեցիկների նման սրաներին էին
երևում, իսկ զնկեցիկներն այն ժամանակի համեմատ գլուցազուկներին
էին նմանում: Հետևակ կողմները ծիարող գարձան, պարտերով կր-
վողներն հոտող ազնվաժողներ, կողպաներով կողմողներ զնվեցիցի սրե-
րով և տեղավոր նիզակներով, մերկեր⁹⁷ պատապարվեցին ժահնաներով
և երկաթն զգեստներով: Եվ էր նրանք մի տեղ հավաքվեցին, միայն
նրանք արտաքին տեսքն ու նրանց պահպանակների և դեմերի փայլ-
մանքը բավական էին թշնամիներին հայտնելու և վանելու: Ես խաղա-
ղություն և շենություն բերեց, բոլորին լիացրեց յուզով և մեղքով:

Այս և այսպիսի ուրիշ շատ բաներ բերեց մեր աշխարհին այս փարտ-
յալ և մաշկի մայրը գանգուր Երվանդյան Տիգրանը, գունձը Բրեսնով,
բազրը նայվածքով, ուժեղ սրուրներով, զնկեցիկ ունենով, վաշխա-
կազմ և թիկնազմա, կերակուրների և բույրիչքների մեջ պարզելու, ուր-
խաթյունների մեջ օրինավոր. որի մասին մեր հեռքը, որոնք փանդի-
ներով երզում էին, ասում էին, թե մարտի ցանկություններն մեջ էլ
շափավոր է կղել, մեծիմաստ և պիճուխոսն և չի բոլոր (հասակաթյուն-
ներով), որ պիտանի են մարզուն, Եվ այս գրքում Ի՞նչ կա ինձ ավելի
սիրելի, քան սրա մասին եղած զովանաներն ու պատմությունը երկա-
րի: Ես ասուն բանի մեջ արգարազատ և համատարասը չէր որոնեա-
լով՝ ամեն մեկի կյանքը կզուտ էր իր մարի լուկով. չէր նախանձում
լավազույններին, չէր արհամարհում նվաստներին, այլ աշխատում էր
բնզանբույս ասնների վրա առարձու: Իր ինձամի զգեստը⁹⁸:

Ես սկզբում դաշնակից լինելով Աղգաստին, որ մարաշի էր, նրան
կին է տալիս իր Տիգրանուհի քույրը, որին թախանձանքով խնդրում էր
Աղգաստը Ռորովհետև (Աղգաստը) մտածում էր՝ այսպիսի ազգակա-
նություն շնորհիվ կամ հաստատուն սեր պահպանել Տիգրանի հետ, կամ
այս կերպով հեշտությունը զավանստորեն սպանել. Ռորովհետև նրա
միտքը կասկածի մեջ էր, երբ մի անպատկեր մարգարեությունը նրան
ցույց տվեց առաջիկայում նրան պատահելիքը:

ԱՅՊԱՀԱՆ ԵՐԿՈՐԻ ԵՎ ԿԱՍԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿՑՈՐՈՍԻ ԵՎ
ՏԻՊԱԿՆԻ ՍԻՐՈ ԵՎ ՄՈՒՍԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՆՈՎ

Բայց երա այս մտածումներին առիթն էր մտնումսկան դաշնակ-
ցությունը, որ Կյուրոսն առաջարկեց Տիգրանին. և շատ անգամ էր
Աղգաստին այս բանը հիշում էր, բունը հարչում էր նրանից, և անդա-
պար նա խորհրդակցիցներին այսպիսի հարց էր տալիս. «Ինչպիսի՞ հնար-
ներով մենք պիտի կարողանանք քանդել սիրո կապը պարսիկի և բազ-
մայրությանը հայի միջև: Եվ այսպիսի շփոթ մտածումներերով ժամա-
նակ առաջիկա զեպրեքը նրան հայտնվում են երազի մեջ մի նախատե-
սությունը, այս կերպ. Ինչպես ասում է պատմությունը:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՅՊԱՀԱՆ, ԿԱՍԿԱՆՆԵՐԻ ՄԵՉ ԼՐԱՆՈՎ, ԻՐԵՆ, ՊԱՏՃԱՆՈՎ
ԳԻՊՎԱՍԸ ՏԵՍՆՈՒՄ ԵՎ ՍԵՆԱՆՆԵՐԻ ԵՐԱԶՈՎ

Այդ օրերում, ասում է, ոչ փոքր վտանգ էր սպասում մարաշի Աժ-
գաստին Կյուրոսի և Տիգրանի միարանությունից: Ուստի և մտքերի
ստատիկ անկնծությունից՝ զիշերք ընկ մեջ տեսիլով երևաց նրան այն,
ինչ որ արթուն ժամանակ ոչ աչքով էր տեսել երբևի և ոչ ականջով լսել:
Ուստի ընկ վեր թռչելով՝ չի սպասում խորհրդակցության ժամին սո-
վորական կարգով, այլ իսկույն, մինչգեռ գիշերվան բավական ժամը
զեռ կային, կանչում է խորհրդակցիցներին և արտում երեսով, զեպին նա-
խելով՝ սրտի խորքերից հասույանք է արձակում: Երբ խորհրդակցիցները
պատենուր հարցնում են, ես ժամկետով ուշացնում է պատասխանը և
վերջապես հեծկատանքով սկսելով՝ բաց է անում արտում ծածուկ պահած
խորհրդիցներն ու կասկածը, նաև արարաժեկի անակրքը:

«Ո՞վ սիրիլիք, ասում է նա, (երազումս թվում էր), թե ես մի անձա-
նաթ երկրում եմ գտնվում, մի լուսն մտո, որ երկրի վրա երկար բարձ-
րացած էր և որի զագաթը թվում էր ստատիկ անտանամիքով պատած,
և կարծես ասելիս լինեին, թե այս Հայկազանք երկրումն է: Եվ էր ես
երկար նայում էի այդ լուսն, մե՞ ծիրանազգեստ կին երեսց ինձ երկա-
զույն բողով, բարձր լուսն զագաթին նստած, խոշոր աչքերով, բարձ-
րահասակ, կարմիր այտերով, որ բեծված էր ծննդի երկուերով: Երբ
ես երկար նայում էի այս երևույթին — հիացման մեջ էի, հանկարծ
կենք կրկն (զավակ) ծնեց, կատարյալ դուրյազուկները հասավով և քնու-

Քյամբ: Առաջինն առյուծ հեծած՝ պահում էր զեպի արևմուտք, երկրորդն ինձ հեծած զեպի հյուսիս էր զինում, իսկ երրորդը վիթխարի վիշապ սանձած՝ արշավակի մեր սերտության վրա էր հարձակվում:

Այս խառն երպանների մեջ մեկ էլ ինձ թվաց, թե կանգնած եմ իմ սրբունի (ապարանքի) վրա, տեսնում էի նրա կտուրը բազմաթիվ գեղեցիկ շատրվաններով զարդարված, մեզ պատկոզ ստամբաններին հրաշալի տեսքով արնտեղ կանգնած, և ինձ՝ մեզ հետ միասին նրանց զոհչեղով ու խնկերով պատվելիս: Երբ հանկարծ վեր նայեցի, տեսա որ այն վիշապ հեծած մարդը, կարծես արժիքի փնեթով պանալով՝ վրա հարձակվեց և մտանդով ուզում էր աստվածներին կործանել: Իսկ ես, Աժդահակը, մեջ ընկնելով, այն հարձակումն ինձ վրա ընդունեցի, սրանչիք զյուզյուզելի հետ կռվի բռնվելով: Ետև երգակների տեղերով իրար մարմինները խոցողովով՝ արյուն փտակներ վար հուռեցրին և ապարանքի արեգակի նման փայլող երեսը արյան ծով զարձրին: Հետո ուրիշ զիններով (կովեցիներ) ոչ սակավ ծամեր:

Բայց ի՛նչ օգուտ է խոսքս երկարացնել, որովհետև գործի վերջը իմ կործանումն եղավ: Տազնապից սաստիկ բրախեր կոխեց, և բուն փախավ, և այլևս կենդանի չեմ թվում: Որովհետև այս երեսույթների նրազը ուրիշ բան չի նշանակում բան այն, որ Հալիպոլյան Տիգրանի կողմից բռնի հարձակում պիտի կատարվի մեզ վրա: Բայց ո՞վ մեզանից, աստվածների օգնությունից հետո, խոսքով ու գործով մեզ բարեք խորհելով չի հուսա մեզ թագավորակեց լինել:

Եվ խորհրդակիցներից շատ օգտակար առաջարկություններ լսելով՝ շնորհակալությամբ պատվում է նրանց:

ԻԷ

ՈՐՈՇՐԱՆԻՏՆԵՐԻ ՈՍԱՆԵՐԸ, ՀԵՏՈ ԵՎ ԻՐ ՄՏԱՆԱՅ ՄԻՋՈՇԸ ԵՎ ԱՆՐԵՍԱՆԱՆ ԳՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Ձեզանից, ո՞վ սիրելիներ, ասում է (Աժդահակը), շատ հանձարեղ և իմաստուն բաներ լսելուց հետո՝ կասեմ և ես, ինչ որ, աստվածների օգնությունից հետո, մտածում եմ իբրև օգտակար միջոց: Որովհետև թշնամիներից զգուշանալու և նրանց մտազրույթուններին ծանոթանալու համար ոչ մի բան այնքան մեծ օգնություն չի բերում, բան էրբ մեկը (Քշեանուն) կորուսա պատրաստի՝ սիրտ միջոցով նրան զավելով: Եվ այս բանը մենք այժմ հնարավորություն չունենք կատարելու ոչ զան-

մերի միջոցով և ոչ պատրուզական խոսքերով, այլ միայն այլ կերպով, որ ես մտազրոյ եմ գործարկել: Իմ խորհուրդը կատարելու՝ որովայն արբելու միջոց է՝ նրա րուչը Տիգրանունին, գեղեցիկագույնն և խոհեմը կանանց մեջ: Որովհետև այսպիսի խնամեական ազգակառնությունները, համարձակ երթնելույթյան միջոցով, ընդարձակ հնարավորություն են ստեղծում թաքուն կերպով զավել լարելու, կամ նրա մտերիմներին գտնելու ու պատիվ խոստանալով՝ հրամայել՝ նրան հանկարծանի սպանել սրով կամ թուշի միջոցով, կամ նրա մտերիմներին և կուսակալներին գանձերով նրանց բաժանել և այս կերպով նրան, իբրև մի անզոր ազալի, մեր ձեռքը գցել:

Բարեկամներն այս խորհուրդն ազուր համարելով, գործի են ձեռնարկում: (Աժդահակը) իր խորհրդակիցներից մեկին մեծ զանձ առավ ուղարկում է (Տիգրանն մտա) մի թղթով, որ հետևյալ բովանդակությունն ունեւր:

ԻԸ

ԱՌՊԱՇԱԿԻ ԹՈՒՂԹԸ, ՏՈՎԱՆԻ ՀԱՄԱՆԱԾՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՈՎԱՆՆՈՒՆՈՒ ՄԱՐԱՆԱՆ ԽՈՂԵՐԿԸ

«Քո սիրելի եղբայրություն զիտն, որ այս աշխարհի կյանքում աստվածները մեզ չեն պարգևել ավելի օգտակար բան, բան սիրելիների բազմություն, իհարկե իմաստուն և հորոքագույնների, որովհետև այս զեպքում զբոսից խառնություններ չեն համարձակվում ծագել, և եթե պատահեմ, իսկույն կրեկհնեմ, իսկ ներսում նրանք կհամաձայնեն, քանի որ այսպիսի շարությունը ոչ սրից չի կարող մտաք գործել: Արդ՝ ես տեսնելով բարեկամությունից առաջ եկող այս օգուտը, կամեցա ավելի հաստատուն զարձնել ու խորացնել մեր մեջ եղած սերը, որպեսզի երկուքս էլ բոլոր կողմերից ապահովվելով՝ ամբողջ և հաստատ պահեն մեր տեսությունները: Եվ այս բանը կկատարվի, եթե ինձ կնույթյան ստուք րուչը Տիգրանունուն, մեծ Հայոց օրիորդին⁶⁰, թերևս նրա համար եսն բարի համարես, որ թագուհիների թագուհի լինի: Ողջ եղիք, մեր թագակից և սիրելի եղբայրս:

Առանց խոսքս երկարացնելու սանձա՝ Գառգամավորը զայլու է, գեղեցիկ օրիորդին վերաբերյալ գործը կատարում է, որովհետև Տիգրանը համաձայնում է իր րուչը Տիգրանունուն Աժդահակին կնույթյան սույլ: Գնա շղիտեանալով նրա կողմից սարքված զավանանությունը՝ քրոջն ուղարկում է թագավորավայել կարգով: Աժդահակը նրան կին տանելով՝ ոչ

միայն իր սրտում թաքցրած նեղություն, այն (Տիգրանուհու) զեղեկության պատճառով իր հանսպ մեջ առաջին է դարձնում, իսկ ներքոստ նշույթում է շարաթյուն:

ԻԲ

ԹԵ ԻՆՉԻՆ ԱՆՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՅԱՏԻՆ ԳՆԵՐԱՎ ԵՎ ԳՆՏԵՐԱՉՈՒՆ ՍՊՈՒՆՑ, ԵՎ ԱՅՐԱԿԱՆԻ ՄԱՆՆ ԵՅՐՎ ԿԻՎՈՒՄ

Արանից հետո առում է, թե կրք Աճգահար Տիգրանուհու սրկնություն մեջ հաստատեց, իր թագավորության մեջ սլինչ չէր գործում ուստեց նրա հավանության, այլ մանն բան կարգադրում էր նրա ստածի պես և հրամայում էր, որ բոլոր նրա հրամանին հնազանդին: Այս այսպես կարգադրելով՝ սկսում է այնուհետև մեղմով խորհուրդներ նրան գրովի: Երև լքեալն, սաստ է նա, որ նրա լայր Տիգրանը նախանձում է, որ դու Ղրայց՝ անկին ես գործի, նրան զրգում է նրա կիբը՝ Զարուհին: Ի՛նչ կիբի սրա հետևանքը, եթե ոչ՝ որ նախ ես կհեռնեմ և հետո Զարուհին Արլայց վրա (տիկին) կգտանա և աստվածուհիների փնդը կրան: Արանն ընդ մնում է, բնորով այս երկուսից մեկը՝ կու՛մ լինել կերպարանք և հանձն առնել խայտառակ կործանում Արլայց առաջ, կամ բո բարին հասկանալով մի օգտակար բան մտածել և առաջիկա անցքերի մասին հոգալու:

Այս խորամանկություն մեջ թաքցած էր (և սպանակիք), թե Տիգրանուհին կենտրն էր մարտաբարձացու ըստկնության համաձայն շփարվել իսկ խորպետ զեղեցիկուն այդ զովանանությունը հասկանալով՝ սիրովոր խոսեցրով է պատասխանում Աճգահարին և մտերմորեն միջոցով շտապելով կարգը հաշտեում է (Աճգահարի) նեղությունը:

(Աճգահարի) արեուհան զորք է ձեռնարկում, պատգամավորների ձեռքով (առաջարկելով Տիգրանին), որ արեկամական անսակցություն համար զու երկու թագավորությունների սասձանադուս մի անգամ, իրեն թե մի կարեոր գործ ու խոսակիք կա, որ չի կարելի կատարել զոր և պատվիրակության միջոցով, բայց միայն անձամբ զեմ առ զեմ պատահելով: Սակայն Տիգրանը պատմաբանության դիտավորությունը դիտեալով՝ Աճգահարի խորհուրդներից ոչ մի բան ժամուկ չի թողնում, այլ զրով հայանում է, ինչ որ նրա սրտի խորքում կա: Երբ այսպիսով շարաթյունը հայտնի դարձավ, այնու ոչ մի խոսքով, ոչ մի խորամանկություն չէր կարելի շարաթյունը բացահայտել, և այնուհետև թշնամական գրույթներ հայտնի զրգովում էր:

Եվ Հայոց թագավորը (զորք) է ձեռնարկում Կապադովկիայի սասձանեներք, Վրաց և Աղվանիք բնորենքը՝ սրտն որ կային, և մեծ ու Փոքր Հայքի բուրքները, և բոլոր զորությունը զեմում է Մեղապոց կողմերը, Կոտայք հարկադրում է Աճգահարին Հալիպոլունի զեմ նրել պատերազմով ոչ փոքր բազմությունը: Հակառակության գործը ձգվելով էր մինչև հինգ ամիս, սրբահետև արագ ու առաջ գործը հիվանդանում էր՝ բանի որ Տիգրանը մտածում էր իր սերիի բոլը (Տիգրանուհու) մասին: Ես աշխատում էր արեկտի մի հար գտնել, որ Տիգրանուհին փրկվելու ձար գտնի: Երբ այս հաջողվում է, մտածում է և կոմի ժամը:

Բայց զովում եմ իմ քաղաքապետի նեղակազորին, որ բոլոր անգամներով համալար էր, մեկը մյուսին ամեն կերպ պատահեցրում, կատարյալ զեղեցիկ հասակով, առույց և ուժի կողմից իրեն հավասարը շունեցող: Եվ ինչու՞ եմ խոսքս երկարացնում, կովի ժամանակ Աճգահարի երկուքի ամուր զրահը ինչպես չոր ձեղքելով՝ Աճգահարին շամփում է իր նեղակի ընդարձակ տեղին, և ձեռքը նախ քան իրեն իհն էլ զեկքի հետ զուրս է բերում: Բայց կոմին սրանչիլի էր, որովհետև քաղեր քաղերի հանդիպելով՝ ոչ մեկը մյուսին շտաով թիկունք չէր դարձնում, ուստի պատերազմը երկարում էր բազմական ժամեր, մինչև զորքին վերջ էր զեմում Աճգահարի մար: Այս բարեբախտ դեպքվածը նոր փառք էր ավելացնում Տիգրանին:

Լ

ԱՃՍ ՄԱՍԻՆ, ՈՐ ԻՐ ՏԻԳՐԱՆՈՒԸ ԶՈՒՅՐՆ ՈՐԱՐԱՆԵՑ ԵՆԳՐԱՆԱԿԵՐՑ, ԱՆՆԵՎ ԱՅՐԱԿԱՆԻ ԱՌԱՅՐՆ ԿՆՈՋ ԱՆՈՒՐԵՎ ԵՎ ԿԵՐԻՆԵՐԻ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այս էլ է պատմվում, թե այս գործը վերջանալուց հետո (Տիգրանը) իսկ բուրք Տիգրանուհու մեծ բազմությունը ուղարկում է թագավորազարկ կերպով Տիգրանակհար՝ քաղաքը, որ Տիգրանը շինեց իր անունով, և այն զովանները հրամայում է նրա ժառանգության մեջ զեկել: Եվ այդ կողմերի ստատու՞ կողմում ազնվական դասակարգե, սաստ է, սրա սերունդից է առաջացել, իրեն թագավորական սերունդ:

Իսկ Աճգահարի առաջին կնոջը, Անուշին, և շատ աղջիկներ Աճգահարի սերունդից՝ պատանիներով և զերկրորդ բազմությունը հանդերձ, ավելի քան մի բյուր մարդ, (Տիգրանը) ընկանկնում է մեծ լիանս արեկյան կողմը՝ մինչև Գոգթիի սասձանները, որ են Տամբա, Ոսկիզա, Գաղգուլեր և ուրիշ դաստակերտների գետի արվով, որոնցից մեկն է Վրանյունիք, մինչև նախնազանի ամբողջի զեմուղիքը: Նրանց է թողնում հաս

երկր ամաններ⁴ երամ, Զուգա և ետ(ր)շակունիք⁵ գետի մյուս կողմում, ամբողջ զաշար, որի զլայնն է Ածղանեկան, մինչև ետև Նախնավան ամրոցը: Բայց վերը հիշված Անուշ կնոջն իր որդիներով հանգրստ բնակեցնում է մեծ լեռան փվածքի վերջում: (Այս փվածքն, ասում են, առաջ է կելի մի ահապն երկրաշարժից. այս բանը պատմում են այն մարդիկ, որոնք Պաղովեսոսի⁷⁵ հրամանով բնագրանակ ուղևորութուններ կատարելով սասարիզներով շափեցին մարդկանց բնակության տեղերը, մասամբ նաև ծովը և անբնակ վայրերը Այրեցյալ գոտուց մինչև Քիմեռոս⁷⁴): Իսկ Անուշին սպասավորներ տալիս է նույն այն մարդկանցից, որ լեռան ստորոտում բնակեցրին:

Այս բանը ճշմարտագին պատմում են և թվիլյաց⁷⁵ երգերը, որ, ինչպես լուսմ հմ, տխործելով պահել են գինեվեա Գողթն զավատի կողմի մարդիկ. այդ երգերում շարվում են պատմութունները Արտաշեսի և նրա որդիների մասին, այլաբանաբար հիշելով և Ածղանեկի անբնակեցրել, նրանց վիզապագուններ կոչելով: Որովհետև Ածղանեկ մեք լիզվով նշանակում է վիշապ⁷⁶, Այլև (այդ երգերում) ասում են թե՛

«Արգավանը ճաշ սարքեց ի պատիվ Արտաշեսի

եվ նրա զեմ զավ լարեց վիշապների դահլիճում»:

Այլև ասում են.

«Արտավազը շղտավ,

Արտաշեսի քաջ որդին,

Ապարանի փոքրիկ տեղ

Արտաշատը հիմնելիս՝

Անցավ գետց և շինեց

Մարաստանում Մարակերտը»:

[«Արտավազը, Արտաշեսի քաջ որդին, Արտաշատի հիմնվելու մասնակ, մի փոքրիկ տեղ շղտանելով ապարանի համար՝ անցավ, ասում են, գետց և Մարաց մեջ շինեց Մարակերտը», որ գտնվում է Շարսուր կղզված գաղտում, Ասում են նաև

«Տենչալով տենչում է Մաթենիկ տիկինը

Արասխուր խավարտ և տեյ խավարժի

Արգավանի բարձրից»⁷⁷:

[«Փափաղելով փափաղում է Մաթենիկ տիկինը արտախուր խավարտ և տեյ խավարժի Արգավանի բարձրից»:]

Արդ՝ զու այստեղ առավելապես շեռա զարմանա, թե ինչպես պատմեցինք ճշմարտոր՝ բացատրելով մութ պատմութուններն այն վիշապների մասին, որ ապրում են Ազատն ի վեր⁷⁸, Մասիսի վրա:

Ինչպես որ ինձ, պատմողս, սիրելի է հավաստի պատմել այս պատմության մեջ բուն և առաջին Տիգրանի և նրա զորքերի մասին, հիշելով գրայցներն այն Երվանդյան Տիգրանի մասին, նույնպես սիրելի պետք է լինեն ընթերցողից ինչպես այդ մարջ ու նրա զորքերը, այնպես էլ նրա վերաբերյալ պատմութունները: Ուստի ևս սիրում եմ ըստ բազմաթյան այսպես կոչելի՝ Հայկ, Արամ, Տիգրան, որովհետև քաջերի սերունդները քաջեր են, իսկ նրանց միջև եզամներին ով ինչպես ուզում է՝ թող կոչի: Բայց դիցարանակա՛ն տեսակներից՝ ևս ճշմարիտ է մեք աասծը: Չկա ոչ մի Արամազդ, բայց միայն նրանց համար, որոնք կամենում են, որ Արամազդ լինի. և այսպես կոչված շորս Արամազդներից մեկն է միայն՝ Ճաղատ Արամազդը⁷⁹, Այսպես նաև շատերը կան Տիգրան անունով, բայց սա մեկ և միակն է Հայկագուններից, որ Ածղանեկին սպանեց, և զորի տարավ կրա տուրք և Անուշին, վիշապների մորը, և կյուրոսին, նրա բարի կամքով և հոժարությամբ, օժանդակ ունենալով՝ Մարաց և Պարսից իշխանութունը հափշտակեց:

Սրա որդիներն են Բար, Տիրան և Վասդան⁸⁰, որի մասին մեք աշխարհի առասպելներն աւում են.

«Երկնում էր երկինք, երկնում էր երկիր,

Երկնում էր և ծովը ծիրանի.

Երկունքը բռնել էր ծովում

Նաև կամրիք Եղեգնիկին:

Եղեգնի փողովը ծուխ էր կննում,

Եղեգնի փողովը բոց էր կննում

Եվ բոցիցը զորս էր վազում

Մի պատանեկիկ.

Վազում էր խարտաշ մի պատանեկիկ,

Նա հուր մազեր ուներ, (այսպ թե՛)

Բոց մորուք ուներ,

Եվ այլերն էին արեգակներ»:

Մեք մեք ականջով լսեցինք, ինչպես այն ոճանք երգում էին փանդոններով: Դրանից հետո երգում աւում էին, թե կապել է վիշապներին

Տեառ ու հաղթել, և Հերակլեսի քաջագործութուններին շատ նման բաներ էին երգում նրա մասին: Բայց ստամ էն նաև, թե սա աստվածացած է, և Վրաց աշխարհում սրա հապակով արձան կանգնեցնելով՝ պատվում էին գոհերով:

Սրա սերունդներն են Վահոնիները: Սրա կրտսեր որդուց Ասավանդ Թագն էն Ասավանդաները: Սրա որդին էր Ասավանդ, սրանք՝ Ներսեսներ, սրանք՝ Զարեհներ, սրա սերունդն էն Զարեհավանյան կոչված չեղերը: (Զարեհի) առաջին որդին էր Արմազը, սրանք՝ Բագարներ, սրանք՝ Վահաներ, սրանք՝ Վահան: Մա Աղերստաղը Մակեդոնացու դեմ ապստամբելով՝ մեռնում է նրա ձեռքով:

Ալաունդից սկսած մինչև Վաղարշակի Թագավորները Հայաստանում ստույգ բան չունեմ թե՛ պատմելու, որովհետև խառնակութուններ և շփոթություններ լինելով՝ մեկը մյուսից ասու էր վազում մեք աշխարհին տիրելու: Այն պատճառով էլ Արշակ Մեծը դյուրավ Հայաստան մտնելով՝ իր կերպը՝ Վաղարշակին Թագավորեցնում է մեր Հայոց աշխարհի վրա:

Լ Բ

ՅԵ ԵՂԱՎԱՆ ԳՆՏԵՐԱՆՈՐԸ՝ ՏԵՎՏԱՐՈՍԻ ԺԱՄԱՆԱԿ ԵՂԱՎ ԵՎ ՄԵԹ ԶԱՐԲԱՐԸ ՍԱԿԱՎԱՐԻՎ ԵՌՈՎՊՈՏՅՆ ԶՈՐԵՐ ԷՆՑ ԱՃՆՏԵՎ ԷՐ ԵՎ ԱՆՏԵՎ ՄԵՌԱՎ

Այս երկու (պայմաններն) են, որ քո Հարցադիտության շնորհիվ մեզ տալիս ալ ու նեղություն են պատճառում՝ համառատարանություն և արագաբանություն, այն էլ պերճ ու պայծառ, ինչպես պատրանակալ խոսքերը, ստույթունից հետո և ի ճշմարտությունը, և այս կերպով թե՛ մի անգամից պատմել առաջին մարդուց սկսած մինչև թե՛: Բայց այս բոլորը միասին չի կարող պատահին: Որովհետև (Ասավանդ), որ ամեն բան ստեղծեց, նա, որ կարող է մի անխաբիությունը մի անկեթարթում ամեն ինչ գոյացնել՝ աշտոխ չարավ, այլ օրեր որոշեց և ստեղծվածների մեջ կարգեր, որովհետև մի բանիսն առաջին օրվա ստեղծվածներն են, մի բանիսը՝ երկրորդի, երրորդի և հաջորդ օրերի: Եվ Մ. հոգին, այս վարպետությունը մեզ սովորեցնում է նույնպիսի կարգեր պահպանել: Բայց քո փախազը մեք տեսնում ենք աստվածային ստճմանից՝ դուրս եկած՝ որ ամեն բան և միանգամից և ճշմարտությունը թե՛ ասված լինի: Բով մենք կամ էրկար պետք է գրենք, որպեսզի քանկացածից պես լինի: կամ կարճ որ թե՛ հասնի չի լինի: Որովհետև քո շունակեցնելուց մենք ունին՝ չղբեցինք (Աղերստաղ) Մակեդոնացու մասին, ու էլ նյդուս-

կան (պատեհազով) մասին իր տեղումը հիշեցինք, և այստեղ ենք կցում: Չենք կարող սակ, թե իմաստ՝ են թե անհասնար հյուսն ենք մենք դառնում այստեղ, պատշաճ է թե ոչ՝ այժմ միայն վերջումը կցել կարեք և մեք շարագրություն արձանի պատմությունները:

Եվ այս ճանրից որո՞նք պետք է առաջինը լինեն, եթե ոչ Հոմերոսից պատմածները, այն՝ ինչ որ նա պատմում է նդիական պատերազմի մասին ասորեստանցիների Տևոստա թագավորի ժամանակ: Եվ մեք Զարմայրը, որ ասորեստանցիներին հպատակ էր, թե՛ մարզով և թովպական դորքի հետ օգնական է եղել Պրիամոսին և այնտեղ հեղինացուց քաղերից վերավորվելով մեռնում է, բայց կկամենայի թե Արիվանդ և ոչ թե մի ուրիշ քաղեր:

Վերջագավ Ասարի Գիրգ, Հայոց մեծերի
Ճեղաբանությունը:

ԳԱՐՍՈՒՑ ԱՊԱՊՆԵՐԻՑ

ԲՅՈՒՐԱՎՈՒ ԱՌՊԱՆԱՍԻ ԱՄԱՆԻ

Բայց ի՞նչ ցանկություն է արդյոք, որ ունես Բյուրասպի Աժգահակի՞նք տեղիտան և անճոռի առասպելների եկատմամբ, կամ ինչու՞ մեզ նեղություն նա ապիս պարթի անհամար ու աննշանակ զրույցների, ժանազանից թե անբանության՞ պատճառով, (ինչպես են) նրա առաջին և տարաքի բարեբարությունը, զինքի նրան սպասավորելը, վրիպածին ու ստին վրիպեցնել չկարողանալը, ուսերը համարողը, այնտեղից վիշապներ ծնվելը, այնուհետև շարություն անումը, փորի համար մարդիկ սպանելը, Հեռո մի ոմն Հրույզին նրան կապելը պղծեմ շարերով և Դմբազից կողմած լնոր տանելը: Հեռո Հրույզին քնելը ճանապարհին, և Բյուրասպի նրան քաղելով ըլուր տանելը, Հրույզինի զարթնելը և նրան լեռան ինչ-որ այր տանելն ու կապելը և ինքն իրեն նրա ստալ իրեն արձան հաստատելը, որից սարաբանավոր եղավ՝ ճեղագող է մուտ շղթաներին և չի իշխում զուրս գալ և աշխարհը պահպանել:

Ի՞նչ կարողություն ունես այս սուտ առասպելների կամ ի՞նչ կարիք ալապիսի շինծու անմիտ և անհասնար զրույցների: Մե՞ թե սրանք հույների պեճն ու ողորդ, պատճառավոր առասպելներն են, որոնց տակ թարգմած են ճշմարիտ իրողություններ: Բայց դու մեզ ստամ ես, որ իմաստ տանք նրանց անբանությունը և անզորը զարդարենք: Ես

նույնը կրկնում եմ բեզ, ինչ: կարողություն ունեն սրանց, և ինչ փափագ է անբաղձի բաներին բազմել և մեզ նոր նեղություն պատճառել: Մենք այս վերագրում ենք բոլոր անվական հասակին և համարում ենք թո՛ւ ահա խակություն ցանկություն: Ուստի այստեղ էլ՝ թող կատարած լինենք թո՛ւ կամքը և փափագը լրացնենք:

ՔԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ՝ ԽՂԶ ՈՐ ՀԱՎԱՍՏԻ ԲԱՆ ԱՒ ԲՈՌՈՒՄԱՐՈՒ ԽԱՅԱՆ

Պատանի խոսքն այժմ համարակապու կարտասանեմ. «Միտքի համար կա՞ արցյոթ ուրիշ ես, ի՞նչ արկն, ոչն⁸⁵, Որովհետև բացի ուրիշ անհար բաներից, որ բեզ համար հնարավոր դարձրինք, այս էլ ենք կատարում: Որովհետև նրանց այն գրույցներն ու գործերը, որ մենք առում ենք և մանավանդ որոնց լուր ասողություններն էր մեզ պատճառում՝ այսօր իմ ձեռներով ինքս շարադրում եմ, նրանց անմտության մեջ միտք դնելով և նրանց շափազանց հին և նրանց համար անհասկանալի անցքերն ահա կբացատրեմ, միայն թե՛ բեզ էլ ուրախություն պատճառեմ կամ օգուտ բերեմ: Բայց գիտցիր՝ մեր առևտրությունը զեպի ասպիտի գրույցները, որ արժան չհամարեցիրք մեր առաջին գրքում գեանգել, ոչ նույնիսկ վերջին գրույցներում, այլ զատ և առանձին: Ես կկեսեմ այսպես:

(Պարսկերի) Բյուրասպի Անգա՛նակ ասածը նրանց նախնին է, ներքովին ժամանակակից: Որովհետև երբ լեզուները բուրբ երկրի վրա ցրվեցին, այս բանը չկատարվեց խանդիխուսն և ստանց առաջնորդների, այլ կարծես մի աստվածային ակնարկությամբ որոշվեցին գլխավորներն և ցեղապետներ, որոնցից յուրաքանչյուրն իր սահմանը ժառանգեց կարգով և գրությունը, եվ նա այս Բյուրասպի խական անունը համաշուրմ եմ Կենսամբուս Պյուրիզա⁸⁶, որ գտել եմ բազդեական մատյանում: Սա ոչ այնքան բուշություն, որքան նոխություն և ճարտարությունը իր ազգի ցեղապետությունը վարում էր, ներքովին հնարանգելով, և կամենում էր ցույց տալ, որ ամենք պետք է ընդհանուր կենցաղ ունենան. նա ստում էր, թե ոչ որ չպետք է առանձին (անփական) բան ունենա, այլ ամեն ինչ ընդհանուր պետք է լինի: Նրա ամեն մի խոսքը, ամեն մի գործը հայտնի էր. ոչ մի բան ծածուկ չէր մտածում, այլ սրտի բուրբ զարտնի խորհուրդները լեզվովն արտահայտում էր. և սահմանում էր, որ բարեկամները նրա մտա հյուսումուս անեն ինչպես ցերեկով, այնպես էլ գիշերը: Եվ այս է նրա այսպես կոչված անարտի բարեբարությունը:

Եվ որովհետև աստեղարանության մեջ հզոր լինելով կամեցավ նաև կատարել: շարությունը՝ սովորել, և այս նրան անկարելի էր, որովհետև,

ինչպես վերն ասացինք, մարդկանց պատրելու եպատակով սովորություն ունեն ոչ մի բան ծածուկ չգործել, ուստի այնպիսի կատարելու և ծայրահեղ շարությունը սովորելու հնարավորություն չկար, այս ուսման համար մի գրան հնարք է մտածում, իբրև թե՛ փորթ սարսափելի ցավեր ունի, որ ոչ մի ուրիշ միջոցով չի բժշվելի, և թե՛ ոչ մի ինչ-որ խոսքով ու ստեղծակն անունով, որը ոչ որ չի կարող լակ ստանց վտանգի: Եվ սովորած շար պղին, որ նյութում էր շարությունը, գլուխը Բյուրասպի ունի վրա դնելով անկապակած սովորեցնում էր նրան անարտի արժեքաբ, տանը և հրապարակներում, ականչին խոսելով: Սրա մասին աստեղություն ասում են, թե ստանանայի ճուտը նրան սպասավորելով կատարում էր նրա կամքը, որի համար հետո, պարզե խնդրելով, ուր համբուրում էր: Իսկ վիշապներ բուսեկը կամ Բյուրասպի կատարելապես վիշապանալը, որ ստում են, այս է Որովհետև նա անթիվ մարդիկ սկսեց զոհել զներին՝ ուստի բազմությունը նրանից ասողակացավ և բուրբ մխարանցին ու նրան հալածեցին. նա փախավ վերոհիշյալ լեռան կողմերը. երբ հալածանքը նրա զեմ ստատկացավ, նրա հետ եղած ամբողջ բայրալվեց և ցրվեց. հալածողներն այս բանին վստահանալով՝ մի բանի որ այդ տեղում հանգիստ առան: Սակայն Բյուրասպը ցրվածներին նորից համարեղով՝ հանկարծորեն նրանց վրա է հասնում, մեծ վնասներ պատճառելով. բայց բազմությունը հաղթում է և Բյուրասպը փախուստ է ապրի: Հանում, նրան սպանում են լեռան մոտ և զցրում են մի մեծ ձմբաճառ վիճի մեջ⁸⁷:

ՅԱՆԱ ԵՐԱՊՈՒՄ ԳՈՐԷ

- Ա. Լայռց միջին պատմությունը.
- Բ. Արշալի և Կրա արհիանի Քաղաքների, պատերազմ մակերևույթների և ներ համայնների հետ
- Գ. Ազգաբնակից Լայռց աշխարհի ժր Քաղաքներիցը.
- Դ. Քե ինչպես Վաղարշի Լայռց բաշտի գեներալական կորսի զերանվել՝ աշ շում և մակերևույթների մակերևույթի ժրա
- Ե. Մարտիայիցի պատերազմ և Կրա մաշ միջուկի Շարժմից.
- Զ. Քե ինչպես կարգավորից Վաղարշի մեր աջխորի հյուսիսային և արևմտյան կամերը.
- Է. Քաղաքաբնակ կազմակերպություն, և Քե մրտեկից հիմնից կարտարու- թյաններն և ինչպես հրամայից կենդանությունը.
- Ը. Մարտի Անգուստի Քաղաքի սերնից Քաղաքաբնակ կերտող կշտակից.
- Թ. Մեր Արշալի Առաջին և Կրա գործերի մասից.
- Ճ. Քե արտեկից պատմությունը Մար Արա կամիայի գրքից հետ.
- ԾԱ. Մեր Արաշու Առաջին մասին և Կանադանությունը (պարտիկներից) հա- փըշտակից մասին.
- ՃԲ. Արաշու արշավանից զեղի Արևմուտք, Արևոտին ներկայակց և կուտերի արևաններն ավար սանիկ ու Կուտերի սալը.
- ՃԳ. Ուրիշ պատմագրներից վերաբնություն Արաշուին արեկերակալության և Արևոտին կապուտ մասին.
- ՃԴ. Տիգրանի միջին Քաղաքներից, Լուսնից զորքերի գեներալից, մեշյանները շի- նելը և Քաղաքների արշավելը.
- ՃԵ. Համայնիներից Պատկան զորավորի մեր ժրա գեներ, Մամուկի սանիկ և Միհրգուտի մաշ.
- ՃԶ. Տիգրանի համայնիներից զորքերի ժրա Շարակիցը, Պարտիանոսի խուշ սալը և Արաշույց Միհրգուտին արևակիցը.
- ՃԷ. Արևոտի պատերազմը և Տիգրանից սպանվելը.
- ՃԸ. Քե ինչպես Կարտու գեներալից Տիգրանի և Միհրգուտի պատերազմի և Ար- սարևան շինելը.
- ՃԹ. Տիգրանի և Արաշուին միտրոսություն մասին. Պատկանի ապստամուկ զորք ուղարկելը, Հյուսիսային բանակապետի և Բարձրագույն Շրխների գերաբնակը.
- Դ. Լայռց մի այլ պատերազմ համայնիներից հետ. Սիգուկի և Քենգիխոսի պար- տությունը.
- ԴԱ. Քե ինչպես Անտոնիոսը սանամը Լայռց զորքերի ժրա գեները սանամ և համ- շառ (բազարը).
- ԴԲ. Արաշույցի Քաղաքներից մասին և համայնիներից հետ պատերազմից.
- ԴԳ. Անտոնիոսի ներկայակցը Արաշույցից.
- ԴԴ. Արշալի Քաղաքներից մասին. սալից սանամ Կուտերի մասանի կերպով

- Համայնիներից Կարտուտ գրանուշը. Հյուսիսային արևակիցը և Կրա պատերազմ Քաղ- րաանիներից զեղի հասմ վանելը.
- ԴԵ. Արշալի գեներալից ներկայիցի հետ և արևմտ Կաղաքաբնակը.
- ԴԶ. Արշալի Քաղաքներից, Կուտերի արքայազուտ Կարտուտ գրանուշ համայնիներից, պատերազմը ներկայիցի զորքերի հետ և Կրա կարտուտի շարակիցի սպանելը.
- ԴԷ. Արևոտի Քաղաքի շինությունը և համառուտ հիշատակություն մեր Կուտարդի սալից.
- ԴԸ. Արշալի Արևելք գալը և Պարտից ժրա Արաշուին Քաղաքներից, և Քե ինչպես Կրա կարգավորից (Արաշուին) կարտուտից, արտեկից մալուտ են մեր Կուտ- արդից և Կրա սպանվելիցը.
- ԴԹ. Արշալի գերագույնից Արևելքից և Արևոտին սերտություն սալը ներկայիցի Պար- րադուտիցի հետ պատերազմելից.
- Ե. Արշալի իշխաններից սալուտը Մամուտի մաս, որի մամուտի կրուտը անան մեր Փրիկ, Քրիտասին, որ սալից գարնակ Արշալի համառուտը.
- ԵԱ. Արշալի Քուրդից Փրիկին.
- ԵԲ. Արշալի Քուրդից պատերազմը, որ գրեց Քաղաք սալուտը Փրիկին հրամանով.
- ԵԳ. Քաղաք սալուտը Քարտուտից ներսայնում, և (Արշալի) հինգ Քրիկից պատկանելիցը.
- ԵԴ. Մեր (սալուտային) համառուտության մասին.
- ԵԵ. Մանառուտի Քաղաքներից և Արշալի գալմաներին սպանելը. Լեզինի սիկնուշ մասին.
- ԵԶ. Մերին Քաղաքի կարտուտ, Մանառուտից անվանակարգության և Կրա մասնակ մասին.
- ԵԸ. Արևոտից Քաղաքներից, Մանառուտի արհիանի կուտերից և Արաշուին փախ- շեկով սպանվելից.
- ԵԹ. Մեշյաններից գործ գրեց Արևոտից՝ Արաշուին իր մալուտ գեներ և համար, և Արաշույց Քաղաքից.
- ԵՊ. Արևակալուտ Քաղաքի շինության մասին.
- ԵԲ. Քե ինչպես շինից Քաղաքից՝ կուտերի Քաղաքը.
- ԵԿ. Մեշյան կազմ սանամը սանկուտ մասին.
- ԵԴ. Արևակալուտ կազմ մանուկներից մասին.
- ԵԵ. Քե ինչպես Արաշույց Պարտից Կարտուտից սպանուտ պատկանելով՝ ինքուտ էր Արաշուին Քաղաքներից.
- ԵԶ. Քե ինչպես Արաշույց լուտ և Արաշուին գալը և զորք էլ գրամուտ՝ պատ- րազմի պատերազմելով.
- ԵԸ. Քե ինչպես Արաշուին իր աշխարհը մանկուտ պն գործ Քաղաքից.
- ԵԹ. Արևոտից պատերազմից Արաշուին հետ և փախուտը. Քաղաքի անմիջը և Կրա մալուտ.
- ԵՊ. Արաշուին Քաղաքներից և իր Կարտուտից Քաղաքից սանկը.
- ԵԲ. Արաշուին սպանելը և մյուտ Քաղաքից շինելը, և Արաշուին Կարտուտ գրանուշ համայնիներից.
- ԵԿ. Արաշուտ Քաղաքի շինության մասին.
- ԵԸ. Արևոտից Կարտուտը մեր ժրա և պատերազմը. Արաշուին ինամուտը կրուտ հետ.
- ԵԹ. Արշալի և Կրա արհիանից սպանությունը.

ԳԻՐԲ ԵՐԿՐՈՐԳ

ՄԻՋԻՆ ԳԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՄԵՐ ՆԱՆԻՔՆԵՐԻ

Ա.

Այժմ բնդ կզրեմ, ինչ որ մեր աշխարհում առանձին գործեր են կատարվել, սկսելով երկրորդ զորքս, կարգով պատմելով Արևբանդի թագավորությունից մինչև քաջ ու սուրբ մարգու՝ Տրդատի թագավորությունը, ինչ որ այստեղ քաջության և արիության, իմաստության և բարեկարգության գործեր են կատարվել՝ ամեն մի (թագավորի) ձեռքով, (սկսած) Պարսից Արշակ թագավորից և նրա Վազարշակ եղբորից, որին թագավորներից մեր աշխարհի վրա, և մեր աշխարհի մյուս թագավորներից, որ նրանցից չհաս եղան նրա դարձից, որոնք տերությունը որդին չորից անելով կոչվեցին Արշակունիներ՝ Արշակի անունից, որոնցից մեկն քառ կարգի չաչորդով էր թագավորությունը, իսկ մյուսները, ավել յորդները, անում և բազմանում էին իբրև ջեղ, Բայց կզրեմ կարճառոտ, որքան մեզ Տարկավոր է, ավելորդները քաջ թողնելով: Որովհետև ուրիշ ազգերի մասին բովանակեմ է, ինչ որ շատերից արգին ապամ է:

Երբ բոլոր տեղերից արևը Արևբանդը Մակեդոնացին, Փիլիպոսի և Ուսամպրազայի որդին, քառնկոսակործան Արիլանից, ապա ինքը մեծանում է՝ իր տերությունը թողնելով շատ մարդկանց, կտակելով. որ բոլորի իշխանությունն էլ կոչվի Մակեդոնական: Նրանցից չհաս Բարսիլոնի վրա թագավորաց Անկեղտոր, որ շատերից իշխանությունը խելց և պարթևներին մեծ պատերազմով չնպանակցեցրեց, որի պատճառով և նիկանոր (Նաթթոզ) կոչվեց: Սա երևանունով տարի տիրելուց չհաս՝ թագավորությունը թողնում է իր որդուն Անտիոքին, որ Մատեր էր կոչվում, սա (թագավորաց) տանտիկն տարի: Մրան չաչորաց թևս կոչված Անտիոքոր սասը տարի, իսկ տասնմեկերորդ տարում պարթևներն սպասամբում են և զուրս են զարիս մակեդոնացիների չպատանությունից: Ուստի թագավորում է Արշակ Փաշը, որ Աբրահամի սերունդից էր, Բևտարայի զավակներից, որով չսատաղված էր Տիրոջ խոսքը Աբրահամին, թե՛ «Բեղանից ազգերի թագավորներ կեղմեն»:

Բ.

ԱՐՄԱԿԻ ԵՎ ՆՐԱ ՈՐԴՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐԵԼԸ ԳՍԵՐԱԶՄ ՄԱԿԵՂՈՒՆՏԻՆԵՐԻ ՆԵՏ ԵՎ ՄԵՐ ՀՈՒՄԲՅՅՏԻՆԵՐԻ ՆԵՏ

Թելպիսա առաջինը, Ազեթանդրի մահից վաթսուս տարի չհաստ պարթևների վրա թագավորում է Արշակ Փաշը՝ Բաշի Ասադոտին⁸⁷ կոչված քաչորում: Քուշանների երկրում: Ինչսա սաստիկ պատերազմներ մղելով զրաժում է ամբողջ Արևելքը, Բարևունից էլ Նայածում է մակեդոնացիների իշխանությունը: Նա լսում է, որ Տոսմայեցիները զորացել են (և իշխում են) բոլոր Արևմուտքին ու ծովին, որ սպանիացիներից խելց են սկսել և արծաթի հանքերը, զագասացիներին Տաղկելով Տարկատու են դարձրել, ինչպես և ասիացիների թագավորությունը: (Ուստի Արշակը) պատգամավորներ ուղարկելով խնդրում էր զաշխակցություն (կնքել), որպեսզի (Տոսմայեցիները) մակեդոնացիներին չօգնեն, (իր կողմից խոստանալով) ոչ թե Տարկ տալ, այլ միայն նվեր՝ տարեկան Տաշտար քանքար:

Այսպես նա տիրեց Երեսունմեկ տարի: Նրանից չհաս նրա որդին Արտաշեսը՝ քսանեկվց տարի: Մրան չաչորդում է որդին, Արշակը, որ կոչվեց Մեծ. պատերազմում է Գեծանու և Գեծանու որդու Անտիոքոսի չհաս, որ մակեդոնական զորքով նրա վրա եկավ Բարսիլոն և պատերազմի մեջ գերի ընկավ, որին Արշակը բանելով երկաթե շղթաներով տանլավ Պարթևների աշխարհը, որի պատճառով Միրիպիդես⁸⁸ կոչվեց: Բայց նրա եղբայրը, Անտիոքոս Միգիսացին, լսելով որ Արշակը զնաց, գալիս զրաժում է Անտիոքը, Բայց Արշակը տասներեկս բուր զորքով նորից չհաս և զառնում, Անտիոքոսը սաստիկ մեծագանից նեղված, պատերազմով պահում է նրան չեղ տեղերում և իր զորքի չհաս միասին կարելում է, և Արշակ տիրում է աշխարհիս մի երրորդ մասին, ինչպես կարելի է սովորել Հերոդոտոսի⁸⁹ պատմության յորրորդ (չորրից), որտեղ աշխարհը բաժանված է երեք մասի, և կոչված են՝ մեկը եմպոսի, մեկը կիրիև և մեկը Ասիա, որին և տիրեց Արշակը:

Գ.

ՎԱԳՐՈՒՄԻՆ ԼՍՏՈՑ ԽՈՒՄԱՐԻ ՎՐԱ ԹԱԳԱՎՈՐԵՆԵԼԸ

Այն ժամանակ մեր Հայոց աշխարհի վրա թագավորեցնում է իր Վազարշակ եղբորը, նրան սահման տալով Հյուսիսն ու Արևմուտքը: Սա, ինչպես մեր առաջին գրքում սասցինք, քաջ և խճճեմ մարդ լինելով, անկախորեն տիրեց իր սահմաններում և կենցաղական կարգեր չսատա-

տեց մեր աշխարհում՝ որբան կարելի էր, օսմաննց նախարարութիւններն և այն նախարարութիւնների համար նա՛նպետներ պիտանի մարդկանցից, որոնք ծագում էին մեր նախնի Հայկի սերունդից և ուրիշներին: Որովհետև մակեդոնացիներին սանձահարկուց հետո, երբ պատերազմը դադարեց, բայց արքան ձեռնարկում է բարեկարգութիւններին, նախ և առաջ բարիքների փոխարենը հատուցանելով զորավոր և իմաստուն Շամբատ Բագարատին, որ հրեաներից էր, իշխանութուն տալով նրան՝ որդուց որդի թագազիր լինել Արշակունիներին, (և օսմաննելով) որ նրանցից սեղովոց ցեղը Բագարատունի կոչվի նրա անունով, որ ներկայումս մեծ նախարարութիւն է մեր աշխարհում: Որովհետև այն Բագարատն առաջինը կամավորապես ինքն իր անձը ընծա բերեց Վազարշակին, նախքան Արշակի պատերազմները մակեդոնացիների հետ, երբ առ արքունի դռանն էր, իսկ (մեր երկրի) արևմտյան կողմում, որտեղ հայերեն լեզուն վերջանում է, նրան նշանակեց կողմնակալ, յշուրեքի և հազարների իշխան:

Բայց նորից վեր գտանանք ու պատմենք Վաղարշակի պատերազմը պոնտացիների հետ և Փոյուրեհայում և նրա հազմաբնակները:

Գ

ՔԵ ԽՆՉԳԵՍ ՎԱԿԱՐՈՒԱԿ ԼԱՅՈՑ ԶԱՅԵՐԻՆ ԶԻՎԱՐԱՎԱՆ ԿԱՐԳՎԵՐԱՅԻՆՈՎ ԱՐՇԱԿԱՊԵ Է ՄԱԿԵՊՈՒԱՏԻՆԵՐԻ ՄՏԵՐՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ

Արշակի մակեդոնացիներին հետ պատերազմից հետո, երբ նա գրավեց Բաբելոնը և Ասորեստանից արևելք և արևմուտք (ընկած երկրները), Վաղարշակն էլ մեծ զորք է զուժարուով Ասորգատանից և Հայաստանի միջնաշխարհից՝ անվանել և քաջ մարտիկ, վերջ հիշված Բագարատին և նրա ձեռքի տակ եղած քաջերին, ծովեղերի երիտասարդներին, որ սերված էին Գեղամից և քանանացիներին, և Շարայի ու Փուշարի սերունդներին, և նրանց մերձակա Միսակյաններին և Կաղմաններին իրենց մերձավորներով, զրեթև մեր աշխարհի կես մասը: Հասնում է մեր աշխարհի միջավայրը, Մեծամորի ակունքից վեր, Երասխի ափը, Արմավիրի մոտ, որ Բլուր է կոչվում. բազմական շատ օրեր մնում է այնտեղ, որովհետև, ինչպես հարկ է սանձ (գինգորական) կարգեր շղթանեն:

Եվ այստեղից, մեր աշխարհի բոլոր կողմերից (զորքերը) միացնելով, հասնում է Խազարիք⁹⁰ սահմանները. որովհետև Հագրիկան, Պոնտոսը, Փոյուրեհան, Մամար և ուրիշները, Արշակի պատերազմների լուրի տալով լինելով՝ հաստատ դա՛նում էին բարեկամական դաշինքը մակեդոնացիների պետութայն հետ: Առանց մի ոմն Մարփուրիկեւ վերս:

հիշյալ կողմերը միարանեցնելով՝ պատերազմի է պատրաստվում Վաղարշակի հետ: Երանք իրար պատահում են մի բարձրավանդակ բուսազագաթ բլուրի մոտ, որ այժմ կոչվում է Կոյնիխ, և միմյանց մոտ գալով, մեղեկը երկար ապարեղեն թողով՝ երկու կողմերն ամրանում են բազմական օրերի ընթացքում:

Ե

ՄՈՐՓՈՑՈՒԿԵՍՄ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՆՐԱ ՄԵԼԸ ՄԿՈՒՆԻ ՀԱՐՎԱՄԻՃ

Երբ այսպես շատ օրերի ընթացքում երկու կողմերն ամրացան, ապա պատերազմն սկսվում է մեր կողմից. ուստի և Մորփուրիկեւը, կամս ակամս, կաղմակեղբյուրով է իր զորքի ճակատը և հանդուգն հարձակումով վրա է վառում: Որովհետև նա սրտոտ մարդ էր, երկար անզամկերով, մարմնի համապատասխան, ստատիկ ուժեղ էր և ամբացած էր պղնձով ու երկաթով և շրջապատված էր ուրիշ ընտիր սպառուզեններով՝ ուստի ոչ սակավ ընտիր ու քաջ մարդիկ գետին էր դրբում Վաղարշակի երիտասարդներից և զանք էր անում անցնել ու հասնել Հայոց թագավորի մոտ, որ ամբացած էր գինգած մեծ խմբի մեջ, եվ մոտ հասնելով՝ հաղովկեց սվիրի գցել, որովհետև կորովի և երկայնածիղ էր, աշտան՝ հետո, արձակեց, կարծես սրաթև թռչունի թռիչքով: Բայց շահագրգիռ մեջ ընկեց բայց և անվանի մարդիկ Հայկի և Ասորեստանի Սեյեներին՝ սերունդներից, որոնք աշտան հարվածով քաջին սպանեցին և նրա զորքին առաջ խառնելով փոխյոթին, արշաև վտակներ թափելով գետինը՝ ողորցեցին՝ ինչպես անձրևի հեղեղներով: Այնուհետև այդ երկիրը Վաղարշակի ձեռքի տակ եղանկվում խաղաղվում էր և մակեդոնական սպառնալիքը դադարում էր:

Զ

ՔԵ ԽՆՉԳԵՍ ԿԱՐԳԱՎՈՐԵՑ ՎԱԿԱՐՈՒԱԿ ՄԵՐ ԱՇՈՒՐԸ ԼՅՈՒՍԱՅԻՆ ԵՎ ԱՐԵՎՍՏԱՆ ԿՈՂՄԵՐԸ

Այս գործը կատարելուց հետո (Վաղարշակը) կարգավորում է Մամարի կողմերը, պոնտացիներին և եզերացիներին⁹², ու զանում է զեպի հյուսիս, Պարսիսը լեռների ստորոտով, Տայշի միջով, զեպի անսառախարհ, զեք, մասախալապատ լուսավան անկերը. զեզեցիկ կերպով կարգավորում է այս երկիրը, նրա լեռնային և ջերմին վայրերը փոխադար-

Արար բարեխառնելով իր թագավորության գաշելության համար, այն-
տեղ ամառանցներ պատրաստելով՝ երբ ամառները զեղի հյուսիս գնա-
լու լինի: Երկու անտառախիտ ափարակները իրենց լեռներով հանդերձ
վերածում է երկու զոմի, դարձնում է որևէր անգ, և կողի զերմություն-
եր մեղմացնում է այգիներով և բուրսատաններով: Բայց ես բաշվում
եմ այդ սիրելի անձի մասին ամեն ինչ հայտնի և մանրամասն գրել,
որովհետև ես միայն տեղիքը հինչ նշանակեցի, առանց ո՞նի վրա ուշա-
գրութիւնը դարձնելու, հրաշալի անձի սիրո կտոր անխզելի պահելու
նպատակով:

Այստեղ ես կանչեց կնիքը վաղընի ցեղը, որ այրում էր հյուսիսա-
լին դաշտում և կովկաս մեծ լեռան ստորոտում, այն հովիտներում և խոր
ձգված երկայնածև ձորերում, որ լեռան հարավային կողմից իջ-
նում են մինչև մեծ դաշտի բերանը. նրանց պատվեր է տալիս թողնել
ավազակախիվանք, զեն զքել մարդկանց զավիր, հպատակվի արքունե-
կան հրամաններին և հարկերին, որպէսզի հաջորդ անգամ, երբ նրանց
տեսնե, առանտրդներ և իշխաններ հաստատեալ զեղեցիկ կարգերով: Եվ
նրանց արձակում է՝ իր կողմից խնամաւոր մարդիկ և վերակացուներ
նշանակելով, Իսկ ինքը, արևմտաբից հավարած բազմութիւնն արձա-
կելով՝ իջնում է Շարայի սահմանի մօտի խոտավետ տեղերը, որ հին
մարդիկ կոչում էին Անփայտ կամ Վերին Բայառն, բայց հետո Բուլգար
Վիշնուր⁶⁵ Վուրդի գաղթականութիւնն պատճառով, որ այդ տեղերում
բնակվեց, նրա անունով կոչվեց Վանակ և (մտտակ) գլուխներ նրա
կողայրներին և սերունդների անուններով են կոչվում մինչև այժմ:

Իսկ երբ հյուսիսում ցրտեց և ստոնամանիքներն սկսեցին փչել, ես
այնտեղից շարժվեց, եկավ իջով մեծ դաշտը, բանակ դրեց Մեծամորի
ափին այն սեղավ, որտեղ մեծ գետը հյուսիսային ժովակից սկիւր առ-
նելով, իջնում խառնվում է Մեծամորի հետ: Այստեղ մեր աշխարհի զոր-
քերը կարգավորելով և իր կողմից վերակացուներ թողնելով՝ վերցնում է իր
հետ բոլոր դիտավորներին և լվում է Մծրին:

Է

ՔԱՎԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՅԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԵՆՈՒՄԵՆԻ ԿՈՐԵՆՆԵՐԻ
ԿԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՉՊԵՆ ԼՈՒՍԱՅԵՑ ԿԵՆՏԱՎԱՎՈՐԷՐԸ

Այս գլուխը մեծ է և հավասար պատմութիւններով լի և արժանի է
ընդարձակ և կոկիկ պատմելու: Որովհետև շատ կա այստեղ՝ տների, ցե-
ղերի, շաղաքների, գյուղերի, գաստակերտների և ընդհարարապես թագա-

վորութեան կարգերի և կարգավորման վերաբերյալ, ինչպես նաև թագա-
վորութեան հետ կապված զորքերի, զորապետների, կողմերի կազմակալ-
ների և սրանց նամակների:

Այդ՝ նախ և առաջ թագավորը կարգավորում է ինքն իրեն և իր
տունը, սկսելով իր զինքը ու թագից: Եվ թագաբան կոչվածին, որ հրեա-
ների է ծագում, շնորհակալութիւնն ցույց տալով հենց սկզբից անձ-
նատուր լինելու և թագավորին օտակցակիւնը համար, ինչպես և նրա
հավասարութեան և քաջութեան համար՝ պարտւում է նրան՝ ցեղի վերը
հիշված տանտուրթական պատիվը⁶⁶, իրավունք տալով թագ զնել թա-
գավորի զուխը և կոչվել թագազոր, այլև ապահով⁶⁷, և մանր մարգարի-
տից երեք փաթ վարտակալ կրել առանց սպուս և (Թանկագին) բարերի՝
երբ արբունիքում և թագավորի տանը շրջիլիս լինի:

Իրեն զգեստներ հագցնող նշանակում է Չեռեսի⁶⁸, բանահացոց սե-
րնիցից և նրա ցեղի անունը զնում է Գեթունի, շիրտեմ, ինչ պատճառով:
Իսկ իրեն կոչված թիկնապահներ է նշանակում Հալիպոն ետտի սերնիցի,
բնաիր և քաջ նիզակավոր ու սուսերակոր մարդկանց, և նրանց նախա-
բարութեան գլուխ է նշանակում Մալխազ անունով մի բարի և սրտա-
մարդու. բայց ցեղի անունը պահում է սկզբնակալը: Իսկ Գետտին, որ
Գառնիկի զավակներից էր, Գեղամից սերված, նշանակում է արքունական
որակի վրա: Ես ունեցում մի որդի՝ Վարժ անունով, որի անունով և այս
ցեղը կոչվեց⁶⁹, բայց այս հետո եղավ, Արտաշեսի ժամանակ: Գարազ
անունով մեկին նշանակում է ձիերի կրամակալների վրա, իսկ Արեւիկն
(սեղանատուն) սպառնեցին և գահերի վրա⁷⁰: նրանց պարգևում է՝ գլու-
ղեր, որոնք նրանց անուններն են կրում, ինչպես նաև նախարարութեու-
նները կոչվեցան Արեղյան և Գարեղյան:

Իսկ Արժունիներն իմ զիտցածով⁷¹ ու թե Արժունի են, այլ ար-
ծիվանքի, որոնք (թագավորի) առջև արժիվներ էին կրում: Ես զանց եմ
անում առաւելյնների զատարկութեան: Թիւնները, որ պատմում են Հա-
գամակերտում, իբր թե նրիխայի բնիւնն հակառակվելիս են եղել անբնն
ու արիւր, և թիւնը հօգնան է եղել թաղացած պատճառն: Գետուններն
էլ իմ զիտցածով զինեմանի են, որ թագավորին արժանի ընպիլները էր
պատրաստում, և զարմանալի կերպով զուզադիցեցին նրա զորքն ու
անունը, որովհետեւ թագավորին ընպիլները էր պատրաստում ընտրի և
համեղ զինեցիցեց և անունն էլ Գրե իւր, որի վրա Վաղարշապի շատ
զվարճանայով, ասում են, զուսում է նախարարական ցեղերի թիւմն: Եվ
այս երկու տանը, Արժունիներն ու Գետունիները, Աններները սերունդ-
ներեցին:

Նույնպես և Սպանդուկներին համարում են պայանեանցների վրա

(նշանակված), իսկ Հավուրիներին՝ բաղկակիրներ և բազի բռնողներ, որովհետև այդքան էին անստանկորում: Ըմ էթև դատարկախոս շնամբն ինձ՝ Չյունականներին էլ ևս համարում եմ ամառանոցների պահպաններ և ձյունակիրներ, որոնք առաջադիմելով աղմուկահանություն ստացան, իբրև թագավորներին ընտանի մարդիկ:

Ըմ արդունի դռան շորս պահպան գողով է նշանակում, ամեն մեկը բյուր պատուզեն մարդուց բաղկացած, բուն հին թագավորների սերունդներով, մեր նախնի Հայկից ծագած, որոնք բուն ոստան¹⁰⁰ էին կոչվում, և էրբմն-երբմն հայրերից ժառանգություն էին ստանում գլուզեր և դատասիրտներ: Բայց վերջերս, Պարսից թագավորների ժամանակ, ինչպես լուստ եմ, ուրիշ գեղեր են կազմվել ու ստան նշովի, չգիտեմ, արդյոք նախնիցն ցեղի պատվելու՞, պատանաով, թե մի որևէ ընդգեղմության պատճառով այդ ցեղը գնել գցելով և նրա տեղ ուրիշ գեղեր նշանակելով՝ արժանի անունով: Բայց առաջին հաստատ հին թագավորների սերնդից էր, ինչպես և այժմ կան Վրաց աշխարհում, որոնք Անփեծու¹⁰¹ են կոչվում: Եսև հրամայում է նույն ցեղից ներքինիներ խզել և նրանց նահապետ է նշանակում Հայրին¹⁰², որի իշխանությունը տարածվում էր Ասորյատականից մինչև ճուռչ և նախնաժան: Բայց այս պատմությունը, թե որպես և որտեղ պատահեց, հիշատակված չէ, և ևս չգիտեմ:

Ը

ԻՄԱՐԱՆ ԱՌԴԱՆԱԿ ԹԱԳԱՎՈՐԻ ՍԵՐՆԻՆԻՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼ

Թագավորի սունը կարգավորելուց հետո՝ թագավորության երկրորդ նշանակում էր Աժգահակի՝ Մարտի թագավորի սերնդից, որ այժմ կոչվում են Մարտացյան, որովհետև այդ ցեղի նահապետներին չեն ասում Մարտացյան տեր, այլ Մարացաց տեր: Նրան թողնում է բյուր գլուզերը, որտեղ (այդքան էին) գեղի բեղավծ մարտացիները: Իսկ արևելյան կողմից, հայկերեն խոսակցության վերջի սահմաններում, նրաու կողմնակալ է նշանակում մի-մի բյուր մարդով, նահապետական աների ցեղերից, Միսակյաններին և Կաղմոսի սերունդներին, որոնց անունները հիշցիցիք մեր նախորդ գլուխներից մեկում:

Մրտանց հետո (Վաղարշակի) հաստատում է արևելյան հյուսիսային կողմի մեծ, անվանի բազմաբյուր կողմնակալությունը, (կողմնակալ նշանակելով) Առանին, որ անվանի մարդ էր, առաջինը բյուր մասավորական և հանձնարից գործերում, Գուր կոչված մեծ գետի ընթացքով, որ անցնում է մեծ գաղտով: Բայց զիտցիք, որք մենք առաջին գրքում մտ-

նացանք հիշատակել այս մեծ և անվանի ցեղը, այսինքն Միտակից սերված գունդը, որ ժառանգեց Արզանից գաշար և այս գաշար լեռնակողով, ծրարս գետից մինչև Հնարակերտ կոչված ամրոցը: Աշխարհ էլ Արզանք կոչվեց նրա բաղքը բնավորության պատճառով, որովհետև նրան աղու էին ասում: Այս Միտակի սերնդից էր և այս անվանի և քաչ Առանը, որ ցարթև Վաղարշակի՝ կողմից բյուրավոր կողմնակալ նշանակվեց: Ասում են, որ սրա զավակներից են սերվել ուտևացոց աղը և գարգմանացոց, ծավղանացոց ու գարգարացոց իշխանությունները:

Իսկ Գուշարին, Եարալի զավակներից, ժառանգություն տվեց Մթին լեռը, այսինքն Կանգարը և Զավաթի կես մասը, Կողք, Սորը, Չորը, Երևի և Հնարակերտ ամրոցը: Բայց Անցոց տեր և Տաշիրի սեպակ է նշանակում է Վաղարշակը Հայկազն Գուշարի զավակներից: Իսկ Կովկաս լեռան դեմ հյուսիսի կողմնակալ է նշանակում մեծ և հզոր ցեղը և նահապետություն անունը զնում է Գուգարացոց բեղիշխ, որ Գարհհի¹⁰³ Միհրթառտ նախարարի սերնդից էր, որին Աղբքամացոց բեղիշխ իշխան նշանակեց իմբերիացոց ցեղից գեղինների վրա, որոնք բերել էր նարուզողոտաբը, ինչպես պատմում է Այրուզինսուր¹⁰⁴, ասելով. «Մեծագոր նարուզողոտաբը ավելի հզոր էր, քան Հերակլեսը: Ես զորք ծաղվելով հասնում էր կիրիացոց և Բվերիացոց աշխարհը, և հաղթահարելով իր ձեռքի տակ էր նվաճում, և նրանցից մի մասը տանում բնակեցնում էր Պետտոս ծովի աշակղճում»: (Բվերիան գտնվում է արևմուտքում աշխարհի ծայրում), Իսկ Քասենի մեծ հովտում նահապետություն է հաստատում, որդունի անունով, Հայկի սերունդներից:

Իսկ Տորթին, որ սերված էր Հայկի թռու Պարսամից, մի տղի, բարևը, կողորդ կազմվածքով, տափակ թրով, փոս ընկած ալքերով, զմեյա հայացքով մարդու, որին ստատիկ տղերգության պատճառով կոչում էին Անգեղյա¹⁰⁵, որ վիթխարի հասակ ու ուժ ուներ՝ արևմուտքի կուսակալ նշանակեց և ցեղի անունը կոչում է Անգեղ ասուն՝ երեսի տղերգության պատճառով: Բայց ինչ ուզում էս, ևս էլ նրա մասին անհամ ու անտեղիս ստեր կպատմեմ, ինչպես պարսիկները, որ Բուստամ Սագհիկի մասին պատմում են, թե հարյուր քսան փղի ուժ է ունեցել: Որովհետև նրա ուժեղություն և սրտոս լինելու պատճառով երբեք պատմում էին նրա մասին չափազանց անհարմար բաներ, որոնք ո՛չ Սամսոնին են հարմարում, ոչ Հերակլեսին և ոչ Սագհիկին¹⁰⁶: Որովհետև երբում էին նրա մասին, իբր թե ձեռք էր գարնում որևայտր ապառաժներին, որոնց վրա ոչ մի ճեղգվածք չկար, ուզածին պես ճեղգում էր մեծ ու փքրը, կրունկերով սաշում էր, ստիտակներ էր ձևացնում և նույնպես կուսակներով նրանց վրա գծում էր արժիվներ և նման բաներ: Պետտոս ծովի ափին պատու-

Տեղ է թշնամիների հավերժ և վրա է հարձակվել: Երանք հեռացել են խոր ծովը մտա ուժ ասպարեզ: Չկարողանալով նրանց հասնել, ստանձ են, վերցնում է բլրանն ժայռեր և շարտում է նրանց հետևից: Ջրերի այն-կոծկեցուց ոչ սակավ հավեր թեկզմում են, և ջրերի պատաստումից առաջացած այրիներ մեացած հավերը շատ մղռները ստառ են ըջում¹⁰⁷: Ո՛հ, բաժազանց առասպել է այս, առասպելների առասպել: Բայց ի՞նչ կանես, որ մարդը ստատիկ ուժեղ էր և այսպիսի գրոյցների արձանի:

Մրանից հետո (Վազարշակը) հաստատում է Մոփանց հայխարարությունը Չորրորդ կողմում Հայրում: Ետևիցան հաստատում է Ալաշտուհուր հայխարարությունը, ինչպես և Մանուկայանք և Բղնուհուհուր, Ետևյանս Հայկի սերունդներից, և թեպիղիներից առաջավորներից գրանցելով՝ տեղեր է նշանակում, գրույցի և գովառուների տեղաններով նրանց կոչելով:

Բայց մտառանք Սլաք կողմում գմնյա մարդուն, որի մասին հաստատ չեմ կարող ստել, արդյոք Հայկի՞ց էր ծագել, թե երանից առաջ մեր աշխարհում սպրողներից, որոնց գրույթյան մասին պատմում են գրույցները, բայց նա քաջ մարդ էր: Մրան թիչ մարդկանցով նշանակում է լեռը պահպանելու և քոչիկս որսալու: սրանք կոչվեցին Միկունիները: Այսպես և Ետևյանիսի գործերի վրա նշանակում է անջառնալի Մրանդակին, որից սերվեցին Մանդակունիները:

Եվ Վասպեի գավառներից գտնելով մարդիկ, որոնք ինքնակամ ինչդրեցին մե՛նչանների սպասավորությունը, երանց շատ պատմում է, երանց է հանձնում թրմությունը, գասում է առաջին հայխարարությունների շարքում և կոչում է Վահունիները: Ետևյանս գտնելով, որ Առավելյանները և Ջարե՛հավանյանները առաջին Քաղաքների սերունդներից են, էշանակում է Ետևյանուն ազաններում:

Իսկ Շարաշանին, որ Մանասարի տնից էր (ծագում), մեծ բղիշխ և հուսակալ է նշանակում արևմտյան հարավում, Ասորեստանի սահմանների մոտ, Տիգրիս գետի մօին, նրան գավառներ պարգևելով Արձնր և նրա շրջակայքը, Տավրոս լեռը, որ է Միմը, և ամբողջ Վեդսուրը:

Իսկ Մուկրում գտնելով նույն գավառից մի մարդ, որ ձեռքի տակ ուներ քաղամթիվ սրիկաներ¹⁰⁸, հաստատում է հայխարարությունը, Ետևյանս հաստատում է Կորզպեցիներին, Անձեպիներին և Ալեկացիներին Ետևյանուն գավառներից: Իսկ Ուշունիների և Գոզթեցիների մասին զրա պատմված, թե նրանք անկասկած Միսակուն (տան) հասցաձեծ են կազմում, բայց չիտեմ, արդյոք գավառներ են կոչվել մարդկանց տեղանով, թե գավառների տեղանով կոչված են հայխարարությունները:

Այս բոլորից հետո Արամիքում մե՛նչան շինելով՝ արձաններ է

կանգնեցնում արեգակին, լուսնին և իր ետևիներին, Վազարշակը շատ խնդրեց, Ետևյանս և խոթերով հարկարեց հրեա Շամբատի զովակ Քազարասին, որ Քազադիր և սպայն էր, որպեսզի թողնի հրեական կրոնը և կուրների պաշտի: Բայց նրք նա հանձն չառավ, Քազավորը նրա կամքին թողեց:

Նաև հրաման է տալիս Եորդել Շամիրամի քաղաքը, և ուրիշ շատ տեղերում շինել բազմամարդ քաղաքներ, զիտվոր մարդաշատ գյուղեր: Եվ իր Քազավորական տանը օրենքներ է հաստատում, մամեր է սահմանում (արքաներ) մտնելու և ինչելու, խորհրդի, կերպումսի և գրոսանքների համար: Սահմանում է գինվորական կարգեր, առաջին, երկրորդ, երրորդ և այլն. և երկու մարդ գրով հիշեցնողներ, մեկը քարին հիշեցնողը, մյուսը՝ վրեժխնդրությունը: Բարին հիշեցնողին հրաման է տալիս՝ Քազավորի բարկանուլու կամ անդրազ հրաման տալու զեպրում հիշեցնել իրավացին և մարդասիրությունը: Սահմանում է իրավարարներ արքունի տանը, իրավարարներ քաղաքներում և ազաններում: Հրաման է տալիս, որ քաղաքացիների հարգն ու պատիվը ազնի լինի, քան գյուղացիների, որ գյուղացիները պատվով քաղաքացիների, ինչպես իշխանների, բայց որ քաղաքացիները շատ շոտոգանան գյուղացիների մոտ, այլ նորայրաբար վարվեն, բարկաբարություն և աննախանձ կաներ համար, որ հիմ է կազմում շինուլյան և խաղազ կյանքի, և ուրիշ նման բաներ:

4Բ. Պատկերներ, իր և առամական ճանապարհորդության ժամին, նրկնային զարգի եմանությանը:

4Գ. Հայաց շար միտքանության ժամին, որով բրեկց կորուստը խորհրդին:

4Ծ. Հայաց թագավորության զարգումն իրեկց կամբով և կոխկոտնապետության պետի անարգելի:

4Ծ. Մեծն Սահակն Պարսկաստանից արձակելը մթռակալ Եմուելի հետ միասին:

4Լ. Մեծն Սահակի անարժան իշխանակից Եմուելի զործերը:

4Լ. Մեծն Սահակի և Երանելի Մկրտչի այս աշխարհից փոխվելը:

4Լ. Ողբ Հայաց թագավորության Արշակունիաց ջեղից զարգելու ժամին և կոխկոտնապետության՝ սուրբ Գրիգորի սունից:

Ավարտից ցանկն երարց գրի, որով վերջանում է Հայաց պատմությունը:

ՀԱՏԱՄ ԵՐՐՈՐԿ

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԸ

Ա

Ոչ հին տարիների պատմությունն է ունեցել մեր աշխարհը, ոչ էլ ժամանակի կարճության պատճառով, կարողացանք անցնել բոլոր հունական (ազրյունները), ոչ նույնիակ Գիտգորտսի²²⁴ գրվածքները մեր ձեռքի տակ են, որ աշխարհ նրա վրա պահելով՝ բուրն անմոռաց անցնելինք, որպեսզի բաց շնորհներն որն էլ ղյխավոր և պիտանի բան, որ արժան է մեր շարադրության մեջ հիշատակելու: Այլ որքան զանքն ու հիշողությունը բավականացան, մենք ստույգությամբ պատմեցինք Ազգբասնդր Մեծից մինչև սուրբ Տրդատի մահը, շատ կանուխ և հին ժամանակի (անցքերը): Ուստի մեզ շպետք է մեկազրես ու պարսավես, որովհետև ա՛յս ինչ որ մեր ժամանակները կամ քիչ առաջ պատահել է, քեզ անսխալ կպատմեն, երբորդ գիրքը գրելով, անցքերը սուր Տրդատից հետո մինչև Արշակունիաց ջեղի զաղարկելը թագավորությունից և սուրբ Գրիգորի սերունդին՝ բահնայապետությունից, հասարակ լեզվով այս պատմությունները անելով, որպեսզի այնպես լերի, թե մեկը փափագում է (կարգալու): պերճարանությունից զրավվելով, այլ մեր պատմածների ճշմարտության կորուսելով՝ հաճախակի և անզգար կարգան մեր հայրենիքի պատմությունը:

Բ

225ԻՆՉ ԱՆՏՔԵՐ ՊԱՏԱՀՆՈՒՆ ՄԵՐՆ ՎՐԹԱՆԵՍԻՆ ԵՎ ԵՐԵՔ ԿԱՌԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՏՐՊԱՏՎ ԱՎԵՄԱՆՎԵԼՈՒԹՅ ՀՆՏՈ

Տրդատի վախճանվելու ժամանակ մե՛ն Վրթանես պատասձամբ գտնվում էր սուրբ Հովհաննեսի վկայարանում²²⁶, որ նրա հայրն էր շինել Տարսնուտ: Այստեղ այդ լիաքան բնակիչները, նախարարների թելադրությամբ, դավ սորբեցին, կամենալով նրան սպանել, Բայց նրանք անըբռնելի ձեռքով կապվեցին, ինչպես հու՛մը Եղիսեի ժամանակ²²⁷,

կամ նույն ինքն Քրիստոսի մեր Աստուծո ժամանակ ճշրանեքը գնանին զարկվեցին, (այսինքն որ Վրթանեար) առանց որևէ զնտի անցած գնաց եկեղապս գաժառը, Քիլի ավանը, որտեղ զոնջում էր նրա Արիստակես լեզրոր հանգստարանը, և սուղ էր անում Հայոց աշխարհին վրա, որ ան- իշխանութեան մեջ մնալով՝ նախարարական ցեղերը մեկը մյուսի զեմ էրան իրար կոտորելու, որով երկու առ՛մեր, Բզնունականը, Մանավազ- յանը և Որդունին, ոչնչացան մեկը մյուսի ձեռքով:

9

ՍՈՐԻ ԳՐԻ-ԳՈՐԻՍԻ ՄԱՆԸ ԳՐԲԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ԶՆՈՒՐՈՎ

Մեծ պնդութեամբ երանելի Տրդատը վրեժխնդիր էր լինում հաժաոտի և վարքի նկատմամբ, մանավանց նրանց, որոնք իր իշխանութեան հե- րազով եղբորում էին ապրում: Ուստի նրա մտտ եկան արեւելեան հուս- սիստային կղզիների գործակալները, Փարսկանարան կոչված հեռավոր քա- ղաքի վերակացուները և առաջինն թագավորին. «եթև կամենում ես, որ այն կղզիք մարզիկ ուղիղ վարք ունենան քստ այս (նոր) հաժաոտի, ապա նրանց համար եպիսկոպոս ուղարկիր սուրբ Գրիգորի սերնդին, որովհետև մեծ փափագով խնդրում են, և մենք հաստատ գիտենք, որ Գրիգորի՝ ոչնչված անվան պատճառով կանխածեն նրա սերնդին և նրա հրամանին համաձայն կվարվեն»: Երանելի Տրդատը համաձայնելով՝ նրանց եպիսկոպոս է առլիս մանուկ Գրիգորիին, Վրթանեար էրեց որ- ցուն: Թեպետ նրա անշահափառաստութեանը նայելով, այս բանը կանոնի զեմ էր համարվում, բայց նկատելով նրա հոգու մեծութունը և հիշելով, որ Մտղոմանը տասներկու տարեկան հասակում թագավորեց իսրայելա- ցիների վրա, մեծ վստահութեամբ ուղարկեց ժի ոմն Մանասարուկի հետ, որ իր Արշակունի ցեղին էր:

Նա գնալով՝ բարի օրինակ էր գտնում, հայրենական առաքինու- թյուններով վարվելով, բայց կուստութեամբ գերազանցելով հայրերին, իսկ պատեղու հողմից՝ թագավորին համարազնելով, իսկ երբ Տրդատը վախճանվելու շուրջը հասավ, բարբարոսները նույն Սոնատուրուկի և ուրիշ մի քանի միշտ սուտ խոսող ազգանների զավելով, երանելի (Գրիգորի- սին) սպանեցին Աստուծու գաշտում, Կասրիական կղզված ծովի մոտ, մերթնե ունևտակ առլով: Նրա սարխավորները նրա մարմինը բերին Ժուրք Մուղինը, թաղեցին Ամարա սամառում: Իսկ Մանասարուկը Քաղ գնելով իր գլուխը՝ գրավեց Փայտակարան քաղաքը, և մտածում էր բոլոր Հայաստանին տիրել: Ետքը ազգերի սգնությունը:

7

ԲԱԿՈՐ ԲՆԵՇԻ ԱՆՉԱՆԱԿԵԼ ՀԱՅՈՑ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԻՆ ԵՎ ՆԱԽԱԲԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՐԴԸ ԽՈՐՈՒԼԻՆ ԹԱԳԱՎԱՐԵՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ինչպես աստվածային պատմությունների մեջ գտնում ենք ասված՝ երբայական ազգը զատավորներից հետո, անիշխանութեան անխաղաղ ժամանակ, շունիք թագավոր և ամեն մարդ վարվում էր քստ իր հանույ- լի, նույն բանը կարելի էր տեսնել և մեր աշխարհում: Որովհետև, երբ երանելի Տրդատը վախճանվեց, Բակուր մեծ իշխանը, որ կոչվում էր Աղձնիքի բղջիւն, տեսնելով, որ Մանասարուկը թագավորեց Փայտակարա- նում, նույնը կամեցավ և ինքն անել, ցակայն չթագավորել, որովհետև Արշակունի չէր, այլ կամեցավ ինքնազուտ լինել: Ուստի Հայոց միա- բանութունից անշուտվելով՝ ձեռքը մեկնեց Պարսից Որմիլզ թագավո- րին: Այսպես Հայոց նախարարները աշխ և խելքի գալով՝ ժողովվեցին մեծն Վրթանեարի մոտ և պատվաբար իշխաններից երկու անձ, Մոփքի Մար իշխանին և Հաշտայանի Գազ իշխանին, ուղարկեցին նախագա՛- րազարք գնալու Կաստանդիանոսի որդու՝ Կաստանդ կայսրի մոտ, եվրե- ներով և թղթով, հետևյալ բովանդակությամբ.

6

ՀԱՅՈՑ ԹՂԻՒ ԳՍԱՆԵՆԸ

«Վրթանես եպիսկոպոսապետը և նրա ձեռքի տակ եղած եպիսկո- պոսները և Մեծ Հայաստանի բոլոր նախարարները մեր տիրոջ՝ ինք- նակալ Կաստանդ կայսրին սղջուն են մատուցանում:

Միտքը բնը քո հոր Կաստանդիանոսի ուխտադրությամբ պայմանը մեր Տրդատ թագավորի հետ և մեր աշխարհը մի՛ թողնիր անասաված պարտիկներին, այլ օգնիր մեզ զորքով՝ Տրդատի սրբուն հոստովին թագավորեցնելու համար: Որովհետև Աստված մեզ ոչ միայն ծխրապա- յին տիրացրեց, այլև բոլոր Միջերկրային և մեր զորություն ա՛րք մինչև աշխարհի ծայրը տարածվեց, եվ՛ մենք խնդրում ենք, որ զուր ավելի և ավելի տրտանար: Ողջ եղբք»:

Կաստանդն այս (խնդրի) լսելով՝ Անտիոքոսին, իր պալատի կա- ռավարչին, մեծ զորքով ուղարկեց, նաև ծիրանի զգեստ ու պսակ և թուղթ հետևյալ բովանդակությամբ.

«Ինքնակալ Ավգոստոս Կոստանդոս Կայսրը մեծ Վրթաննից և բոլոր բո աշխարհականներին» ողջունելու:

Մեծ զորք ուզարկեցի օգնության և հրաման՝ ձեզ վրա թագավորեցնելու ևսարովին՝ ձեր Տրդատ թագավորի որդուն, որպեսզի բարեկարգության մեջ հաստատվիք և հավատարմությամբ մեզ հպատակվիք: Ողջ եղեք»:

2

ԱՆՏԻՈՒՑՈՒՅ ԳԱՂՈՒՍԵԸ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԵՐԸ

Անտիոքոսն եկավ, ևսարովին թագավորեցրեց և շուր սպարապետներին հանձնեց զորքի վրա նույն իշխանությունը, որոնց նշանակել էր Տրդատն իր կենդանության ժամանակ՝ իր զույն Արտավազը Մանգարի ժառանգության հետ, որ միակ սպարապետն էր և բոլոր Հայոց (զորքերի) զորավարը: Առաջին՝ Բագարատն ապետը արեմտյան զինքին զորավար, երկրորդ՝ Միհրան, Վրաց առաջնորդը և Գուգարացոց բղջիչիք՝ Նյուխտային զորքին սպարապետ, երրորդ՝ Վահան, Ամատունյաց նահապետը, արևելյան զինքին զորավար, չորրորդ՝ Մանանիհը՝ Ռշտունյաց նահապետը՝ հարավային զորքին սպարապետ: Եվ զորքը բաժանեց, տվեց յուրաքանչյուրին իր բաժնիքը: Մանանիհին հարավային զորքով, կիլիկեցի զորքն էլ նրանց հետ, ուզարկեց Ասորեստանի և Միջերկրալսի կողմերը, իսկ Ամատունյաց Վահան նահապետին արևելյան զինքով, և նրանց հետ զազատացի զորքերը, ուզարկեց Ասորստանականի կողմերը՝ պահպանելու (երկիրը) Պարսից թագավորին:

Իսկ ինքը, թողնելով ևսարովին, որովհետև մարմնով փոքր էր, թույլ ուկրակներով և պատերազմական հասակ և հարմարություն չունեի, առավ իր հետ Միհրանին և Բագարատին իրենց զորքերով, և բոլոր հունական զորքի հետ միասին զինեց Մանատունի վրա: Իսկ նա, Փայտակարան բաղաբը պարսկական զորքով լցնելով, շտապով գնում ապավինում է Եսպոն թագավորին, Աղվանից նախարարների հետ միասին Անտիոքոս տեսնելով, որ նրանք չենդանդեղեցին և խաղաղությամբ չեվանդեցին, հրամայում է պատակաբաժանել իշխանությունն ավարտությունը սկսաբանել, իսկ ինքը (աշխարհի) հարկը ժողովելով գնում է Կայսրի մոտ:

ՄԱՆԱՆԻՆԻ ԸՆԴՈՒՄԸ ՄԵՆՆ ԸՆԿՈՒԹ ԳԵՄ ԵՎ ՆՐԱ ՄԱԸԸ

Մանանիհը Հայոց հարավային զինքով և կիլիկեցի զորքով Ասորեստանի կողմերը դնելով պատերազմեց Բակուր բղջիչի հետ և սպանեց նրան, իսկ նրա զորքերն ու նրան օգնության ուղարկված պարսիկներին հայածեց. Բակուրի որդուն, Հեշային ձեռնարկելով՝ երկաթե կապանքներով ուղարկում է ևսարովին, իսկ նրա իշխանության զավանդներն անխնայ քրի է մատնում, ոչ միայն կողոզներին, այլև ուսմիկ գյուղացիներին, և շատ զերիներ է ստնում Մծրինի կողմերից, որոնց թվում նաև Հակոբ մեծ եպիսկոպոսը²⁵ ուժ սարկավազներին: Հակոբը նրանց հետևից գալով՝ հորդորում է Մանանիհին արձակել ուսմիկ գերիներին, քանի որ նրանք անմեղ են, բայց Մանանիհը չի համաձայնում, պատճառ բերելով թագավորին:

Հակոբը դիմում է թագավորին. սրա վրա Մանանիհը ավելի է լուրանում, և զավանդների թեկազրությամբ նրա ուժ սարկավազներին, որ կալանավորված էին, հրամայում է ձուլք նետել: Երբ այս լուրն է մեծն Հակոբը, սաստիկ բարկացած վերադառնում է իր տեղը, ինչպես Մովսեսը Փարավոնի մոտից, բարձրանում է մի լեռ, որտեղից ամբողջ զավանդ Երևում էր, և անհիմուն է Մանանիհին և նրա զավառը: Եվ Աստուծու դատաստանը շուտ վրա է հասնում, որովհետև Մանանիհը Հեռովգեսի նման տեսակ-տեսակ ցավերից բռնվում է և մեռնում, և գավառի պտուղներ ջրաբերի հողերը աղշոտ հողերի են փոխվում, երկիրը նրանց վրա պղինձ դառնալով, բոտ Սուրբ գրքի, ժողն էլ հակառակով (բարձրանում) ծածկում է արտերի սահմանները, Երբ այս բաները լուրն են մեծն Վրթանն և ևսարով թագավորը, գայրանալով հրամայում են զերվածներին արձակել, և նույն մարդուն դիմել զղջումով և ազալանքով, որ զույց Աստուծու բարկությունը զազարի: Եվ Մանանիհի որդին ու մատանը, Հակոբի այս աշխարհից փոխվելուց հետո, զեղեցիկ ազալախարկությամբ, հորդ արտասուքներով ու հուռաչանքներով նրա բարեխոսությամբ ստացավ զավառի բժշկությունը:

ՓՈՐՔ ԽՈՍՐՈՎԻ ՔԱՂԱՎԱՐԱԼԸ, ԱՐՔԱՆԻՔԸ ՏԵՂԱՓՈՒԵԼ ԵՎ ԱՆՏԱՐԸ ՏՆԱԵԼ

Պարտից Որմիզց Քաղափորի երկրորդ և Կասառզի ինքնակալության ութերորդ տարում նրա օգնությամբ Քաղափորից Խոսրովը, նա ոչ մի բաշտության գործ ցույց չտր նման. նա նույնիսկ հակառակություն ցույց չափեց անդամված կողմերի վերաբերմամբ, մի անգամից հետո, որ հունական գործերից կրեցին²²⁰, այլ Պարտից Քաղափորին իր կամերին Քոզնիլով՝ նրա հետ խաղաղություն է կերթում, բազմակի համարելով տիրել մնացած չամհաններին, բոլորովին չլսածնելով ազնվական խորհուրդներ: Որովհետև թեպետ նա մարմնով փոքր էր, բայց ոչ նկերասանը Մակեդոնացու շափ, որ միայն երեք կանգուն²²⁰ հասակ ուներ, որ (սակայն) շեր խափանում նրա հոգու աշխույժը: Իսկ սա անփույթ լինելով քաջության և բարի իշխանակներին՝ գրասովոր էր գրասաններնաբով, Քաշնարսուլյանը և այլ որսերով, որի համար էլ նա անտառ տնկեց Ազատ գետի մոտ, որ մինչև այսօր էլ կուշվում է նրա անու, նով:

Նաև արքունիքը փոխադրում է անտառից վերև մի բլուրի վրա և շինում է արևից պատսպարված ապարանք, (այն տեղը) պարսկական լեզվով կոչվում է Գվին, որ նշանակում է բլուր²⁰¹: Որովհետև այդ ժամանակ Հրաան ուղեկցում էր Արեգակին և անմարտը շերտ օդը գաղչելի հոտ էր բուրում, ուստի Արտաշատում բնակվողներն այս բանին շղիմա-նարով՝ կամավ հանձն առան այս տեղափոխությունը:

Թ

ՄԱՍ ՓԱՐՄԱՆԱԿ ԼՅՈՒՍՈՒՍԱՅԻՆ ԱՐՔԱՆԻՔԸ ՄԵՑ ՎՐԱ, ԵՎ ՎԱՆԱՆ ԱՐՄԱՏՈՒՆՈՒ ԲԱՅԱՎՈՐՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մրա ժամանակ Հյուսիսային Կովկասի բնակիչները միարանելով, գիտնալով նրա թուլասարությունը ու ծուլությունը, մանավանդ հրապարկվելով Մանասարուկի թեյազրությունից, Պարտից Տապուհ՝ Քաղափորի գեղերին հրամանով արշավեցին ու հասան մեր աշխարհի միջին վայրերը մեծ բազմությամբ, մոտ երկու բյուր մարդով: Պատերազմով նրանց դեմ դուրս եկան Հայոց արևելյան և արևմտյան զորքերն իրենց զորագեղաներով, այսինքն Բազարատ ասպետով և Ամատունչաց Վահան նահապետով: Որովհետև մեր հարավային զինվորը Խոսրովի մոտ էին Մոփաց

աշխարհում, իսկ Միհրանին օպանել ու մեր հյուսիսային զինվոր շարժել ու փակեցրել էին թշնամիները և (այս կերպով) հասել էին մինչև Վարդաշապատ ու պաշարել: Նրանց վրա հանկարծակի հարձակեցին մեր արևելյան և արևմտյան զորքերը և հետ վանեցին զեպի Օշականի առապարը և թույլ չափին, որ նրանք ցրով գալով նետամարտից կասարեն ըստ իրենց սովորության, այլ բաշտածի հեծյունները նրանց շտապ-շտապ ու արագապես հետամուտ լինելով մղեցին քարաքարտ գոժվար տեղերը, այնպես որ թշնամիներն ականախից ստիպվեցին ձակատամարտ կազմելու:

Նրանց նիզակավորների զորագլուխն էր մի վիթխարի հսկա, օպանաղինված և ամբողջ մարմնով ծածկված խնո Քաղիբով. այնպես նա արշավանները էր կատարում գործի մեջ: Հայոց բաշտեր աշերքը նրա վրա պահելով՝ հարձակվում էին վրան, բայց չէին կարողանում գնալն, որովհետև նրք նիզակով խփում էին, թաղիքը շուտ էր գալին²²², Այս ժամանակի քաջ Վահան Ամատունին թույլատրելով զեպի Կոմպիլեն կեկեցին՝ ասաց. «Յգնիր ինձ, Աստված. դու որ Գավթի պարսաբարը դիպցրիր խրոխտացող Գողթաթի ձակատին, իմ նիզակն էլ ուղղիր այս հոգրի աշին»²²³: նրա խելքովածքը գուր շանցավ. միու զավակիցը խփելով՝ զետին զլորեց անպղին հսկային: Այս դիպվածն ասիթ գործավ թշնամիների փախուստին և Հայոց զուևը զորացրեց հաղթանակ տանելու:

Այստեղից Մոփաց աշխարհը դառնալիս՝ Բազարատն առանց նախանձի հաստատապես վկայում է Քաղափորին Վահանի քաջագործությունների և այս առաքինական զեպուհի մասին: Աստի Քաղափորը նրան է պարգևում ձակատամարտի տեղը, Օշականը, որովք Վահանն ինքնակամ դեմ կավ և մենամարտեց (հսկա թշնամու հետ) Իսկ Միհրանի փոխարեն զորքի վրա նշանակում է Գարբույլ Մաղխաղին, Խոսրունիներին նահապետին:

Թ

ԽՈՍՐՈՎԻ ՎԱՆԱՎԱՐԱԼԸ ԵՎ ԼՅԱՆՑ ՊԱՏԵՐԱՄՔԸ ՊԱՐՄԱՆԻՆԻ ԼԵՏ

Մրանից հետո Խոսրովն իմանալով, որ Պարտից Տապուհ՝ Քաղափորը թշնամիների հետ է, լուծում է նրա հետ կնքած խաղաղությունը և նրան գնարած մտամաքոր հարկի կորելով՝ այն ևս կայսրին է տալիս և Հունաց զորքերը բերելով, գիժազում է Պարտից Քաղափորին: Բայց նրա կյանքը երկար չտևեց, նա վախճանվեց ինքն աստի Քաղափորուց հետո: նրա մարմինը վերցրին և Քաղեցին Անիում, հարկերի մաս: Իսկ մեծն

Վրթանես ժողովելով բոլոր Հայոց նախարաններին, գործերով ու գործարարներով, մեր աշխարհը հանձնում է Արշավիր Կամսարականին, իրեն գլխավոր և թագավորից հետո առաջին պատվավոր անձին²⁵⁴, իսկ ինքն անձնելով Տիրանին, խոսքովի որդուն, գնում է կայսրի մոտ, որպեսզի նրան հոր տեղ Հայոց թագավոր նշանակի:

Իսկ երբ Պարսից Եսպուհ թագավորը լսեց խոսքովի մահը և թե նրա Տիրան որդին կայսրի մոտ գնաց, մեծ զորք է զուսարում իր ներսե՛ն նորո՛ր ձեռքի տակ, իրեն թե մազգրվելով նրան թագավորեցնել Հայոց վրա, և ուղարկում է մեր աշխարհը, համարելով թե նա անուռչ-նորդ է մնացել: Նրանց հանդիպում է բաշ Արշավիր Կամսարականը բոլոր հայկական զորքով Մուղ կոչված դաշտում, և թեպետ պատերազմում շատերն ընկան մեծամեծ նախարարներից, բայց հաղթությունը տարավ Հայոց զունջը և փախուստի մասինց Պարսից զորքերը: Այսպես մեր աշխարհը պահեցին մինչև Տիրանի գալը:

ԺԱ

ՏԻՐԱՆԻ ԹՈՒԿԱՎՈՐՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ. ՄԵՆԷՆ ՎՐԹԱՆԵՍԻ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻԺ ՓՈՒԿԱՆԸ ԵՎ ՍՈՒՐԸ ՀՈՒՄՈՒԿ ԼԱԶՐՈՒԿՆԸ ԱՅՍՈՒՆԸ

Ավգոստոս Կոստանդր, Կոստանդինոսի որդին, իր ինքնակալության ստանձնվորերը տարում թագավորեցնում է Տիրանին, խոսքովի որդուն և ուղարկում է Հայաստան մեծն Վրթանեսի հետ: Նա գալով խաղաղությամբ պահում է մեր աշխարհը, պարսիկների հետ հաշտություն անելով և ոչ թե պատերազմներ: Հարկ վճարելով հույներին, մասնավոր բան էլ պարսիկներին, խաղաղ ապրում էր իր հոր նման, եույնպես ոչ մի բաշության գործ ցույց չտալով, եույնիսկ չհետևելով հայրենական առաքինությանը, այլ ամեն բարեպաշտությունից թուլացած գաղտնի կերպով, որովհետև մեծն Վրթանեսից բաշվելով չէր համարձակվում հայտնապես արտաքին անձնատուր լինել:

Իսկ մեծն Վրթանեսը եպիսկոպոսության տասնհինգ տարին լրանալիս փոխվում է այս աշխարհից Տիրանի կերորդ տարում: Թագավորի հրամանով նրան տարան թագեցին Թորգան գյուղում, կարծես մարգարեական աշքով անձնելով, որ շատ ժամանակ անցնելուց հետո եույն անդամ պետք է թագվեն նրա հոր նշխարները: Իսկ ամբողջ հաջորդում է նրա Հուսիկ որդին, Տիրանի չորրորդ տարում, որ և լիովին հետևող է լինում իր հայրերի առաքինության:

ԺԲ

ՇԱԳՈՒՎԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԿՈՍՏԱՆԴՆԻ ԼՅՏ

Բայց Եսպուհը, Ուրմիզկի որդին, շատ սեր հաստատեց մեր Տիրան թագավորի հետ, մինչև իսկ նրան թիկունք և օգնական եղավ՝ նրան ազատելով չլուստիական ազգերի հարձակումից, որոնք միաբանելով զուրս կկան ճորա պահակից²⁵⁵ և չորս ասրի ժամանակ բանակ գրին ու մնացին Աղվանքի սահմաններում: Ուրիշ շատ թագավորներ էլ նվաճեց Եսպուհը և շատ բարբարոս ազգերից էլ օտանդակություն գտնելով՝ հարձակվեց Միջերկրաբի և Պարսկաստանի վրա: Իսկ Կոստանդր Հուլիանոսին կհասր²⁵⁶ գարձնելով՝ ինքը գինվեց պարսիկների զեմ: Ծակատամարտի մեջ երկու կողմերն էլ պարտություն կրեցին, որովհետև երկու կողմից էլ շատ ընկան, և ոչ մեկը մշտապից երես չգարձեց, արեպես որ համաձայնության գալով՝ խաղաղություն կնքեցին մի բանի տարով: Պարսիկների (պատերազմից) վերազանդալով՝ Կոստանդր երկուր հիվանդությունից հետո վախճանվեց կիրիկիայի Մամփալուեստ բաղաբում, բաներից տարի թագավորելուց հետո: Մրա օրերում Երուսաղեմում երկնքից երեսայ լուսեղեն խաչը բաղաբի բոլոր հավատացյալներին և անհավատներին երանելի կյուրեղի²⁵⁷ ժամանակ:

ԺԳ

ՅԵ ԻՆՉՊԵՏ ՏԻՐԱՆԸ ՀՈՒԿԱՆՈՍԻՆ ԸՆԿՈՒՄԱՋ ԳՆԱԿՈՒ ՊԱՏԱՆԿՆԵՐ Է ՏԱԼՍՍ

Այս ժամանակներում Հունաց վրա թագավորեց ամբարիշտ Հուլիանոսը²⁵⁸. Նա Աստոնև ուրացավ, կուրերը պաշտեց, հալածանք և խոսքովություն հուզեց եկեղեցու զեմ և ամեն կերպ ջանում էր բրիտանոնական հավատը հանցնել: Բայց ոչ թե բռնությամբ էր հեաղանդեցնում, այլ խորամանկությամբ հնարք էր փետում, որ Քրիստոսի պաշտոնը խախտվի և դեներին երկրպագություն մատուցվի: Երբ նա բոս իրավունքի գինվեց²⁵⁹ պարսիկների զեմ և կիրիկիայով անցնելով Միջագետ հասավ, Պարսից սահմանապահ զորքերը նփրատ գետի նավակամարքի շվանները կորեկով՝ անցրը պաշտպանում էին: Իսկ մեր Տիրան թագավորը Հուլիանոսին ընդատաջ գալով՝ հարձակվեց և Պարսից զորքերի վրա, նրանց հալածում է և սպասավորություն մատուցանելով՝ ամբարիշտ Հուլիանոսին և հեծելազորի ամբողջ բաղաբությունն անց է կացնում (գնաով) և շատ մեծաբում է Հուլիանոսից:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԶՈՐԱՆԸ ՀԱՅՈՑ ԶՈՐԵՐԸ ԱՌԱՆԵԼՈՎ ՀՈՒՆՈՒՆՈՍԹ ԿՈՍՏՆՆԻ ԵՎ ԳԱՆՆՈՒՄ ԵՎ ՅԵՂՈՎ ԿՈՏՈՎՈՒՄ Է

Սուրբ Հուսիկի սպանման լուրը և բոլոր նախարարների քրթմըշլուրն հասավ Ռշտունյաց Չորս նահայտեի ահանջին, որ Հայոց հարավային զնդի գործպետն էր Մանանդիոսի փոխանակ և Տիրանի հրամանով գնացել էր իր գործով Հուլիանոսի հետ: Այս լուրը լսելով՝ նա սասց իր գործին: ՉՉվարկներ այն մարզու հրամանով, որ զայնսկզբուցուն էր գցում Բրիտանի երկրպագութիան մեջ և սպանում է նրա սրբերին, և շուղիկցնեք այս ամբարիշտ թաղափորին: Չորս իրեն կամակից գարծնելով՝ հետ էր գառնում և գնում ամբանում է Տնորիցում, մինչև տեսնել, թե ինչ պիտի անեն մյուս նախարարները: Բայց Հուլիանոսի սուբհանդակները նրա զայոց սասց են հասնում և բերուկ են Տիրանին թուղթ հետևելու բովանդակութիամբ:

Հուլիանոսի թուղթը Տիրանին

«Ինքնակալ Հուլիանոս, Ինսի սերունդ, Արամագի որդի, հակասագրով անմահութիան սահմանված, մեր Տիրան գործակալին ողջունի: Այն գորբը, որ մեզ հետ ուղարկիցիք, նրանց գործպետին սասվ է հետ գարծավ: Մենք կարող էինք մեր անթիվ զնգերից ուղարկել նրանց հակակց ու բռնել, բայց թուղթ ամիկնք (նրանց հետանալ) երկու պատճառով: Նախ՝ որպիսի պարսիկները չառեն, կի գորբը բերում է բռնութիանը և ոչ կամովին, և երկրորդ՝ որպիսի փորձներ իր հաճախամութիանը: Արդ՝ և թե նա այդ բանն արավ ոչ իր կամքով, սպա նրան ցեղովին բնացնելը արա, որպիսի մնացորդ չմտա, հակասակ զեպրում երգվում են Ռասով²⁴⁰, որ մեզ թաղափորութիանը չնորհեց, և Արևեստով, որ հաղթութիան, որ մեր վերագարծին անպարտելի զորութիամբ կիտրտակներ քեղ էլ, քո աշխարհն էր:»

Տիրանն այս տեսնելով՝ դարձուրում է և Հայր կոչված մարզպետին ուղարկում է Չորսայի մտա, երգումով նրան կանչում է: նրա գորբ տեսնելով՝ որ բոլոր նախարարները լուս են մնացել, մեր ազգի անծուկալութիամբ ցրվցեցին, չուրաքանչյուրը գնաց իր տունը: Չորսն մենակ մնալով՝ ահամայից գալիս է թաղափորի մտա: նրան բռնելով՝ թաղափորը գրավում է Աղթամարը, նրա ամբար բերդը և բոլորին կտորում սպանում է: Բայց մի փոքիկ երեխա, նրա՝ Մեհենդակ եղբոր որդին, գալակներ փախցրին փրկիցին, իսկ թաղափորը նրա տեղ նշանակում է Աղաճալիին, Անծիտի տիրուրը:

Նրանից այս խնդիրն է անում, որ նրան իր հետ Պարսկաստան շտաբի, պատճառ բերելով, թե անկարող է մի հեծնել: Հուլիանոսը համաձայնում է, բայց խնդրում է նրանցից զորք և պատանդներ: Տիրանը խնայելով իր երկրորդ որդուն, Արշակին, աալիս է Տրգատին, երրորդ որդուն, կնով և սրգիներով և իր Տրքիթ թսանք, իր մեղած անդարնիկ որդու՝ Արտաշեսի որդուն: Հուլիանոսը նրանց առնում անմիջապես ուղարկում է Բյուզանդիան, իսկ Տիրանին՝ արձակում է՝ իր աշխարհը գնալու: նրան աալիս է իր պատկերը, տախտակի վրա նկարված, որի վրա (նկարված էին) նաև մի բանի զեկերի պատկերներ, և հրամայում է կանգնեցնել հիկզեցում՝ արևելյան կողմում, առևելով, թե Հոսմալցիցների տերութիան հարկատու եղողները բոլորն այդպես են անում: Տիրանը հանձն անելով բերում է, մարզով շանցիացնելով, թե իտրեուքիամբ զեկերի պատկերներին երկրպագութիան կժառանգվի:

ԾԴ

ՍՈՒՐԸ ՀՈՒՍԻՆԻ ԵՎ ԳԱՆՆԻՆԻ ՆԱՀԱՍԿՈՒԹՅՈՒՆԸ

Տիրանը Սոփաց զավար հասնելով՝ կամեցավ պատկերը զնել իր արքունիքի հիկզեցում: Սուրբ Հուսիկը պատկերը հափշտակեց թագավորի ձեռքից, զեպին զցեց և ստով կոխեց ու մանրեց, հասկացնելով թաղափորին՝ բանի իտրամանկութիանը: Տիրանը նրան չյանք, վախենալով Հուլիանոսից, որովհետև մտածեց, թե ինքը կարող է մեռնել, իբրև թաղափորի պատկերն անապիտան առող: Ուտի աճիլի ևս բորբորվեց նրա մեջ զայրույթը, որ տածում էր զեպի սուրբ Հուսիկը, իր հանցանքները շարունակ հանգիմանելու պատճառով, և հրամայեց ճիպտաներով այնքան երկար ձաղկել նրան, որ ծծծելիս հողին ավանդեց:

Նրա վախճանիկուց հետո Տիրանը նախատիքի է անծերի ենթարկվեց ծերունի Գանիել քահանայի կողմից, որ սուր Գրիգորի աշակերտն ու սպասավորն էր, ուտի հրամայեց նրան խնդրամահ անել: Աշակերտները նրա մարմինը վերցնելով՝ թաղեցին նրա միայնարանում, որ կոչվում է Հայցյաց գրախա: Իսկ սուրբ Հուսիկի մարմինը վերցրին տարան իր հոր Եսո, Քորզան գյուղը: Նա եպիսկոպոսութիան արավ վեց տարի:

ԺԶ

ՀԱՌՄԱՆԻ ՈՐԳԱՆՆԵՐԻ ՄԱՋԸ ԵՎ ՓԱՆՆԵՐՄԵՆԸ ԸՆԹՈՐԳՆԵՆ ԱՌՈՒՄ

Իսկ Հայոց նախարարները Տիրանից խնդրում են մի արժանավոր մարդ, Հուսիկի փոխարեն կոփառուցու գնելու համար: Որովհետև նրա որդիները դավիչ վարք չունեցան և անարժան էին այն առաքելական աթոռին. և բացի սրանից, այդ օրերումը նրանց վրա մա՛հ հասավ ահանջի, լսողների սարսափման արժանի. մի անգամ երկուսը միասին կաշի-ծովհանար եղան, որոնց անուններն էին Պապ և Աթանազիոսն. նրանք շքեղին շահա՛նաս զավակ այդ պաշտանին համապատասխան, բացի Աթանազիոսին մի որդուց, ներսն անունով, որ Կեսարիայում, սովորում էր և այդ ժամանակ գնացել էր Բյուզանդիոն՝ կին ստնելու մի ոմն Ասպիոս մեծ իշխանի աղջկան: Ուստի որովհետև Գրիգորի ցեղից մարդ չկար, ընտրեցին մի ոմն Փառնեբահ՛ի Տարսնի Աշտիշատից և զրին բահանալուպես Տիրանի տասներորդ արարւմ: Նա աթոռը գրավեց չորս տարի:

ԺԷ

ՔԵ ԻՆՉՉԵՍ ՏԻՐԱՆԸ ԸՆԳՈՒՆԻՑ ԽՈՒՎԵՑ ՈՒ ՆՐԱ ԿՈՉԻՆ ԳՆԱԽՈՎ ՆՐԱՆԻՑ ԿՈՒՐԱՑՈՒՑՑ

Այս բոլորից հետո ամբարշտու Հուլիանոսը փորից վիրավորվելով ստակում է Պարսկաստանում, ինչպես արժան էր նրա չար խորհուրդների համար: Նրա զորք հեռ գործած, թագավոր ընտրելով Հորիանոսին, որը ճանապարհին վարժանովեց՝ Բյուզանդիոն հասած: Իսկ Պարսից Շապուհ թագավորը նրանց հետամուտ է լինում և խարտուլյամբ կանչում է Տիրանին իր մոտ, զրեյով նրան այսպիսի թուղթ.

Շապուհի թուղթ Տիրանին

«Մագդեկանց բա՛հ²⁴¹, արեգակին բարձակից Շապուհ՝ արքայից արքա. մեր բարձրացվածությամբ հիշած սերկի կղզոր, Հայոց Տիրան թագավորին շատ ողջուիչ:

Մենք ստուգապես վերահստու եզանք, որ դու հաստատ պահեցիր բա սերբ դեպի մեզ, կալսրի հետ չկար՝ մեր Պարսից աշխարհը, և այն զուճղը, որ բկանից ստավ (Հուլիանոսը), հետևից մարդ ուղարկելով հետ կանչեցիր: Եվ առաջինը ինչ որ դու արիր, գիտենք նրա համար

արիր, որպեսզի բո աշխարհով չանցնի, այն, ինչ որ նա ինքը պիտի տներ: Ուստի մեր պահապանները երկշտուլյամբ թուղթն հետացան՝ թեզ պատճառ բռնելով, որի վրա զայրանալով՝ մենք ցույի արյուն տվինք խմցնել նրանց զխավորին: Քո թագավորությանը մենք ոչ մի վնաս չենք հասցնի, երբով մեր Միշը մեծ սատուձով, միայն շտապիր զայ մեզ տեսության, հասարակական ոգուտի մասին խորհրդակցելու համար»:

Տիրանն այդ տեսնելով խնչագործից զնաց նրա մոտ, որովհետև արգարությունը նրան տանում էր հասուցման տեղը: Շապուհը նրան տեսնելով նախատեց խոսքերով իր զորքերի զեմ հանդիման և նրա աշխարհը կուրացրեց, ինչպես հնումը Սեղեկիականի²⁴²: Գուցն սրանով ըստ վրեժու սուտից սուրբ մարգու, որով լուսավորվում էր մեր աշխարհը նա Ավետարանի խոսքի, աշխարհի լույսը լինելով: Տիրան նրա լույսը խավարեցրեց Հայաստանում և ինքն էլ խավարեց, տասնենվ տարի թագավորություն անելուց հետո:

ԺԸ

ՈՒՂՈՒՄԻ ԱՐՇԱԿԻ ԹԱԳԱՎՈՐԵՑՆԵԼԸ ԵՎ ՀՈՒՆԱՏԱՆ ԱՐՇԱԿԵԼԸ

Բայց Շապուհը Տիրանի փոխարեն թագավորեցրեց նրա որդուն Արշակին, ակնածելով Հայոց զորքերից, որպեսզի որևէ կերպով չխափանի իր ձեռնարկելիք գործը: Նա այսպես պատշաճ անարեց, որ բարեարթություն անելով, մեր աշխարհը հաստատ իր կողմը դրավ: Նախարարական ցեղերն էլ նա զսպեց, ամենից պատանդներ անելով: Եվ Հայոց արևելյան զորքին Վահան Ամատուուս փոխանակ սպարապետ նշանակեց իրեն հավատարիմ Սյունի Վաղինակին, և Հայաստանը նրան հանձնելով, ինքը հետամուտ եղավ հունական զորքին, հասավ մինչև Բյութանիա և այնտեղ նստեց շատ ամիսներ: Ոչինչ անել չկարողանալով, ծովի մոտ մի սյուն է կանգնեցնում, վրան դնում է առյուծ, սուրբանակ մի գիրք թնամ, որ այն և նշանակում: Ինչպես առյուծը հորն է զագանների մեջ, այնպես է պարսկականը թագավորների մեջ, իսկ գիրքը պարունակում է գիտություն՝ ինչպես է Հռոմայեցիների տնտեսությունը:

ՔԵ ԻՆՉՊԵՍ ԱՐՔԱՎ ԱՐՇԱՄԱՐՆԵՑ ԼՈՒՆԱՏ ԹԱԳԱՎՈՐԻՆ

Այս ժամանակների ընթացքում Նյութալային ազգերի կողմից խափովյուններ ծագեցին, (սրանք գրազեցրին) Պարսից Տապու՛՛ Քաղափորին: Իսկ Նույնների վրա Քաղափորնց Վարենտիանոս, որ զորրի գումարտակ է ուղարկում Միշերկրայր և Նայածում է պարսկական զորքերին: Հնուտ մեր Արշակ Քաղափորին ուղարկում է այսպիսի Քուզթ:

Վարենտիանոսի թուղթն Արշակին

«Ինքեակալ Վարենտիանոս Ազգոստոս, մեր աթոռակից և Քաղափից Վազես կայսրի Նետ, Հայոց Արշակ Քաղափորին ողջունչ:

Գու պետք է իշխեր այն չարիքները, որ ձեզ Նստան անտառված պարսիկներից, և այն երախտիքները, որ մեզանից գտել եք Նեոց ի վեր մինչև քո ժամանակ, և պետք է Նեոսալայր նրանցից և մեզ ժամանալիր: Երպեսզի մեր զորրի Նեո խառնվելով, միասին կովենք նրանց զեմ. մեր այդուեղի զորավարների ձեռքով ուղարկիր ձեք աշխարհի Նարկերը, նրանց գուճացողական թղթերով, որպեսզի նրանք քո այստեղի էզրորք և նրա Նեո եկած պատանդներն առնելով զուրս քեզեն: Ողջ եղիր, լիովին Նստանդովյամք մեր Հռոմեական տերությանն:

Իսկ Արշակը նույնիսկ շպատասխանեց այս թղթին: Այլ ատամ բացելով նրանց արձամարհեց. մինեռն ժամանակ նա Տապու՛՛ի կողմն է շարժվով բոլոր սրտով. այլ ինքնահալանությամք պարծեծում էր միշտ կերտուսմաների ժամանակ և վարձկան երզնյների թերանով, իբրև Քև Արիւնեացի²⁴⁵ էր ավելի քաջ ու արի և, բայց իբր Նեմանվելով կազ ու սրագուլու Քերտախանի, իր մեծամեծներից մերժված, մինչև որ իր ամբարտաճանության վարան ստացավ:

Ի

ՈՐՈՐԸ ՆԵՐՍԵՍԻ ԵՎ ՆՐԱ ՄՈՒՐՈՎ ԲԱՆԿԵՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արշակի Քաղափորության երբորդ ատրում Հայոց եպիսկոպոսապետ զարձով մեծն Ներսես, Աթանազիենեա՛ որդին, Հուսիկի որդու, Վրթանեա՛ որդու, սուրբ Գրիգորի որդու: Բյուզանդիայից Կեսարիա վերագառնելով՝ նա եկավ Հայաստան և իր Նայրերի բոլոր ուղղության կարգերը նորոգեց. և ավելին եւ, որովհետև ինչ քարեկարգություններ որ նա

աեսավ Նույնների աշխարհում, մանձնվանց Քաղափորանիստ քաղաքում, նույնք սահմանեց և մեր աշխարհում: Նա եպիսկոպոսների և աշխարհականների ժողով գումարեց, կանոնական սահմաններով Նատատեց ողորմածությունը, արմատախիլ արավ անդթությունը, որ մեր երկրում իրեն սովորեցական էր: Որովհետև բորտաները²⁴⁶ Նայածում էին, իբրև օրենքով պիղծ ճանաչված մարդիկ, ուրուկներին էլ փախուստի էին ենթարկում, որպեսզի անտար նրանցից ուրիշների վրա չփոխադրվի. նրանց կացարաններն անսպասներն էին և ամայի տեղերը. նրանց ծածկույթը՝ բարերն ու ժացառները, իրենց թշտության մեջ նրանք ոչ սրից միխթարություն չէին գտնում: Քացի սրանցից, Նայածնդամները չէին խառնվում, անձանոթ Նյութեր չէին ընդունվում, օտարականները պաշտպանություն չէին գտնում:

Իսկ նա Նրամայեց, որ ամեն մի զավառում շինեն արքատանոցներ առանձնացած անընակ տեղերում, որպեսզի Հնուցց Նիվանդանոցների նման միխթարություն չինեն մարմնով մշտացածներին: Այս (Նիվանդանոցների) վրա բաշխեց ավանները՝ և ապարակները, որպեսզի իրենց արտերի արջուներներից, արածող պետանների կից ու բրդից բամբի անեն և պարտավորարար նրանց պետերը՝ Շոգան, Նեոմանց Նեոս, իսկ նրանք զուրս զան իրենց ընակության (սահմանված) շներերից: Այս զորքը նա Նաննեց իր սարկավազին, Խաչ անունով, որ Կարնի Մարգաց (զուղից) էր: Նույնպես սահմանում է, որ բոլոր գյուղերում ինչաններ շինվեն օտարականների Նամար, սեռուցի տեղեր որբերի և մերերի Նամար և խնամք չբավորների Նամար: Շինում է նաև անսպաս և անարքարանակ տեղերում կղարյունացներ և մենաստաններ և մեռակ (ճգողներին) Նամար խրճիթներ: Մրանց վրա Հայր և վերահսկիչ է Նշտանակում Շաղիթային, Եղիփանին, Եփրեմին և Գնեղին Սիկունեաց ջեղից և ուրիշ մի քանիսին:

Եվ նախարարական ցեղերի միջից վերացնում է այս երկու բանը. առաջինը՝ ինձամությունը մերձավոր ազգականների միջև, որը զործարում էին՝ սեպուհական ազնվականության պատճառով ազանելով, և երկրորդը. որ մեռածների վրա ունիրներ էին զործում Նեթանուական սովորությամբ: Այնուհետև մեր աշխարհի մարդիկ երեսացան արդեն ոչ քարաբանների պես աշխանդակով, այլ քաղաքացիների նման Նամեստացած:

ԱՐՁԱԿԻ ԵՎՐՈՒՐ ՏՐՈՒՑԻ ՄԱՆՎԱԿԱՆ, ՍՈՒՐԲ ԵՐԲՍԵԱՆ ԲՈՌՈՂԱՆՆԵՐԻ ԳՆԱԿՆ ՈՒ ԳՈՍԱԿՆԵՐԸ ՀԵՏ ԳԱՐՔՆԵՐԸ

Վաղնախնաման անիրավ մարդկանց վերաբերմամբ շատ խիստ և անավոր էր. նա շատ իշխաններ սպանեց հափշտակության պատճառով, և Ռոզանոս անունով մի ներքինապետ կենդանի այրեց, որովհետև ինքը կերթ անգամ հրամայեց, բայց նա չվերադարձրեց մի այլի կնոջից հափշտակում գրչոքը: Ետև այդ օրը հասան նրա այն պատգամավորները, որոնց ուղարկել էր Հայաստան և նրան ավելի գայթաղել՝ Արշակի խոստատալու զեղբոր պատճելով: Եվ որովհետև նա բարկացած գրոթվյան մեջ էր, հրամայեց սպանել Արշակի կոչորը՝ Տրգատին, մանուկ Գնեկի հորը, և Քեռզոսին պատվիրեց ծանր զորքով Հայոց վրա դիմել: Երբ նա Հայաստանի սահմանները հասավ, Արշակը գարշուրեց, նրան ընդատուջ ուղարկեց մեծ ներսեսին, խնորհեց հաշտվել, խափանված հարկերը լիովին վճարեց և ներսեսին շքեղ ընծաներով նրա հետ ուղարկեց (Բյուզանդիոն): Նա գնալով՝ թագավորին հանգրայնցեցում և, շատ մեծարժույթ և նրանցից և պատանդները խնայում՝ հետ է առնում և վերադառնում: Եվ մի կույս Սյուսպետա անունով, կայսրի ցեղից, կին է բերում Արշակին: Բայց կայսրը բարեարություն անելով մանուկ Գնեկին, նրա հոր՝ Տրգատի անմեղ մահվան համար իրենց ձեռքով՝ առախ և հյուսուստություն պատիվ և շատ զանձներ: Տիրիթը օրա վրա նախանձելով՝ շարունակ մտածում էր նրան շարիք գործել, հարմար օրվան սպասելով:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԽՈՌՈՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԱՎ ԱՐՁԱԿԻ ԵՎ ԳՆԵԿԻ ՄԵՋ, ԵՎ ՏՐՈՒՑԻ ՄԱՆԸ

Իսկ Գնեկ կալով Կուսոշ ամբար Արագած կոչված շեռան ստորաբաժնում, իր կուսարքած Տիրան պատի մաս, որ զեռ կենդանի էր: Տիրանը գառնապետ ողորջ իր Տրգատ որդուն, Գնեկի հորը, իրեն իրեն պատանա համարելով նրա սպանվելու: Եստի Գնեկին է առախ իր բոլոր ունեցածը և կալվածները, գյուղեր և զատակներունը, և հրամայում է հենց ետև Կուսոշ ավանում բնակվել: Այնուհետև Գնեկը կին է անունով մի ուն Փառանձեմի, Սյունաց ցեղից, և թագավորաժայռի հարսանիք անելով առաւ-առաւ պարզիներ է առախ բոլոր նախարարներին: Մրանք նրան հավանելով ու սիրելով՝ իրենց զավակներին նրան հանձնեցին, որոնց

նա փառավոր զարգարեց զենքերով ու զարզկերով: Մրա համար նրան ավելի ևս սիրեցին: Այսպեղ ահա Տիրիթն առիթ գտավ բուսթյան, նա կկալ թագավորի մաս իր բարեկամ Վարդանի հետ, որ թագավորի զինակիրն էր, Մամիկոնյան տոհմից, և առում են. «Մի՛քե, չգիտես, որ Գնեկը միտք գրել է թեզ սպանել և քո փոխանակ թագավորել: Ահա առաւ, թագավոր, այս բանի ապացույցները. Գնեկը բնակվեց Այրարատում, ձեռ թագավորական կալվածում, բոլոր նախարարները սրտով նրան են հարած: Կայսրին այդ զավթ սարքելով նրան հյուսուստություն պատիվ առին և շատ մեծ զանձ, որով նա նախարարներին գրավեց»: Վարդանը երգվում էր թագավորի արևով և ասում էր. «Ես իմ տկանչու լսեցի Գնեկից, որ ասում էր, թե ես իմ հորեղբորը չեմ թողնի իմ հոր մահվան վրեժը, որ նրա պատճառով եղավ»:

Արշակ այս բանին հավատալով՝ ետևս Վարդանին ուղարկում է Գնեկի մաս, թե «Ինչու՞ բնակվեցիր Այրարատում և հայրենական կարգը խանգարեցիր: (Որովհետև սովորությունն այնպես էր, որ Այրարատում բնակվի միայն թագավորը և նրա մի որդին, որին պահում էին իրեն թագավորին հարգով, եւ ի մյուս Արշակներիցն ուղբեն Հայտյանը, Ազոնիկա և Արեթանի զավաններում, արքունական կամուրաներով և ուսեստով): Արդ՝ զու պետք է քնտրես երկուսից մեկը, կամ մահ ընդունել, կամ Այրարատից հեռանալ և թեզանից հեռացնել նախարարների որդիներին»: Գնեկն այս լսելով՝ թագավորի հրամանը կատարեց ու զեաց Ազոնիկա և Արեթանին: Բայց Տիրան, նրա պապը, խիստ խոսքեր ողբեց իր Արշակ որդուն, որի պատճառով իր սենեկապետների ձեռքով խեղդամահ էղավ Արշակի զազանի հրամանով և թաղվեց նույն Կուսոշ ավանում: Հարմանակալով իր հայրերի զերեզմաններին, զուցե նա հաստացումն արավ Աստծու մարդու՝ Գանիելի մահվան: Ինչ չափով որ չափեց, նրանով էլ ինքը չափեց, ինչպես ասված է Ս. գրքում²¹⁵:

ԱՐՁԱԿԻ ԵՎՐՈՒՐ ԵՆԻՍԻՆՆԵՐԸ ԳՆԵԿԻՆ ԵՎ ԵՐԱՆ ՄԱՎՆԵՐԸ

Մրանից հետո թագավորը որսի զեաց Մասիսի թիկունքում իր սիրած կողալովիս զավտար: Մասսիսի մեծ որս եղավ, և Արշակ խմելոս պարծեւեցում էր, թե իրենից առաջ ոչ մի թագավորի մասնակ այսքան բազմաթիվ որս չի կտորարկել մի ժամում: Այստեղ Տիրիթն ու Վարդանը նորագում են իրենց նենգությունն առնելով, թե Գնեկը այդ օրերում ավելի շատ երևեցր է սպանել իր լեռան վրա, որ Եսահայրվան է կոչվում, որ

երան հասնի էր նրա մեր պատից, Գննի Գնունուց: Անտի (Արշակը Գննին) այսպիսի հրովարտող է ուղարկում:

Արշակի թողութի ԳՆՆԻՅԷ

«Արշակ, Մեծ Հայրի թագավոր, իմ Գննի որդուն ողբոյն:
Այդտեղ, Մարգարէ լեռան²⁶ վրա, անստատ և ջրովեռ տեղում բնորիք և պարտաւորի առատ որսով տեղ, որպէսզի մեկը զանք և թագութեամբայի որսի հանդիպենք»:

Հրովարտակն ուղարկելուց հետո Արշակն իսկույն գնաց, մտածելով, որ երկն Գննիը հրամաննի համաձայն չի կատարել, նրան կայսի իբրև թև նա դիվամակել է թագավորի որսախառնում: Բայց երբ գալիս տեսնում է որսի այնպիսի պատրաստութիւն և երևելի այնպիսի բազմութիւն, որ նա երբեք չէր տեսել, խոզովում է սրտում նախանձից ու կասկածներէից, և հրամայում է նույն Վարդանին՝ որսառնելու Գննիին սպանել, իբրև թև պատահմամբ, նետը որսի վրա արձակելիս՝ նրան զիպելով: Այս հրամանն ատենալով՝ նա իսկույն կատարում է, ոչ այնքան թագավորի հրամանի պատճառով, որքան իր սիրելի Տիրիթի կամքը կատարելով: Իսկ Արշակը Գննիի զին նախարարներին հետ Ազիտի որսարան իջնելով՝ թաղում է արքունական Զարիշտա թագաբուն և անմեղ ձևանալով՝ մեծ կոծ է կատարում:

ԻԿ

ՅԵ ԻՆՉԳԵՆ ԱՐՇԱԿԸ ՀԱՆԿՎԱԿԵՆ ԳՆՆԻ ԿՆՈՋՆ ԱՌՆԵԼ, ՈՐԻՆ ՍՐԱԿԵՆ ԳՈՂԸ

Քելպես կարծում էր Արշակ, թև այդ շարիները թաքուն գործէց, բայց ինչ որ չի ծածկվում Աստուծո ամենատեսա աչից, հայտնի է գտնուում և աշխարհից, հանցավորներին էլ սարսափել, ինչպես Տիրանի և Գննի մահը: Երբ բոլորն այս բանն իմացան, իմացավ նաև մեծն ներսես, որ անիծելով Արշակին և սպանութեան անթիվ հողոյն, գնաց ասոջ նստավ շատ օրեր, ինչպես Սամվելը Սամուելի համար: Իսկ Արշակ չզղոջոց, չապաշխարհեց, այլ անամոթարար, սպանվածի գտններին և ժառանգութեանն ազակելով, գնա նրա կնոջը, Փառանձեռներն էլ իբրև կին անավորից ծնվեց մի պատանի, որ կոչվեց Պարս:

Այս Փառանձեռ մի անլուր և անկարկի շարիք գործեց, որից լսողները պիտի սարսափեն: Մի անարժան և սուսանուն քահանայի ձեռքով մահացու դեղ խառնեց կյանքի դեղի մեջ²⁷ և ամփնց Ուխտագաղային, Ար-

շակի անաշին կնոջը, և նրան կյանքից զրկեց, նախանձելով նրա տիկնային: Նույնպես և Արշակի ձեռքով սպանել է ասլիս Վաղինակին և նրա տեղ նշանակում է իր հորը՝ Անտիորին:

ԻԵ

ՏՐԻՓԻ ՍՐԱՆՈՐԹՅՈՒՆԸ

Երբ Շապուհը հյուսիսական ազգերից խաղաղփեց և պատերազմներից հանգիստ առավ արաւմայտեց իր բարեխաղաղ Արշակի վրա, որ նա այնքան տարիներ հարկ է տալիս կայսրին, և ոչ իբրև: Այս պատճառով Արշակ նրա մոտ է ուղարկում Տիրիթին և նրա սիրելի Վարդանին՝ արժանազայն բնծաներով, հաշտութեան խնդրելու համար: Բայց Շապուհը որովհետև ուզում էր հույներին զիտնելից լինել անցյալ պատերազմների համար, ինքը գնում է նրանց զին պատերազմի, ուստի և խնդրում է մեր Արշակ թագավորին, որ իր հետ գնա բոլոր Հայոց զորքերով: Բայց Արշակը, պատճառներ ընտրելով, չկամեցավ անձեռք գնալ, այլ մի փոքր զունդ ուղարկեց Շապուհի հետեից:

Իսկ ինքը Տիրիթի վրա բարկանալով, գրկում է պատվից, իբրև թև այդ բանը կատարվեց նրա թելադրանքով, որովհետև նա ասում էր հույներին: Թագավորին ամփնց գրողում էր նրա զինակիրը, Վասակը, որ եղբորն նախանձում էր մի հարձ ազգես պատճառով: Ուստի թագավորը նրան (Տիրիթին ու Վարդանին) սաստիկ նախատեց ամոթալի վիրավորական խոսքերով: Իսկ նրանք այսպիսի անպատվութիւն և պարտավանք տանել չկարողանալով գաղմկեցին (Արշակից) և զիմեցին զնացին Շապուհի մոտ: Արա վրա ամփնց գալիս զայրանալով Արշակ հրամայում է նույն Վասակին՝ նրանց հետեիցն ընկնել ուժեղ զեղով և նրանց սպանել, որտեղ որ նրանց հասնի: Վասակն անփութ չեղավ (այս հրամանը) կատարելու, թեպետ Վարդանը իր եղբայրն էր: Այս կերպով Գննի տնեղ արջան վրեժը պահանջվեց ամբարշտ Տիրիթից, ինչպես անիծել էր ներսեսը, և Վարդանից, որին վիճակվեց իր հարազատ եղբորից սպանել:

ԻԶ

ՇԱՐԱՆԻ ԳԱՐՏՈՐԹՅՈՒՆ ԿՆԵԸ ՏՐԻՓՆԱԿԵՐՏՈՒ

Իսկ Շապուհը գալիս հասնում է մեր Տիրանակերտ թագաբուն նրան զնմ են կանգնում քաղաքի մարդիկ և քաղաքապահ՝ զորքը, որովհետև

Այլույնաց Անսիրո նահապետք, որ Արշակի անձին էր և բազարի վերակապուն, հրամայեց բազարի դռները կողպել Շապուհի ասաց: Եվ ոչ միայն արդիւնց մանել, այլև ոչ պատգամաժողովներ ուղարկեց նրան մտտ, ոչ էլ նրա ուղարկածներին ընդունեց: Տեղի ունեցավ խիստ կռիվ, որի մամանակ շատ պարսիկների սպանեցին: Շապուհի զուգոր պարտաւթյուն կրելով ճորից Ամբին դարձավ: Երբ զորք հունգտացավ ու կրած նեղութուններից կազդուրվեց՝ (Շապուհի) կամեցավ (զնաւ և) Տիգրանուկերտն աննել, բայց նրա առաջապահ զինիքը և լրտեսները լնդին այս բանով զբաղվել, (ասելով թէ) զրանով հույների զեմ ձեռնարկված գործը կհանգարգի: Եվ Շապուհն ասաց անցնելով՝ այսպիսի թուղթ է գրում նրանց:

Շապուհի թուղթը Տիգրանակերտին

«Մազզեղանց բաշ Շապուհ՝ արքայից արքա, տիգրանակերտացիներին, որ այլևս չեք հիշվելու արչաց և անարչաց մեջ:

Ես կամենում էի ձեզանից սկսելով բոլոր առաջիկա բազարները մուտք գործել խաղաղությամբ և բացին վայել ազնվականությամբ: Եվ եթէ բայց, տիգրանակերտացիներդ, որ առաջինն եք, ոչ թէ քաջությամբ, այլ իմ ուղեբության ճանապարհի վրա, ինձ հակառակ կանգնեցիք, մյուսներն էլ ձեզանից օրինակ կառնեն նույնպես վարվելու: Բայց իմ գործի մամանակ իմ բարկությամբ ձեզ այնպես կվնասեմ, որ նորից օրինակ դառնաք խելացիոր ստահակներին»:

Ի՛՛՛:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՐՔԱՎԱԿԱՆԸ ՇԻՆՎԵՍ ՈՒ ԿՈՐԹԱՆՎԵՏ, ԵՎ ԱՆԻՆ ԱՆՆՎԵՏ

Բայց Արշակն ավելի ևս հանդգնելով մի անմեծ գործ գործեց: Մասին լուսան թիկունքում նա շինեց մի գաղտակերտ՝ մեղավոր մարդկանց ժողովատեղի: և հրաման արձակեց, թէ ով որ կարողանա այդտեղ ընկնել ու բնակվել, նրա վրա գաղտաստան և իրավունք չի լինի: Անմիջապես բոլոր հովիտը ինչպես զավ, լցվեց մարդկանց բազմությամբ, որովհետև ավանդապետներն ու պարտապանները, ծառաներն ու հանցագործները, զողերն ու մարգասպանները, ուրիշի կանանց փախցնողները և ուրիշ արանց նմանները փախչում ապաստանում էին այնտեղ, և նրանց զեմ հարց ու գաղտաստան չկար, նախարարները շատ անգամ բողոքեցին, բայց Արշակ նրանց չլսեց, այն աստիճան, որ նրանք միևն Շա-

պուհին զիմեցին: Եվ երբ Շապուհ՝ Հունաստանից հետ էր դառնում, իր սպարապետներից մեկին հայ զեղով ուղարկեց, որ երբ զեպրք գա, Արշակին բռնի: Բայց նա խուսափեց նրանից, փախավ Կովկասի կողմերը, վրացիների հետ միարանելով:

Իսկ Պարսից սպարապետը Հայաստան զայլով նախարարների օժանդակությամբ առնում է Անի ամրոցը, ավարի է առնում այնտեղ պահած բոլոր արքունական զանձներ, այլև թագավորների սպորները, շղիտեմ՝ Արշակին նախատիքը հասցնելու նպատակով, թէ որևէ հեթանոսական հմայքի համար: Բայց հետո նախարարները խնորհեցին հետ ստացան (սպորները) և թաղեցին Ազցք ավանում, Արաղած կոչված լեռան ստորոտում: Որովհետև նրանք շխարդացան բռնի է հեթանոսներին և հաճառացյալների սպորները, բանի որ գերողները խառնել էին իրար հետ, ուստի արժան չհամարեցին թաղել սրբերի հանգստարանում, Վարդաշապատ քաղաքում:

Իսկ Հայք նախարարները ժողովվելով զիմեցին թագավորական գաղտակերտի՝ Արշակավանի վրա, որով կոտորեցին տղամարդկանց և կանանց, բացի ձկկեր երեխաներից, որովհետև նրանք յուրաքանչյուրը կատաղած էին իրենց ծառաների և վնասարարների զեմ: Այս բանը թեպետ իմացավ մեծն Ներսեսը, բայց կարողացավ կոտորածից օրան հասնել, այլ հասավ վերջում, երբ կոտորվածների երեխաներին բաժանելով ուզում էին զիրի առնել, ինչպես հեռավոր թշնամիների երեխաներին: Մեծն Ներսեսը նրանց ազատեց և հրամայեց բթողներով կրել²⁴⁸ մի զոմ: նրանց համար սնուցիչներ և սնունդ նշանակեց: Հետո նրանք (մեծանալով) ավան կազմեցին, որ այս պատճառով կոչվեց Որթք (բթողներ):

Ի՛՛՛:

ՏՈՒՐԱՆԱԿԵՐՏԻ ԱՐՔԱՎԵՆ ԵՎ ԼՈՒՐՈՒՄԻ ԲԱՆՎԱԿԵՆ

Իսկ Շապուհ՝ եկավ Տիգրանակերտ: Դռները զարմայ կողպեցին և պարսպի վրա բարձրանալով աղազակում էին. «Հե՛նացիք մեզանից, Շապուհ՝, ապա թն ոչ թեղ առաջինից ավելի մեծ չարքերն եր հասցնեմք»: Իսկ նա պատասխանեց. «Ո՛վ քաշ հայեր, որ ինքներդ ձեզ արդիւնք փակել եք Տիրքանակերտի պարիսպներին հետ, և ներսից սպառնալիքներ եք արձակում, Քաշ տղամարդիկ կոմում են արձակ դաշտում և ազատ սեղում: Կանայք են, որ փակվում են, կովից վախենալով»: Այս ասելով զարձակ զերի բռնված հույներին և ասաց. «Եթէ ձեր կովկով այս քաղաքն առնեմ, ձեզ բողոքի կազատեմ ձեր ընտանիքներով հանդերձ»:

իսկ Պարսից զորքերին հրամայեց բողոքի շուրջը պատվել և պարսպի վրա կողոնքերի նետերով խոչոտել:

Իսկ հույները մտազուտ, մեծ ուժով պարսպին զեմ գրին էլ կոչված (զորքերը): Սա մի անվավոր մեքենա է, որ բշկով տանում են երեք մարդ. երանց ներքևում կան կացիներ, երբեքուհի սակրներ և արածայր մուրներ՝ հիմքերը փորելու համար, և այն պատերը, որ Հայկազյան Տիրարներ շինել էր հաստ և ամուր: Հիմքից բանջելով, ապալանջին, զոներում և բուր կողմերում կրակներ վառեցին, և նետում էին քարեր, նետեր և տեղեր, Մերսեր խոցողովով շշկվեցին: Բոլոր զորքը ներս մտավ, պարսկական ձեռքը չէր հոգնում բազմախոցող սուրբ արշալուծով հազեցնելուց, այնպես որ սպանվածների արյունով լցվում էին հիմքերը: Իսկ հունական ձեռքը կրակի էր տանում բոլոր փայտակար շինությունները: Եսպուհ՝ կոտորածից մնացածներից զեհի ատելով իրավ է Պարսկաստան, իսկ Հայաստանում եղած զնզիրեն մարդիկ է ուղարկում, հրամայելով, որ Մշույնաց տոհմը (բնաջիրը անեն) անվավակ դարձնեն²⁴⁹:

ԽԹ

**ԱՐՇԱԿ ՊԱՏԵՐԱՅԻՆ ԻՐ ԱՆՔԱՐԱՆՆԵՐԻ ՀՅՈՒՄ
ՊԱՐԿ ԲՅՈՒՋԱԿՆԻՒՄԻ ՈՐԱՐՄԱՆԵԼԸ**

Եսպուհի համար դարձյալ խոսվություններ ծագեցին նույն (հյուսիսական) սպաներից, իսկ խաղաղությունը շուտ եկավ հույների կողմը, համաձայն այն խոսքի, թե փոփոխակի իրար փոխարինում են²⁵⁰, որանց խաղաղությունը նրանց խոսվության մեջ է կայանում, և նրանց խաղաղությունը սրանց խոսվության մեջ, այնպես որ մեկի վախճանը մյուսի սկիզբն է դառնում, որովհետև Վաղեմարյանսար²⁵¹ Բերդտունի կոչված բերդում հիվանդանալով մեռնում է, և անբուժելունք անում է նրա եղբայրը, Վաղես, որ զթմերի հետ բարերախա պատերազմ մղելով ու հաղթելով հետ է դառնում և ամբիպղպեն զորք է ուղարկում Միջագետք, Հայաստան՝ Եսպուհի օրինակ զորք ապուլն համար:

Բայց Արշակը վրաջական զեղով գործ՝ իր մտերիմներից էլ սակավաթիվի զորք է ժողովում և պատերազմ է սկսում այն նախարարների հետ իր Արշակավան պատասկերտի գլխով անելու համար, նրանք էլ ինքուրներով ներսե՛ն, Կամսարի որդու առաջնորդությամբ պատերազմով զինարարում են Արշակին: Տեղի է ունենում ստատիկ կռիվ, որի մեջ յուրաբանչյուր կողմից շատ մարդիկ են ընկնում. իզամարդ ալամարգի

զեմ զուրս գալով, ոչ մեկը չէր կամենում պարտություն կրած լինել: Երբ նրանք սրով են լինում կրողով, վրա են հասնում կոչանքական զորքերը: Այն ժամանակ Արշակը տեսնելով, թե իրեն թշնամի են հասպուհ՝, Վաղեսը և իր նախարարները, ամենից լրված՝ շատ սեղան մարդ է ուղարկում մեծն ներսեհի մտա աղաչելով, խոստանում է հետ կանգնել բոլոր շար հանապարհներից, նրա կամքով վարժել, բուրձով ու մոխրով ապաշխարել, միայն թե նա գա, խաղաղություն ցցի և իրեն փրկի հզոր հույների ձեռքից: Նույն բանի համար նախարարների կողմից էլ իրար վրա հանախ խնդիրներ էին զայլի, այնպես էլ եղիսկուրաները ժողով զամարելով նրան թախանձելով խնդրում էին, որ անտարբեր շմեա իր վիճակի կորուստին:

Այսպես մեծն ներսեհ համաձայնելով եկավ և նրանց մեջ խաղաղություն հաստատեց: որովհետև թագավորն էլ, նախարարներն էլ նրան բեկին: Բայցի Արժրուհիների նահապետ Մեհերուսանից և նրա բոլոր մարդուց Վահան Մամիկոնյանից, որոնք անխաղ եղան և ապստամբելով գնացին Եսպուհի մոտ: Իսկ մյուս բոլոր նախարարները ուխտ հաստատեցին, որ թագավորն այնուհետև ուղղությունը վարվի և իրենը հազատամտությամբ նրան ծառայեն: Այսպես (հաստատվեց) նրանց մեջ: Բայց Հունաց զորքերի մաս էլ գնաց մեծն ներսեհ և աղաչում էր, որ մեք աշխարհին վնաս հասցնեն, այլ հարկերն ստանան, Արշակի որդուն Պապին բոլոր նախարարների որդիներով հանդերձ պատանդ վերցնեն ու հետ դառնան: Բայցը և մեծ Քեղզոս զորավարը համաձայնեց ու զարձակ կայսրի մտա պատանդներով հանդերձ, հետո տանելով մեծն ներսեհին Արշակի թղթով, որ հետևյալ բովանդակությունն ուներ.

Արշակի բողոք Վաղեսին

Արշակ թագավոր Մեծ Հայքի և Արամյան սպիտ բոլոր նախարարներս մեր սիրոջ՝ ինքնակալ Վաղես Ավգուստոսից և բո Ֆրատիստոս որդուց սղույն:

Յոթ ինքնակալ սյնպես շտամեն, թե մենք մեզ ատելուց ստամբակեցինք կամ մեզ հզոր համարելով ապստամկող զեղի ուղարկեցինք Հունաց երկիրը. բայց զիտենալով, որ մեծ խոսվություն է ծագել մեր մեջ և որ ոչ բո մեզ չի փրկի Եսպուհի ձեռքից, նրկուրից նրան օղնեցինք մի փոքր զեղով. բայց ևս ինքս, Արշակո, նրա հետ չեկա, հազատարիմ մնալով մեզ, որի պատճառով նա ավերեց մեր աշխարհը, մինչև անգամ մեք հայրերի գերեզմանները փորեց, ուղործեց հանեց: Արդ՝

այս իրողութիւններին հաճատալով՝ հաստատ պահեցեր ձեր նախկին սերը զիպի մեզ և մենք հաճատարում/բխամք ձեզ կճատայնէրք:

Բայց Վաղեսը ոչ թուզթը կարողաց և ոչ մեծն ներսեան կամեցա՞մ տեսնել, այլ ուղղակի հրամայեց նրան արտերկ և բոլոր պատահեղներին արի անցկացնել:

Ա

ՄԵՆՆ ԿԵՐՆԵՍ ԿԵՐՆԵՍ ԵՎ ԱՆԲԱՆ ԿՂԻ ԳՉԵԼԸ, ԵՎ ԻՆՉԳԵՍ ԿՐԱՆԷ ԿԵՐԱԿՐՈՒՄ ԵՆ ԵՐԱՆՈՒՆ ԽՆԱՄԵՐՈՎ

Այս ժամանակ Բյուզանդիոնի եպիսկոպոսական աթոռը նստում էր հոգեմտառ Մակեդոնը: Երբ արքունիքից հրաման եկա՞վ մեծն ներսեան արտերկու, իբրև մի անգամ կայսրին խարոզի և ուխտադրումի, նրա մտտ եկան մի բանի հերթաժողովեր Արիոսի ազանցից և ասացին. «ՅՅՅ մեզ հեզ հազ պահեստ, թեզ կփրկի մեր հայրը, Մակեդոնը» նա չճամա՞նայնեց ու արտօրկեց: Երբ նա՞վով լողում էին, ձմեռվա խիստ քամիները նավը բշեցին զեպի մի անապատ կղզի ու խորտակեցին: Նավորակները շէին վտատա՞ւում մակույկներով նավել, մնացին տարակիսւած և ուտում էին անտառի ծառերի արմատները: Բայց Աստծու խնամքով նրանք ու՞թ ամիս կերակրվեցին այն ձկներով, որ ծովը կենդանի ափ էր գցում: Իսկ Պապը և բոլոր պատահեղները հանձն առան և Մակեդոնը նրանց ազատեց:

ԱԱ

ԱՐՈՒԱԿ ԿՈՏՈՐԵԼ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻՆ ԵՎ ԽԱԿ ԵԳՐՄԵՆՊՈՍ ՎԱՐԷՒ ՄԱՍԻՆ

Երբ մեծն ներսեսը հեռացավ, Արշակը զրժեց բոլոր պայմաններին, որ կերել էր նախարարների հետ և կամեցա՞վ իր Արշակավան դաստա՞կերտի վրեժը հանել: Նա կոտորեց նախարարներից շատերին, մանա՞վանց ընտիրե՞լ արավ կամաւորականների ցեղը, ազահելով Արտաղեսը ամբողջին և երվանդաւառ քաղաքին, որ նրանց ուտանէ²⁵² էր: Նրանց հրաժիրեց իր մտտ, Արմավիրի լքված պալատը, իբրև ազգականներ, պատվելու, մեծարելու պատահաւարե՞րով, և հրամայեց բոլորին միանգա՞մայն կոտորել, մարդկանց, կանանց, երեխաներին: Ոչ որ նրանցից չփրկվեց, բացի Սպանդարաւան, Արշավիրի որդուց, որ Արշակուեսյաց (տա՞ճից) կիև ունեւալով՝ գնաց բնակվեց նրա մտանգութլան կազմա՞

ծում, Տարոնի և Հաւրյանքի կողմերում, իբրև արտնչող իր ներսե՞հ հորերորից, այս պատահաւով էլ նա նրանց կոտորածի սեղանը չճան. դիպեց. Բայց կեր (իր պզգաստ՞մի կոտորածի) բոթը լսեց, իր Շավարշ և Գաւազոն որդիների հետ բոլոր բնտանիրով փախա՞վ գնաց Հունաստան:

Բայց մեծն ներսես Հունաստան գնալիս ետզ սարկավազին ձեռնա՞դրել էր Բազրեանզի և Արշարունիթի եպիսկոպոս և նրան էր հաճատա՞ցել մեր աշխարհի վերակացութլան բոլոր զորժերը միջև: Իր վերա՞գարձի ժամանակը, Այս ետզը մեծն ներսեսին էր նման ամեն բանով, մանավանց ազբատների խնամատարութլան գործում, որի շահմարա՞ններն էլ հենց աղբյուրի նման առատացան սքանչելի կերպով, ինչպես եղիտայի և Եդիսսի ժամանակ²⁵³, և թագավորին հանդիմանելու մեջ էլ նա խիստ էր և ա՞ճավոր ու աներկյուզ: Սատանան ոչ մի կերպ նրան զիպ՞չկ չկարողացա՞վ բացի մի բանից, որ նա զգեստի կողմից պերճասեր էր և ձիասեր, որի պատահաւով նրան պարտա՞վում և մալարում էին փոխա՞ր. նարար նրանք, որոնց նա հանդիմանում էր: Այս պատահաւով նա հրա՞մարվեց շրջի զգեստներից և մազեղեն հագնելով՝ իշով էր ման գալիս միջև իր մա՞ճվան օրը:

ԱԲ

ՅԵ ԻՆՉԳԵՍ ԱՐՈՒԱ ԿԱՄԵՆՈՒՄ ԵՐ ԶԱՐՈՅԼ ԵՎ ԶԱՐԿՈՅԼ ԵՐԱՆԵԼԻ ԽԱԿԻՆ՝ ԻՐ ՀԱՆՑԱՆՔՆԵՐԸ ՀԱՆԳՐՄԱՆԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ

Երբ Արշակ կամաւորականների ցեղը կոտորեց, հրամայեց նրանց զեակները քարշ տալ, զին զցել առանց թաղելու, որպեսզի չներկ կե՞րակուր գտանան, իսկ ինքը, իբրև մեծ հաղթութլամբ պատկե՞րած, մի բանի օր ուրախութլուներով անցկացրեց և հրամայեց, որ նրանց միջերկերը բերին և Արմավիրում համարեն: Փորցցին բացին նախա՞ւ՞վան գլուղում նրանց երկու շատ խոր և շատ լայն հորերը և նրանց ա՞վանի սալներով բերին: Սալապանները տեսնելով մարդկային ունոր՞ներ, որ թափթված էին փոսի մոտերը և գազանների կերակուր էին զարձել, հարցրին իմացան, որ իրենց տերերի սուկորներն են. սալներում հա՞մարեցին, եղեղով ծածկեցին, ստարան նույն հորերում թաղեցին: Արշակն այս իմանալով՝ հրամայում է սալապաններին նույն հորերի վրա փայտից կախել:

Խաչն առաջին զեպրին շղատա՞նց, իսկ այս անգամ հասավ և սկսեց հանդիմանական խօսերով թագավորին պարտա՞վել: Արշակ հրամայեց նրան քաշել և քարկոծել: Ե՞վ որովհետև նրա աղբիկները տեղեր ունեին

մեծ նախարարություններից, Ապահովաց բաշ և զորից ցեղից, որանք արհրը հանելով բաշողներին կհասնու արին և հազին նրանց ձևորից հափշտակելով իրենց զավառը գնացին: Արշակ հակառակ շքեսաց, ծղարուն հասնել, միգուցե բոլոր նախարարները զրգովեն:

ԼԳ

ՔԵՆՈՒՍ ՄԵՆԻ ՔԱՎԱԿՈՐԵԼ ԵՎ ՀՈՒՆՄԱՐՏՆԵՐԻ ՊԱՏԱՅԻՈՒԹՅԱՆ ԳՈՒՐԱՎԱՅ ԺՈՂՈՒԸ

Բայց Վաղես կայսրը մշտնջենական զհ՛շանի օրինակն հենց այստեղ կրելով, Ազրիանուպոլսում հրակել նկավ ու ստակեց, ինչպես արժան էր իր զինավորություններին: Սուգ օտացավ Քեոզոսը: Սա մինչև հասարկ քանպեց կուսրերի մեհյանները, որոնք սուր Կոստանդինոսից միայն փակված էին, այսինքն Արեգակի, Արտեմիդի և Ափրոդիտի (մեհյանները): Բյուզանդիանում: Նույնպես ավերեց Գամակոսի տաճարն ու վերանայեց կնկեցու: այսպես նաև Ելիոս²⁵⁴ քաղաքի տաճարը Լիրիանոսի մեծ և հռչակավոր (տաճարը, որ կոչվում էր) որոնք:

Սա հետ զարմրեց բոլոր սուրը հայրերին, որոնք ուղղափառություն պատճառով արտար էին ուղարկված, որոնց թվում նաև Մեծն Ներսեսին բերելով իր մտա Բյուզանդիոն, պահում է մեծ պատվով, մինչև ստուգվի նշմարիտ: հավասար՝ ամբարիշտ Մակեդոնի²⁵⁵: հայտնությունների առիթով: որովհետև նա սուրը հոգուն շեր զմզմանում տեր, և ոչ նրկերը պակել և ոչ փառաբանելի հոր և որդու հետ, այլ Աստուծու բնությունից օտար, ստացական, ծառա, պաշտույլա, ոչ թե մի անձնավորություն, այլ մի արդունե եվ թագավորանիտա Բյուզանդիոն քաղաքում ժողովկեցին սուրը հայրերը՝ Հռոմի Գամակոսը, Կոստանդինուպոլսյի Ներսարիոսը, Ազեքանդրիայի Տիմոթեոսը, Անտիոքի Միլիտոսը, Երուսաղեմի Կյուրիոսը, Նյուխայի Գրիգորիոսը, Գեսարիայի Գեղատիոսը, Նաձեալեմու Գրիգորիոսը, Կիտայի Անփյուլոբոսը և ուրիշ կայնեղապետներ, ընդամենը հարյուր հիսուն հար, որոնք նկոչվեցին և մերժեցին Մակեդոնի և բոլոր հոգեմարաններին:

ԼԿ

ԱՐՔԱՎԻ ԱՎԱՄԱ ԳՆԱԸ ԸՆԳՈՒՆԸ ՄՈՏ ԵՎ ԷՆ ՀՆՏ ԶԿԱՆՈՒՄԸ

Շաղուհը պատերազմներից զորվալ գազար գանելով՝ Արշակի վրա է ուղարկում ուժեղ զեղով մի ոճն Փահլավիկ Ալանազանի, որ Արշակին ազգակից էր: Արշակը նրանից խույս տվեց, որովհետև անօգնական

մնաց շատ նախարարների կողմից: որոնք իրենց Արշակ թագավորից սաղափազան, Ալանազանին ձեռք էին մեկնում և իրենց կամքով գնում էրապոս: արև, որից մեծարվելով գնում էին մեր աշխարհը: Մրանից Արշակը առարկում՝ պատգամ է ուղարկում Պարսից զորքի իշխանին, թե՛ օժու իմ արդունակիցն ու հարազատն ես, ինչու՞ ես այդպիսի խառն: Քյամը հաշվածում ինձ, գրեմի, որ զու ապամա ես կելի (իմ վրա), շխարհանալով հակառակից Շաղուհի հրամանին, որ զուս քաղաքանից վրա: Արդ՝ մի քիչ թուլացրու (հաշվանեղ), որ ես կարողանամ կարճ ժամանակ մի տեղ թարնվի, մինչև շունձ առնեմ և կարողանամ Հունաց կրկիրն անցնել: իսկ զու մեր աշխարհը կզրավես և ինձանից մեծամեծ բարիքներ կզուես, ինչպես մտերեմ հարազատիցու:

Ալանազանը նրան այդպիսի պատասխան է տալիս. չեթե զու, ասում է, շխանցիր մեր ազգական Կամաթականներին, որոնք ինձանից ավելի մտա հարազատներ էին թեզ, ձեր կրոնի կողմից և միևնույն աշխարհում բնակվելով, ինչպե՞ս կարող ես հուսալ, որ ես կրեման ինձ, որ թեզանից հետո եմ և՛ կրեմով, և՛ բնակությամբ, և ինչպե՞ս կարելի է, որ քո բարիքներին հուսալով, որ հայտնի չէ, թե կստանամ, կորցնեմ այն բարիքները, որ գտնի եմ իմ թագավորից:

Ալանահետ Արշակը, ստատիկ նեղն ընկած, ակամա գնում է Շաղուհի մտա և արդելված պահում է Բանի ստիպմունքից հարկազրկված՝ գրում է իր Փառանձեմ կնոջը, որ զուր գա: Շաղուհն էլ հրամայում է բոլոր մեծամեծներին, որ Փառանձեմի հետ գան:

ԼԸ

ՔԵ ԻՆՉ ԶԱՐԻՔՆԵՐ ԲԱՐԵՏ ԸՆԳՈՒՆԸ ԱՅՅԱՍԱՅԱՆԻ ՎՐԱ, ԵՎ ԱՐՔԱՎԻ ՄԱԸ

Հայոց այն նախարարները, որոնք Արշակից առաջ ձեռք էին մեկնել Պարսից Շաղուհ թագավորին, երբ թմացան, թե իրենց կանանցն էլ կանչել է, ինչպես և այն նախարարներին, որոնք հավասարիմ էին մնացել Արշակին, երբ առան նաև, թե Ալանազանը գնաց, և մի փոքր դուռ է, որ այս բանի համար եկել է, միտանեցին, նրանց հայածեցին և իրենց կանանց ու որդիներին առնելով՝ փախան Հունաց աշխարհը: Փառանձեմն էլ իր մարդու կողմն շքեսաց, այլ գանձերով հանդեր ընկավ Երուսաղեմ թերզը: նա լուր ուղարկեց իր Փայս որդուն և հույս ուներ Շաղուհի ձեռքից ազատվելու: Շաղուհը սրա վրա զայրանալով՝ Արշակի ունեքը կապում է կրկաթե շղթաներով և ուղարկում է հուսթատա-

նի երկիրը. Անժուշ կոչված բերդուհի²⁵⁶ (բանաստիճակ): Եվ մեծ զորք է գումարում Մեհրուժան Արծրունու և Վահան Մամիկոնյանի ձեռքի տակ, որոնք ուրացել էին Քրիստոսին և արձակում է նրանց Հայաստան: Երանք եկան և նստեցին Արտաշեսը բերդի շուրջը: Եվ Քեպեա ուշիւ չէին կարողանում անել, բերդի անմատչելի ամրությունը պատճառով, բայց որովհետեւ Աստուծո՛ր բարկութեամբ Արշակի վրա էր. ամբողջ մարդիկ չկամեցան սպասել մինչև Պապին լուր գաւ, այլ կամովին, առանց բռնութեան անձնատուր եղան: Երանց զինի վերջին և Փառանձեմ տիկնոջ և զանձերի հետ միասին տարան Ասորեստան և այնտեղ սայլի ցցի վրա վարակով սպանեցին:

